ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի N 1902-Լ ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
1	2	3	4	5
NN	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
4.	Կամավորության մշակույթի տարածման և խրախուսման նպատակով՝ կամավորական գործունեությունը և կամավոր աշխատանքը կարգավորող միասնական իրավական մեխանիզմների ամրագրում	4.2 Կամավորական դաշտը կարգավորող տեղեկատվական հարթակի (կայքի) շահագործում՝ 2024-2026 թթ. միջնաժամկետ ժամանակահատվածի ծախսային ծրագրով համապատասխան հնարավորության առկայության պարագայում:	Կայքի ստեղծման աշխատանքներն իրականացվելու էր ՀՀ պետբյուջեից համապատասխան միջոցներ հատկացվելու դեպքում: Առաջարկը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մերժվել է: Այդուհանդերձ, գործարկել է կամավորներ հաշվառելու հարթակը (www.kamavor.mlsa.am), որը ծառայել է նաև 2023 թ. սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված անձանց աջակցության գործընթացը համակարգելուն:	
8.	Քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավում և	8.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 10.05.2015 թ. N 1061-Ն և 30.01.2014 թ. N 145-Ն որոշումներում փոփոխություններ և		ՀՀ կառավարության որոշումները անմիջականորեն բխում են «Սոցիալական աջակցության

	մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարձրացում	լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:		մասին» և «Պետական նպաստների մասին» օրենք-ներից և դրանց ընդունումը հնարավոր է միայն նշված օրենքների ընդունումից հետո:
9.	Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավում և համայնքահեն ծառայությունների ներդրում, զարգացում և ոլորտը կա-նոնակարգող օրենս-դրական դաշտի կատարելագործում	9.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպ-տեմբերի 25-ի N 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կա-տարելու մասին» և «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող խնամքի հիմնական սկզբունքները և ծառայությունների ու հաստիքային միավորների չափորոշիչ-ները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	ՀՀ կառավարության 10.11.2022թ. «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը, պայմանները, չափորոշիչները, աջակցության քարտի ձևը և տրամադրվող գումարի չափը սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն և հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» **N 1744-Ն** որոշումն ընդունվել է :	
		9.3 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպ-տեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:	Ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թ. նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարու-թյան 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1699-Ն որոշումը:	
12.	Երեխաների իրավունքների լիարժեք իրացման համար՝ երեխաների	12.1 «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու		ՀՀ կառավարության որոշումների նախագծերը քննարկման փուլում են

	իրավունքների պաշտպանության մեխանիզմների հզորացում	մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է		
		12.2 «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է		
		12.3 «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի փաթեթին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	ՀՀ կառավարության 2023 թ. մայիսի 18-ի N 740-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին: ՀՀ օրենքն ընդունվել է 26.06.2023թ.-ին:	
13.	Շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում	13.2 Համապատասխան մասնագետների կողմից շուրջօրյա և ցերեկային խնամք մատուցող պետական ոչ առևտրային առնվազն 3 կազմակերպությունների շենքային պայմանների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում՝ մրցույթով ընտրված կազմակերպության միջոցով	Աշխատանքներն ընթացքի մեջ են:	
14.	Հանրային կյանքի բոլոր ոլորտներում կանանց և	14.2 Կանանց ռեսուրս կենտրոնների համագործակցային ցանցի հիմնում	Հայաստանի Հանրապետության 2 մարզերում (Սյունիքի և Լոռու մարզեր) 2023թ. հիմնվել են Կանանց ռեսուրս կենտրոններ:	

	տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման համար նպաստավոր պայմանների ապահովում	Հայաստանի Հանրապետության 8 մարզերում		
15.	Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի շրջանակում փոփոխվող իրավիճակին և ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ օրենսդրական փոփոխությունների իրականացում, պետության կողմից տրամադրվող թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների բարելավում,	15.1 «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի յոթերորդ՝ 2023-2026 թթ. Ազգային ծրագիրը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Ընդունվել է ՀՀ կառավարության 05.01.2023թ. «Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազնակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 31-Լ որոշումը	
		15.2 Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունների ընդլայնում	Դիտարկվել է 3 նոր ծառայության ավելացում, որոնք են՝ բնակարանի վարձակալության վարձավճարի ամբողջական կամ մասնակի հատուցում, մասնագիտական ուսուցման դասընթացներ, ձեռնարկատիրության դասընթացներ և բիզնես խորհրդատվություն: Առաջարկվել է ավելացնել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերին պետության կողմից մատուցվող ծառայության համար նախատեսված պետական բյուջեի չափը, որն ընդգրկվել է 2024թ. պետական բյուջեի և 2024-2026թթ. միջնաժամկետ ծրագրային ծախսերի հայտի նախագծում: Ներկայացված բյուջետային ընդլայնման հայտը մերժվել է ՀՀ ՖՆ-ի կողմից և արդյունքում 2023 թ. բյուջեն կազմել էր 37.674.400 դրամ, իսկ 2024 թ. համար՝ 32.105.000 դրամ:	

	միջգերատեսչական, միջազգային և հասարակական կառույցների հետ հա-մագործակցության կայուն մեխանիզմների ներդնում:			
16.	Ընտանիքում բռնության երևույթի կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում	16.1 Բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից տրամադրվող աջակցության տեսակների և մատուցվող ծառայությունների ընդլայնում, մասնավորապես, կանանց տնտեսական զարգացմանն ու հզորացմանն ուղղված աջակցության նոր տեսակների ավելացմամբ	2023 թ. ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 30 մլն դրամ՝ ընտանիքում բռնության ենթարկված 60 անձի տնտեսական հզորացման ծառայություններ մատուցելու համար: Ներկայումս զբաղվածություն ունի ընտանիքում բռնության ենթարկված 53 կին:	
19.	Պարբերաբար վերանայվելու (բարձրացվելու) են պետական կենսաթոշակների և նպաստների չափերը	19.1 «ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1734-Ն, 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1489-Ն և 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումն ընդունված է	Ընդունվել է ՀՀ կառավարության 29.06.2023թ. թիվ 1049-Ն որոշումը, որով 2023 թվականի հուլիսի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 24000 դրամ (նախկինում սահմանված՝ 21000 դրամի փոխարեն), նվազագույն կենսաթոշակի չափը՝ 36000 դրամ (նախկինում սահմանված՝ 31600 դրամի փոխարեն), ծերության նպաստի չափը՝ 36000 դրամ (նախկինում սահմանված՝ 31600 դրամի փոխարեն):	
22.	Սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության	22.1 Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի և մատուցվող ծառայությունների	2023թ. ընթացքում կազմվել են ՀՀ պետական բյուջեում ներառված երեք (նախատեսված՝ մինչև չորս ծրագիր) ծրագրերի ՄԳ արդյունքների ամփոփ հաշվետվությունները, որոնք ներկայացվել են ոլորտը	

	առաջ-նահերթությունները սահմանելու նպատակով առկա խնդիրների բացա-հայտումը, իրականացվող ծրագրերի արդյունավետության և հասցեականության բարձրացումը, շահա-ռուների և այլ շահա-գրգիռ կողմերի ծրագրերից բավա-րարվածության աստի-ճանի գնահատումը, ՀՀ պետական բյուջեի միջոցների նպատակային օգտա-գործումը և կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը	մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) համակարգի ներդրում	համակարգող նախարարի տեղակալներին և բոլոր շահագրգիռ կողմերին:	

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մատչելիության և հասանելիության ապահովում	1.4 Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի գնահատման ավտոմատացված համակարգի մշակում, հիմնական ծառայությունների փաթեթների գնահատում՝ ակտուարական հաշվարկների և կանխատեսումների միջոցով	Միջոցառման շրջանակներում նախատեսվող առողջության համապարփակ ապահովագրության ծածկույթի հաշվարկման մոդելը կառուցված է և հաշվարկներն իրականացված են: Ընդունվել է ՀՀ առողջապահության նախարարի 13.10.2023թ. «Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման և առողջության համապարփակ ապահովագրության ծածկույթի հաշվարկման ավտոմատացված գործիքների մշակման աշխատանքների նկարագրերը հաստատելու մասին» թիվ 4958-Ա հրամանը:	Ծառայությունների փաթեթի ծախսերի հաշվարկման ավտոմատացված գործիքի մշակումը ավարտված է, ներկայումս ընթանում է շտեմարանների ձևավորման, տվյալների բազաների ճշգրտման, դրանց ներանցման տեխնիկական հնարավորությունների ապահովման գործողությունները:
3.	Չարորակ նորագոյացությունների դեմ պայքար	3.1. Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացում, դեղի անվճար տրամադրում	1. Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շրջանակներում շարունակական ապահովվել է պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հաստատված չարորակ նորագոյացություններով պացիենտներին վիրահատական և ոչ վիրահատական (քիմիաթերապևտիկ և ճառագայթային բուժման) բժշկական օգնության ծառայությունների տրամադրումը՝ ամբողջ բնակչության համար:	

			2. Հաշվետու ժամանակահատվածում բնակչությանը մատուցվել է համապատասխան բժշկական օգնության և սպասարկման շուրջ 50.000 ծառայություն, որը 1,5%-ով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: Վերոնշյալ ծառայությունների մատուցումը հնարավորություն է տվել ապահովել ծրագրով նախատեսված թիրախային ցուցանիշները գերազանցող արդյունք: 3. Վերանայվել է պետության կողմից երաշխավորված անվճար ուռուցքաբանական բժշկական օգնության և սպասարկման մեջ ընդգրկված քիմիաթերապևտիկ բժշկական օգնության ընթացքում կիրառվող քիմիապրեպարատների ցանկը: Շարունակական ապահովվել է ախտորոշված չարորակ նորագոյացություններով պացիենտների քիմիաթերապևտիկ բուժման ամբողջ ծավալը, որի շրջանակներում սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում ընդգրկված անձանց քիմիաթերապևտիկ բուժման դեղերը փոխհատուցվել են պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով՝ առաջին քիմիաթերապիայի սեանսից սկսած մեկ տարվա ընթացքում տարեկան 300.0 հազար դրամի չափով, իսկ սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց քիմիաթերապևտիկ բուժման դեղերը փոխհատուցվել են պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով՝ առաջին քիմիաթերապիայի սեանսից սկսած մեկ տարվա ընթացքում տարեկան 150.0 հազար դրամի չափով:	

			4. «2023 թվականի ընթացքում ազգային մակարդակում հեպատիտ Բ-ի դեմ նորածինների պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 96.7% (սահմանված ցուցանիշ՝ 95% և ավել), իսկ մարզային մակարդակում՝ տատանվել է 94.4% - 99.3% սահմաններում: 2023 թվականի ընթացքում արգանդի վզիկի քաղցկեղի առաջնային կանխարգելման նպատակով ՄՊՊ-2 դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունն ազգային մակարդակում կազմել է 28.3%՝ սահմանված 50%-ի փոխարեն, պայմանավորված պատվաստումների վերաբերյալ ապատեղեկատվությամբ: 5. Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների շրջանակում հաշվետու ժամանակա-հատվածում իրականացվել են մի շարք սքրինինգային ծրագրեր:	
		3.2 2022 թվականից սկսած՝ ուռուցքաբանական, մասնավո-րապես, կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին նոր սերնդի, թանկարժեք «Տրաստուզումաբ լուծույթ ե/մ ներարկման 600մգ/5մլ» դեղի տրամադրում	ՀՀ-ում 2020թ. մարտի 26-ից մեկնարկել է «Վաղ փուլի/I-III/ դրական «Her2/Neu» կրծքագեղձի քաղցկեղի տրաստուզումաբ դեղով բուժման» ծրագիրը: 2023 թվականին հաշվառված 225 պացիենտների համար ձեռք է բերվել և առողջապահության նախարարի հրամաններով, ամսական կտրվածքով, շարունակաբար անվճար	
4.	Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և հիվանդությունների	4.2 Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 28-ի N 56-Ն հրամանում փոփոխություններ	ՀՀ առողջապահության նախարարի 13.06.2023 թ. թիվ 31-Ն հրամանով «Հիմնական դեղերի ցանկում» կատարվել են լրացումներ և փոփոխություններ:	

	ցանկերում ընդգրկված շահառուներին անվճար դեղերի շարունակական տրամադրում	կատարելու մասին» Առող-ջապահության նախարարի հրամանի ընդունում		
5.	Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վաղ հայտնաբերում	5.1 Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագրի ներդրում	1. ՀՀ առողջապահության նախարարի 31.01.2023թ թիվ 426-Լ հրամանով շարունակվել է ՀՀ առող-ջապահության նախարարի 31.03.2022թ թիվ 1331-Լ հրամանով հաստատված կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման ծրագիրը, որի շրջանակներում 2023 թվականի ընթացքում ծրագրում ընդգրկված բժշկական կազմակերպություններում իրականացվել է 2149 հետազոտություն, 111 անձի մոտ իմունաքիմիական թեստերն ունեցել են դրական արդյունքներ, 79 քաղաքացի պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել է կոլոնոսկոպիկ հետազոտության: 2. Բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով պատրաստվել և տարածվել են տեղեկատվական նյութեր կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման ծրագրի իրականացման վերաբերյալ:	
		5.2 Շարունակել և ընդլայնել կանանց ընդգրկվածությունն արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ-քսուքի հետազոտություններում	Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման միջոցառման շրջանակում 16.12.2022-15.12.2023թթ. արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով իրականացվել է արգանդի պարանոցի բջջաբանական հետազոտություն՝ թվով 29645 կանանց շրջանում՝	

			Պապանիկոլաուի (paps-smear) մեթոդով, որի համար փոխհատուցվել է շուրջ 41.5 մլն դրամ:	
		5.3 Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների տարածվածության հետազոտության իրականացում	Առողջապահության համակարգի գործունեության գնահատման (ԱՀԳԳ) տասներեքերորդ զեկույցում ներկայացված են 2022թ. իրականացված թվով հինգերորդ ընտրանքային հետազոտության արդյունքները: Սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող վարքագծային և կենսաբանական ռիսկի գործոնների տարածվածությունը: ԱՀԳԳ զեկույցը նախատեսված է առողջապահության համակարգի կազմակերպիչների, ոլորտի փորձագետների, բժիշկների և առողջապահության համակարգի գործունեությամբ հետաքրքրվող այլ մասնագետների համար:	
		5.4«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշտադիտարկման աշխատանքների իրականացվում:	Ձևավորվել է «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշտադիտարկման խումբ: 2023 թվականի ընթացքում մշտադիտարկման խմբի կողմից իրականացվել է 2148 օբյեկտի մշտադիտարկում՝ Երևան քաղաքում, ՀՀ Տավուշի, Կոտայքի և Շիրակի մարզերում:	
		5.5Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացում	1. Բնակչությանը մատուցվել է սիրտ-անոթային հիվանդությունների բժշկական օգնության և սպասարկման 41.245 ծառայություն (դեկտեմբերի 15-ի դրությամբ), որը 6,7%-ով ավել է նախորդ տարվա	

			ցուցանիշից: Վերոնշյալ ծառայությունների մատուցումը հնարավորություն է տվել ապահովել ծրագրով նախատեսված թիրախային ցուցանիշը գերազանցող արդյունք, մասնավորապես. 2021-2024թթ. ժամանակահատվածի համար որպես թիրախ սահմանված մահացության ցուցանիշի նվազումը 2022թ. բարելավվել է շուրջ 3 անգամ (մահացության դեպքերը նվազել են 14.1%-ով): Ընթացիկ տարվա 11 ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով մահացության դեպքերը նվազել են 9,7%-ով: 2. Հաշվետու ժամանակահատվածում սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ծրագրի շրջանակներում բնակչության համար շարունակական ապահովվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում սրտի անհետաձգելի վիրահատական (Stent for Life) ծառայությունների տրամադրումը, որի շրջանակներում 2023 թվականի ֆինանսական տարում (2022 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ը) մատուցվել է շուրջ 2530 ծառայություն: 3. Հաշվետու ժամանակահատվածում սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի ծրագրի շրջանակներում բնակչության համար շարունակական ապահովվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում գլխուղեղի սուր կամ ենթասուր	

			իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիայի ծառայությունների տրամադրումը, որի շրջանակներում 2023 թվականի ֆինանսական տարում (2022 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ը) մատուցվել է շուրջ 770 ծառայություն: Ծրագիրը 2023 թվականին ընդլայնվել է՝ ընդգրկելով նաև մեկ բժշկական կազմակերպություն: 4. 2023 թվականին ներդրվել և իրականացվել է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում աորտայի շերտազատված անևրիզմայի վիրահատական բուժման ծրագիրը՝ ամբողջ բնակչության համար, որի շրջանակներում մատուցվել է շուրջ 67 ծառայություն: 5. Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են բնակչության և բուժաշխատողների իրազեկմանը նվիրված բազմաթիվ միջոցառումներ (հարցա-զրույցներ, տեսանյութեր, տեղեկատվական նյութեր, հեռուստատեսային հաղորդումներ և այլն)՝ ոլորտի առաջատար մասնագետների, ՀՀ առողջապա-հության նախարարության աշխատակիցների մասնակցությամբ:	
		5.6 Օրգանների և/կամ հյուսվածքների փոխպատվաստման ծառայությունների ընդլայնում	1. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է պետական պատվերի շրջանակներում անվճար և արտոնյալ պայմաններով օրգանների փոխպատ-վաստման ծառայությունների կազմակերպումը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է փոխպատվաստման 68 ծառայություն, ինչը գերազանցում է թիրախային ցուցանիշը 70%-ով:	

			2. Ընդունվել է ՀՀ կառավարության 14.01.2024թ. ««Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 47-Ա որոշումը, որը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: 3. Հաշվետու ժամանակահատվածում բնակչության շրջանում օրգանների և հյուսվածքների փոխպատվաստումային բժշկական օգնության և սպասարկման գործընթացի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով հրապարակվել են տեսանյութեր ոլորտի առաջատար մասնագետների և ՀՀ առողջապահության նախարարության աշխատակիցների մասնակցությամ:	
		5.7 Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում (էլեկտրոնային հաղորդակցության, կրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև տպագիր նյութերի տարածման միջոցով)	1.Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման նպատակով կազմակերպվել է 2 ասուլիս, տարածվել են 27 հաղորդագրություններ, 11 ինֆոգրաֆիկաներ, 2 տեսահոլովակ, իրականացվել է 6 հարցազրույցներ, պատրաստվել է 2 ռեպորտաժ, ինչպես ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական YouTub-յան ալիքով տարածվել են տեսահոլովակներ: 2. 2023 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ Արմավիրի մարզի 7321 և Արարատի մարզի 3404 քաղաքացիներ ստացել են հատուկ խորհրդատվություն առաջնային օղակի մասնագետների կողմից՝ ֆիզիկական ակտիվության և վերջինիս խթանման կարևորության վերաբերյալ:	

			3.2023 թվականին Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմի ղեկավարների, առողջապահության և սոցիալական ապահովության, կրթության, մշակույթի և սպորտի վարչությունների աշխատակիցների հետ համատեղ կազմակերպվել են քննարկումներ՝ առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի գործոնների տարածվածության, ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ու առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված միջոցառումների (այդ թվում՝ բնակչության իրազեկման աշխատանքների) վերաբերյալ: 4. «Առողջ ապրելակերպի թեմայով» պատրաստվել են 7 պաստառներ, 7000 թռուցիկ՝ 9 թեմայի վերաբերյալ, 1000 ինքնակպչուն թաղանթներ: 5. 2023 թվականի ընթացքում 10 մարզերի քաղաքներում ընտանեկան ձևաչափով իրականացվել են առողջ կենսաձևի քարոզչության ընդհանուր թվով 10 արշավներ: 6.«Առողջ և ակտիվ ծերացման» գաղափարը խթանելու, «Ծերացման նոր հասարակական մոդել» ստեղծելու, մեծահասակ բնակչությանն առողջ ապրելակերպի մասին իրազեկելու, ֆիզիկական ակտիվությունը խրախուսելու, առողջ սնվելու գաղափարը քարոզելու նպատակով Երևան քաղաքում իրականացվել է «Առողջ ծերացման» արշավ: 7.2023 թվականի հոկտեմբեր-դեկեմբեր ամիսների ընթացքում Երևան քաղաքի վարչատարածքային	

			շրջանների 60 վայրերում կազմակերպվել են իրազեկման միջոցառումներ՝ տարեցների ֆիզիկական ակտիվության խթանման, առողջ սնվելու թեմաներով և սոցիալիզացիայի նպատակով:	
		5.11 Կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման և վաղ հայտնաբերման սքրինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության ռիսկային խմբերի շրջանում	Հաշվի առնելով դրամաշնորհային ծրագրի արդյունավետությունը և տնտեսված գումարը, դրամաշնորհային ծրագրում ներառվել է նաև ՀՀ Շիրակի մարզը:	
8.	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում	8.1 «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարությանը և 2023-2027 թվականների միջգերա-տեսչական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման ընդունում	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ռազմավարության և 2023-2027 թվականների միջգերատեսչական միջոցառումների ծրագրի մշակման նպատակով հաստատվել է «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելման ծրագիրը և 2024-2027 թվականների միջգերա-տեսչական միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 15.01.2024թ. N 161-Լ և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 23.01.2024թ. N 106-Լ համատեղ հրամանը:	
10.	Մայրական, վերարտադրողական առողջության, առողջապահական	10.2.Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրվող ծառայությունների	1. Ապագա կաբինետների գործունեության իրավական հիմքեր ստեղծելու նպատակով կատարվել են փոփոխություններ ՀՀ կառավարության 29.06.2002 թ	

	գործոնով պայմանավորված ծնելիության բարելավում	(աշխարհագրական և ֆինանսական) մատչելիության ապահովում	N 867 որոշման մեջ՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 31-Ն որոշմամբ: 2. ՀՀ ԱՆ ԱԱԻ-ում մշակվել է մասնագիտական վերապատրաստման ծրագիր: 3. Կաբինետների ստեղծման նպատակով ընտրվել են 3 մարզ (Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզեր), որոնց մասնագետները այժմ անցնում են վերա-պատրաստում ԱՆ ԱԱԻ-ի «Վերարտադրողական բժշկության ամբիոնում»:	
		10.3. Մարզերում պրենատալ ախտորոշման ծառայությունների ուժեղացում	ՀՀ Առողջապահության նախարարի 09.03.2023թ. թիվ 1125–Լ հրամանով Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում ներդրվել է պրենատալ սքրինինգի պիլոտային ծրագիրը: «Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Պտղի բժշկության հիմնադրամի միջև Պտղի բժշկության 2022-2025 թթ. ծրագրի մասին» փոխըմբռնման հուշագրի շրջանակներում 2023 թվականի մայիսի 20-21-ին տեղի է ունեցել «Պտղի բժշկության հիմ-նադրամի» գիտագործնական անվճար դասընթացը, որի տեսական մասին մասնակցել են Երևանից և բոլոր մարզերից 198 բժիշկ, իսկ գործնականին՝ 41:	
11.	Մայրական առողջության բարելավում	11.1 Հայաստանի Հանրապե-տությունում կեսարյան հատումների աճի միտման պատճառների վերհանում՝ թիրախային ծրագրեր մշակելու նպատակով	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի միտման պատճառների հետազոտություն, զեկույցի արդյունքները քննարկվել են ոլորտի մասնագետների հետ:	

		11.2 «ՀՀ կեսարյան հատումների աճի դադարեցմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի դադարեցմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը և կեսարյան հատումների աճի նվազեցման 2024-2028 թվականների գործողությունների ժամանակացույցը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 08.12.2023թ. թիվ 5888-Լ հրամանով:	
		11.3 Երևանի ծննդօգնության 3-րդ մակարդակի բժշկական կազմակերպությունների կողմից ծննդօգնություն իրականացնող մարզային բժշկական կազմակերպություններին մեթոդական աջակցության ցուցաբերում	Ծննդօգնություն իրականացնող մարզային բժշկական կազմակերպություններին Երևանի ծննդօգնության 3-րդ մակարդակի բժշկական կազմակերպությունների կողմից մեթոդական աջակցություն կազմակերպելու նպատակով հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 16.10.2023թ. «Երևանի ծննդօգնության 3-րդ մակարդակի բժշկական կազմակերպությունների կողմից ծննդօգնություն իրականացնող մարզային բժշկական կազմակերպություններին մեթոդական աջակցություն կազմակերպելու մասին» թիվ 4968-Լ հրամանը:	
12.	Երեխաների առողջական ցուցանիշների բարելավում, զարգացման բնածին խանգարումների վաղ հայտնաբերում ու շտկում, հաշմանդամության ու մահացության կանխարգելում	12.1.Ադրենոգենիտալ համախտանիշի նորածնային սկրինինգային ծրագրի ներդնում	Ընդունվել են ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի «Ադրենոգենիտալ համախտանիշի նորածնային սքրինինգի կազմակերպման և իրականացման ծրագիրը հաստատելու մասին» *թիվ 5852-Լ և 26.12.*2023թ. «Ադրենոգենիտալ համախտանիշի նորածնային սքրինինգի փորձարարական կարգով կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 6261-Լ հրամանները:	
		12.2 Մարզային բժշկական կազմակերպություններում երեխաների	ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 03-Ն, ապրիլի 19-ի թիվ 15-Ն,	

		ինտենսիվ թերապիայի ծառայությունների բուժանձնակազմի գիտելիքների և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	մայիսի 23-ի թիվ 23-Ն, հունիսի 5-ի թիվ 30-Ն, հոկտեմբերի 25-ի թիվ 50-Ն, դեկտեմբերի 20-ի թիվ 72-Ն, դեկտեմբերի 19-ի թիվ 6094-Լ, դեկտեմբերի 19-ի թիվ 6112-Լ, դեկտեմբերի 20-ի թիվ 6144-Լ հրամաններով հաստատվել է երեխաների ինտենսիվ բուժօգնության մեջ հաճախ հանդիպող վիճակների վարման 6 գործելակարգ, 3 ուղեցույց և 10 ալգորիթմ: Հաստատվել է ՀՀ ԱՆ 2023 թվականի հունիսի 29-ի թիվ 2663-Լ հրամանը, որը կանոնակարգել է ցամաքային տրանսպորտի միջոցով իրականացվող մանկական արագ արձագանքման արտագնա ծառայության աշխատանքները:	
		12.3 Հայաստանի Հանրապետությունում մանկական պալիատիվ արտահիվանդանոցային պիլոտային ծառայության ստեղծում՝ Երևանի և մոտակա մարզերի շահառուների համար	Հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 08.08.2023թ. «Մանկական պալիատիվ արտահիվանդանոցային պիլոտային ծառայություն ստեղծելու, մանկական պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման արտահիվանդանոցային պիլոտային շարժական (մոբիլ) ծառայության կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 3872-Լ հրամանը:	
		12.4 Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում մատուցվող ծառայությունների, հղիների, երեխաների խնամքի, առավել տարածված հիվանդությունների և վիճակների վերաբերյալ տեղեկատվական/խորհրդատվական ինտերնետային հարթակի ստեղծում, գործարկում, պահպանում և պարբերաբար թարմացում	Հղի կանանց, վաղ հասակի երեխաների ծնողների և խնամողների համար նախատեսված «Բարև, բալիկ» կայքը և հեռախոսային հավելվածը հասանելի են, օգտատերերի կողմից որոշ տեխնիկական խնդիրներ ստացել են լուծում, քարոզարշավը սոցցանցերում շարունակվում է, զգալի բարձրացել է կայքի դիտումների և օգտատերերի թիվը:	

13.	Դեռահասներին մատուցվող ծառայությունների	13.2 «Առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակեր-պություններում և հանրակրթական ուսումնական հաստատություններում դպրոցահասակ երեխաների և դեռա-հասների բժշկական օգնության և սպասարկման կարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի «Առողջության առաջնային պահպանման (այսուհետ, ԱԱՊ) բժշկա-կան կազմակերպություններում և հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների և դեռահասների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 5889-Լ հրամանը:	
15.	Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում առողջապահական համակարգի անխափան գործունեության ապահովում	15.2 Առողջապահության նախարարության և Արտակարգ իրավիճակների նախարարության փոխհամագործակցության մեխանիզմների և պլանների վերանայում	ԱԻՆ իրավահաջորդ ՆԳՆ հետ կազմվել է նոր փոխհամագործակցության պլան (ՀՀ ԱՆ 4355-Ա, առ 12.09.2023թ և ՀՀ ՆԳՆ 900-Ա, առ 29.09.2023թ.)	
16.	Հայաստանի Հանրապետության և Վրաստանի առողջապահության համակարգում միջսահմանային համագործակցության բարելավում	16.1 Արագ արձագանքման բժշկական թիմի (ԱԱԲԹ) ստեղծում և միջազգային հավաստագրում	1.Հաշվետու ժամանակահատվածում Առողջապա-հության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից ՀԱԱԲԹ-ի որակավորման ընթացիկ աշխատանքներին պատշաճ պատրաստվելու համար թիմը մասնակցել և մասնակցում է տարատեսակ ուսումնական ծրագրերի, դասընթացների:	
17.	Վարակիչ հիվանդությունների կանխարգելում	17.2 Խմելու ջրի որակին վերաբերող նորմերի փոփոխության նախագծի մշակում	««Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակին ներկայացվող պահանջներ» 2.1.4.001-23 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության	

			առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 53-Ն հրամանը 2023 թվականի նոյեմբերի 21-ին հրապարակվել է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում:	
		17.4 ՀՀ Կառավարության 17.12.2020թ. N 2129-Ն որոշմամբ հաստատված 2021-2025 թվականների իմունական-խարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովում	2023թ. ընթացքում Հայաստանի Հանրապետու-թյունում իրականացվել են ՀՀ Կառավարության 17.12.2020թ. N 2129-Ն որոշմամբ հաստատված «2021-2025 թվականների իմունականխարգելման ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումները: 2023թ. ընթացքում ՀՀ-ում 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը կազմել է 92%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը կազմել է 91 %,6 տարեկանների ընդգրկվածությունը կազմել է 93%:2023 թվականի ամառային զորակոչի ենթակա անձանց պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 95%:	
		17.5 Նոր պատվաստումների ներդրում՝ ըստ անհրաժեշտության, պատվաստումների նկատմամբ պահանջարկի բարձրացում	1. 2023 թվականի ընթացքում ՀՀ-ում 18 տարեկան և բարձր տարիքի բնակչության շրջանում կորոնավի-ռուսային հիվանդության դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը կազմել է 1-ին դեղաչափ՝ 51.6%, 2-րդ՝ 46.3%, բուստեր՝ 4.2%: 2. ՀՀ Պատվաստումների ազգային օրացույցում 2024 թ. ջրծաղիկի դեմ պատվաստումների փուլային ներդրման նպատակով կատարվել է փոփոխություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2129-Ն որոշման մեջ, որը հաստատվել է Հայաստանի	

			Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2129-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 2035-Ն որոշմամբ:	
19.	Հանրության (մարդու) առողջության պահպանում՝ առողջության պաշտպանություն և խթանում, հիվանդությունների կանխարգելում	19.3 Շրջակա միջավայրի հետա-զոտությունների և ազգաբնակչության հիվանդացության միջոցով ռիսկերի բացահայտում, կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակում	Մշակվել ու իրականացվել է հանքարդյունաբերական և մետաղաձուլման արդյունաբերական գործունե-ության ազդեցությամբ պայմանավորված ՀՀ Սյունիքի մարզի Կապան և Քաջարան, ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքների բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ դիտարկումների, ուսումնասիրու-թյունների իրականացման 2022 և 2023 թվականների ծրագրերը: Ծրագրերի արդյունքների հիման վրա մշակված կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունները ՀՀ շրջակա միջավայրի ու տարածքային կառավարման և ենթակառուց-վածքների նախարարություններ, ինչպես նաև ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին:	
21.	Բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավում	21.2 Կլինիկական ուղեցույցների, պացիենտի վարման գործելակարգերի և այլ փաստաթղթերի մշակում և ներդնում	2023 թվականի ընթացքում մշակվել է թվով 225 փաստաթուղթ, որից հաստատվել է թվով 21 նորմատիվ փաստաթուղթ, թվով 204-ը՝ դրված է ներքին շրջանառության մեջ:	
22.	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացում, արդյունքային	22.1 Մինչև 2026 թվականն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի և նեղ	2023 թվականի պետական բյուջեի հայտում հաշվարկվել է առողջության առաջնային պահպանում իրականացնող բժշկական կազմակերպությունների բժիշկների՝ թերապևտների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների աշխատավարձերի	

	ցուցանիշների ամրագրում	մասնագետների աշխատավարձերի ավելացում՝ 50 %-ով	բարձրացում մեկ դրույքի հաշվով՝ ըստ կատարողականի ցուցանիշների միջինը 30% -ով:	
23.	Առողջապահական ոլորտի մարդկային ներուժի և որակի կառավարում	23.5 Բուժաշխատողների ռեգիստրի գործարկում և պետական մարմինների կողմից վարվող տվյալների բազաներին ինտեգրում	Բուժաշխատողների ռեգիստրը գործարկման փուլում է, պետական մարմինների կողմից փոխգործելիության հարթակով համակարգում ինտեգրված են ՀՀ Ոստիկանության պետական ռեգիստրի բազան, Պետական եկամուտների կոմիտեի՝ Հարկատու 3 ծրագրի տյալները, ինչպես նաև միացած է Առողջապահության ազգային օպերատորի բազաների հետ: Ներկայումս իրականացվում է բուժաշխատողներ գրանցման և մուտքագրված տվյալների ուսումնասիրման գործընթացները: Բուժաշխատողների հավաստագրան գործընթացը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 28-Ն հրամանի, 2024թ. հունվարի 1-ից, իրականացվելու է բացառապես Բուժաշխատողների ռեգիստրի միջոցով: ՀՀ ՊԵԿ-ի կողմից մշակված է WEB ծառայություն, որի միջոցով փոխանակվում են բուժաշխատողների մասին տվյալներ:	
28.	Առողջապահական հաստատությունների արդիականացում	28.1 ՀՀ Վայոց ձորի մարզային հիվանդանոցի կառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով	2023թ. դեկտեմբերի 20-ին ավարտվել են 2021թ. հուլիս ամսից մեկնարկած ՀՀ Վայոց ձորի բժշկական կենտրոնի կառուցման շինարարական աշխատանք-ները: ՀՀ պետական բյուջեի շրջանակներում Բժշկական կենտրոնը հագեցվել է ժամանակակից չափանիշներին համապատասխան բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:	Ներկայում ընթանում է ավարտված շինարարական աշխատանքների փաս-տագրման գործընթացը (Ավարտական ակտի հաստատում մասնագիտացված կազմակերպությունների

				կողմից), ինչպես նաև լիցենզավորման գործընթացը:
		28.3 ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի բժշկական կենտրոնի վերակառուցում	2021թ. օգոստոս ամսից մեկնարկել են շինարարական աշխատանքները: Ավարտը նախատեսվում է 2025թ:	
		28.4 ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի մասնաշենքերի վերակառուցում	2021թ. օգոստոս ամսից մեկնարկել են շինարարական աշխատանքները: Ավարտը նախատեսվում է 2025թ:	
		28.5 ՀՀ ԱՆ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի մասնաշենքերի վերակառուցում	2022թ. սեպտեմբերի 1-ից մեկնարկել են շինարա-րական աշխատանքները: Ավարտը նախատեսվում է 2025թ:	
		28.6 ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ԲԿ ինֆեկցիոն ծառայության համար նոր մասնաշենքի կառուցում և հագեցում բժշկական կահույքով,սարքավորումներով և պարագաներով	13.05.2023թ. մեկնարկել են շինարարական աշխատանքները: Ավարտը նախատեսվում է 2024թ:	
		28.7 ՀՀ Արմավիրի մարզի Հիվան-դությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնաճյուղի վերակառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով	18.11.2023թ. մեկնարկել են շինարարական աշխատանքները: Ավարտը նախատեսվում է 2024թ:	

		28.8 ՀՀ Արարատի մարզի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի մասնաճյուղի վերակառուցում և հագեցում բժշկական կահույքով, սարքավորումներով և պարագաներով	15.05.2023թ.մեկնարկել են շինարարական աշխատանքները: Ավարտը նախատեսվում է 2024թ:	
		28.10 ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցում	Շինարարական աշխատանքները մեկնարկել են 29.06.2021թ.: Ավարտը նախատեսվում է 2024թ:	
		28.11 ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովտի առողջության կենտրոնի կառուցում:	Շինարարական աշխատանքները մեկնարկել են 01.07.2021թ.: Ներկա պահին իրականացվում է շենքի արտաքին երեսապատման և ներքին հարդարման աշխատանքներ, որոնք հնարավոր կլինի ավարտել 2024 թվականի 3-րդ եռամսյակում:	Շինարարական աշխատանքները պետք է ավարտվեին 2023 թվականի վերջին, սակայն աշխատանքները դեռևս ավարտված չեն՝ եղանակային վատ պայմանների և դանդաղ շինարարական ընթացքի պատճառով:
		28.12 ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի հիվանդանոցի վերակառուցում	Շինարարական աշխատանքները մեկնարկել են 18.10.2022թ.: Ավարտը նախատեսվում է 2025թ:	
		28.14 ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում	Շինարարական աշխատանքները մեկնարկել են 20.11.2021թ.: Ավարտը նախատեսվում է 2025թ:	

		28.15 ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցում	Շինարարական աշխատանքները մեկնարկել են 18.10.2022թ.: Ավարտը նախատեսվում է 2025թ:	
		28.16 ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ համայնքի Նաիրիի բժշկական կենտրոնի կառուցում	Շինարարական աշխատանքները մեկնարկել են 02.10.2022թ: Ավարտը նախատեսվում է 2025թ:	
		28.17 ՀՀ Լոռու մարզի Տաշիր ԲԿ նոր շենքի կառուցում	Շինարարական աշխատանքները մեկնարկել են 07.10.2022թ.: Ավարտը նախատեսվում է 2025թ:	

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
2.	Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի և փոփոխությունների նախագծերի մշակում	2.4. Սահմանադրության փոփոխությունների նախագծի մշակում և հրապարակում, քննարկում, հաստատում, ընդունում, ինչպես նաև նախագծին հավանություն տալու մասին Կառավարության որոշման ընդունում:		Սահմանադրական բարե-փոխումների մասնագիտական հանձնաժողովը մշակել և Սահմանադրական բարե-փոխումների խորհրդի քննարկմանն է ներկայաց-րել Սահմանադրական բա-րեփոխումների հայեցա-կարգի նախագիծը, որը

				դեռևս քննարկումների փուլում է: Սահմանադրական բարեփոխումների նախագծի մշակումը հնարավոր կլինի իրականացնել միայն սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը հաստատվելուց հետո:
3.	Ընտրական օրենսդրության կիրառման ընթացքում վերհանված խնդիրների լուծում	3.2 Գույքագրված խնդիրների լուծմանը միտված ընտրական օրենսդրության փոփոխությունների նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում, քննարկում և օրենսդրության փոփոխությունների նախագծին հավանություն տալու մասին կառավարության որոշման ընդունում:		«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի լրամշակված փաթեթը 25.01.2024թ. ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:
8.	Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում	8.1 «Հաշտարարության մասին» օրենքի վերանայմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակում, սահմանված կարգով շրջանառում, քննարկում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	2023թ. ընդունվել են «Հաշտարարության մասին» օրենքի փոփոխությունների կիրարկման համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը, որոնցով սահմանվել են անհրաժեշտ պայմաններ նոր հաշտարարներ ներգրավելու, նրանց ուսուցումն ու վերապատրաստումն իրականացնելու, հաշտարարների ռեեստրի վարման և ընտրության ու առցանց հաշտարարության իրականացման համար:	

10.	Փաստաբանության ոլորտի զարգացում	10.1 Փաստաբանության մասին օրենքի վերանայմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակում, սահմանված կարգով շրջանառում, քննարկում և օրենսդրական փաթեթին հավանություն տալու մասին կառավարության որոշման ընդունում:	Ընդունվել է ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. ՀՕ-366-Ն օրենքը:	
13.	Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի ընդունում	13.1 «Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. Գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակում շահագրգիռ մարմինների, միջազգային գործընկեր կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ քննարկումների արդյունքում, առնվազն 3 հանրային քննարկումների կազմակերպում:	ՄԱԶԾ ազգային փորձագետների մասնակցությամբ ՄԻՊ 2023-2025թթ. ԳԾ-ի մշակման աշխատանքները սկսվել են 2022թ. նոյեմբերից, և շահագրգիռ գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվել է 2 սեկտորալ քննարկում: 2023թ. մարտի 27-ին և մարտի 30-ին տեղի են ունեցել ՄԻՊ 2023-2025թթ. ԳԾ-ի վերաբերյալ հանրային քննարկումներ:	

		13.2 «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունում	ՀՀ կառավարության կողմից 28.09.2023թ. ընդունվել է «ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1674-Լ որոշումը:	
14.	Անձնական տվյալների պաշտպանության մակարդակի բարելավում	14.3 Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կարողությունների (մարդկային ռեսուրսների, մասնագիտական, տեխնիկական) հզորացում		Միջոցառումը չի կատարվել ֆինանսավորման բացակայությա պատճառով:
15.	Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի բարեփոխումների ռազմավարության իրականացում	15.1 Օրենսդրական փոփոխությունների իրականացում՝ միտված պրոբացիայի ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կարգավիճակի վերանայմանը և պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքների ընդլայնմանը:	01.01.2024թ. ուժի մեջ է մտել «Պրոբացիայի ծառայության մասին» նոր օրենքը (ՀՕ-422-Ն), որով Պրոբացիայի ծառայությունը գործում է որպես պետական ծառայության առանձին տեսակ՝ անցում կատարելով քաղաքացիական ծառայությունից:	
		15.2 Պրոբացիայի ծառայությանն էլեկտրոնային հսկողության համար անհրաժեշտ միջոցներով և ենթակառուցվածքներով զինում	Տնային կալանքի և վարչական հսկողության համար ձեռք են բերվել լեհական արտադրության 661 էլ. հսկողության սարքեր: Մատակարարի հետ կնքվել է երկարաժամկետ շրջանակային պայմանագիր՝ լեհական արտադրության սարքերը պարզեցված	

			ընթացակարգով՝ ըստ անհրաժեշտության, մատակարարվելու վերաբերյալ:	
		15.9. «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2023-2026 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում:	ՀՀ արդարադատության նախարարի կողմից 20.10.2023թ. հաստատվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2024-2026 թվականների գործունեության հիմնական ուղղությունները և դրանց իրականացման ժամանակացույցը սահմանելու մասին» N 627-Լ հրամանը:	
16.	Կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության իրագործում	16.1 «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրահիրականաց-ման 2023-2026թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում, սահմանված կարգով շրջանառում և ընդունում:	Ընդունվել է Կառավարության 26.10.2023թ. N 1871-Լ որոշմամբ:	
17.	Կոռուպցիայից և հովանավորչությունից զերծ դատական համակարգի ապահովում	17.1 Դատավորների բարեվարքության գնահատում	«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը լրամշակվում է՝ համաձայն 27.11.2023թ. պետահիրավական նախարարական կոմիտեի նիստի արձանագրության հանձնարարականների: Կոռուպցիայի կանխարգել-ման հանձնաժողովը 2023թ. իրականացրել է՝ Դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում ընդգրկվել հավակնող 77 անձանց, Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակ-վելու համար առաջխաղացման ենթակա	

			դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվել հավակնող 73 անձանց, Վճռաբեկ դատարանում՝ 28 անձանց բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն:	
		17.2 Կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում	Արդարադատության ակադեմիայի կողմից «ՀՀ-ում հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պետության կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հիմնահարցեր» թեմայով 2023թ. նոյեմբեր-դեկտեմբերին վերապատրաստվել են Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի բոլոր դատավորները:	
19.	Հարկադիր կատարման համակարգի բարեփոխումների կատարում՝ միտված կատարողական վարույթի արդյունավետության բարձրացմանը, ներառյալ թվայնացման և էլեկտրոնային համակարգերի գործարկման միջոցով	19.1 Կատարողական վարույթների և կատարողական գործողությունների կատարման համապարփակ իրավակարգավորումների մշակում՝ հաշվի առնելով հարկադիր կատարման ենթակա ակտերի բոլոր առանձնահատկությունները, տարբերակելով կատարողական ծախսերը, կրճատելով վարույթի ժամկետները, ձևավորելով կատարողական վարույթի կասեցման միասնական կարգ և հիմքեր:	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագիծը, որը միտված է կարգավորելու դատական ակտերի և օրենքով սահմանված հարկադիր կատարման ենթակա այլ ակտերի կատարման շրջանակներում առաջացող հարաբերությունները, ապահովել կատարողական վարույթի ոլորտային օրենսդրության ամբողջական համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներին, ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:	
		19.2 Կատարողական ծախսերի տարբերակված դրսևորումների ամրագրում	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծով սահմանվել են կատարողական վճարների փաստացի չափը կոնկրետ վարույթով իրականացված գործողությունների հետ ուղղակիորեն կապակցելու 13 դեպքեր	

		19.3 Կատարողական վարույթների կասեցման հիմքերի և կարգի վերանայում:	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծով նախատեսվել են կատարողական վարույթի ավարտի, կարճման, կասեցման իրավական հետևանքները, հիմքերը՝ դրանք տարանջատելով ըստ այս ինստիտուտների իրավական բովանդակության:	
		19.4 Կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմի կիրառման եղանակների ընդլայնում	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծով սահմանվել են կատարողական վարույթի շրջանակում ծանուցումներն անձնական էլեկտրոնային գրասենյակի և էլեկտրոնային այլ համակարգերի միջոցով իրականացնելու, կատարողական վարույթի նյութերն էլեկտրոնային ձևով ստեղծվելու և պահպանվելու, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով նախատեսված օպերատորից կամ ծառայություններ մատուցողից պարտապանի կոնտակտային տվյալներ ստանալու վերաբերյալ կարգավորումներ: Կատարողական վարույթում էլեկտրոնային գործիքակազմի կիրառման նպատակով ներդրվել է ինքնաշխատ մակագրման համակարգ, որի շնորհիվ ապահովվում է մուտքագրված հարկադիր կատարման ենթակա ակտերի մակագրումը հարկադիր կատարողների միջև՝ առանց որևէ մարդկային միջամտության: Կատարելագործվել է բռնագանձման ինքնաշխատ մոդուլը, որն ապահովում է պարտապանի բանկային հաշիվներում առկա արգելադրված միջոցների	

			ինքնաշխատ, առանց որևէ մարդկային միջամտության բռնագանձումը:	
		19.5. Կատարողական վարույթի ժամկետների կրճատում	«Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծով նախա-տեսված են մի շարք կարգավորումներ, որոնք միտված են կատարողական գործողու-թյունների կատարման միջին ժամկետի կրճատմանը: Մշակվել է ծրագրային ապահով-ման նոր մոդուլ, որն ապահովում է ՀԿԱԾ դեպոզիտ հաշիվներին փոխանցվող գումարների նույնա-կանացումը տվյալ պարտապանի մասնակցությամբ կատարողական վարույթների հետ և ապահովում այդ կատարողական վարույթներով գումարի բաշխումը: ՀԿԱԾ կատարողական վարույթի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգում ներդր-ել է նոր ծրագրային մոդուլ, որի շնորհիվ կատարողական վարույթ-ներով կատարված վճարումների մշակման գործընթացը ամբողջ ծավալով ավտոմատացվել է և իրականացվում է 24/7 ռեժիմով: Արդյունքում վճարային տերմինալ-ների միջոցով վճարելու դեպքում կ/վարույթները ավտոմատ կարճ-վում են, նաև՝ ոչ աշխատանքային օրերին ու ժամերին, և արգելանքները վերացվում են:	

		19.6 Կատարողական վարույթի ամբողջական թվայնացում և էլեկտրոնային համակարգի ներդրում		2023թ. մշակվել է կատարողական վարույթ-ների էլեկտրոնային կառա-վարման միասնական հա-մակարգի թվայնացման տեխնիկական առաջադ-րանք: Իրականացված մրցույթում հաղթող կապալառու ընկերությունը ստեղծել է կատարողական վարույթի ամբողջական էլեկտրոնային կառավար-ման համակարգ, որն ենթարկվել է աուդիտի և այժմ գտնվում է շահագործման փուլում:
		19.7 Սպասարկող տեխնիկական սարքավորումների ապահովում	«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀԿԱԾ աշխատանքը կազմակերպելու համար ձեռք են բերվել անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներ՝ համակարգիչ-ներ, Քաղաքացիների սպասարկ-ման գրասենյակում օգտագործելու համար հեռուստացույցներ, ձեռք են բերվել անխափան սնուցման սարքեր, անհրաժեշտության դեպքում փոխարինվել և արդիականացվել են բաժանարար կոմուտատորները:	

		19.8 Մասնագետների վերապատրաստում և իրազեկում	2023թ. ընթացքում Հարկադիր կատարողները մասնակցել են՝ 1. ՀԿԱԾ կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթաց-ներին, որոնք վերաբերվում են հարկադիր կատարման ոլորտում նոր գործիքակազմերի կիրառու-թյան առանձնահատկություններ-ին ու տեխնիկական հնարավորություններին: 2. Հատուկ ուսուցման դասընթացներին: 3. «Թիրախային տեխնիկական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում Վարչական վարույթի և վարչական դատավարության վերաբերյալ սեմինարին: ՀՀ արդարադատության նախարարի 13.11.2023թ. N 667-Լ հրամանի համաձայն՝ հարկադիր կատարողները սահմանված գրաֆիկով կանցնեն պարտադիր վերապատրաստում:	

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակ	Միջոցառումներ	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5

1.	ՀՀ պետական շահերի պաշտպանություն, ինքնիշխանության ամրապնդում, Արցախի ժողովրդի իրավունքների և անվտանգության ապահովում, ԼՂ հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորում:	1.2 Աշխատանք Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության հավելյալ միջազգային երաշխիքների ձևավորման ուղղությամբ:	Փաստացի մերժելով Ստեփանակերտի և Բաքվի միջև կառուցողական երկխոսությունը և կոպտորեն խախտելով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները՝ Ադրբեջանը շարունակեց էթնիկ զտումների իր քաղաքականությունը՝ նախ Լաչինի միջանցքի 10-ամսյա արգելափակմամբ հումանիտար ճգնաժամ առաջացնելով Լեռնային Ղարաբաղում, ապա սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական ուժի կիրառմամբ, որը հանգեցրեց ԼՂ հայության բռնի տեղահանությանը: Լաչինի միջանցքի արգելափակման հարցը ՀՀ կողմից անդադար բարձրաձայնվել է միջազգային բազմակողմ և երկկողմ հարթակներում, այդ թվում՝ տեղի է ունեցել ՄԱԿ ԱԽ արտահերթ նիստ և ԵԱՀԿ մշտական խորհրդի երկու հատուկ նիստ ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանի մասնակցությամբ: Արդարադատության միջազգային դատարանը փետրվարի 22-ին և հուլիսի 6-ին ընդունել է իրավաբանական պարտադիր ուժ ունեցող որոշումներ՝ պարտավորեցնելով Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը: Սեպտեմբերի 19-ին ԼՂ դեմ Ադրբեջանի հարձակումից հետո հրավիրվել է ՄԱԿ ԱԽ երկրորդ արտահերթ նիստը, որին ևս մասնակցել ու ելույթ է ունեցել ՀՀ ԱԳ նախարարը: ԼՂ հայության տեղահանությունից հետո Հայաստանը ջանքերն ուղղել է Հայաստան տեղափոխված բռնի տեղահանվածների կարիքների հասցեագրման միջազգային մեխանիզմների գործարկմանը:	

			Արդարադատության միջազգային դատարանը նոյեմբերի 17-ին ընդունած որոշմամբ հաստատել է, որ առկա է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում հայերի իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ՝ ամրագրելով Լեռնային Ղարաբաղի հայերի վերադարձի իրավունքը:	
		1.3 Մարդու իրավունքների և միջազգային հումանիտար իրավունքի ոլորտում մասնագիտացված միջազգային կառույցներում Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացված մարդու իրավունքների կոպիտ խախտումների ներկայացում:	Միջազգային կառույցների հետ իրականացվել է ծավալուն աշխատանք ԼՂ հայ բնակչության նկատմամբ կատարված մարդու իրավունքների կոպիտ խախտումները ներկայացնելու ուղղությամբ, նախապատրաստվել և տարածվել են ՀՀ դիրքորոշումները ներկայացնող բազմաթիվ փաստաթղթեր, ՀՀ ԱԳ նախարարի և նախարարի տեղակալի մակարդակով տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ ՄԱԿ բարձրաստիճան պաշտոնյաների, Ցեղասպանության կանխարգելման հարցերով ՄԱԿ Գլխավոր քարտուղարի հատուկ խորհրդականի, ՄԱԿ Գլխավոր քարտուղարի՝ զինված հակամարտություններում երեխաների հարցերով հատուկ ներկայացուցչի, ՄԱԿ Մարդու իրավունքների բարձր հանձնակատարի հետ: ԼՂ-ում էթնիկ զտում իրականացնելուց հետո իրավիճակին անդրադարձել են մարդու իրավունքների մարմինները:	

			ՄԻԽ 54-րդ նստաշրջանի օրակարգի 10-րդ կետի (տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման վերաբերյալ) ընդհանուր քննարկման ընթացքում Ֆրանսիան 40 երկրների անունից հանդես է եկել Լեռնային Ղարաբաղի իրավիճակի վերաբերյալ համատեղ հայտարարությամբ: Արգենտինացի հայտնի իրավաբան, Միջազգային քրեական դատարանի առաջին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն պատրաստել է զեկույց (փորձագիտական կարծիք) Լեռնային Ղարաբաղի շրջափակման արդյունքում ստեղծված իրավիճակի շուրջ, որտեղ տեղի ունեցողը որակել է որպես ցեղասպանություն: ՄԱԿ-ում տեղի է ունեցել քննարկում՝ նվիրված Լեռնային Ղարաբաղում հումանիտար իրավիճակին՝ վայրագության հանցագործությունների ռիսկերի և կանխարգելման մեխանիզմների համատեքստում, որի ընթացքում ներկայացվել է Գլխավոր քարտուղարի Ցեղասպանության կանխարգելման հարցերով նախկին հատուկ խորհրդական, Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի մարդու իրավունքների պրոֆեսոր Խուան Մենդեսի զեկույցը Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Ճշմարտության, արդարության և չկրկնվելու երաշխիքների հարցերով Հատուկ զեկուցող Ֆաբիան Սալվիոլին նոյեմբերի 16-ից 24-ը այցելել է Հայաստան: Այցի արդյունքում հրապարակվել է նախնական դիտարկումների փաստաթուղթ, որում շեշտվել է, որ հայ ժողովուրդը Առաջին աշխարհամարտում ենթարկվել է ցեղասպանության, 20-րդ դարում անցել	

			խորհրդային շրջանի բռնաճնշումների, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում՝ պատերազմական հանցագործությունների միջով: Զանգվածային ոճրագործությունների դեմ պայքարող միջազգային կառույցներ և ցանցերի կողմից ընդունվել են Լաչինի շրջափակումը և ԼՂ ժողովրդի հանդեպ զանգվածային ոճրագործությունները, այդ թվում էթնիկ զտումը դատապարտող բազմաթիվ հայտարարություններ, ստեղծված ռիսկային իրավիճակի վերաբերյալ ահազանգել են այնպիսի կառույցներ ինչպիսիք են՝ Ընդդեմ զանգվածային ոճրագործությունների հանցագործության գլոբալ գործողություն–ը (GAAMAC), Պաշտպանելու պատասխանատվության համաշխարհային կենտրոնը (Global Centre for the Responsibility to Protect), Լեմկին ինստիտուտը և մյուսները:	
		1.4 Աշխատանք Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդների ազատ արձակման ուղղությամբ, խնդրի ներկայացում միջազգային բարձրաստիճան պաշտոնյաներին, պետությունների ղեկավարներին, խորհրդարանականներին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին և փորձագետներին՝ օգտագործելով ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ համապատասխան ընթացակարգերը:	Սեպտեմբերի 19-ին ԼՂ դեմ Ադրբեջանի ռազմական հարձակման արդյունքում Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդառված անձանց թիվը հասել է 55-ի: Չնայած այն հանգամանքին, որ 2023թ. դեկտեմբերի 14-ին ադրբեջանական կողմը վերադարձրել է 32 հայ ռազմագերիների՝ ի կատարումն 2023թ. դեկտեմբերի 7-ի ՀՀ վարչապետի աշխատակազմի և Ադրբեջանի նախագահի վարչակազմի միջև բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության, այդուհանդերձ, Ադրբեջանում ապօրինի գերության մեջ են շարունակում մնալ 23 հայ ռազմագերիներ և պատանդառված անձինք:	

			Շարունակվել է ակտիվ աշխատանքը միջազգային մարդասիրական կազմակերպությունների հետ (ԱԳ նախարարի հանդիպումներ ԿԽՄԿ նախագահի հետ, փոխնախարարի մակարդակով պարբերական շփումներ ԿԽՄԿ հայաստանյան գրասենյակի ղեկավարի հետ՝ փաստերի և տվյալների ճշգրտման նպատակով): Աշխատանքներ են տարվել ՄԱԿ պայմանագրային մարմինների և հատուկ ընթացակարգերի հետ (Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների զանգվածային խախտումների վերաբերյալ նյութերի տրամադրում):	
		1.5 Համագործակցություն մշակութային արժեքների պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ) հետ՝ ուղղված Արցախի հայկական մշակութային և կրոնական Ժառանգության երաշխավորված պաշտպանությանը:	Շարունակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ ակտիվ երկխոսությունը ԼՂ-ում Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, պղծման և ինքնության աղավաղման հարցերի շուրջ: Հատուկ ուշադրության կենտրոնում է եղել ԼՂ և շրջակա տարածքներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տեխնիկական առաքելության իրականացման անհրաժեշտությունը: ԱԳՆ համակարգմամբ խնդրո առարկայի վերաբերյալ ԿԳՄՍ կողմից մի շարք նամակներ են ուղղվել ՅՈՒՆԵՍԿՕ-յին և ապահովվել է խնդրի արծարծումը բազմակողմ մշակութային համագործակցության միջազգային հարթակներում: Հոկտեմբերի 8-11-ը Հայաստան է այցելել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրատապ փաստահավաք առաքելություն՝ գնահատելու և հասցեագրելու Ադրբեջանի ռազմական հարձակման հետևանքով ԼՂ-ից բռնի տեղահանված և ՀՀ ժամանած փախստականների կրթության ոլորտի կարիքները: Լեռնային Ղարաբաղից բռնի	

			տեղահանված փախստական երեխաներին կրթության գործընթացում ներառելուն և նրանց բարոյահոգեբանական վիճակը: Նոյեմբերի 9-ին ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 42-րդ նստաշրջանին: Իր ելույթում ՀՀ ԱԳ նախարարը անդրադարձել է ԼՂ-ում մնացած մշակութային և կրոնական ժառանգության նկատմամբ վանդալիզմի և թալանի ռիսկերին՝ նշելով, որ 2020թ. աշնանից ՀՀ-ն ահազանգել է միջազգային հանրությանը ԼՂ-ում և շրջակայքում հսկայական կրոնական և մշակութային ժառանգության ոչնչացման, պղծման և յուրացման՝ Ադրբեջանի պետական քաղաքականության մասին ու կարևորելով ԼՂ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելության գործուղումը: Նոյեմբերի 9-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեի հետ հանդիպմանը ՀՀ ԱԳ նախարարն անդրադարձել է խնդրո առարկային՝ ընդգծելով ԼՂ-ում մշակութային հուշարձանների պահպանությանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործուն ներգրավման անհրաժեշտությունը: Երկուստեք ընդգծվել է Լեռնային Ղարաբաղ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելություն ուղարկելու կարևորությունը՝ տեղում մշակութային հուշարձանների անկախ մշտադիտարկում և քարտեզագրում իրականացնելու նպատակով:	
		1.6 Արցախի իշխանությունների հետ բոլոր բնագավառներում առկա համագործակցության պահպանում և ամրապնդում:	Հայաստանը 44-օրյա պատերազմից ի վեր ահռելի ֆինանսական միջոցներ է հատկացրել ԼՂ-ին՝ մասնավորապես պատերազմի հետևանքների	

			վերացման և տեղի բնակչության բնականոն կենսագործունեության ապահովման նպատակով: ԼՂ հետպատերազմական վերականգնումը, տնտեսական կյանքի աշխուժացումը, տեղահանված բնակչության սոցիալական խնդիրների լուծումը, մշակութային ու կրոնական ժառանգության պահպանումը մշտապես եղել են ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում: Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած էթնիկ զտման հետևանքով բռնի տեղահանված բնակչության համար ՀՀ կառավարությունը ձեռնարկել և շարունակում է իրականացնել մի շարք ծրագրեր՝ ուղղված առաջնահերթ սոցիալական խնդիրների հասցեագրմանը և հետագա հնարավոր ինտեգրմանը:	
2.	Տարածաշրջանային խաղաղության հաս-տատում, խաղաղության օրակարգի առաջմղում, տարածաշրջանի ապաշրջափակում և կայուն զարգացում:	2.1 Աջակցություն ՀՀ, ՌԴ և ԱՀ ղեկավարների կողմից 2020թ. նոյեմբերի 9-ին և 2021թ. հունվարի 11-ին ստորագրված եռակողմ հայտարարությունների ամբողջական իրագործմանն ուղղված եռակողմ աշխատանքային խմբերի գործունեությանը:	Տեղի են ունեցել Տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակմանն ուղղված ՀՀ, ՌԴ և Ադրբեջանի փոխվարչապետերի գլխավորությամբ ձևավորված աշխատանքային խմբերի պարբերական հանդիպումներ: Ապաշրջափակման վերաբերյալ դրույթներ են ընդգրկվել ԵԽ նախագահ Շարլ Միշելի՝ մայիսի 14-ի և հուլիսի 15-ի հայտարարություններում, իսկ հոկտեմբերի 5-ին Գրանադայում ընդունված քառակողմ հայտարարության մեջ հստակ ընդգծվել են ապաշրջափակման հիմնական սկզբունքները: Տարածաշրջանային հաղորդակցությունների ապաշրջափակման համատեքստում ներկայացվել է «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը, որը կնպաստի տարածաշրջանում տնտեսական զարգացմանը,	

			համապարփակ և կայուն խաղաղությանը՝ կարևորելով հետևյալ սկզբունքների ընդունումը՝ - Բոլոր ենթակառուցվածքները, ներառյալ ավտոճանապարհները, երկաթուղիները, ավիաուղիները, խողովակաշարերը, մալուխները, էլեկտրահաղորդման գծերը գործում են այն երկրների ինքնիշխանության և իրավազորության ներքո, որոնց տարածքով անցնում են: - Յուրաքանչյուր երկիր իր տարածքում իր պետական ինստիտուտների միջոցով իրականացնում է սահմանային և մաքսային հսկողություն, ինչպես նաև ապահովում է ենթակառուցվածքների, ներառյալ դրանցով բեռների, տրանսպորտային միջոցների, մարդկանց անցման անվտանգությունը: - Նշված ենթակառուցվածքները կարող են օգտագործվել ինչպես միջազգային, այնպես էլ ներքին փոխադրումների համար: - Բոլոր երկրները միմյանց ենթակառուցվածքներից օգտվում են հավասարության և փոխադարձության սկզբունքով: Հավասարության և փոխադարձության սկզբունքով կարող են իրականացվել սահմանային և մաքսային հսկողության ընթացակարգերի որոշակի պարզեցումներ:	
		2.2 Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքեր, սահմանակից երկրների և տարածաշրջանային դերակատարների հետ	2023թ. Հայաստանն ու Թուրքիան շարունակել են հարաբերությունների ամբողջական կարգավորմանը միտված գործընթացը: Հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում տեղի է ունեցել ՀՀ վարչապետի և ԹՀ նախագահի երեք, ԱԳ նախարարների՝ երկու հեռախոսազրույց: Կողմերն արտահայտել են իրենց պատրաստակամությունը՝	

		տարածաշրջանային հայանպաստ ձևաչափերի քննարկում:	երկու երկրների միջև հարաբերությունների ամբողջական կարգավորման ուղղությամբ աշխատանքները շարունակելու վերաբերյալ: Փետրվարի 6-ին Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի գոտում աշխատելու համար Հայաստանից փրկարարներ են մեկնել Թուրքիա, Հայաստանը նաև 2 անգամ հումանիտար օգնություն է ուղարկել Թուրքիա՝ Մարգարայի կամրջով: Մայիսի 4-ին ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն Անկարայում մասնակցել է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի (ՍԾՏՀԿ ԽՎ) անդամ երկրների խորհրդարանների նախագահների գագաթնաժողովին: Անկարա այցի ընթացքում ՀՀ ԱԺ նախագահ Ա. Սիմոնյանը երկկողմ հանդիպում է ունեցել Թուրքիայի խորհրդարանի նախագահ Մ. Շենթոփի հետ: Հունիսի 3-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն Անկարայում մասնակցել է Թուրքիայի վերընտրված նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի պաշտոնամուտի արարողությանը: Հոկտեմբերի 23-ին Թեհրանում տարածաշրջանային խորհրդակցական հարթակի («3+3») հանդիպման շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԹՀ ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի հանդիպումը:	
3.	Մասնակցություն զանգվածային	3.1 Աջակցություն ցեղասպանության և մարդկության դեմ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման միջազգային ջանքերին,	2023թ. դեկտեմբերի 4-ին ի կատարումն ՀՀ կողմից 2022թ. Մարդու իրավունքների խորհրդում ներկայացված և կոնսենսուսով ընդունված «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևի՝	

	ոճրագործությունների և ցեղասպանությունների կանխարգելմանն ուղղված միջազգային հանրության ջանքերին:	մասնավորապես՝ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում «Ցեղասպանության կանխարգելում» Հայաստանի կողմից մշակված և երկու տարին մեկ ներկայացվող բանաձևի պարբերական ընդունման ապահովում, Ցեղասպանությունների հիշատակման և կանխարգելման միջազգային օրակարգով այլ միջոցառումների իրականացում:	կայացել է միջնստաշրջանային քննարկում նվիրված Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 75 ամյակին, որի շրջանակում քննարկվել է ատելության տարածումը սոցիալական մեդիա հարթակների օգտագործման միջոցով թեման: 2024թ. ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդի 55-րդ նստաշրջանում Հայաստանը կներկայացնի «Ցեղասպանության կանխարգելում» երկամյա բանաձևի հերթական նախագիծը:	
		3.2 Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման օրակարգի առաջմղում՝ ուղղված Հայաստանի անվտանգության երաշխիքների համակարգի ամրապնդմանը:	Հայաստանը արդյունավետորեն համագործակցել է ՄԱԿ Գլխավոր քարտուղարի ցեղասպանության հարցերով խորհրդականի հետ: Գրասենյակի հետ միասին 2023թ. ապրիլի 28-ին կազմակերպվել է քննարկում «Թվային դարաշրջանում զանգվածային ոճրագործությունների կանխարգելում» թեմայով: Քննարկման ընթացքում վերահաստատվել են 2022թ. Երևանում կայացած «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության 4-րդ Գլոբալ ֆորումի» շրջանակներում բարձրացված խնդիրների վերաբերյալ մոտեցումները:	
4.	ՌԴ հետ դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության ամրապնդում և ընդլայնում: ՀԱՊԿ և ԵԱՏՄ շրջանակներում փոխշահավետ	4.1 Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության ամրապնդում և ընդլայնում Հայաստան-Ռուսաստան երկկողմ համագործակցության օրակարգի բոլոր ուղղություններով, ներառյալ՝ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային,	ՀՀ և ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև կայացել են մի շարք թեմատիկ խորհրդակցություններ: Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԳ նախարարությունը պատկան մասով շարունակել է մասնակցությունը ՀՀ և ՌԴ միջխորհրդարանական հանձնաժողովի, ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի, Հայ-ռուսական ռազմատեխնիկական	

	համագործակցություն:	հումանիտար, մշակութային ոլորտները: Բարձրագույն և բարձր մակարդակում Հայաստան-Ռուսաստան քաղաքական երկխոսության առավել ակտիվացում:	համագործակցության միջկառավարական հանձնաժողովի օրակարգային փաստաթղթերի նախագծերի ներպետական համաձայնեցման գործընթացին, ապահովելով ՀՀ դիրքորոշման արտացոլումն ընդունված փաստաթղթերում: Մարտին Երևանում անցկացվել է Հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստը: Մայիսին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստին մասնակցելու նպատակով՝ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի՝ Մոսկվա աշխատանքային այցի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում ՌԴ նախագահ Վ. Պուտինի հետ: Հունիսին Սոչիում ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը մասնակցել է Եվրասիական միջկառավարական խորհրդի և ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերին, որի շրջանակներում կայացել է հանդիպում ՌԴ նախագահի հետ: Հուլիսին ՌԴ Իրկուտսկ քաղաքում անցկացվել է ՀՀ և ՌԴ միջխորհրդարանական հանձնաժողովի 37-րդ նիստը՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Հ. Արշակյանի և ՌԴ ԴԺ ԴԽ նախագահի տեղակալ Յու. Վորոբյովի համանախագահությամբ: Օգոստոսին Եվրասիական միջկառավարական խորհրդի նիստի շրջանակում Ծաղկաձորում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի և ՌԴ կառավարության նախագահ Մ.Միշուստինի հանդիպումը: 2023 թվականի ընթացքում կայացել է ՀՀ և ՌԴ արտաքին գործերի նախարարների 6 հանդիպում:	

		4.2 Ռուսաստանի հետ ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ և բազմակողմ այլ ձևաչափերում համագործակցության խորացում:	ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ շրջանակներում քննարկվող օրակարգային հարցերին մշտապես անդրադարձ է կատարվում ՌԴ հետ երկկողմ շփումների ընթացքում, միաժամանակ վերոնշյալ կազմակերպությունների կանոնադրական և այլ կառույցների բազմամակարդակ նիստերի շրջանակներում կազմակերպվում են երկկողմ հանդիպումներ և միջոցառումներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվում համապատասխան հարցերի:	
		4.3 ԵԱՏՄ շրջանակներում նախաձեռնողական և փոխշահավետ համագործակցություն՝ միտված կառույցի ընձեռած հնարավորությունների առավելագույն կիրառմանը, գործընկեր երկրների հետ առևտրաշրջանառության ծավալների աճին:	Հաշվետու ժամանակահատվածում ԵԱՏՄ շրջանակներում կայացել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 1, Եվրասիական միջկառավարական խորհրդի 3 հերթական և 1 արտահերթ նիստեր, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 13 նիստեր՝ ՀՀ փոխվարչապետ Մ. Գրիգորյանի մասնակցությամբ: Եվրասիական միջկառավարական խորհրդի օգոստոսյան արտահերթ նիստն անցկացվել է Ծաղկաձորում: Մշակվել և ընդունվել են մի շարք կարևոր փաստաթղթեր, Քննարկումների արդյունքների հիման վրա մշակվել և համաձայնեցվել է «Մինչև 2030 և 2045թթ. Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրացիոն գործընթացների հետագա զարգացման մասին», ստորագրվել է անդամ պետությունների ղեկավարների կողմից Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 2023թ. դեկտեմբերի 25-ի նիստին Սանկտ Պետերբուրգում ԵԱՏՄ և Իրանի միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի կնքման շուրջ դեռևս 2021թ.	

			նոյեմբերին Երևանում մեկնարկած բանակցությունները հետագայում ակտիվորեն շարունակվել են. կայացել են բանակցությունների ևս 5 փուլեր, որոնց ընթացքում համաձայնագրի տեքստը վերջնականացվել է: Համաձայնագիրը ստորագրվել է 2023թ. դեկտեմբերի 25-ին Սանկտ-Պետերբուրգում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի ընթացքում: 2023թ. փետրվարի 15-ին Եվրասիական տնտեսական խորհուրդը հաստատել է ԱՄԷ հետ բանակցային դիրեկտիվները, մարտի 6-8-ը Դուբայում կայացել է բանակցությունների առաջին փուլը, հունիսի 20-22-ը՝ երկրորդ փուլը: Ապրիլի 3-5-ը ք. Ջակարտայում մեկնարկել են Ինդոնեզիայի հետ բանակցությունները: Բանակցությունների երկրորդ փուլը տեղի է ունեցել 2023թ. հուլիսի 24-26-ը Մոսկվայում, երրորդ փուլը՝ դեկտեմբերի 13-15-ը Ինդոնեզիայում: Օգոստոսին Մոսկվայում կայացել է ԵԱՏՄ և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների 6-րդ փուլը: ԵԱՏՄ և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրի իրագործման հարցերով համատեղ հանձնաժողովի Եվրասիական մասի շրջանակներում շարունակվել են աշխատանքները ԵԱՏՄ և Չինաստանի միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման՝ ԵԱՏՀ ծրագրի (ճանապարհային քարտեզի) համաձայնեցման շուրջ:	

			2023թ. հոկտեմբերի 20-ին ք. Հանոյում կայացել է ԵԱՏՄ ու նրա անդամ պետությունների և Վիետնամի միջև Ազատ առևտրի համաձայնագրով ստեղծված համատեղ հանձնաժողովի 5-րդ նիստը:	
		4.4 Ակտիվ ներգրավվածություն ՀԱՊԿ աշխատանքներին, կազմակերպության կառուցակարգերի ամրապնդում՝ ի նպաստ անդամ պետությունների և տարածաշրջանային անվտանգության ապահովման:	Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԳ նախարարությունը շարունակել է, իր լիազորությունների տիրույթում, ապահովել մասնակցությունը ՀԱՊԿ մշտապես գործող աշխատանքային մարմինների նիստերի օրակարգային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ նկատառումների և առաջարկությունների մշակման, ներպետական համաձայնեցման գործընթացի համակարգման, ՀՀ դիրքորոշման ներկայացման և համապատասխան արտացոլման ապահովման գործընթացներում: 2023թ. մարտի 17-ին ՀԱՊԿ ԳՔ կարգավիճակում առաջին անգամ այցով Հայաստանում գտնվող ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ի. Տասմագամբետովը հանդիպումներ է ունեցել ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի, ՀՀ ԱԳ նախարար Ա. Միրզոյանի, պաշտպանության նախարար Ս. Պապիկյանի և ԱԽ քարտուղար Ա. Գրիգորյանի հետ: 2023թ. հունիսի 8-ին Մինսկում անցկացվել է ՀԱՊԿ անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի նիստը՝ ՀՀ ԱԽ քարտուղար Ա. Գրիգորյանի մասնակցությամբ: 2023թ. հունիսի 20-ին Մինսկում անցկացվել է ՀԱՊԿ ԱԳ նախարարների խորհրդի նիստը՝ ՀՀ ԱԳ նախարար Ա. Միրզոյանի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում ՀՀ ԱԳ նախարարը ներկաներին	

			տեղեկացրել է տարածաշրջանում, մասնավորապես Հայաստանի և Ադրբեջանի սահմանին և Լեռնային Ղարաբաղում վերջին զարգացումների վերաբերյալ: Բելառուսական կողմի նախաձեռնությամբ՝ նոյեմբերի 14-ին տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի հեռախոսազրույցը Բելառուսի նախագահ, ՀԱՊԿ ՀԱԽ նախագահ Ա. Լուկաշենկոյի հետ: Քննարկվել են ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի՝ նոյեմբերի 23-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկում կայանալիք նիստի կազմակերպման հետ կապված հարցեր:	
		4.5 Ակտիվ մասնակցություն ԱՊՀ շրջանակներում համագործակցությանը և կազմակերպության ընթացիկ գործընթացներին: ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում:	Հաշվետու ժամանակահատվածում ԱՊՀ ձևաչափով համագործակցության շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարությունն ապահովել է իրեն վերապահված հետևյալ գործառույթների իրականացումը ➢ Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարությունների միջև բազմամակարդակ խորհրդատվություններին, ➢ ԱՊՀ գործադիր կոմիտեի հետ ԱՊՀ կանոնադրական և այլ մարմիններում ՀՀ ՄՆ աշխատանքի համակարգում: ➢ Մասնակցություն ԱՊՀ շրջանակներում շրջանառվող փաստաթղթերի նախագծերի մշակման և լրամշակման հարցերով փորձագիտական և աշխատանքային խմբերի նիստերին, ➢ ԱՊՀ կանոնադրական մարմինների հաստատմանը ներկայացվող օրակարգային	

			փաստաթղթերի նախագծերի ներպետական համաձայնեցման գործընթացի համակարգում, ➢ ԱՊՀ շրջանակներում իրականացված միջոցառումներին ՀՀ պատվիրակությունների ղեկավարների ելույթների մշակում, ➢ ԱՊՀ շրջանակներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ պատվիրակությունների ղեկավարների համար աշխատանքային փաթեթների կազմում: ➢ Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԳ նախարարությունն իր իրավասությունների շրջանակներում ապահովել է ԱՊՀ նիստերի օրակարգային փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ նկատառումների և առաջարկությունների մշակումը, ներպետական համաձայնեցման գործընթացի համակարգումն ու ՀՀ դիրքորոշման ներկայացումն ու արտացոլումը: Հաշվետու ժամանակահատվածում ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի՝ 2023թ. հունիսի 8-ին կայացած նիստի շրջանակներում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կնքվել են համաձայնագրեր: 2023թ. հոկտեմբերի 5-ին Գրանադայում տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի և Ուկրաինայի նախագահ Վ. Զելենսկիի հանդիպումը:	

			2023թ. սեպտեմբերի 29-ին Դուբլինում կայացել է ՀՀ ԱԺ նախագահ Ա. Սիմոնյանի և Ուկրաինայի Գերագույն ռադայի նախագահ Ռ.Ստեֆանչուկի հանդիպումը: 2023թ. դեկտեմբերի 11-ին Բրյուսելում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Ա. Միրզոյանի հանդիպումն Ուկրաինայի արտաքին գործերի նախարար Դ. Կուլեբայի հետ: 2023թ. սեպտեմբերի 6-ին ՀՀ վարչապետի տիկին Ա.Հակոբյանն այցելել է Կիև՝ մասնակցել Առաջին տիկինների և պարոնների 3-րդ գագաթնաժողովին՝ հումանիտար օգնություն փոխանցելով Ուկրաինայի դպրոցականներին: 2023թ. հունիսի 6-ին Մինսկում կայացել է ՀՀ Ազգային ժողովի և ԲՀ Ազգային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 13-րդ նիստը:	
5.	ՀՀ-ԱՄՆ բարեկամական գործընկերության զարգացում և խորացում, ժողովրդավարական բարեփոխումների, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում փոխգործակցության ընդլայնում, տնտեսական և	5.1 Հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի (Հայ- ամերիկյան ռազմավարական երկխոսություն) նիստերի ամենամյա անցկացում:	2023թ. շարունակվել է ԱՄՆ-ի հետ ռազմավարական երկխոսության ու գործընկերության ամրապնդումը, խորացումը և ընդլայնումը՝ ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի, արդարադատության ու դատաիրավական համակարգի բարեփոխումների, անվտանգության և այլ ուղղություններով: Կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի 8 հեռախոսազրույց: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել և ելույթով է հանդես եկել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի	

	քաղաքական ոլորտ-ներում երկխոսության ակտիվացում:		նախաձեռնած «Հանուն Ժողովրդավարության» երկրորդ գագաթնաժողովին: 2023թ. ՀՀ ԱԳ նախարարը երեք հանդիպում է ունեցել ԱՄՆ պետքարտուղարի հետ, որոնց ընթացքում քննարկվել են երկկողմ օրակարգի առանցքային հարցերը, ինչպես նաև տարածաշրջանային զարգացումները: Սեպտեմբերի 25-ին Հայաստան է ժամանել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տնօրեն Սամանթա Փաուերը: 2023թ. Հայաստան-ԱՄՆ Ռազմավարական երկխոսության շրջանակում կայացել են Տնտեսության և էներգետիկայի հարցերով աշխատանքային խմբի և Արդարադատության և իրավապահ մարմինների ու ժողովրդավարության հարցերով աշխատանքային խմբի նիստերը: Կարևորվել է վերոնշյալ ոլորտներում երկկողմ համագործակցության խորացումը, նոր հնարավորությունների բացահայտումը:	
		5.2 ՀՀ-ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգ համագործակցության վերաբերյալ շրջանակային համաձայնագրի դրույթների իրագործում:	ՀՀ կառավարության և Կալիֆորնիա նահանգի միջև շրջանակային համաձայնագրի իրականացման նպատակով ՀՀ իրավասու գերատեսչությունների առաջարկների հիման վրա կազմված աշխատանքային ծրագրի նախագիծը փոխանցվել է Կալիֆորնիայի նահանգապետարան:	
6.	Ֆրանսիայի Հանրա-պետության հետ առանձնաշնորհյալ հարաբերությունների ամրապնդում և զարգացում:	6.1 Քաղաքական ոլորտում առկա գործակցության զարգացում, տնտեսական հարաբերությունների խորացում, ֆրանսիական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների	Հայաստանի առջև ծառացած տարածաշրջանային մարտահրավերների կարգավորման և Հայաստանին ուղղված ԵՄ աջակցության ընդլայնման գործում Ֆրանսիայի հանձնառությունը ողջ խորությամբ է երևան հանել Հայաստանի և Ֆրանսիայի բարձրաստիճան քաղաքական երկխոսության	

		հետ համատեղ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ու կրթական ծրագրերի մշակում և իրականացում	առանձնաշնորհյալ բնույթը՝ բացառիկ խթան հաղորդելով քաղաքական, տնտեսական, անվտանգային և այլ ոլորտներում միջպետական համագործակցությանը: Տարին նշանավորվել է բարձրաստիճան փոխայցերի, միջազգային հարթակներում երկկողմ հանդիպումների, հեռախոսազրույցների աննախադեպ ինտենսիվությամբ: Հայաստանի և Ֆրանսիայի հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ տեղի են ունեցել Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահի, մշակույթի նախարարի այցերը, Ֆրանսիայի ԱԳ նախարարը երկու անգամ այցելել է Հայաստան, բազմաթիվ են եղել ֆրանսիացի խորհրդարանականների, ՏԻՄ ղեկավարների, այդ թվում՝ Փարիզի քաղաքապետի այցերը: Փարիզ աշխատանքային այցեր են կատարել Հայաստանի վարչապետը, Պաշտպանության, Էկոնոմիկայի, ԿԳՄՍ նախարարները: Հանդես գալով ՀՀ ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սատարման դիրքերից՝ Ֆրանսիան որոշում է կայացրել հյուպատոսական գրասենյակ բացել Գորիսում, խորացրել է պաշտպանական համագործակցությունը՝ օգոստոսին Երևանում Ֆրանսիայի պաշտպանական առաքելություն բացելով, իսկ հոկտեմբերին Փարիզում պաշտպանական զինտեխնիկայի մատակարարման մասին համաձայնագրեր են ստորագրվել Հայաստանի և Ֆրանսիայի պաշտպանության նախարարների միջև: Ավանդաբար միջհամայնքային ձևաչափով զարգացող ապակենտրոնացված համագործակցությունն առաջին	

			անգամ ձեռք է բերել միջռեգիոնալ մակարդակ՝ ուղղվելով Սյունիքի և Վայոց ձորի մարզեր, որոնց հետ համագործակցություն են հաստատել Ֆրանսիայի ամենաազդեցիկ քաղաքական գործիչների կողմից ղեկավարվող Օվերնյը-Ռոն-Ալպ և Օ-դը-Ֆրանս ռեգիոնները:	
		6.2 Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության աշխատանքներում Հայաստանի ակտիվ ներգրավվածություն:	2023թ. ապրիլին Ազգային ֆրանկոֆոն քառամյա նախաձեռնության շրջանակներում ՀՀ ու ՖՄԿ միջև ստորագրվել է 2023-2026թթ. գործընկերության հուշագիրը, որն ուղղված է ՀՀ պետական համակարգում ֆրանսերենի ամրապնդմանն ու առաջմղմանը: Ապրիլ-մայիսին կայացել է Ֆրանկոֆոնիայի երկամսյակը, որի շրջանակներում տեղի են ունեցել ֆրանսերեն լեզվին և ֆրանկոֆոն մշակույթին նվիրված շուրջ 700 միջոցառումներ: ՀՀ ԱԳՆ ակտիվ ներգրավմամբ մշակվել և սեպտեմբերի 29-ին ՖՄԿ-ին ներկայացվել է 2027թ. կայանալիք Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերը Հայաստանում հյուրընկալելու հայտը: Այդ համատեքստում ՀՀ հրավերով մարտին և նոյեմբերին Երևան է այցելել Ֆրանկոֆոնիայի միջազգային խաղերի կոմիտեի նախագահ Զեյնա Մինան: Դեկտեմբերի 14-ին Փարիզում տեղի է ունեցել հայտի շնորհանդեսը, որին մասնակցել է ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը Հոկտեմբերի 17-19-ը Հայաստան է այցելել Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիկիվաբոն:	

7.	Եվրոպական երկրների և Եվրոպական միության հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության ընդլայնում՝ Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և այլ փաստաթղթերի հիման վրա:	7.1 ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ դրույթների ամբողջական կիրարկում, Արևելյան գործընկերության շրջանակներում ոլորտային և ինստիտուցիոնալ համագործակցության խորացում:	ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ դրույթների ամբողջական կիրարկման և Արևելյան գործընկերության շրջանակներում ոլորտային և ինստիտուցիոնալ համագործակցության խորացման համատեքստում 2023թ. իրականացվել են հետևյալ քայլերը. - 2023թ. հունվարի 26-ին Երևանում կայացել է ՀՀ-ԵՄ քաղաքական և անվտանգային հարցերով երկխոսության անդրանիկ նիստը, ապա 2023թ. նոյեմբերի 15-ին Բրյուսելում կայացել է նշյալ երկխոսության երկրորդ նիստը: - 2023թ. փետրվարի 19-ից 21-ը Քիշնևում կայացել է «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի 10-րդ լիագումար նստաշրջանը: - 2023թ. մարտի 9-ին կայացել է ՀՀ-ԵՄ խորհրդարանական գործընկերության կոմիտեի 3-րդ նիստը: - 2023թ. փետրվարի 16-ին և 17-ին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում կայացել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումները Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի և Եվրապոլ գործակալության գործադիր տնօրեն Քեթրին Դը Բոլի հետ: - 2023թ. փետրվարի 21-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԵՄ արտաքին գործողությունների եվրոպական ծառայության քաղաքացիական գործողությունների հրամանատար Ստեֆանո Տոմատի գլխավորած պատվիրակությանը: - 2023թ. մարտի 3-ին աշխատանքային այցով Նյու-Դելիում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը	

			հանդիպում է ունեցել ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բոռելի հետ: - 2023թ. մարտի 25-ին, մարտի 30-ին, ապրիլի 24-ին, ապրիլի 26-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույցներ է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ: - 2023թ. մայիսի 13-ին աշխատանքային այցով Բրյուսելում գտնվող ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ոչ պաշտոնական հանդիպում է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ, որին հաջորդել է Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ եռակողմ հանդիպում: - 2023թ. մայիսի 24-ից 25-ը կայացել է ԵՄ պատժամիջոցների կիրարկման հարցերով միջազգային հատուկ բանագնաց Դեյվիդ Օ'Սալիվանի այցը Հայաստան: - 2023թ. հունիսի 1-ին ՀՀ վարապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է Մոլդովայի մայրաքաղաք Քիշնևում ընթացող «Եվրոպական քաղաքական համայնքի» երկրորդ գագաթնաժողովին, որի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի և Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի մասնակցությամբ հնգակողմ հանդիպումը: - 2023թ. հունիսի 26-ից 28-ը կայացել է Իրավապահ ոլորտում համագործակցության ԵՄ գործակալության (Եվրապոլ) գործադիր տնօրեն Քեթրին Դը Բոլի այցը	

			Հայաստան, որի ընթացքում վերջինիս ընդունել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: - 2023թ. հուլիսի 15-ին աշխատանքային այցով Բրյուսելում գտնվող ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ, որին հաջորդել է Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ եռակողմ հանդիպում: - 2023թ. սեպտեմբերի 19-ին ՄԱԿ ԳԱ 78-րդ նստաշրջանի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բոռելի հետ: - 2023թ. հոկտեմբերի 5-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Իսպանիայում մասնակցել է «Եվրոպական քաղաքական համայնքի» երրորդ գագաթնաժողովին, որի շրջանակներում կայացել է ՀՀ վարչապետի հանդիպումը Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հետ, որի արդյունքներով ընդունվել է համատեղ հայտարարություն: Գագաթնաժողովի շրջանակներում կայացել է նաև ՀՀ վարչապետի առանձնազրույցը Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի հետ, որի արդյունքում ԵՄ պաշտոնյան հայտարարել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի կարիքները հոգալու նպատակով Հայաստանին հատկացվող մարդասիրական օգնության կրկնապատկման, ինչպես նաև հավելյալ 15	

			մլն. եվրոյի չափով ուղիղ բյուջետային աջակցության տրամադրման մասին: - 2023թ. հոկտեմբերի 16-ից 17-ը կայացել է ՀՀ վարչապետի այցը Եվրոպական խորհրդարան, որի շրջանակներում ՀՀ վարչապետը ելույթով հանդես է եկել Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստի ընթացքում, առանձնազրույց է ունեցել Եվրոպական խորհրդարանի նախագահ Ռոբերտա Մեցոլայի հետ: - 2023թ. նշանավորվել է նաև Հայաստանում Եվրոպական միության քաղաքացիական դիտորդական առաքելության տեղակայմամբ: Վերջինս գործունեության մեկնարկը տրվել է 2023թ. փետրվարի 20-ին՝ երկու տարի ժամկետով:	
		7.2 Աշխատանք ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման երկխոսության մեկնարկի ուղղությամբ:	ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի դյուրացման հարցերով համատեղ կոմիտեի 7-րդ նիստը կայացել է 2023թ. հոկտեմբերի 19-ին, Երևանում: Նշյալ նիստից զատ մուտքի արտոնագրերի դյուրացման համաձայնագրի կիրարկման, Հայաստանի կողմից վերջինիս կիրարկման գործընթացում գրանցած առաջընթացի, համաձայնագրի լիարժեք իրագործմանն ու արդյունավետության առավել բարձրացմանն ուղղված քայլերի շուրջ քննարկումներ տեղի են ունեցել տարվա ընթացքում կայացած մի շարք այլ բարձրաստիճան հանդիպումների ընթացքում ևս: Հայկական կողմը բարձրաձայնել է մուտքի արտոնագրերի տրամադրման ընթացիկ խոչընդոտների, այն է՝ հայտերը հանձնելու նպատակով հերթագրման խնդիրների, մուտքի արտոնագրերի տրամադրման կենտրոնների կողմից հավելյալ գանձումների վերաբերյալ մտահոգություններ:	

			ՀՀ-ԵՄ Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի 9-րդ նիստը տեղի է ունեցել 2023թ. հոկտեմբերի 25-ին, Երևանում, որի ընթացքում քննարկվել են հետընդունման վիճակագրությունը, երկկողմ կիրարկման արձանագրությունների կարգավիճակը և համաձայնագրի կատարման արդյունավետությունն առավել բարձրացնելուն ուղղված տեխնիկական և բովանդակային այլ հարցեր:	
		7.3 Եվրոպական երկրների հետ երկկողմ կապերի զարգացում՝ ակտիվ քաղաքական երկխոսություն, տնտեսական համագործակցության խթանում, համատեղ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ու կրթական ծրագրերի մշակում և իրականացում:	Հաշվետու տարին Գերմանիայի հետ բարձր մակարդակի քաղաքական երկխոսության առումով եղել է աննախադեպ: Բեռլին են այցելել ՀՀ վարչապետը, նախագահը, ԱԺ նախագահը և ԱԳ նախարարը: Երևան է այցելել ԳԴՀ ԱԳ նախարարը: Երևանում տեղի են ունեցել հայ-գերմանական միջկառավարական հանձնաժողովի բանակցությունները: Զգալի ավելացել են երկկողմ կապերը Հայաստանի և Միացյալ Թագավորության միջև: ԱԳ նախարարի նոյեմբերին Լոնդոն կատարած պաշտոնական այցով մեկնարկել է Միացյալ Թագավորության հետ ռազմավարական երկխոսությունը: Հաշվետու տարում ձեռք է բերվել Լոնդոնում ՀՀ դեսպանության նոր շենք: Օգոստոսին Բելգիայի ԱԳ նախարարի Երևանի կատարած այցի ընթացքում բելգիական կողմը հայտարարել է Երևանում ռեզիդենտ դեսպանություն բացելու մտադրության մասին: Դեսպանությունը բացվել է հոկտեմբերին: Լյուքսեմբուրգի հետ գերազանց հարաբերությունները առավել խորացնելու նպատակով Հայաստանը	

			հաշվետու տարում Լյուքսեմբուրգում հիմնադրել է դիվանագիտական գրասենյակ: Հաշվետու տարում շարունակվել է Հունգարիայի հետ նախորդ տարի վերականգնված դիվանագիտական հարաբերությունների բարելավման գործընթացը: Հայաստան են այցելել Հունգարիայի փոխվարչապետը և ԱԳ նախարարը: Վերջինիս այցի ընթացքում հայտարարվել է 2024թ. Հայաստանում Հունգարիայի հյուպատոսության բացման մասին: Բալթյան երկրների հետ հարաբերությունները որակապես բարելավվել են: Տեղի են ունեցել Լիտվայի վարչապետի և Էստոնիայի ԱԳ նախարարի այցերը Հայաստան, քաղաքական խորհրդակցություններ են անցկացվել Լատվիայի և Էստոնիայի ԱԳ նախարարությունների հետ: Ընդլայնվել են հարաբերությունները Չեխիայի և Ռումինիայի հետ: Կայացել է ՀՀ վարչապետի պաշտոնական այցը Չեխիա, որի ընթացքում անցկացվել է հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը: Բուլղարիայի հետ ստորագրվել է «ՀՀ կառավարության և ԲՀ կառավարության միջև կրթության և գիտության բնագավառներում 2023-2027թթ. համագործակցության մասին» ծրագիրը: Հունաստանի հետ ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը:	

			ՀՀ ԱԺ-ն վավերացրել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը Հայաստան է այցելել Սլովենիայի ԱԺ նախագահները, Լիտվայի վարչապետը, Սուրբ Աթոռի պետքարտուղարը և 8 եվրոպական երկրների ԱԳ նախարարներ (Ֆրանսիա, Գերմանիա, Լյուքսեմբուրգ, Բելգիա, Խորվաթիա, Հս. Մակեդոնիա, Հունգարիա, Էստոնիա): Թվով 10 երկրների ԱԳՆ-ների հետ տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ (Իտալիա (երկու փուլ), Նիդերլանդներ, Դանիա, Շվեդիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Չեխիա (երկու փուլ), Լատվիա (երկու փուլ), Էստոնիա, Ռումինիա):	
		7.4 Համագործակցության խթանում Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ ձևաչափում:	Շարունակվել են աշխատանքները Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ համագործակցության, մասնավորապես Երևանում եռակողմ գագաթաժողովի կազմակերպման ուղղությամբ:	
8.	Եվրոպայի խորհրդում ՀՀ ակտիվ ներգրավվածություն և նախաձեռնողական քաղաքականություն:	8.1 Կառույցի շրջանակներում ՀՀ շահերի առաջմղում, ՀՀ-ԵԽ 2019-2022թթ. գործողությունների ծրագրի համակարգում, ՀՀ-ԵԽ 2023-2026թթ. գործողությունների ծրագրի մշակում, ՀՀ-ԵԽ բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելություններ:	Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման ուղղությամբ ԵԽ կանոնադրային և այլ մարմիններում կատարված աշխատանքներ, ՀՀ-ԵԽ 2023-2026թթ. Գործողությունների ծրագրի մեկնարկ, ԵԽ պետությունների ղեկավարների 4-րդ գագաթնաժողով /Ռեյկյավիկի գագաթնաժողով/ **Նախարարների Կոմիտե՝** Իսլանդիայի նախագահության անունից հայտարարություն **Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչ**	

			✓ 2 հայտարարություն /14-ը դեկտեմբերի, 28-ը հուլիսի/ ✓ հոկտեմբերի 17-ին Ստրասբուրգում հանդիպում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ ✓ ԵԽ ԳՔ նախաձեռնությամբ բարձրաստիճան 2 պատվիրակությունների այց ՀՀ /հուլիս, հոկտեմբեր/ **Մարդու իրավունքների հանձնակատար** ✓ Լաչինի միջանցքի փակման վերաբերյալ և ռազմական ագրեսիան դատապարտող 2 խիստ հայտարարություն /22-ը դեկտեմբերի, 20-ը սեպտեմբերի/ ✓ Դունյա Միյատովիչի հանդիպումներ ԱԳ նախարար Ա. Միրզոյանի հետ /Ռեյկյավիկ՝ 17-ը մայիսի, Բլեդ՝ 29-ը օգոստոսի/ ✓ Դունյա Միյատովիչի այց ՀՀ, հետո նաև՝ Ադրբեջան և Լեռնային Ղարաբաղ /հոկտեմբեր, 2023/ **ԵԽԽՎ** ✓ նախագահ Թինի Կոքսի հայտարարություններ՝ 30-ը հուլիսի, 19-ը սեպտեմբերի ✓ ԵԽԽՎ 2 հրատապ քննարկումների արդյունքում զեկույցների, համանուն բանաձևերի և խորհրդատվությունների ընդունում ✓ ԵԽԽՎ Մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Կիմո Կիլյունենի և Բորիանա Աբերգի այց ՀՀ /նոյեմբեր 5-9/ ✓ ԵԽԽՎ-Նախարարների կոմիտեի Համատեղ կոմիտեի (Joint Committee) նիստ՝ նվիրված ԼՂ հայերի	

			իրավունքներին ու հումանիտար իրավիճակին /հոկտեմբերի 2023/ **ԵԽ տեղական ու տարածաշրջանային իշխանությունների կոնգրես** ✓ նախագահ Լինդերտ Վերբիկի հայտարարություն /19-ը սեպտեմբերի/ ✓ «Մարդասիրական իրավիճակը Ղարաբաղում և հարակից քաղաքներում ու շրջաններում» հռչակագրի ընդունում /26-ը հոկտեմբերի/ ✓ կոնգրեսի պատվիրակության այց ՀՀ /19-ը դեկտեմբերի/ Հայաստան-ԵԽ 2023-2026թթ. Գործողությունների ծրագիր Փետրվարի 17-ին ՀՀ ԱԳ նախարար Ա. Միրզոյանի և ԵԽ ԳՔ տեղակալ Բյորն Բերգեյի մասնակցությամբ պաշտոնական մեկնարկ տրվեց Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2023-2026թթ. Գործողությունների ծրագրին (ԳԾ): Եվրոպայի խորհրդի պետությունների ղեկավարների 4-րդ գագաթնաժողովի /Ռեյկյավիկի գագաթնաժողով/: Գագաթնաժողովին մասնակցել և ելույթով է հանդես եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:	
9.	Հարևան երկրների հետ բարեկամական հարաբերությունների ամրապնդում և զարգացում:	9.1 Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերություն-ների հետագա զարգացում, փոխվստահության ամրապնդում և շարունակական երկխոսություն: Հայաստանի և Վրաստանի միջև քաղաքական, տնտեսական,	2023թ. հունվար-նոյեմբեր ամիսներն արդյունավետ են ընթացել Հայաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների զարգացման տեսանկյունից: Գրանցվել է երկկողմ բարիդրացիական հարաբերությունների աճող դինամիկա, Հայաստանի և Վրաստանի բարձր մակարդակի ակտիվ շփումներ, երկխոսություն և փոխայցելություններ պետական	

		հաղորդակցային, մշակութային, հումանիտար և զբոսաշրջության ոլորտներում հարաբերությունների խորացում:	կառավարման և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Հունվարի 12-ին Երևանում անցկացվել է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 12-րդ նիստը: Հունվարի 12-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին» համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել հուլիսի 1-ից: Այն հնարավորություն է տալիս քաղաքացիներին սահմանը հատել նույնականացման քարտերով: Մարտի 10-12-ը պաշտոնական այցով Վրաստանում է եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Ապրիլի 5-7-ը ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով եղել է Վրաստանում: Ապրիլի 7-ին Թբիլիսիում կայացել է հայ-վրացական հերթական գործարար համաժողովը, որին մասնակցել է Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Լևան Դավիթաշվիլին և ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը: Հունիսի 22-ին Երևանում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Վրաստանի ԱԳ նախարարությունների միջև՝ ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի և Վրաստանի ԱԳ նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիայի գլխավորությամբ:	

			Հուլիսի 7-8-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի աշխատանքային այցը Բաթում: Հոկտեմբերի 26-27-ին կայացել է ՀՀ վարչապետի աշխատանքային այցը Վրաստան՝ «Թբիլիսիի Մետաքսի ճանապարհ» համաժողովին մասնակցելու նպատակով: Համաժողովի ընթացքում ՀՀ վարչապետը ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը: Շարունակվում են երկկողմ փոխայցելությունները և շփումները տնտեսության, հեռահա-ղորդակցության, բարձր տեխնոլոգիաների, կրթության, գիտության, մշակույթի, արդարադատության և մի շարք այլ ոլորտներում: Սեպտեմբերի 5-7-ը ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը պաշտոնական այցով գտնվել է Վրաստանում: Հոկտեմբերի 19-21-ը ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով մեկնել է Բաթում: Շարունակական քննարկումներ են ընթացել Վրաստանի տարածքով հայկական բեռների անխոչընդոտ տարանցման ապահովման ուղղությամբ: Հոկտեմբերի 27-ին «Թբիլիսիի Մետաքսի ճանապարհ» համաժողովին զուգահեռ անցկացվել է նաև գործարար համաժողով, որին մասնակցել են հայաստանյան մի շարք կազմակերպություններ: Նոյեմբերի 27-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը այցելել է Վրաստան՝ ներկա գտնվելու Թբիլիսիում Արամ Խաչատրյանի 120-	

			ամյակին նվիրված համերգին: Այցի ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի և վարչապետի աշխատակազմի ղեկավար Ռևազ Ջավելիձեի հետ: Ի.Ղարիբաշվիլիի հետ հանդիպմանը քննարկվել են Հայաստանի և Վրաստանի երկկողմ համագործակցությանը և տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հարցեր: Դեկտեմբերի 21-ին աշխատանքային այցով Հայաստան է ժամանել Վրաստանի Խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլիի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում հանդիպում է տեղի ունեցել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ: Դիլիջանում կայացած հանդիպմանը քննարկվել են տարածաշրջանային անվտանգությանը, տնտեսական ոլորտում փոխգործակցությանը, ինչպես նաև խորհրդարանական հանձնաժողովների և աշխատակազմերի միջև համագործակցության ամրապնդմանն առնչվող հարցեր:	
		9.2 Վրաստանի հետ հաղորդակցության ուղիների բարելավում: Համատեղ ջանքեր՝ լոգիստիկ, ենթակառուցվածքների զարգացման, տրանսպորտային փոխկապակցվածության, էներգետիկ և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային ծրագրերի իրականացման ուղղությամբ, այդ թվում՝ հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկ միջանցքի ձևավորման ուղղությամբ:	Շարունակվում են ակտիվ քննարկումները տարածաշրջանային ենթակառուցվածքների, էներգետիկ միջանցքների և հեռահաղորդակցության գծերի ընդլայնման հարցերի շուրջ: ՀՀ և Վրաստանի շահագրգիռ գերատեսչությունների միջև տեղի են ունենում քննարկումներ մաքսային հսկողության ոլորտում համագործակցության խորացման ուղղությամբ: Մասնավորապես՝ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հետ քննարկվում է համատեղ մաքսային հսկողության իրականացման	

		Համագործակցություն «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի շրջանակում: Աշխատանք «Պարսից ծոց-Սև ծով» տրանսպորտային և տարանցիկ միջանցքի ձևավորման ուղղությամբ:	նպատակով միասնական մաքսային կետի ներդրման հնարավորությունը:	
		9.3 Իրանի հետ ավանդական բարի-դրացիական հարաբերությունների հետագա զարգացում՝ կարևորելով ԻԻՀ տարածաշրջանային դերակատարությունը, ռազմավարա-կան երկխոսության ծավալում:	2023թ. շարունակվել են հայ-իրանական առանձնահա-տուկ հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքները, տեղի են ունեցել բարձրաստիճան մի շարք հանդիպումներ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԻԻՀ նախագահ Սեյեդ Էբրահիմ Ռայիսիի հետ ունեցել է երկու հեռախոսազրույց: Քննարկվել են տարածաշրջանում ստեղծված իրավիճակին, ինչպես նաև Հայաստան-Իրան երկկողմ օրակարգին վերաբերող հարցեր: Հունվարի 18-23-ը ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Թեհրան՝ հունվարի 20-ին կայացած «Ազդեցիկ կանանց միջազգային համագումարին» մասնակցելու նպատակով: Այցի շրջանակում տիկին Աննա Հակոբյանը հանդիպել է ԻԻՀ նախագահի տիկին Ջամիլե Սադաթ Ալամոլհոդայի և ԻԻՀ նախագահի՝ կանանց և ընտանիքի հարցերով տեղակալ Էնսիե Խազալիի հետ: Հունվարի 31-ին ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի և ԻԻՀ նախագահի տեղակալ Սեյեդ Մասուդ Միրքազեմիի համանախագահությամբ Թեհրանում կայացել է Հայ-իրանական միջկառավարական համատեղ հանձնաժողովի 17-րդ նիստի	

			պայմանավորվածությունների ընթացքը մշտադիտարկող հանձնախմբի նիստը: Փետրվարի 27-ին Ժնևում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ: Մարտի 22-ին Երևանում կայացել են ՀՀ և ԻԻՀ ԱԳ նախարարությունների միջև հերթական քաղաքական խորհրդակցությունները: Ապրիլի 9-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն Իրանում հանդիպել է ԻԻՀ ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Շամխանիի հետ: Ապրիլի 20-ին Երևանում կայացել են Հայաստանի, Իրանի և Հնդկաստանի ԱԳ նախարությունների միջև եռակողմ ձևաչափով առաջին քաղաքական խորհրդակցությունները: Հուլիսի 24-ին Թեհրանում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի և ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի առանձնազրույցը և երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ ընդլայնված կազմով հանդիպումը: ՀՀ ԱԳ նախարարին ընդունել է նաև ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռայիսին: Սեպտեմբերի 19-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանի հետ: Հոկտեմբերի 1-2-ը կայացել է ՀՀ ԱԽ քարտուղար Ա.Գրիգորյանի հերթական այցը Թեհրան, որի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ԻԻՀ նախագահի, Ազգային անվտանգության գերագույն	

			խորհրդի քարտուղարի, ԱԳ նախարարի և ՋՈՒ ԳՇ պետի հետ: Հոկտեմբերի 23-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Թեհրանում մասնակցել է տարածաշրջանային խորհրդակցական հարթակի («3+3») ձևաչափով հանդիպմանը, որի շրջանակում կայացել է նաև հանդիպում ԻԻՀ նախագահի հետ: Դեկտեմբերի 27-ին պատասխան այցով ՀՀ է ժամանել ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը: ԻԻՀ ԱԳ նախարարին ընդունել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը և ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը: 2023թ. տեղի է ունեցել երկու հեռախոսազրույց ՀՀ և ԻԻՀ ԱԳ նախարարների միջև:	
		9.4 ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում տնտեսական բաղադրիչի ընդլայնում, այդ թվում՝ ԵԱՏՄ բազմակողմ համագործակցության շրջանակ-ներում:	Օգոստոսի 25-27-ը «Երևան Էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում տեղի է ունցել ԻԻՀ ազատ և հատուկ տնտեսական գոտիների ներդրումային փաթեթների և արտահանման հնարավորությունների ցուցահանդեսը ԻԻՀ առևտրաարդյունաբերական և հատուկ տնտեսական գոտիների կազմակերպության նախաձեռնությամբ: Միջոցառման շրջանակում Հայաստան է այցելել ավելի քան 60 իրանական ընկերություն՝ ԻԻՀ նախագահի խորհրդական, ազատ գոտիների գերագույն խորհրդի քարտուղար Հոջաթոլլահ Աբդոլմալեքիի գլխավորությամբ: Դեկտեմբերի 3-5-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը ԻԻՀ առևտրի զարգացման կազմակերպության նախագահ Մեհդի Զեյղամիի հրավերով Թեհրանում մասնակցել է «Եվրասիական էքսպո 2023» ցուցահանդեսին, որի շրջանակներում	

			հանդիպումներ է ունեցել ԻԻՀ առևտրի զարգացման կազմակերպության նախագահի, Ճանապարհների և քաղաքաշինության նախարարի տեղակալի, Աշխատանքի և սոցիալական բարեկեցության նախարարի տեղակալի, ԻԻՀ նավագնացության և նավահանգիստների կազմակերպության տնօրենի հետ: Հաշվետու ժամանակաշրջանում հայ տնտեսվարողները ԻԻՀ-ում, իրանցի տնտեսվարողները ՀՀ-ում մասնակցել են մի շարք համաժողովների և ցուցահանդեսների: ԵԱՏՄ և ԻԻՀ միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի կնքման շուրջ դեռևս 2021թ. նոյեմբերին Երևանում մեկնարկած բանակցությունները հետագայում ակտիվորեն շարունակվել են, և Իրանում և Ռուսաստանում կայացել է բանակցությունների ևս 5 փուլ, որի ընթացքում վերջնականացվել է «Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի տեքստը: Փաստաթուղթը ստորագրվել է դեկտեմբերի 25-ին:	
		9.5 ՀՀ-ԻԻՀ համատեղ ջանքեր լոգիստիկ, ենթակառուցվածքների զարգացման, տրանսպորտային փոխկապակցվածության, էներգետիկ և երկկողմ հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային ծրագրերի իրականացման ուղղությամբ: Համագործակցություն	Իրանցի գործընկերների հետ շփումներում ներկայացվել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, պաշտոնապես ԻԻՀ նախագահին է փոխանցվել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նամակն այդ նախագծի վերաբերյալ: ԻԻՀ ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը դեկտեմբերի 27-ին ՀՀ կատարած այցի ընթացքում ընդգծել է պաշտոնական Թեհրանի	

		«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագրի շրջանակում: Աշխատանք «Պարսից ծոց-Սև ծով» տրանսպորտային և տարանցիկ միջանցքի ձևավորման ուղղությամբ:	հետաքրքրվածությունը «Խաղաղության խաչմերուկ» նախագծի վերաբերյալ: Օգոստոսի 10-ին Երևան ՋԷԿ ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Ղազարյանը և ԻԻՀ նավթի փոխնախարար, Գազի ազգային ընկերության տնօրեն Մաջիդ Չեգենին Երևանում ստորագրել են «Գազ-էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի պայմանագիրը, որի համաձայն՝ ծրագիրը երկարաձգվել է մինչև 2030թ.: Հոկտեմբերի 23-ին ԻԻՀ ճանապարհների և քաղաքաշինության նախարար Մեհրդադ Բազրփաշի՝ ՀՀ այցի շրջանակում ստորագրվել է Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Ագարակ-Քաջարան 32 կմ հատվածի կառուցման պայմանագիրը, որով իրանական երկու ընկերություններ պարտավորվում են սահմանված ժամկետում կառուցել ճանապարհահատվածը: Իրանական կողմի հաղորդմամբ՝ Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման աշխատանքները հնարավոր կլինի ավարտել 2024թ. մարտին:	
		9.6 ՀՀ-ԻԻՀ էներգետիկ համագործակցության խորացում. Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկ միջանցքի (Հայաստան-Իրան-Վրաստան-Ռուսաստան) քառակողմ նախաձեռնության գործնական փուլի խթանում:	Դեկտեմբերի 27-ին ՀՀ այցի ընթացքում ԻԻՀ ԱԳ նախարարը հայտնել է, որ իրանական կողմը պատրաստակամություն է հայտնում զարգացնել Հայաստան-Իրան-Վրաստան համագործակցությունը մի շարք, այդ թվում՝ էներգետիկ, ենթակառուցվածքային ոլորտներում, և այդ ուղղությամբ հայցել հայկական կողմի աջակցությունը:	
10.	Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Կորեայի Հանրապետության,	10.1 ՀՀ-ՉԺՀ քաղաքական երկխոսության շարունակական զարգացում, տնտեսական կապերի խորացում:	2023թ. հունիսի 5-ից 7-ը ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ.Քերոբյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Պեկին՝ Առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի հերթական՝ 11-րդ	

	Հարավ-Արևելյան Ասիայի երկրների և Ավստրալիայի հետ բարեկամական և փոխշահավետ կապերի ամրապնդում, համագործակցային նոր հարաբերություն-ների կայացում, Ասիական և խաղաօվկիանոսյան այլ երկրների հետ համագործակցության զարգացում, այդ թվում՝ համագործակցության բազմակողմ ձևաչափերում:		նիստին մասնակցելու նպատակով: Նիստի ավարտին կողմերը ստորագրել են Առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի 11-րդ նիստի արձանագրությունը: 2023թ. հունիսի 15-ին տեղի է ունեցել ՀՀ Վայոց ձորի մարզի և ՉԺՀ Անհոյ նահանգի, ինչպես նաև ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի և ՉԺՀ Անհոյ նահանգի Հեյֆեյ քաղաքի միջև միջմարզային բարեկամական հարաբերություններ հաստատելու մասին «Մտադրությունների մասին» հուշագրերի ստորագրման առցանց արարողությունը: 2023թ. հունիսի 27-ից 30-ը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանն այցելել է ՉԺՀ և մասնակցել է Թիենծին քաղաքում անցկացվող «Ամառային Դավոս» համաշխարհային տնտեսական համաժողովին: 2023թ. հուլիսի 21-ին Պեկինում ՀՀ և ՉԺՀ ԱԳՆ-ների միջև կայացել են հերթական քաղաքական խորհրդակցությունները: Հայկական կողմը ներկայացնում էր ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը, իսկ չինականը՝ ՉԺՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մա Ճաոսյույը: 2023թ. սեպտեմբերի 19-ից 21-ը Չինաստանի Ծիանսու նահանգի Լիանյունգան քաղաքում կայացել է Հանրային անվտանգության համագործակցության համաշխարհային ֆորումի 2023թ. համաժողովը, որին մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանը	

			2023թ. հոկտեմբերի 17-18-ը ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ինչպես նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Քրիստինե Ղալեչյանը մասնակցել են Պեկինում կայացած Միջազգային համագործակցությանն ուղղված 3-րդ «Գոտի և Ճանապարհ» ֆորումին: 2023թ. հոկտեմբերի 29-ից 31-ը Պեկինի 10-րդ Սյանշան ֆորումին (10th Beijing Xiangshan Forum) մասնակցելու նպատակով Չինաստան է մեկնել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունը: 2023թ. նոյեմբերի 10-ին ՉԺՀ առևտրի նախարարության և Շանհայ քաղաքի ժողովրդական կառավարության աջակցությամբ Շանհայում կազմակերպված Չինաստանի ներմուծման 6-րդ միջազգային ցուցահանդեսին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանի գլխավորած պատվիրակությունը: 2023թ, նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 1-ը կայացել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի գլխավորած պատվիրակության այցը Չինաստան՝ Շանհայ, Պեկին: 2023թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը ՉԺՀ Ցզյանսի նահանգի Նանչան քաղաքի Նոր Գանցզյան շրջանում կայացել է «Ավանդական բժշկության ՇՀԿ 2023թ. ֆորումը», որին մասնակցել է ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը:	
		10.2 Աշխատանք չինական ներդրումային ծրագրերի ներգրավման	2023թ. հունիսի 2-ին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՉԺՀ առևտրի	

		ուղղությամբ (բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, պղնձաձուլական, էներգետիկայի ոլորտներում):	նախարարության միջև ստորագրվել է ՀՀ կառավարության և ՉԺՀ կառավարության միջև Հայաստանի հանրային հեռուստաընկերության նոր՝ 8-րդ տաղավարի կառուցման նախագծի իրականացման պայմանագիրը: 2023թ. հունիսի 5-ից 8-ը Պեկինում կայացել է առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի 11-րդ նիստը, որին մասնակցել է ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ.Քերոբյանի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել գյուղատնտեսական, պղնձաձուլական, մեքենաշինական ոլորտի առաջատար ընկերությունների հետ, ՉԺՀ Պետխորհրդին կից գործող Միջազգային առևտրի խթանման չինական խորհրդի (China Council for the Promotion of International Trade՝ CCPIT), ինչպես նաև Արտերկրում ձեռնարկությունների զարգացման չինական ասոցիացիայի (China Overseas Development Association՝ CODA) և ասոցիացիայի անդամ մի շարք խոշոր չինական ընկերությունների ղեկավարների հետ: Քննարկվել են Հայաստանի և Չինաստանի միջև առևտրաշրջանառության և ներդրումների ծավալների ավելացմանն առնչվող հարցեր: 2023թ. հունիսի 7-11-ը ՉԺՀ Գուանդոն նահանգի Շենժեն քաղաքում կայացել է Մշակութային արդյունաբերության Չինաստանի 19-րդ միջազգային տոնավաճառը (19th China (Shenzhen) International Cultural Industries Fair՝ ICIF), որին մասնակցել են նաև	

			Չինաստանում հայկական ապրանքների ներմուծմամբ ու վաճառքով զբաղվող ընկերություններ: 2023թ. շարունակվել են աշխատանքները Չինաստանում հայկական առևտրի տների բացման ուղղությամբ. արդեն բացվել են «Հայկական ապրանքների ցուցադրման և առևտրի սրահներ» Շանդոն և Չժեցզյան նահանգներում: 2023թ. հուլիսի 31-ից օգոստոսի 4-ը ՀՀ ՏԿԵ նախարար, «Շանսի-Նաիրիտ» ՀՁ տնօրենների խորհրդի նախագահի տեղակալ Գնել Սանոսյանի գլխավորած պատվիրակությունը ժամանել է ՉԺՀ՝ Շանսի նահանգի Դատոն քաղաքում կայանալիք «Շանսի-Նաիրիտ» հայ-չինական համատեղ ձեռնարկության տնօրենների խորհրդի 6-րդ լիագումար նիստին և ՀՁ բոլոր բաժնետերերի ժողովին մասնակցելու նպատակով: 2023թ. հոկտեմբերի 20-ին «Մանթաշյանց» գործարարների միությունը բացել է իր 12-րդ մասնաճյուղը Չինաստանի Շենժեն քաղաքում: Միջոցառմանը ներկա էին ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանը և ՉԺՀ-ում ՀՀ դեսպան Ս. Մանասարյանը: 2023թ. նոյեմբերի 5-10-ը Շանհայ քաղաքում կայացել է Չինաստանի ներմուծման 6-րդ միջազգային ցուցահանդեսը, որին Հայաստանը ներկայացված էր ազգային տաղավարով: Ցուցադրվել է 23 հայկական ընկերությունների արտադրանք, ինչպես նաև հայկական մշակույթը և Հայաստանի զբոսաշրջության հնարավորությունները: 2023թ. շարունակվել են	

			բանակցությունները Հայաստանի և Չինաստանի միջև ուղիղ ավիաչվերթների գործարկման հարցի շուրջ:	
		10.3 Շանհայի համագործակցության կազմակերպության հետ համագործակցության խորացում, Հայաստանի կարգավիճակի փոփոխում՝ «երկխոսության գործընկերոջից» դառնալով «դիտորդ պետություն»:	2016թ. ի վեր ՀՀ ՇՀԿ-ում ունի «երկխոսության գործընկերոջ» կարգավիճակ: Անցյալ տարիների ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել «դիտորդի» կարգավիճակ ստանալու ուղղությամբ: 2023թ. ևս ՇՀԿ-ի հետ առկա համագործակցության խորացման ուղղությամբ աշխատանքները շարունակվել են: 2023թ. ապրիլի 10-11-ը ՉԺՀ Շանդոն նահանգի Ցինդաո քաղաքում գործող Չինաստան-ՇՀԿ տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնի պատվիրակությունը (տնօրենի գլխավորությամբ) այց է կատարել Երևան՝ քննարկելու ՀՀ-ում նշված կազմակերպության մասնաճյուղ հիմնելու և հետագա համագործակցության հնարավորությունները: 2023թ. հունիսի 15-ին Չինաստանի Ցինդաոյի կազմում գտնվող Ծիաճոու քաղաքի Չինաստան-ՇՀԿ տարածաշրջանային առևտրատնտեսական համագործակցության ցուցադրման գոտում (China-SCO Local Economic and Trade Cooperation Demonstration Area՝ SCODA) կայացել է ՇՀԿ արտադրական-մատակարարման շղթաների վերաբերյալ համաժողովը ու ՇՀԿ երկրների 2023թ. միջազգային ներդրումային և առևտրային ցուցահանդեսի բացումը: Վերոնշյալ և մի շարք այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով Ցինդաո էր ժամանել Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի գլխավորությամբ:	

		10.4 Հայ-հնդկական քաղաքական երկխոսության ընդլայնում, տնտեսա-կան կապերի ակտիվացում: SS և նորարարական տեխնոլոգիա-ների, արհեստական բանականության բնագավառում Հնդկաստանի հետ համագործակցության ներուժի իրացում:	Հունվարի 12-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը ելույթով է հանդես եկել G-20-ում Հնդկաստանի նախագահության շրջանակներում առցանց ձևաչափով անցկացված «Գլոբալ Հարավի ձայնը» առաջին գագաթաժողովին: Մարտի 2-ից 5-ը «Ռաիսինա երկխոսություն» միջազգային համաժողովի շրջանակներում տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի աշխատանքային այցը Հնդկաստան. կայացել է հանդիպում Հնդկաստանի ԱԳ նախարարի հետ: Համաժողովին մասնակցելու նպատակով՝ Հնդկաստան են այցելել նաև ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի և ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Էդվարդ Ասրյանի գլխավորած պատվիրակությունները: Ապրիլի 20-ին Երևանում կայացել են Հայաստանի, Իրանի և Հնդկաստանի ԱԳՆ-ների միջև եռակողմ ձևաչափով առաջին քաղաքական խորհրդակցությունները. կողմերը պայմանավորվել են շարունակել եռակողմ ձևաչափով խորհրդակցությունները: Ապրիլի 26-28-ը «One Earth One Health-6th Edition of Advantage Healthcare India» միջոցառմանը մասնակցության շրջանակներում կայացավ ՀՀ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի այցը Հնդկաստան: Օգոստոսի 29-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը Հնդկաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում հանդիպել է Հնդկաստանի	

			վարչապետի Ազգային անվտանգության գծով խորհրդական Աջիթ Դովալի հետ: Օգոստոսի 27-ից 31-ը Հայաստան այցով էր ժամանել Հնդկաստանի պաշտպանության նախարարության ներքո գործող ամենահեղինակավոր կրթական հաստատության՝ Հնդկաստանի պաշտպանության ազգային քոլեջի պատվիրակությունը՝ քոլեջի հրամանատար-ղեկավար գեներալ-լեյտենանտ Սուկրիտի Սինգի Դահիյայի գլխավորությամբ: Սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Հնդկաստանի ԱԳ նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի հետ: Հոկտեմբերի 16-ից 19-ը ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի գլխավորած պատվիրակությունը Մումբայում մասնակցել է համաշխարհային ծովային 3-րդ գագաթնաժողովին (GMIS 2023), պատվիրակության կազմում էին նաև ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը: Նոյեմբերի 18-ին Նյու Դելիում կայացան Հայաստանի և Հնդկաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական 10-րդ հերթական խորհրդակցությունները՝ Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի և Հնդկաստանի ԱԳ նախարարի Արևմտյան ուղղության հարցերով քարտուղար-տեղակալ Սանջայ Վերմայի գլխավորությամբ: Շարունակվում է համագործակցությունը Հնդկաստանի հետ ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական	

			բնագավառներում: 2023թ. մայիսի 18-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից ռազմական կցորդի հաստիք ստեղծելու որոշումը: <u>Տնտեսական և SS ոլորտ</u> Հայաստանյան «Ստարտափ Արմենիա» հիմնադրամի և Հնդկաստանի Անդհրա Պրադեշ նահանգում գործող աշխարհի ամենախոշոր բժշկական սարքավորումներ արտադրող «AMTZ» կենտրոնի կողմից փետրվարի 13-ից 18-ը համատեղ անցկացված «SSS Holidays India Vizag» համաժողովի շրջանակներում «AMTZ» կենտրոնում բացվել է «Ստարտափ Արմենիա» հիմնադրամի գրասենյակ, որն առաջիկա տարիներին Հնդկաստանում օթևան կհանդիսանա գործնական և կրթական նպատակներով Վիզագ մեկնած բոլոր հայկական ստարտափների համար: «AMTZ» կենտրոնում հիմնադրվել էլեկտրական թափոնների վերամշակման հայ-հնդկական առաջին գործարանը, որը շուտով կսկսի գործել: Ապրիլ-մայիսին Հնդկաստանից Հայաստան են այցելել գործարարների 2 պատվիրակություն, կայացել են գործարար համաժողովներ. փոխըմբռնման հուշագրեր են կնքվել Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի ու Հնդկաստանի առևտրի պալատի և Հնդկաստանի Տնտեսական առևտրային կազմակերպության ու հայկական «Club Capital» բիզնես ակումբի միջև: Ապրիլի 26-28-ը ՀՀ առողջապահության նախարարի՝ Հնդկաստան այցի շրջանակներում ստորագրվեցին	

			Փոխգործակցության հուշագրեր Հայաստանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի և Հայաստանի Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի ու Հնդկաստանի բժշկական հաստատությունների «Ապոլլո» և «ՄԵՏՐՈ» բժշկական/հիվանդանոցային ցանցերի միջև: ՀՀ ԲՏԱ նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը հունիսի 11-ից 13-ը Հնդկաստանում մասնակցել է «Global Digital Public Infrastructure (DPI) Summit»-ին: Այցի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և Հնդկաստանի էլեկտրոնիկայի և տեղեկատվական տեխնոլոգիայի նախարարության միջև ստորագրվեց «Թվային փոխակերպումների համար բնակչության մասշտաբով իրականացված հաջող թվային լուծումների փոխադարձ տրամադրման ոլորտում համագործակցության մասին» Փոխըմբռնման հուշագիր: Հունիսին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հնդկաստանի Հանրապետության Կառավարության միջև մաքսային գործերում համագործակցության և փոխադարձ օգնության մասին» համաձայնագիրը (վավերացվել է): 2023թ. հոկտեմբերին ՀՀ ՏԿԵ նախարարի գլխավորած պատվիրակության՝ համաշխարհային ծովային 3-րդ գագաթնաժողովին մասնակցության շրջանակներում հանդիպումներ են կայացել Հնդկաստանի նավահանգիստների, նավագնացության և ջրային ուղիների նախարարի, Հնդկաստանի	

			նավահանգիստների, նավագնացության և ջրային ուղիների պետնախարարի և Հնդկական նավահանգիստների ասոցիացիայի Մումբայ նավահանգստի տնօրենի, Հնդկաստանի կառավարության նավագնացության կորպորացիայի ղեկավար կազմի, հնդկական խոշորագույն ընկերությունների խումբ հանդիսացող Շապուրջի Պալոնջի (Shapoorji Pallonji) հոլդինգի նախագահի և ղեկավար կազմի, ինչպես նաև հոլդինգին պատկանող «Աֆկոնս» (Afcons) ենթակառուցվածքային շինարարությամբ զբաղվող ընկերության փոխնախագահի, Հնդկաստանի արտահանման-ներկրման բանկի (Export-Import Bank of India) գլխավոր տնօրենի հետ: Քննարկվել են Հայաստանում ենթակառուցվածքային մի շարք ծրագրերի, մասնավորապես՝ ճանապարհաշինական և դպրոցաշինական ծրագրերում հնդկական կողմի ֆինանսական, խորհրդատվական և շինարարական մասնակցության հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Շապուրջի Պալոնջի (Shapoorji Pallonji) հոլդինգի ներկայացուցչի այց կազմակերպել Հայաստան՝ տեղում ՀՀ բյուջեով նախատեսված վերոնշյալ ծրագրերի մանրամասներին ծանոթանալու նպատակով: Քննարկվել են Գյումրիի «չոր նավահանգստի» ծրագրում հնդկական կողմին ներգրավվելու հնարավորությանն ու լոգիստիկ խնդիրներին առնչվող հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել դիտարկել համապատասխան գործակցության հնարավորությունը: ՀՀ ՏԿԵ նախարար Գ. Սանոսյանը	

			հանդիպել է նաև հնդկական «Լարսեն և Տուբրո» խմբին պատկանող էներգետիկ ոլորոտում ծառայություններ մատուցող ընկերության (Larsen and Toubro Power Energy) գործադիր տնօրենի հետ. քննարկվել են ենթակայաններիի կառուցման, ինչպես նաև էներգետիկ այլ ծրագրերում հետագա ներգրավման հնարավորություններին առնչվող հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել ընկերության ներկայացուցչի այցը Հայաստան՝ տեղում ենթակայանների կառուցման ծրագրի մանրամասներին ծանոթանալու նպատակով: Նոյեմբերի 14-ից 16-ը կայացել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Էդուարդ Հակոբյանի աշխատանքային այցը Նյու Դելի, որտեղ նախարարի տեղակալը, Ասիական զարգացման հիմնադրամի 14-րդ համալրման համատեքստում կայացած համաժողովին մասնակցությունից զատ, հանդիպել է Հնդկաստանի ֆինանսների նախարարի տնտեսական հարցերով քարտուղար-տեղակալ Աջայ Սեթի հետ: Հնդկաստանի և Հայաստանի կառավարությունների միջև Հնդկաստանի կողմից համայնքների զարգացման՝ բարձր արդյունավետության ծրագրերի իրականացման համար տրամադրվելիք դրամաշնորհային աջակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի շրջանակներում, մարտին հնդկական կողմի ուսումնասիրմանը ներկայացված՝ ՀՀ համար առաջնահերթություն ներկայացնող ծրագրերի փաթեթից, հնդկական կողմից ընտրվել է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ներկայացված «Strengthening of Primary Health Care	

			Capacity of Control of Non-Communicable Diseases and Capacity of Emergency Response in Rural Communities of Armenia» ծրագիրը, որի պաշտոնական ներկայացման և հուշագրի ստորագրման շուրջ աշխատանքներն ընթացքի մեջ են:	
		10.5 ՀՀ-Հնդկաստան համագործակցություն «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային ծրագրի շրջանակներում, բազմամոդել փոխադրումների ոլորտում իրավապայմանագրային հիմքերի ձևավորում:	Ապրիլի 4-ից 7-ը կայացել է ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանի այցը Հնդկաստան, որի ընթացքում հնդկական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել իրականացնել Հնդկաստանից-Հայաստան կոնտեյների թեստ-դրայվ: Տնտեսական և տարածաշրջանային հաղորդակցային ուղիներին առնչվող հարցերը քննարկվել են Հայաստանի, Իրանի և Հնդկաստանի ԱԳՆ-ների միջև ապրիլյան եռակողմ քաղաքական խորհրդակցությունների ժամանակ: Միջազգային բեռնափոխադրումների մուլտիմոդալ արագընթաց երթուղու (ՄԲՄԱԵ) գործարկման և իրանական Չաբահար նավահանգստում օպերատոր դառնալու հարցերը քննարկելու նպատակով՝ ՀՀ վարչապետի մայիսի 8-ի որոշմամբ ստեղծվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի ղեկավարությամբ միջգերատեսչական աշխատանքային խումբ: Հոկտեմբերի 16-ից 19-ը ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի գլխավորած պատվիրակությունը Մումբայում մասնակցել է համաշխարհային ծովային 3-րդ գագաթնաժողովին (GMIS 2023), որտեղ Չաբահար նավահանգստին առնչվող կլոր սեղան-քննարկման ժամանակ ՀՀ ՏԿԵ նախարարը հանդես է եկել «Հայաստանը՝ տարածաշրջանային հաղորդակցության խաչմերուկ» ելույթով: Քննարկվել են Գյումրիի «չոր	

			նավահանգստի» ծրագրում հնդկական կողմին ներգրավվելու հնարավորությանն ու լոգիստիկ խնդիրներին առնչվող հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել դիտարկել համապատասխան գործակցության հնարավորությունը: Կայացել են հանդիպումներ Հնդկաստանի մի շարք բարձրաստիճան ոլորտային պաշտոնյաների հետ, հնդկական խոշոր ընկերությունների հետ ձեռք են բերվել պայմանավորվածություններ (տես՝ տնտեսական ոլորտը): Նոյեմբերի 18-ին Նյու Դելիում կայացած Հայաստանի և Հնդկաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական 10-րդ հերթական խորհրդակցությունների շրջանակներում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձ է կատարվել հաղորդակցային ուղիների տարբեր ոլորտային նախաձեռնությունների իրականացմանը, Հայաստանի ԱԳ նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը մանրամասն ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը:	
		10.6 Համագործակցություն Ճապոնիայի և Հարավային Կորեայի կառավարությունների, այդ թվում նաև՝ Ճապոնիայի Միջազգային համագործակցության գործակալու-թյան (JICA) և Ճապոնիայի Արտաքին առևտրի կազմակերպության (JETRO), Կորեայի Հանրապետության Մի-ջազգային համագործակցության	2023թ. հունվարի 31-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ճապոնիայի ԱԳ նախարար Յոշիմասա Հայաշիի հետ: Հեռախոսազրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել տարածաշրջանային անվտանգությանը ու կայունությանը վերաբերող հարցերի: 2023թ. մայիսի 2-3-ը աշխատանքային այցով Հայաստանում էր գտնվում Ճապոնիայի ԱԳ խորհրդարանական փոխնախարար Յումի	

		գործակալության (KOICA) հետ՝ ՀՀ տնտեսության զարգացմանը, ճապոնական ընկերությունների կողմից ՀՀ-ում ներդրումների իրականացմանը, SS և նորարարական տեխնոլոգիաների, արհեստական բանականության, թվայնացման, հանրային անվտանգության և աղետների ռիսկի կառավարման ոլորտներում փոխգործակցության խորացմանն ուղղված ծրագրերի իրագործման նպատակով: Հայ-ճապոնական և հայ- հարավկորեական գիտակրթական, մշակութային և հումանիտար կապերի ընդլայնում, զբոսաշրջային փոխայցելությունների խթանում:	Յոշիկավան: Յոշիկավայի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունեցել ՀՀ ԱԳՆ-ում և ԱԺ-ում: 2023 թվականի ընթացքում ճապոնական կողմը շարունակել է մեծ հետաքրքրվածություն դրսևորել Ճապոնիայում ԹՈՒՄՈ կենտրոն բացելու հարցի շուրջ, ինչի վերաբերյալ վերջին 5 տարիների ընթացքում առարկայական քննարկումներ են անցկացվել: 2023թ. հունիսի 30-ին կայացել է հայ-ճապոնական գործարար առցանց համաժողով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի, Ճապոնիայում ՀՀ դեսպանության, ինչպես նաև «ROTOBO» ասոցիացիայի ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկվել են երկկողմ տնտեսական և տեխնոլոգիական համագործակցության հեռանկարները: 2023թ. հոկտեմբերի 3-ին Երևանում երկու երկրների ԱԳՆ-ների միջև կայացել են հերթական քաղաքական խորհրդակցությունները: 2023թ. հոկտեմբերի 23-ից 27-ը ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը Ճապոնիայում մասնակցել է «Japan IT Week» միջոցառմանը, ինչպես նաև հանդիպումներ ունեցել Ճապոնիայի Թվային փոխակերպման նախարար, նախկին ԱԳ նախարար Տարո Կոնոյի, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) և Ճապոնիայի արտաքին առևտրի կազմակերպության (JETRO) ղեկավարության հետ:	

			Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել են նաև ենթակառուցվածքների բարելավման ոլորտում Ճապոնիայի կողմից դրամաշնորհների տեսքով տրամադրվող օգնության ծրագրերը, որոնց ընդհանուր գումարը տարեկան գերազանցում է 1 մլն. ԱՄՆ դոլարը: Շարունակվել են աշխատանքները 2025թ. Ճապոնիայի Օսակա քաղաքում կայանալիք «World Expo» ցուցահանդեսին ՀՀ մասնակցության նախապատրաստման ուղղությամբ: Նոյեմբերի 12-ից 15-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի Ճապոնիա կատարած այցի շրջանակներում ճապոնական «MASH» ընկերության հետ ստորագրվել է ՀՀ տաղավարի կառուցման պայմանագիրը: Ակնկալվում է, որ ներդրումային և առևտրատնտեսական հնարավորություններից բացի ՀՀ մասնակցությունը վերոնշյալ ցուցահանդեսին կնպաստի նաև Ճապոնիայում Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացմանն ու զբոսաշրջային ներհոսքին: <u>Կորեայի Հանրապետություն</u> 2023թ. փետրվարի 12-ից 14-ը կայացել է Կորեա-Հայաստան խորհրդարանական բարեկամական խմբի ղեկավար Կի-հուն Սոնի այցը Հայաստան, որի շրջանակներում կորեական պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, ինչպես նաև ԱԳ փոխնախարարի հետ: 2023թ. փետրվարի 21-23-ը ՀՀ-ում ԿՀ նորանշանակ դեսպան Չան Հոջինը (նստավայրը՝ ՌԴ) իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահին: Այցի ընթացքում կայացել են հանդիպումներ նաև ԱԺ նախագահի և ԱԳ նախարարի տեղակալի հետ:	

			2023թ. մայիսի 19-ին կայացել է ԿՀ նախագահի հատուկ բանագնաց Չան Սոն Մինի գլխավորած պատվիրակության այցը ՀՀ, որի շրջանակներում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի և ԱԺ նախագահի հետ: 2023թ. օգոստոսի 28-ին Սլովենիայում անցկացվող Բլեդի ռազմավարական ֆորումի շրջանակներում կայացել է ՀՀ և ԿՀ ԱԳ նախարարների միջև հանդիպումը: 2023թ. սեպտեմբերի 5-ին կայացել է ԿՀ նախագահի հատուկ բանագնաց, Կորեայի առևտրի և արդյունաբերության պալատի (KCCI) նախագահ, Կորեայի խոշորագույն կոնգլոմերատ «SK Group»-ի սեփականատեր Չեյ Տե-վոնի գլխավորած պատվիրակության, այցը ՀՀ, որի շրջանակներում պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ նախագահի և ՀՀ վարչապետի, ինչպես նաև ԲՏԱ և ՏԿԵ նախարարություններում: 2023թ. աեպտեմբերի 14-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Կորեայի առևտրային ներդրումների խթանման գործակալության (KOTRA) կողմից Երևանում անցկացվել է Հայստան-Կորեա տնտեսական համագործակցության համաժողով՝ Հայաստանի և Կորեայի միջև տնտեսական համագործակցությունը խթանելու և ընդլայնելու նպատակով: 2023թ. նոյեմբերի 7-ին ԿՀ ԱԳՆ-ն հայտնել է 2024 թվականի ընթացքում ՀՀ-ում մշտական դիվանագիտական ներկայացուցչություն բացելու մտադրության մասին: Հայկական կողմը ևս	

			փոխադարձության սկզբունքով դեսպանություն կբացի ԿՀ-ում: 2023թ. հոկտեմբերի 24-ին կայացել է Կորեայի Հանրապետության առևտրի, արդյունաբերության և էներգետիկայի նախարարությունում Առևտրի նախարար, ԿՀ նախագահի հատուկ բանագնաց Ան Դոկգունի գլխավորած պատվիրակության այցը ՀՀ, որի շրջանակներում պատվիրակության ընդունել է ՀՀ վարչապետը, ԱԺ նախագահը, ինչպես նաև էկոնոմիկայի նախարարը: 2023թ. նոյեմբերի 10-ին Փարիզում անցկացված Փարիզի խաղաղության ֆորումի շրջանակներում կայացել է ՀՀ և ԿՀ ԱԳ նախարարների միջև հերթական հանդիպումը: 2023թ. նոյեմբերի 16-ին ՀՀ-ում ԿՀ նորանշանակ դեսպան Լի Դոհունն իր հավատարմագրերն է հանձնել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին: Լի Դոհունի՝ Երևան կատարած այցի ընթացքում կազմակերպվել է նաև վերջինիս այցը ԹՈՒՄՈ կենտրոն. կորեական կողմը հետաքրքրվածություն է արտահայտել կենտրոնի աշխատանքի շուրջ: 2023թ. նոյեմբերի 28-ին կայացել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ԿՀ նախագահ Յուն Սոկ Յոլի միջև հեռախոսազրույցը՝ երկկողմ հարաբերություններին, ինչպես նաև «EXPO 2030» անցկացման վայրի ընտրություններին վերաբերվող հարցերի քննարկման նպատակով (ընտրությունները կայացել են 2023թ. նոյեմբերի 28-ին, ձայների մեծամասնությունը ստացել է Սաուդյան Արաբիայի թեկնածությունը):	

		10.7 Հարավ-արևելյան Ասիայի երկրների և Ավստրալիայի համագործակցության զարգացում	ASEAN-ի միջխորհրդարանական վեհաժողովում (AIPA) Հայաստանին շնորհվել է դիտորդի կարգավիճակ (2023թ. օգոստոս): Հայաստանի և Ինդոնեզիայի միջև դյուրացել է մուտքի ռեժիմը (էլեկտրոնային վիզաների ստացման հնարավորություն է ստեղծվել): Վիետնամի Հոշիմին քաղաքում ՀՀ պատվավոր հյուպատոսություն է բացվել (08.12.2023թ.): «Արմենպրես» պետական լրատվական գործակալության և Վիետնամի «VNA» լրատվական գործակալության միջև համագործակցության համաձայնագիր է ստորագրվել (14.11.2023թ.):	
11.	Համագործակցության ընդլայնում և զարգացում Միջին Արևելքի և Աֆրիկայի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում: Աջակցություն հայ համայնքների կենսագործունեության շարունակականության ապահովմանը:	11.1 Տարածաշրջանային երկրների հետ գործընկերային հարաբերությունների շարունակական խորացում և ընդլայնում: - Բարձր մակարդակի փոխ-այցելությունների իրականացում - քաղաքական խորհրդակցությունների անցկացում -գործարար համաժողովների կազ-մակերպում - կրթամշակութային և գիտական կապերի ստեղծում:	<u>Եգիպտոս</u> Հունվարին պաշտոնական այցով Հայաստան է այցելել Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ Ալ-Սիսին: Այցի շրջանակներում տեղի է ունեցել նաև երկու երկրների ԱԳ նախարարների հանդիպումը, ստորագրվել են համագործակցության 3 փաստաթղթեր: Փետրվարին Կահիրեում կայացել է հայկական և եգիպտական զբոսաշրջային ընկերությունների միջև առաջին գործարար համաժողովը: Մարտին ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանն աշխատանքային այց է կատարել Կահիրե՝ Արաբական պետությունների լիգայի խորհրդի՝ նախարարական մակարդակով 159-րդ նիստին ելույթ ունենալու նպատակով: Այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել Եգիպտոսի ԱԳ նախարարի, ինչպես նաև Ալ-Ազհարի Գերագույն Իմամի և Ղպտի ուղղափառ եկեղեցու հոգևոր առաջնորդի հետ:	

			Դուբայում կայացած ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնֆերանսի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը դեկտեմբերին հանդիպում է ունեցել Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթահ Էլ-Սիսիի հետ: ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և ՀՀ ՊՆ պատվիրակությունները դեկտեմբերին Կահիրե կատարած աշխատանքային այցի շրջանակներում՝ մասնակցելու EDEX-2023 պաշտպանական և անվտանգային տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդեսի պաշտոնական բացմանը, հանդիպումներ են ունեցել ԵԱՀ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: ՀՀ ուսանողները շարունակել են մասնակցել Եգիպտոսի կողմից կազմակերպվող արաբերեն լեզվի 2023-2024թթ. ուսումնական տարվա դասընթացներին (եգիպտական կրթաթոշակ): <u>Իրաք</u> Փետրվարին Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում է ունեցել ԻՀ վարչապետ Մուհամմադ Շիա Ալ-Սուդանիի, Իրաքյան Քուրդիստանի նախագահ Ն. Բարզանիի հետ: Օգոստոսին Հայաստանը մասնակցել է Իրաքյան Քուրդիստանի Սուլեյմանիե քաղաքում կայացած զբոսաշրջության միջազգային ցուցահանդեսին: Սեպտեմբերին Բաղդադում տեղի է ունեցել Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի 3-րդ նիստը:	

			Սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 7-ը ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական դպրոցում 3-րդ տարին անընդմեջ վերապատրաստման դասընթացի են մասնակցել Իրաքյան Քուրդիստանի երիտասարդ պետաշխատողները: Նոյեմբերին տեղի է ունեցել Իրաքի Հանրապետության նախագահ Աբդ Ալ-Լատիֆ Ջամալ Ռաշիդի պաշտոնական այցը Հայաստան: Այցի ընթացքում ընդունվել է ՀՀ և ԻՀ նախագահների համատեղ հայտարարություն: Իրաքի նախագահն այցելել է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր: Նոյեմբերին տեղի է ունեցել հայ-իրաքյան քաղաքական խորհրդակցությունների 2-րդ փուլը: <u>Սիրիա, Հորդանան</u> Փետրվարին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը այցելել է Դամասկոս, որտեղ հանդիպումներ է ունեցել ՍԱՀ նախագահ Բաշար Ալ-Ասադի և ԱԳ նախարար Ֆեյսալ Միկդադի հետ: Ա. Միրզոյանն այցելել է նաև երկրաշարժից տուժած Հալեպ, հանդիպում ունեցել Հալեպի նահանգապետ Հուսեյն Դիյաբի հետ: Նախարարն այցելել է երկրաշարժից տուժած Շաար շրջան, որտեղ երկրաշարժին հաջորդած օրերին որոնողափրկարարական աշխատանքներ են իրականացրել ՀՀ փրկարարները և ծանոթացել իրավիճակին: ՀՀ-ից Սիրիա է ուղարկվել նաև մարդասիրական օգնությամբ բեռնված 3 ինքնաթիռ՝ ընդհանուր շուրջ 100 տոննա ծավալով:	

			Նոյեմբերին Սիրիա այց է կատարել ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանի գլխավորած պատվիրակությունը: Սիրիայում աշխատանքներն է շարունակել Հայաստանի հումանիտար առաքելությունը, որի կողմից ականազերծվել է 2.4 մլն քմ տարածք, ցուցաբերվել բժշկական օգնություն 60.000 տեղաբնակների: Մարտին Կահիրե աշխատանքային այցի ընթացքում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել Հորդանանի ԱԳ նախարարի հետ: Դուբայում անցկացված ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 28-րդ համաժողովի շրջանակներում ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը դեկտեմբերին հանդիպում է ունեցել Հորդանանի թագավոր Աբդալլահ 2-րդի հետ: ՀՀ ուսանողները շարունակել են ուսանել Հորդանանի բուհերում՝ վերջինիս կողմից տրվող կրթաթոշակներով: <u>Լիբանան</u> Մարտին Կահիրե աշխատանքային այցի ընթացքում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել Լիբանանի ԱԳ նախարարի հետ: <u>Իսրայել,Պաղեստին</u> Հունիսին երկկողմ հարաբերությունների զարգացման նպատակով Հայաստան է այցելել Պաղեստինի ԱԳ նախարարության պատվիրակությունը: Սեպտեմբերին Իսրայելից այրվածքաբան-բժիշկների կամավոր խումբ է ժամանել Հայաստան՝ Լեռնային Ղարաբաղում բենզալցակայանի պայթյունից տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով:	

			Հոկտեմբերին Հայաստան ժամանած Բեթղեհեմ քաղաքային խորհրդի պատվիրակությունը համագործակցության հուշագիր է ստորագրել Վաղարշապատի համայնքապետարանի Էջմիածին քաղաքի հետ: <u>Արաբական Միացյալ Էմիրություններ</u> Մարտին Կահիրե աշխատանքային այցի ընթացքում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել ԱՄԷ ԱԳ պետնախարարի հետ: Սեպտեմբերին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը պաշտոնական այցելություն է կատարել Արաբական Միացյալ Էմիրություններ: Այցի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ ԱՄԷ նախագահ Մուհամմադ Բին Զայեդ Ալ Նահյանի, արտաքին գործերի նախարար Աբդալլահ բին Զայեդ Ալ Նահյանի, Դաշնային ժողովի նախագահ Սաքր Ղոբաշիի, համակեցության և հանդուրժողականության հարցերով նախարար Նահյան բին Մուբարաք ալ Նահյանի հետ: Այցի շրջանակներում ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև 2009թ. հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրությունը, որով չեղարկվում է ՀՀ սովորական անձնագրեր կրող քաղաքացիների համար ԱՄԷ մուտքի արտոնագիր ստանալու պահանջը: Սեպտեմբերին Երևանում անցկացվել է Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ գործարար	

			համաժողով: Համաժողովը կազմակերպվել էր «Էնթերփրայզ Արմենիա» ներդրումների աջակցման կենտրոնի, Հայաստանում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանության և ԱՄԷ առևտրաարդյունաբերական պալատների ֆեդերացիայի կողմից: Համաժողովի շրջանակներում ստորագրվել են 3 փոխըմբռնման հուշագրեր: Նոյեմբերին վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է ԱՄԷ արտաքին գործերի նախարարության առևտրի և տնտեսական հարցերով պետնախարար Ահմեդ Ալի Մուհամեդ Ալսայեղին: Նոյեմբերին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այց է կատարել Արաբական Միացյալ Էմիրություններ: Կայացել է հանդիպում ԱՄԷ պաշտպանության պետնախարար Մոհամմադ Ահմադ ալ Բովարդիի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը: Երկու նախարարները նաև մասնակցել են Դուբայի ավիացիոն ցուցահանդեսի (Dubai Airshow) բացման արարողությանը: <u>Կատար</u> Հունվարին Կատարի Պետություն կատարած աշխատանքային այցի ընթացքում ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը և պատվիրակության անդամ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հանդիպել են Կատարի Զարգացման հիմնադրամի գլխավոր տնօրեն Խալիֆա բին Ջասեմ ալ-Քուարին: ՀՀ ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակությանն ընդունել է Մաջլիս ալ-Շուրայի նախագահ Հասսան բին	

			Աբդուլլա ալ-Ղանիմին: ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև Կատարի Պետության ներդրումային գործակալության տնօրեն Մանսուր Իբրահիմ Ալ-Մահմուդին: Մարտին Դոհայում տեղի է ունեցել «AgriteQ» միջազգային ամենամյա գյուղատնտեսական ցուցահանդեսը, որին մասնակցել են և Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքը ներկայացրել տասնյակից ավելի ՀՀ գյուղատնտեսական ընկերություններ: ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը մայիսի 23-25-ը աշխատանքային այց է կատարել Կատար՝ «Համաշխարհային աճի նոր պատմությունը» խորագիրը կրող Կատարի երրորդ տնտեսական համաժողովին մասնակցելու նպատակով: Վ. Խաչատուրյանն այցի ընթացքում հանդիպել է Կատարի Պետության էմիր շեյխ Թամիմ բին Համադ Ալ Թանիի հետ: Դեկտեմբերին Դոհա աշխատանքային այց է կատարել ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը՝ ՀՀ վարչապետի Կատարի Պետություն իրականացրած այցի շրջանակներում ձեռքբերված պայմանավորվածությունների իրականացմանն ուղղված համատեղ քայլերը քննարկելու նպատակով: Արայիկ Հարությունյանը հանդիպել է Էմիրի դիվանի ղեկավար Շեյխ Սաուդ Բին Աբդուլրահման Ալ Թանիի հետ: Նոյեմբերին Կատարը ռեզիդենտ դեսպանություն է բացել Երևանում:	

			ԵՊՀ 3 ուսանողներ առաջին անգամ կրթաթոշակով ուսանել են Կատարի համալսարանի Արաբերենի ուսուցման կենտրոնում: Կրթաթոշակները լինելու են ամենամյա: <u>Բահրեյն</u> Հուլիսին ՀՀ նախագահին իր հավատարմագրերն է հանձնել Բահրեյնի Թագավորության դեսպան Յուսուֆ Ալ-Բելուշիին (նստավայրը՝ ք. Հռոմ): Նոյեմբերին տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի այցը Մանամա՝ մասնակցելու IISS Manama Dialogue 19-րդ տարածաշրջանային անվտանգության համաժողովին: Մանամայում ՀՀ ԱԳ նախարարը հանդիպել է Բահրեյնի Թագավորության ԱԳ նախարար Աբդ Ալ-Լատիֆ բին Ռաշիդ Ալ-Զայանիի հետ: <u>Օման</u> Արաբական պետությունների լիգայի խորհրդի՝ նախարարական նիստի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը մարտի 8-ին Կահիերում հանդիպել է Օմանի Սուլթանության արտաքին գործերի նախարարի դիվանագիտական հարցերով տեղակալ Շեյխ Խալիֆա բին Ալի բին Իսսա Ալ-Հարսիի հետ: Հոկտեմբերին Մասկատում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի Հանրապետության և Օմանի Սուլթանության արտաքին գործերի նախարարությունների միջև: <u>Սաուդյան Արաբիա</u> Նոյեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության և Սաուդյան Արաբիայի Թագավորության միջև	

			ստորագրվել է դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրություն: Արձանագրությունը ստորագրվել է Աբու Դաբիում՝ ԱՄԷ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Կարեն Գրիգորյանի և Սաուդյան Արաբիայի Թագավորության դեսպան Սուլթան բին Աբդալլահ Ալ-Անկարի կողմից: <u>Թունիս</u> Դեկտեբերին Թունիս կատարած աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը հանդիպում է ունեցել ԹՀ արտաքին գործերի, միգրացիայի և արտերկրում թունիսցիների հարցերով նախարար Նաբիլ Ամմարի հետ: Երկու երկրների ԱԳՆ պատվիրակությունների միջև անց են կացվել հայ-թունիսական առաջին քաղաքական խորհրդակցությունները: Այցի ընթացքում ստորագրվել են Հայաստանի և Թունիսի ԱԳՆ-ների միջև քաղաքական խորհրդակցությունների մասին հուշագիրը, ինչպես նաև դիվանագիտական անձնագրեր կրող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին համաձայնագիրը: <u>Արաբական պետությունների լիգա</u> Մարտին ՀՀ ԱԳ նախարար Ա. Միրզոյանը Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղարի հրավերով աշխատանքային այց է կատարել Կահիրե և ելույթ ունեցել Արաբական պետությունների լիգայի խորհրդի՝ նախարարական մակարդակով 159-րդ նիստին: Այցի շրջանակներում ԱԳ նախարարը հանդիպում է ունեցել ԱՊԼ գլխավոր քարտուղար Ահմեդ Աբուլ Ղեյտի հետ:	

			Նոյեմբերին ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը Մանամայում հանդիպում է ունեցել Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղար Ահմեդ Աբուլ Ղեյտի հետ: <u>Ծոցի համագործակցության խորհուրդ</u> Նոյեմբերին Մանամայում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Ծոցի համագործակցության խորհրդի գլխավոր քարտուղար Ջասսեմ Մուհամմադ Ալ-Բուդայվիի հետ: <u>Աֆրիկա</u> Հուլիսին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը Իտալիայում անցկացվող «բազմակողմ միջոցառման շրջանակներում հանդիպել է Գանայի նախագահ Նանա Ակուֆո-Ադոյի հետ: Դեկտեմբերին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Բոտսվանայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Լեմոգանգ Կվապեի հետ, ով Երևանում էր գտնվում մասնակցելու դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների նախարարական հանդիպմանը: Հայաստանի և Բոտսվանայի ԱԳ նախարարները ստորագրել են երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին համատեղ հայտարարություն: Բոտսվանայի ԱԳ նախարարն այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր: Տարվա ընթացքում Նիգերիան և Զիմբաբվեն նոր դեսպաններ են հավատարմագրել Հայաստանում: Ընդհանուր առմամբ Հայաստանում դեսպաններ են հավատարմագրել աֆրիկյան 12 երկրներ:	

			Դեկտեմբերին Հայաստանն առաջին անգամ դեսպան է հավատարմագրել Եթովպիայում, ինչը հնարավորություն կտա դեսպանին հավատարմագրել նաև Աֆրիկյան միությունում, ինչպես նաև աֆրիկյան թիրախային մի քանի պետություններում:	
		11.2 Տարածաշրջանի երկրներում (մասնավորապես՝ ԱՄԷ, Կատար, Քուվեյթ) գործող ներդրումային հիմնադրամների հետ ակտիվ աշխատանքների իրականացում՝ ներդրողների ներգրավման և ներդրումների խթանման նպատակով:	<u>ԱՄԷ</u> Մայիսին ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է «AIM 2023» ամենամյա ներդրումային համաժողովին: ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը սեպտեմբերին ԱՄԷ կատարած պաշտոնական այցի ընթացքում կայացած հանդիպումներին, ի թիվս այլ հարցերի, քննարկել է ՀՀ տնտեսության մեջ էմիրաթական ներդրումներ ներգրավելու հնարավորությունները Սեպտեմբերին Երևանում անցկացվել է Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ գործարար համաժողով: Համաժողովի ընթացքում մասնակիցներին ներկայացվել են Հայաստանի ներդրումային գրավչությունն ու բիզնես հնարավորությունները, ինչպես նաև Հայաստանում էմիրաթական կապիտալով գործող ընկերությունների հաջողության պատմությունները: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նոյեմբերին ընդունել է ԱՄԷ արտաքին գործերի նախարարության առևտրի և տնտեսական հարցերով պետնախարար Ահմադ Ալ-Սայեղին՝ ի թիվս այլ հարցերի, ներդրումային ծրագրերը քննարկելու նպատակով: <u>Կատար</u>	

			Հունվարին աշխատանքային այցով Կատարի Պետության մայրաքաղաք Դոհայում գտնվող ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը և պատվիրակության անդամ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը հանդիպել են Կատարի Զարգացման հիմնադրամի գլխավոր տնօրեն Խալիֆա բին Ջասեմ ալ-Քուարին: ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև Կատարի Պետության ներդրումային գործակալության տնօրեն Մանսուր Իբրահիմ Ալ-Մահմուդին: Մայիսին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը Կատարի տնտեսական համաժողովին մասնակցելու նպատակով այցելել է Դոհա: <u>Օման</u> Հոկտեմբերին Մասկատում տեղի հայ-օմանական քաղաքական խորհրդակցությունների շրջանակներում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը հանդիպում է ունեցել Օմանի առևտրի, արդյունաբերության և ներդրումների առաջմղման նախարարի տեղակալ Իբթիսամ Ահմեդ Սաիդ ալ-Ֆարուջիի հետ: <u>Եգիպտոս</u> Հունվարին Եգիպտոսի նախագահ Աբդել Ֆաթթահ Ալ-Սիսիի Հայաստան պաշտոնական այցի ընթացքում ստորագրվել է «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և «Եգիպտոսի Արաբական Հանրապետության ներդրումների և ազատ առևտրի գոտիների տնօրինության» միջև փոխըմբռնման հուշագիր:	

		11.3 Վտանգված հայ համայնքներին (Սիրիա, Լիբանան, Իրաք) աջակցության ցուցաբերում, ըստ անհրաժեշտության նաև մարդասիրական օգնության տրամադրում:	Փետրվարին Սիրիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման նպատակով, Հայաստանի կառավարությունը ընդհանուր շուրջ 100 տոննա ծավալով 3 ինքնաթիռ մարդասիրական օգնություն և փրկարարական խմբեր է ուղարկել Սիրիա: Փետրվարի 23-ին ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը այցելել է Դասմասկոս, որտեղ հանդիպումներ է ունեցել ՍԱՀ ԱԳ նախարար Ֆեյսալ Միկդադի և նախագահ Բաշար Ալ Ասադի հետ: Ա. Միրզոյանն այցելել է նաև երկրաշարժից տուժած Հալեպ և ծանոթացել իրավիճակին: Հալեպում նա հանդիպում է ունեցել Հալեպի նահանգապետ Հուսեյն Դիյաբի հետ: Նախարարն այցելել է երկրաշարժից տուժած Շաար շրջան, որտեղ երկրաշարժին հաջորդած օրերին որոնողափրկարարական աշխատանքներ են իրականացրել ՀՀ փրկարարները և ծանոթացել իրավիճակին: Նոյեմբերին Սիրիա է այցելել Հայաստանի խորհրդարանական բարեկամական խմբի պատվիրակությունը՝ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Հ.Արշակյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը հանդիպել է հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Սիրիայում աշխատանքներն է շարունակել Հայաստանի հումանիտար առաքելությունը, որի կողմից ականազերծել է 2.4 մլն քմ տարածք, ցուցաբերվել է բժշկական օգնություն 60. 000 տեղաբնակների: Մայիսին Ամմանում տեղի է ունեցել Երուսաղեմում կրոնական հողատարածքների վերաբերյալ	

			քննարկումների Հայաստան-Հորդանան-Պաղեստին աշխատանքային խմբի երկրորդ հանդիպումը: Հանդիպմանը վերահաստատվել է Երուսաղեմի սրբավայրերի ստատուս քվոյի պահպանման անհրաժեշտությունը:	
12.	Համագործակցության զարգացում ամերիկյան մայրցամաքի պետությունների հետ:	12.1 Լատինամերիկյան երկրների հետ արտոնագրային քաղաքականության պարզեցման աշխատանքներ:	Տարածաշրջանի երկրներից Հայաստանը փոխադարձության հիման վրա առանց վիզայի մուտքի ռեժիմ ունի Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Էկվադորի հետ: Չիլիի և Մեքսիկայի պարագայում գործում են դիվանագիտական անձնագրերով վիզային ռեժիմի վերացման մասին համաձայնագրերը: 2023թ. օգոստոսից փոխադարձության հիման վրա Հայաստանի կառավարությունը առանց վիզայի մուտքի ռեժիմ է սահմանել նաև Պանամայի Հանրապետության քաղաքացիների համար: Ստորագրման է պատրաստ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Դոմինիկայի Ընկերակցության կառավարության միջև դիվանագիտական, պաշտոնական և սովորական անձնագիր ունեցող անձանց մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին» համաձայնագիրը: Շարունակվում են Կոստա Ռիկայի, Բելիզի, Գվատեմալայի, Կուբայի և Կոլումբիայի հետ դիվանագիտական անձնագրերի, իսկ Պերուի և Դոմինիկյան Հանրապետության պարագայում վիզային ռեժիմի վերացման համաձայնագրերի նախապատրաստման աշխատանքները:	
		12.2 Ուրուգվայում ՀՀ դեսպանության բացում	Մոնտեվիդեոյում Հայաստանի դեսպանության բացման աշխատանքները մտել են գործնական փուլ:	

			Դեսպանության պաշտոնական բացումը նախատեսվում է 2024 թվականի առաջին կիսամյակում:	
		ՀՀ-ում Կանադայի դեսպանության բացում: - Երկկողմ քաղաքական և տնտեսական հարաբերությունների և այլ ոլորտներում համագործակցության խորացում և ընդլայնում:	Դեսպանության բացումը կայացել է հոկտեմբերի 25-ին Կանադայի ԱԳ նախարարի՝ Հայաստան այցի շրջանակներում:	
13.	Ակտիվ աշխատանքներ ՄԱԿ շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների հաղթահարման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևա-կերպման և դրանց հաղթահարման շուրջ աշխատանքների կազմակերպման առումով:	13.1 Ակտիվ աշխատանքներ Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում: ՄԱԿ-ի հիմնարար արժեքների և օրակարգի առաջմղում:	Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվել ՄԱԿ Անվտանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի և ՄԱԿ Քարտուղարության հետ՝ ներկայացնելով տարածաշրջանային մարտահրավերներից բխող սպառնալիքները միջազգային խաղաղության ու անվտանգության համար: 2023թ. ընթացքում Հայաստանի դիմումի համաձայն հրավիրվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի երկու հրատապ հանդիպում: Օգոստոսի 16-ին ԱԽ հրատապ հանդիպմանը ներկայացվել է Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման և առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարումների լիակատար դադարեցման հետևանքով ԼՂ-ում ստեղծված ծանր հումանիտար իրավիճակը: Կարևորվել է ԱԽ մանդատից բխող հրատապ միջոցառումների ձեռնարկումը հումանիտար ճգնաժամին արձագանքի ուղղությամբ և ՄԱԿ փաստահավաք առաքելության տեղակայումը: Սեպտեմբերի 21-ին ՀՀ ԱԳ նախարարի մասնակցությամբ ԱԽ հրատապ հանդիպմանը քննարկվել է սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից	

			ԼՂ դեմ լայնածավալ հարձակումը և դրա հետևանքները: ԼՂ շրջափակումից բխող հումանիտար խնդիրները հայկական կողմի բարձրաձայնվել են նաև ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանի մասնակցությամբ մայիսի 23-ին Անվտանգության խորհրդի «Զինված հակամարտություններում քաղաքացիական անձանց պաշտպանությունը» օրակարգի կետի ներքո ու օգոստոսի 3-ին ԱԽ «Սովի և հակամարտության հետևանքով գլոբալ պարենային անապահովության» թեմայով բաց քննարկումների ընթացքում: ՀՀ ԱԳ նախարարի գլխավորությամբ ՀՀ պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի բարձրաստիճան հատվածին: ԱԳ նախարարը մասնակցել է մի շարք բարձր մակարդակի միջոցառումների՝ ելույթ ունենալով ԳԱ 78-րդ նստաշրջանի ընդհանուր քննարկումներին և ԳԱ բարձրաստիճան հատվածի առանցքային միջոցառմանը՝ Կայուն զարգացման նպատակների գագաթաժողովին: Կազմակերպվել են ավելի քան 30 երկկողմ հանդիպումներ ՄԱԿ Քարտուղարության ղեկավարության և անդամ պետությունների ԱԳ նախարարների հետ: Հունվարի 16-ին ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել ՄԱԿ Գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի հետ ԱԳՆ-ը շարունակել է համակարգել Հայաստանի շահագրգիռ գերատեսչությունների զարգացման համագործակցությունը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ:	

			Նոյեմբերի 29-ին պաշտոնապես մեկնարկել են ՀՀ և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի Համատեղ ղեկավար կոմիտեի աշխատանքները: Այն համակարգելու է ՀՀ կառավարության և ՄԱԿ գործակալությունների միջև համագործակցությունը 2021-2025 թթ. Հայաստանի համար ՄԱԿ-ի Կայուն զարգացման համագործակցության շրջանակային փաստաթղթի իրագործման ուղղությամբ: Նիստի շրջանակներում Համատեղ ղեկավար կոմիտեն քննարկել է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացում ՀՀ առաջընթացը և առաջացած մարտահրավերները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների զանգվածային ներհոսքի հետևանքով: Կոմիտեն ընդգծել է փախստականների հումանիտար և զարգացման կարիքներին համապարփակ արձագանքի և նրանց կայուն զարգացման ապահովման կարևորությունը: ԱԳ նախարարությունը համակարգում է ՀՀ գերատեսչությունների աշխատանքները Կայուն զարգացման նպատակների իրականացման երրորդ Կամավոր ազգային զեկույցի մշակման ուղղությամբ, որի ներկայացումը նախատեսվում է 2024թ. հուլիսին: Հունվարի 16-ին ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը հանդիպում է ունեցել Վիեննայում ՄԱԿ գրասենյակի Գլխավոր քարտուղար, ՄԱԿ Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) Գործադիր տնօրեն Ղադա Ֆաթի Վալիի հետ, որի ժամանակ նախարարն անդրադարձել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող	

			բարեփոխումներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, դատաիրավական և ոստիկանության ոլորտներում: Հայաստանն ընտրվել է Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի (CCPCJ անդամ 2024-2026թթ. համար և Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի հանձնաժողովի (CND) անդամ 2024-2027թթ. համար, ինչը հնարավորություն է ընձեռում ավելի ակտիվացնել ՀՀ ներգրավումը ՄԱԿ շրջանակներում անդրազգային հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցությանը: ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների հետ համագործակցությամբ ԱԳՆ-ը շարունակել է աշխատանքներ իրականացնել կլիմայի գործողության ոլորտում միջազգային համագործակցությանը ՝ ակտիվորեն ներգրավվելով ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի կողմերի 29-րդ (COP29) համաժողովի աշխատանքներին և առաջ մղելով հայկական կողմի առաջնայնությունները: ՀՀ-ն ստորագրել է Հնդկաստանում ՄԱԿ-ի հետ փոխկապակցված Տիեզերական գիտության և տեխնոլոգիական կրթության տարածաշրջանային կենտրոնին (The Centre for Space Science and Technology Education in Asia Pacific (CSSTEAP) ՀՀ միանալու մասին համաձայնագիրը: ԱԳՆ-ը ապահովել է հայկական կողմի ակտիվ մասնակցությունը ՄԱԿ Ծրագրերի և համակարգման կոմիտեի 63-րդ նստաշրջանի աշխատանքներին, որոնց արդյունքներով ՄԱԿ մի շարք ծրագրերում ներառվել են ՀՀ արտաքին քաղաքական	

			առաջնայնություններն արտացոլող դրույթներ: Հայաստանը վերընտրվել է կոմիտեում 2024-2026թթ. ժամանակահատվածի համար:	
		13.2 Համագործակցության ամրապնդում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ, կազմակերպության տարբեր մարմիններում Հայաստանի ներգրավվածության ակտիվացում: Արցախի պատմամշակութային ժառանգության և դրանց հայկական ինքնության հանրահռչակմանն ուղղված գործողությունների ակտիվացում:	Մայիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործադիր խորհրդի որոշմամբ Կոմիտասի ստեղծագործությունների ժողովածուն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» միջազգային ռեգիստրում: Հունիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում Հայաստանը կազմակերպել է Ներսես Շնորհալու մահվան 850-րդ տարելիցին նվիրված գիտաժողով, ցուցահանդես և համերգ: Նոյեմբերի 7--22-ը Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի 42-րդ նստաշրջանի շրջանակներում Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյաններն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների 2024-2025թթ. օրացույցում: Դեկտեմբերի 4-9-ը Կասանե քաղաքում (Բոտսվանա) կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի 18-րդ նստաշրջանի շրջանակներում Գյումրիի դարբնության ավանդույթը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում: Ընթացիկ տարում լույս է տեսել ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Ազգագրության ռուսական թանգարանի (Սանկտ-Պետերբուրգ) և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ	

			համագործակցաբար հրատարակված «Հայկական մշակութային հուշարձանները. Կ. Զ. Քավթարաձեի՝ Ռուսական ազգագրության թանգարանի հայկական հավաքածուները» պատկերագիրք-ուսումնասիրությունը, որի մշակման ու լույս ընծայման աշխատանքներին ակտիվորեն մասնակցել է նաև ԱԳ նախարարությունը: Դեկտեմբերին Հայաստանն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամ՝ չորս տարի ժամկետով: Հայաստանի ընտրությունը թույլ կտա ավելի մեծ պարբերականությամբ բարձրացնել հայկական մշակութային ժառանգության պահպանության հարցերը:	
14.	Ակտիվ մասնակցություն ԵԱՀԿ շրջանակներում ընթացող գործընթացներին՝ ելնելով այն հանգամանքից, որ ԵԱՀԿ-ն տարածաշրջանային անվտանգության և խաղաղության խնդիրների հասցեագրման կարևոր հարթակ է:	14.1 ԵԱՀԿ կառույցների աշխատանք-ներին մասնակցության ապահովում և դրանց շրջանակներում ՀՀ արտաքին քաղաքական առաջնահերթու-թյունների առաջմղում:	ԵԱՀԿ շրջանակներում ՀՀ արտաքին քաղաքական առաջնայնությունների առաջ մղումը և ազգային շահերի պաշտպանությունը կազմել են ՀՀ ԱԳՆ գործունեության հիմնական մասը, մասնավորապես համակարգվել է ՀՀ համագործակցությունը ԵԱՀԿ մասնակից երկրների, ԵԱՀԿ նախագահության, ԵԱՀԿ քարտուղարության և հաստատությունների հետ, ԵԱՀԿ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական ու մարդկային հարթությունների, ինչպես նաև միջհարթային ոլորտներում: ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունը մշտական խորհրդի նիստերին ներկայացրել է ընթացիկ հարցեր՝ բարձրաձայնելով Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտման քաղաքականությունը, ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչության իրավունքների	

			հասցեագրման անհրաժեշտությունը, ռազմագերիների և պատանդների ազատ արձակման անհրաժեշտությունը և այլ առաջնային հարցեր: Շարունակվել են աշխատանքները ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական ու մարդկային, ինչպես նաև անվտանգության հարթություններում օրակարգային հարցերի շուրջ և ՀՀ շահերի առաձմղման ուղղությամբ: Ընթացիկ տարում հայկական կողմի նախաձեռնությամբ հրավիրվել են ԵԱՀԿ Մշտական խորհրդի 4 հատուկ նիստ (հունվարի 17-ին և հուլիսի 20-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյան, սեպտեմբերի 12-ին ՀՀ ԱԳ փոխնախարար Վահե Գևորգյան, սեպտեմբերի 20-ին ՀՀ ՄՆ Արմեն Պապիկյան): կցությունների հարցերով ավագ խորՀՀ ԱԳ նախարար Արարատ Օգոստոսի 25-ին ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկն ԵԱՀԿ գործող նախագահի հանձնարարականով այցելել է Սյունիքի Կոռնիձորի սահմանային հատված՝ Բույար Օսմանիին Լաչինի միջանցքի արգելափակման շուրջ իրավիճակի մասին զեկուցելու նպատակով: Նոյեմբերի 18-19-ը Երևանում կայացել է ԵԱՀԿ ԽՎ աշնանային նստաշրջանը, որին մասնակցել է շուրջ 300 պատվիրակ 47 երկրից: Նոյեմբերի 17-ին կայացել է ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանի և ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Պիա Կաումայի միջև հանդիպումը: Նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը Հյուսիսային Մակեդոնիայի Սկոպյե քաղաքում կայացել է ԵԱՀԿ 30-	

			րդ նախարարական համաժողովը: Համաժողովի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հանդիպումներ է ունեցել ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահի, ԵԱՀԿ Գլխավոր քարտուղարի, ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչի, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի՝ Կովկասում և Կենտրոնական Ասիայում հատուկ ներկայացուցչի, ԱՄՆ պետքարտուղարի, Նիդերլանդների Թագավորության, Ռումինիայի, Ֆրանսիայի, ՌԴ, Լիխտենշտայնի, Շվեյցարիայի Համադաշնության, Մալթայի Հանրապետության, Նորվեգիայի, Դանիայի Թագավորության, Շվեդիայի Թագավորության, Անդորրայի Իշխանապետության, Չեռնոգորիայի արտաքին գերատեսչությունների ղեկավարների հետ:	
		14.2 ԵԱՀԿ շրջանակներում ընդունված փաստաթղթերի համատեքստում՝ ԵԱՀԿ մասնակից պետությունների հետ համագործակցության խորացում, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում՝ այլ գերատեսչություն-ների հետ համագործակցությամբ:	ՀՀ ՊՆ հետ համատեղ որոշում է կայացվել չտրամադրել Ռազմական տեղեկատվության էլեկտրոնային տարեկան փոխանակման և ռազմական տեղեկատվության գլոբալ փոխանակման մասին տեղեկատվությունը:	
		14.3 Հայաստանի հետ համա-գործակցության ծրագրի թարմացում, համապատասխանեցում հայկական կողմի առաջնահերթություններին, նոր ծրագրերի նախաձեռնում:	2023թ. նոյեմբերին նախաձեռնվել է «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց և աղջիկների համար ծրագրի» իրականացումը՝ ուղղված վերոնշյալ կանանց առաջնային, կարճաժամկետ և երկարաժամկետ աջակցության տրամադրմանը: Կազմակերպվել է հանդիպում ԵԱՀԿ և Աշխատանքի և	

			սոցիալական հարցերի նախարարության պատասխանատուների միջև: Ընթացքի մեջ է ՀՀ առևտրի և տրանսպորտի ոլորտների դյուրացման նպատակով «Թվային պատրաստվածության գնահատում Հայաստանի համար» (Digital Readyness Assessment) ծրագրի նախապատրաստման հետ կապված հարցերի ճշգրտումը միջգերատեսչական մակարդակով:	
15.	Անվտանգության ոլորտի միջազգային երկկողմ համագործակցություն, ինչպես նաև ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակականություն, երկկողմ համաձայնագրերի և ծրագրերի հետևողական իրականացում:	15.1 ՆԱՏՕ-ի հետ հետ երկկողմ համաձայնագրերով և ծրագրերով նախատեսված դրույթների իրագործում: ՆԱՏՕ-ի շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով ռազմաուսումնական ծրագրերի անցկացում: Աջակցության ապահովում ՆԱՏՕ-ի կողմից ՄԱԿ-ի մանդատով իրականացվող միջազգային խաղաղապահ առաքելություններին:	<u>Քաղաքական երկխոսություն</u> 2023թ. ընթացքում ՀՀ և Հյուսիս-Ատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) միջև ընթացել է ինտենսիվ քաղաքական երկխոսություն և նախանշվել են հետագա համագործակցություն ուղղությունները: Հունվարի 23-ին ԵՄ այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Ա.Միրզոյանը ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում հանդիպել է ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ: Հունվարի 18-ին և մայիսի 23-ին Հայաստան է այցելել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Խավիեր Կոլոմինան: Մայիսի 15-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում մասնակցել է Մշտական ներկայացուցիչների տեղակալների կոմիտե+Հայաստան (DPRC+Armenia) ձևաչափով հանդիպմանը: ՀՀ-ՆԱՏՕ համագործակցության փաստաթուղթ ԱԳՆ-ը ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ բանակցությունների արդյունքում	

			նոյեմբերին ՆԱՏՕ-ի հետ համաձայնեցրել է ՀՀ-ՆԱՏՕ Անհատապես հարմարեցված գործընկերության ծրագրի (ԱՀԳԾ) նախագիծը, որն արդեն ներկայացվել է դաշինքի անդամ-երկրների հավանությանը: ԱՀԳԾ-ն գործառնական և արդյունքին միտված փաստաթուղթ է, ներառում է փոխգործակցության դրույթներ տարբեր ոլորտներում՝ քաղաքական երկխոսություն, պաշտպանական և անվտանգային բարեփոխումներ, քաղաքացիական պատրաստվածություն և ճգնաժամային իրավիճակների կառավարում, դիմակայունության բարձրացում, համատեղ վարժանքներ, վերապատրաստումներ, մասնագիտական խորհրդատվություն և այլն: Ծրագրի համակարգման և վերահսկման համար պատասխանատու գերատեսչություններն են ՀՀ ԱԳՆ-ը և ՊՆ-ը: ՆԱՏՕ-ի հովանու ներքո խաղաղապահ առաքելություն 2023թ. հուլիս ամսին Հայաստանը Կոսովոյում (KFOR) իր խաղաղապահ անձնակազմն ավելացրեց 17 ծառայողով՝ ընդհանուր հասցնելով 57-ի: Հայաստանը մասնակցում է ՆԱՏՕ-ի խաղաղապահ գործողությանը Կոսովոյում /KFOR/ 2004թ-ից՝ 2004-2011թթ. հունական զորակազմում, իսկ 2012թ.-ից սկսած՝ ամերիկյան զորակազմում: Վրաստանն ու Ադրբեջանը չեն մասնակցում Կոսովոյի խաղաղապահ առաքելությանը: Տեղակայման վայրը՝ Պրիշտինա քաղաքի «Սլատինա» ռազմաբազա, խնդիրը՝ արագ արձագանքման ուժեր, շարասյան ուղեկցում, շրջիկ պարեկություն:	

		15.2 ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ԱՊՀ, ՀԱՊԿ համապատասխան մարմիններում մասնակցություն ահաբեկչության, ծայրահեղականության բռնի դրսևորումների դեմ պայքարի հարցերով աշխատանքներին, ահաբեկչության սպառնալիքի թեմայով, ներառյալ՝ Ադրբեջանում իրենց ներկայությունը պահպանող ահաբեկիչ զինյալների վերաբերյալ հայտարարությունների ներկայացում:	Փետրվարի 20-ից 27-ը տեղի է ունեցել ՄԱԿ վարձկանների հարցերով աշխատանքային խմբի (ԱԽ) այցը Հայաստան՝ միտված ՀՀ կողմից Վարձկանների հարցերով ՄԱԿ-ի կոնվենցիայի վավերացման (International Convention against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries) համատեքստում հայկական կողմում իրազեկվածության բարձրացմանը, ՀՀ համապատասխան գերատեսչություններին Կոնվենցիայի դրույթների իրականացման աջակցության, փորձի փոխանակման, լավագույն օրինակների տրամադրմանը: Այցի շրջանակներում ԱԽ-ն այցելել է Սյունիք և հանդիպել 44-օրյա պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչությանը: Սեպտեմբերի 19-ին կայացած Մարդու իրավունքների խորհրդի 54-րդ նստաշրջանին ներկայացվեց աշխատանքային խմբի՝ Հայաստան կատարած այցի արդյունքներն ամփոփող զեկույցը, որն առավելապես պարունակում էր դրական շեշտադրումներ: ԱԽ-ն բարձր է գնահատել մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում:	
		15.3 Հայաստանում ուղևորների նախնական տեղեկատվության (ՈՒՆՏ) համակարգը հիմնելու ուղղությամբ համակողմանի աշխատանքների իրականացում ԵԱՀԿ, ՄԱԿ մարմինների, ՌԴ հետ:	Նոյեմբերի 9-ից 10-ը Վիեննայում՝ ԵԱՀԿ կենտրոնակայանում, տեղի է ունեցել ուղևորների վերաբերյալ նախնական տեղեկատվության (ՈՒՆՏ) փոխանակման թեմային նվիրված ԵԱՀԿ 7-րդ սեմինարը՝ նվիրված ՄԱԿ ԱԽ 2396 բանաձևի իրականացմանը, որը հասցեագրում է օտարերկրյա ահաբեկիչ մարտիկների վերադարձի և տեղակայման հարցերը: Համաժողովին մասնակցել են ՀՀ ԱԳՆ,	

			ԱԱԾ, ԱԽ և ԲՏԱ նախարարության ներկայացուցիչները:	
		15.4 Տեղեկատվական և կիբեռանվտանգության կառավարման հարցերով միջգերատեսչական մարմնի աշխատանքներին աջակցություն:	Նշյալ միջգերատեսչական մարմինը դեռևս չի ձևավորվել:	
		15.5 Տեղեկատվական կիբեռանվտանգության թեմայով ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ԵՄ, ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող աշխատանքներում ներգրավվում:	ՀՀ-ն միացել է ԱՄՆ կողմից նախաձեռնած «Արհեստական բանականության և ինքնավարության պատասխանատու ռազմական օգտագործման» վերաբերյալ քաղաքական հռչակագրին: Փաստաթուղթն ընդունվել է նոյեմբերի 13-ին Նյու Յորքում կայացած բարձր մակարդակի հանդիպման (high-level endorsement meeting) շրջանակներում: Նոյեմբերի 17-ին ՀՀ-ն ստորագրել է «Կիբեռհանցագործությունների մասին» կոնվենցիայի «Ընդլայնված համագործակցության և էլեկտրոնային ապացույցների բացահայտման վերաբերյալ» երկրորդ լրացուցիչ արձանագրությունը, որն ընձեռում է հավելյալ մեխանիզմներ կիբեռհանցագործությունների, ինչպես նաև քրեական հանցագործությունների էլեկտրոնային ձևով ապացույցների ձեռքբերման ուղղությամբ: ՀՀ իրավապահ մարմինների ներկայացուցիչները, ՀՀ ԱԳՆ ընդհանուր համակարգմամբ, շարունակել են ակտիվ մասնակցություն ապահովել Կիբերհանցագործությունների դեմ պայքարի հարցերով ՄԱԿ-ի համապարփակ կոնվենցիա մշակելու հարցերով ժամանակավոր հանձնաժողովի աշխատանքներին՝ փորձելով համադրել Բուդապեշտի կոնվենցիայի շրջանակներում ստանձնած միջազգային	

			պարտավորությունները և ՄԱԿ-ի կոնվենցիայի ՌԴ նախագծի առանձնահատկությունները: ՀՀ ակտիվորեն ներգրավված է միջազգային կազմակերպությունների շրջանակներում կիբերտիրույթին վերաբերող պետությունների վարքագծի կանոնների: մշակման աշխատանքներում: 2023թ. Հայաստանը համահեղինակել է Ֆրանսիայի կողմից ներկայացված համապատասխան բանաձևը: ՀՀ-ում կիբեռհանցագործությունների տվյալների շտեմարան (Cybercrime database) հիմնելու նպատակով՝ հուլիսի 3-4-ը Երևան է այցելել ԵԱՀԿ քարտուղարության անդրազգային սպառնալիքների վարչության պատվիրակությունը: Այցի արդյունքներով պատրաստվել է զեկույց, որն ուղարկվել է շահագրգիռ գերատեսչություններին՝ նախագծի հետագա ընթացքն ապահովելու նպատակով:	
		15.6 Ակտիվ համագործակցություն ՄԱԿ, ԵՄ, ՆԱՏՕ մասնագիտացված կառույցների հետ՝ տարերային և տեխնածին աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման ուղղությամբ: ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ, ՆԱՏՕ աջակցության մեխանիզմների շրջանակներում բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով միջո-ցառումների կազմակերպում:	Շարունակվել է ՀՀ ԱԳՆ կողմից տրամադրվող աջակցությունը ՀՀ ՆԳՆ ներկայացուցիչներին՝ ՄԱԿ Սենդայի 2015-2030 թվականների գործողությունների ծրագրի իրականացումը Հայաստանում ապահովելու ուղղությամբ: Մայիսի 19-ին Աղետների ռիսկերի նվազեցման Սենդայի շրջանակային ծրագրի միջնաժամկետ վերանայման ՄԱԿ ԳԱ բարձրաստիճան հանդիպման շրջանակներում ՄԱԿ-ում Դեպի ծով ելք չունեցող երկրների խմբի նախագահող Բոթսվանայի մշտական ներկայացուցչության, Առավել նվազ զարգացած, դեպի ծով ելք չունեցող և փոքր կղզի զարգացող երկրների բարձր ներկայացուցչի ու Աղետների ռիսկերի նվազեցման գրասենյակների կողմից կազմակերպվել է	

			«Ընդլայնելով դիմակայունությունը և աղետների ռիսկերի նվազեցումը դեպի ծով ելք չունեցող երկրներում» խորագրով հարակից միջոցառում, որին ՀՀ ԱԳՆ աջակցությամբ, մասնակցել է ՀՀ ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը:	
		15.7 Միջուկային զենքի չտարածման, զինաթափման և փորձարկումների արգելման հարցերով համա-գործակցություն միջազգային կազմակերպությունների շրջանակ-ներում	Ապահովվել է ՀՀ մասնակցությունը և ելույթը 2023թ. հունիսի 15-16-ը կայացած Բալիստիկ հրթիռների տարածման դեմ Հաագայի վարքի կանոնակարգի անդամ երկրների տարեկան հանդիպմանը: Ապահովվել է ՀՀ մասնակցությունը և ելույթները հուլիսի 24-ից 28-ը Վիեննայում կայացած Միջուկային զենքի չտարածման պայմանագրի (NPT) վերանայման գործընթացի հետագա ամրապնդման համար ստեղծված աշխատանքային խմբի նիստին և հուլիսի 31-ից օգոստոսի 11-ը՝ Միջուկային զենքի չտարածման պայմանագրի տասնմեկերորդ վերանայման համաժողովի նախապատրաստական կոմիտեի անդրանիկ նիստին: Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի առաջին կոմիտեում տեղի ունեցած քվեարկությունների ժամանակ Հայաստանը համահեղինակել է մի շարք բանաձևեր՝ ուղղված միջուկային զենքի չտարածման և ռիսկերի նվազեցման, տիեզերքում առաջինը զենքերի չտեղակայման վերաբերյալ: Շարունակվել է ակտիվ ներգրավվածությունը Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության (CTBTO) շրջանակներում: Համապատասխան աշխատանքներ են տարվել Միջուկային փորձարկումների	

			համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովի (CTBTO) 60-րդ և 61-րդ հերթական նստաշրջաններին, ինչպես նաև աշխատանքային խմբերի նիստերին ՀՀ պատվիրակությունների մասնակցությունը ապահովելու ուղղությամբ:	
		15.8 ՀՀ և Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) միջև արդյունավետ համագործակ-ցության ապահովում:	Խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման ոլորտում ՀՀ կարողությունների զարգացման նպատակով շարունակվել է սերտ համագործակցությունը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ: Ապահովվել է ՀՀ մասնակցությունը ԱԷՄԳ կառավարիչների խորհրդի հերթական նստաշրջաններին, ներառյալ՝ ընդունվելիք բանաձևերի նախագծերի վերաբերյալ ՀՀ դիրքորոշումների ձևավորման, դրույթների և ելույթների ներկայացման միջոցով: 2023թ. հուլիսի 18-ին Ավստրիայի Հանրապետություն աշխատանքային այցի շրջանակներում կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը ԱԷՄԳ Գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսսիի հետ: 2023թ. սեպտեմբերի 25-29-ը Վիեննայում կայացած ԱԷՄԳ գլխավոր համաժողովի 67-րդ նստաշրջանի ընթացքում Հայաստանի Հանրապետությունն ընտրվել է 2023-2025թթ. ժամանակահատվածի համար ԱԷՄԳ Կառավարիչների խորհրդի անդամ: Արևելաեվրոպական խմբին հատկացվող 2 տեղի համար իրենց թեկնածություններն էին առաջադրել Հայաստանի Հանրապետությունը, Ուկրաինան և	

			Ադրբեջանը: Սեպտեմբերի 28-ին կայացած ընտրություններում Հայաստանը ստացել է առավելագույն՝ 94 ձայն, Ուկրաինան՝ 79, իսկ Ադրբեջանը 67 ձայն:	
		15.9 Քիմիական զենքի արգելման կազմակերպության հետ (ՔԶԱԿ) արդյունավետ համագործակցության ապահովում:	Ապահովվել է ՀՀ մասնակցությունը 2023թ. մարտին կայացած ՔԶԱԿ Գործադիր խորհրդի նստաշրջանին: Ուսումնասիրվել և ձևավորվել են դիրքորոշումներ օրակարգային հարցերի վերաբերյալ: Ապահովվել է ՀՀ մասնակցությունը նոյեմբերի 22-24-ը Հաագայում կայացած ՔԶԱԿ անդամ երկրների Ազգային մարմինների ամենամյա հանդիպմանը: Ապահովվել է ՀՀ մասնակցությունը նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը Հաագայում կայացած ՔԶԱԿ անդամ երկրների համաժողովի 28-րդ նստաշրջանի աշխատանքներին: Սահմանված ժամկետներում ամփոփվել և ներկայացվել են Քիմիական զենքի արգելման կոնվենցիայի VI-րդ և VII-րդ հոդվածների ներքո ՀՀ տարեկան հայտարարագրերը:	
		15.10 Կենսաբանական զենքի արգելման կոնվենցիայի շրջանակներում մասնակցություն միջազգային համագործակցությանը:	Ապահովվել է ՀՀ մասնակցությունը և ելույթը 2023թ. դեկտեմբերի 4-ից 8-ը Ժնևում կայացած Կենսաբանական զենքի կոնվենցիայի աշխատանքային խմբի երրորդ նստաշրջանին և դեկտեմբերի 11-ից 13-ը՝ Կենսաբանական զենքի կոնվենցիայի մասնակից պետությունների հանդիպմանը: Մարտի 29-ին ՀՀ ԱԳ նախարարությունում կազմակերպվել են կենսաբանական անվտանգության ապահովման հարցերով հայ-ռուսական միջգերատեսչական խորհրդակցությունները:	

		15.11 Աշխատանք՝ միջազգային արտահանման վերահսկման ռեժիմ-ներում լիարժեք ներգրավվածություն ապահովելու ուղղությամբ:	ՀՀ ԱԳ նախարարությունը շարունակել է աշխատանքներն արտահանման վերահսկողության արդյունավետ իրականացման և նշյալ ոլորտում ՀՀ կարողությունների ավելացման ուղղությամբ: ԱՄՆ Արտահանման վերահսկման և սահմանային անվտանգության (EXBS) ծրագրի, ԵՄ P2P արտահանման վերահսկման ծրագրի, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների և մասնավոր ձեռնարկությունների համար կազմակերպվել են մի շարք աշխատաժողովներ և սեմինարներ, որոնք կոչված էին բարձրացնելու համապատասխան պաշտոնյաների և մասնավոր հատվածի իրազեկվածության մակարդակը և զարգացնելու նրանց կարողությունները զանգվածային ոչնչացման զենքերի տարածման և երկակի օգտագործման ապրանքների ապօրինի շրջանառման դեմ պայքարում: 2023թ. ընթացքում մշակվել և տրամադրվել են ռազմական նշանակության արտադրանք ներմուծելու և արտահանելու, հսկվող ապրանքների արտահանման անհատական թույլտվություն տրամադրելու վերաբերյալ կարծիքներ ըստ ստացված հայտերի: ՀՀ կառավարության՝ 2023թ. մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող զգայուն ապրանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 808-Ն որոշման ընդունումից հետո կտրուկ ավելացել են արտահանման թույլտվություն ստանալու դիմումները: Այս ուղղությամբ ՀՀ արտաքին գործերի նախարարությունն, ակտիվ	

			համագործակցելով ՀՀ մյուս շահագրգիռ գերատեսչությունների հետ, յուրաքանչյուր թույլտվության տրամադրման հետ կապված խնդիրները և հնարավոր զարգացումները ներկայացրել է լիազոր մարմնին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:	
		15.12 Երկկողմ և բազմակողմ համա-գործակցություն ՔԿՃՄ (քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային) ոլորտներում:	Եվրամիության Քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային (ՔԿՃՄ) Գերազանցությունների կենտրոնի փորձագետների աջակցությամբ և ՔԿՃՄ ոլորտում ներգրավված ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների մասնակցությամբ 2023թ. մայիսի 15-17-ը ՀՀ ԱԳ նախարարությունում կազմակերպվել է ՔԿՃՄ ռիսկերի և վտանգների կանխարգելմանն ու նվազեցմանն առնչվող աշխատանքային հանդիպում: Եռօրյա քննարկումների արդյունքում ամփոփվել է եվրոպական փորձագետների կողմից մշակված 300 կետից բաղկացած Կարիքների գնահատման հարցաշարը (Needs Assessment Questionnaire - NAQ): ՀՀ կառավարության հետ համագործակցաբար, ապահովվել է մասնակցություն Զանգվածային ոչնչացման զենքի (ԶՈԶ) դեմ պայքարի շրջանակներում ԱՄՆ Պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության (ՊՎՆԳ) կողմից կազմակերպված սեղանի շուրջ վարժանքներին (հունվար, ապրիլ, սեպտեմբեր), որոնց արդյունքում 2024թ. նախատեսվում է անցկացնել ՔԿՃՄ դաշտային վարժանք:	
16.	Օտարերկրյա պետություններում	16.1 Օտարերկրյա պետություններում	Միջոցառմամբ սահմանված աշխատանքներին զուգահեռ՝ շարունակվել է տեսակապով	

	Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանություն:	Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունք-ների և շահերի պաշտպանություն:	հյուպատոսական ծառայությունների տրամադրումը այնպիսի երկրներում և հեռավոր վայրերում գտնվող ՀՀ քաղաքացիներին, որտեղ Հայաստանի Հանրապետությունը չունի դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ: Շահագործման է հանձնվել նոր մշակված՝ քաղաքացիների դեսպանություններ այցելությունների հերթագրման էլեկտրոնային համակարգը առցանց եղանակով հյուպատոսական ծառայությունների մատուցման և վարչարության դյուրացման նպատակով ձեռնարկվել են (ենթա)օրենսդրական նախաձեռնություններ:	
17.	Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացում:	17.1 Ակտիվ համագործակցություն սփյուռքի կառույցների և անհատների հետ:	Հաշվետու տարում Հայաստան-Սփյուռք գործակցությունը տարբեր ձևաչափերով և գիտության, կրթության, մշակույթի և այլ ոլորտներում անհատական և ինստիտուցիոնալ մակարդակներով զարգացնելու նպատակով ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները ամենօրյա ռեժիմով շարունակել են լայնածավալ աշխատանքներ տանել հավատարմագրման պետություններում անհատ հայրենակիցների, սփյուռքահայ համայնքների և կառույցների հետ:	
18.	Հանրային դիվանագիտություն՝ միջազգային ասպարեզում Հայաստանի դրական կերպարի ձևավորման, Հայաստանի մշակութային և պատմական	18.1 ՀՀ դիրքորոշումների և մոտեցումների շուրջ միջազգային հանրային իրազեկվածության բարձրացում:	2023թ. ընթացքում իրականացվել են ինտենսիվ աշխատանքներ միջազգային հանրությանը իրազեկելու 2022թ. դեկտեմբերից Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Արտակարգ ռեժիմով իրականացվել է սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական հարձակման հետևանքով Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի, ինչպես նաև Ադրբեջանի էթնիկ զտումների քաղաքականության և	

	ժառանգության հանրահռչակման, հակահայկական քարոզչության հակազդման նպատակով:		Լեռնային Ղարաբաղից հայերի բռնի տեղահանման լայն և օբյեկտիվ լուսաբանմանն ուղղված աշխատանքները: ՀՀ ժամանած օտարերկրյա լրատվամիջոցների գործունեությանը ցուցաբերվել է աջակցություն: Օտարերկրյա մամուլում հրապարակվել են Հայաստանի դրական կերպարը ներկայացնող բազմաթիվ հոդվածներ, հարցազրույցներ: 2023թ. ընթացքում ԱԳՆ կայքէջում հրապարակվել են շուրջ 1600 մամուլի հաղորդագրություններ, հայտարարություններ և հարցազրույցներ, որոնք թարգմանվել և տարածվել են ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային լրատվամիջոցների շրջանում:	
		18.2 Հայաստանի բնակչության շրջանում ՀՀ արտաքին քաղաքականության ուղղությունների և միջազգային տարբեր հարցերի շուրջ պետության որդեգրած դիրքորոշում-ների պարզաբանում:	2023թ. ընթացքում պատասխանվել է լրատվամիջոցներից, քաղաքացիներից, ՀԿ-ներից և պատգամավորներից ստացված ավելի քան 400 հարցումների: Անցնող տարում կազմակերպվել են բազմաթիվ հարցազրույցներ ՀՀ ԱԳՆ ներկայացուցիչների հետ ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա լրատվամիջոցներին: 2023թ. ընթացքում ԱԳՆ ուսումնաճանաչողական այցերի շրջանակներում նախարարությունը ընդունել է շուրջ 1500 այցելու՝ Հայաստանի տարբեր դպրոցներից և բուհերից: Հունիսի 28-ից հուլիսի 6-ը տեղի է ունեցել արտաքին քաղաքականությունը լուսանաբանող հայ լրագրողների համար իրականացվող հերթական դասընթացը: Օգոստոսի 24-ից 25-ը ԵԱՏՄ միջկառավարական խորհրդի արտահերթ նիստի շրջանակներում	

			կազմակերպվել և համակարգվել են լուսաբանման աշխատանքները: Դեկտեմբերի 14-ից 15-ը իրականացվել է Երևանում կայանալիք Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների նախարարական հանդիպման լուսաբանմանը մասնակցող լրատվամիջոցների ներկայացուցիչների աշխատանքների համակարգումը:	
		18.3 Հայաստանի մշակութային և պատմական ժառանգության հանրահռչակում:	2023թ. ընթացքում ընդհանուր առմամբ ԱԳՆ կողմից կարճաժամկետ ընթացիկ հավատարամագրում է տրամադրվել օտարերկրյա լրատվամիջոցների ավելի քան 600 ներկայացուցիչների, որոնց տրամադրվել է նաև համապարփակ աջակցություն Հայաստանում իրենց գործունեությունը ծավալելու համար: ԱԳՆ կողմից աջակցություն է տրամադրվել տարբեր երկրներից լրագրողական խմբերի այցերի: ԱԳՆ կողմից տպագրվել են Հայաստանը ներկայացնող տեղեկատվական բազմալեզու գրքեր և գրքույկներ: Վարվել են ԱԳՆ սոցիալական հարթակները և դրանց միջոցով օպերատիվ կերպով հայաստանյան և միջազգային հանրության ուշադրությանն է ներկայացվել տեղեկատվությունը: Համակարգվել է ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների պաշտոնական հաշիվների աշխատանքը, մշակվել են սոցիալական մեդիայում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների էջերի վարման ձեռնարկներ: ԱԳՆ կողմից վարվող Armenia սոցիալական հարթակներում 2023թ. ընթացքում արվել է 1000-ից ավելի հրապարակում:	

		18.4 Հայաստանի և հայ ժողովրդի դեմ վարվող հակահայկական քարոզչության հակազդում:	2023թ. ընթացքում մշտադիտարկվել են միջազգային մեդիահարթակները՝ Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող հակահայկական քարոզչությունը վերհանելու և հակազդման ձևերի, մեթոդների, գործիքների մշակման և կիրառման աշխատանքների նպատակով: Տեղի են ունեցել արտաքին քաղաքականության լուսաբանման, ԶԼՄ-ների հետ աշխատանքի, թվային դիվանագիտության վերաբերյալ միջգերատեսչական խորհրդակցություններ, ի թիվս այլոց՝ Նիդերլանդների, Ֆինլանդիայի, Ռուսաստանի ԱԳ նախարարությունների հետ, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում:	
19.	Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում և խորացում	19.1. Միջազգային առևտրա-տնտեսական և ֆինանսական կառույցների հետ համագոր-ծակցության խթանում, տնտեսական դիվանագիտության առաջմղում, ինչպես նաև արդյունքների ամփոփում, անհրաժեշտության դեպքում «Տնտեսական դիվանագիտության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման մշակում:	ՀՀ ԱԳՆ-ը ակտիվ քայլեր է ձեռնարկել արտաքին տնտեսական համագործակցության ոլորտի համակարգման բարելավմանն ուղղությամբ: Հունիսի 13-ին ԱԳՆ-ում կայացել է Հայաստանի և Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) հետ համատեղ կազմակերպված “Impact of the international health crisis on legal infrastructure for trade” խորագրով միջոցառումը, որին մասնակցել է UNCITRAL-ի քարտուղար Աննա Ժուբան-Բրետը: Ապրիլին կայացել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն Կորին Ֆլեյշերի այցը Հայաստան: Հուլիսի 3-4-ը կայացել է ՊՀԾ կողմից իրականացվող «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի՝ ՀՀ կառավարության ամբողջական կառավարմանն ու	

			իրականացմանը փոխանցման հանդիսավոր արարողությունը: Ապրիլի 18-19-ը ՀՀ ԱԳՆ-ը և Ժնևում ՀՀ ՄՆ-ը մասնակցել և ելույթով հանդես են եկել ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 70-րդ նստաշրջանին: Հունիսի 6-7-ը կայացել է ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի գործադիր քարտուղար Օլգա Ալգայերովայի այցը Հայաստան՝ մասնակցելու «Հայաստանի համար կայուն զարգացման նորարարություն երկրորդ վերանայման» հրապարակմանը նվիրված բարձրաստիճան հանդիպմանը: Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ աշխատանքներ են տարվում ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ՝ Հայաստանի համար 2021-2025թթ. համար ներառական և կայուն արդյունաբերական զարգացման ծրագրային փաստաթղթով նախատեսված ծրագրերի իրականացման ուղղությամբ: Մշտական ներգրավածություն է ապահովվում աշխատանքներին: Հունիսի 13-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահե Գևորգյանը մասնակցել և ելույթ է ունեցել Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպու-թյան ԱԳ նախարարների խորհրդի առցանց 46-րդ հանդիպմանը: Դեկտեմբերի 15-ին ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Պարույր Հովհաննիսյանը մասնակցել է ՍԾՏՀԿ ԱԳ նախարարների խորհրդի առցանց 47-րդ հանդիպմանը:	

			Հայաստանը շարունակել է ակտիվորեն ներգրավվել ՄԱԿ շրջանակներում գործող Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների խմբի աշխատանքներին: Հայկական կողմը մասնակցել է խմբի շրջանակներում կազմակերպված բոլոր հանդիպումներին, մշակվող բանաձևերի, զեկույցների մշակմանը՝ հասնելով տարբեր փաստաթղթերում ՀՀ համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք դրույթների ավելացմանը: Դեկտեմբերի 14-15-ը ՀՀ ԱԳՆ կողմից կազմակերպվել է Դեպի ծով ելք չունեցող զարգացող պետությունների նախարարական հանդիպումը, որին մասնակցել են՝ ՄԱԿ գլխավոր քարտուղարի տեղակալ, դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների հարցերով ՄԱԿ ԳՔ բարձր ներկայացուցիչ (UNOHRLLS) Ռաբաբ Ֆաթիման, ՄԱԿ եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) գործադիր քարտուղար Տատյանա Մոլչեանը, Առևտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի տեղակալ Սյանչենը Ճանը, ավելի քան մեկ տասնյակ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, մի շարք դեպի ծով ելք չունեցող երկրների արտաքին գործերի, տրանսպորտի, զբոսաշրջության նախարարներ և փոխնախարարներ: Հանդիպման ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ներկայացվել է «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը: Մի շարք ՄԱԿ կառույցների և տարածաշրջանային հանձնաժողովների ղեկավարներ հանդես են եկել տեսագրված ուղերձներով: Հանդիպման ավարտին ընդունվել է «Երևանի հայտարարությունը»:	

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԵՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.	Բարձր տեխնոլոգիական ոլորտում տեխնոլոգիական կրթության որակական և քանակական բարելավում	1.1 Բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ուղղություններով կրթական ծրագրերի վերանայում, համապատասխանեցում որակի ժամանակակից պահանջներին, ոլորտի ռազմավարությանն ու կարիքներին և ըստ անհրաժեշտության նոր կրթական ծրագրերի մշակում այդ թվում՝ միջազգային համագործակցության վրա հիմնված	ԲՏԱ նախարարությունը ուսումնասիրման առարկա է դարձել միջազգային մի շարք համալսարանների կրթական ծրագրերը, ուսումնասիրվում են ՀՀ տեխնոլոգիական ոլորտի կազմակերպությունների կողմից աշխատակիցներին առաջադրված պահանջները, ինչպես նաև հավաքագրվում և ուսումնասիրվում են նախարարության կողմից «Բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի շրջանակներում կազմակերպությունների կողմից ներկայացված կրթական ծրագրերը: 2023թ. ծրագիրը մշակվել է այնպես, որ նպատակաուղղված է բացահայտելու շուկայում աշխատուժի կարողություններին առաջադրվող պահանջները:	
		1.3 Բարձր տեխնոլոգիական կրթության առաջխաղացումը Հայաստանի ազգային պոլիտեխնիական համալսարանի Գյումրու մասնաճյուղում»:	ՀՀ ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղում առաջնահերթ տեխնոլոգիաների ուղղություններով մշակված և ներդրված կրթական ծրագրերի իրականցման համար Համաշխարհային բանկը հայտնել է գործընթացը դադարեցնելու և ֆինանասավորում չտրամադրելու մասին իր դիրքորոշումը:	

2.	Բարձր տեխնոլոգիական ընկերություններում (ստարտափներում) անհրաժեշտ ներդրումներ ներգրավելու և դրանց հետագա զարգացումն ու համաշխարհային շուկա ելքն ապահովելու նպատակով ֆինանսական գործիքներ ներգրավելու հնարավորությունների շարունակական մեծացում, այդ թվում՝ պետական աջակցության ծրագրերի միջոցով	2.1 «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված հանձնարարականները և ՀՀ փոխվարչապետի գրասենյակից ստացված կարծիքը՝ ռազմավարության մշակման նպատակահարմարության վերագնահատման մասին, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին ուղարկված գրությամբ առաջարկվել է 2 ռազմավարությունների փոխարեն մշակել միասնական և համապարփակ ռազմավարություն՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման նպատակների մաս կազմող բարձր տեխնոլոգիաների բիզնես միջավայրին առնչվող ռազմավարական նպատակները և գործողությունները ներառելով «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման ռազմավարությունում»: Ռազմավարության մշակման և ներդրման համար ֆինանսներ ներգրավելու նպատակով աշխատանքներ են տարվել պոտենցիալ դոնոր կազմակերպության հետ: Ներկայումս ընկերության հետ աշխատանքներ են տարվում նաև ռազմավարության մեթոդաբանության ընտրության և ճանապարհային քարտեզի ճշգրտման ուղղությամբ:	
		2.2 Բարձր տեխնոլոգիաների բիզնես միջավայրի ռազմավարության մշակում և ներկայացում ՀՀ Վարչապետի հաստատմանը		
		2.4 Ազգային վենչուրային ֆոնդի ստեղծում	«Ազգային Վենչուրային հիմնադրամի» (այսուհետ՝ հիմնադրամ) գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջական փաթեթի առնչությամբ Համաշխարհային բանկը ներկայացրել է դիրքորոշում, որով առաջարկվում է գործընթացը դադարեցնել:	

3.	Տեխնոլոգիական ներուժի ներգաղթի խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում	3.1 Տեխնոլոգիական ոլորտի պահանջված մասնագետների ներգաղթի համար գրավիչ պայմանների և խթանիչ մեխանիզմների ստեղծում	2023թ. ընթացքում իրականացվել և շարունակվել են պետական աջակցության մի շարք ծրագրեր:	
		3.2 «Ձեռներեցության տեխնոլոգիա-կան էկոհամակարգ» ծրագրի «Ներուժ» բաղադրիչ	Ամփոփվել է «Ներուժ 4.0» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափերի ծրագրի շրջանակներում ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջան քաղաքի ուսումնահետազոտական կենտրոնում կայացած 6-օրյա աքսելերացիոն միջոցառումը, որի ընթացքում ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու Հայաստանի բիզնես միջավայրի առավելություններին, ստանալու անհատական մենթորություն՝ իրենց բիզնես գաղափարը զարգացնելու նպատակով: Աքսելերացիոն ծրագրի արդյունքներով թիմերին գնահատող հանձնաժողովի կողմից առանձնացվել են 3 լավագույն ստարտափեր՝ «Գաղափարի փուլ» և «Աճի փուլ» անվանակարգերից յուրաքանչյուրով: Այս պահին ընթանում է դրամաշնորհային ծրագիր աքսելերացիոն մրցույթը հաղթահարած ընկերությունների համար:	Դրամաշնորհային ծրագրի չկատարումը պայմանավորված է «Ներուժ 4.0» ծրագրի շրջանակում դրամաշնորհային մրցույթի ուշ հայտարարմամբ (դեկտեմբեր), քանի որ աքսելերացիոն դասընթաց անցած շահառուները սփյուռքահայեր են և նրանց՝ որպես իրավաբանական անձ գրանցվելու գործընթացն ավարտվեց դեկտեմբերին:
4.	Դրամաշնորհային ծրագրերի շրջանակ-ներում նորաստեղծ ընկերություններին ֆինանսավորում տրամադրելու միջոցով բարձր տեխնոլոգիա-կան ոլորտում և	«Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» ծրագրի «Գաղափարից մինչև բիզնես» անվան ներքո դրամաշնորհային ծրագրի իրականացում	«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Գաղափարի փուլ» բաղադրիչով դրամաշնորհային մրցույթը հայտարարվել է և արդյունքներն ամփոփվել են 2023թ. 2-րդ եռամսյակում: Բյուջե՝ 150,000.0 հազ. ՀՀ դրամ, փաստացի շնորհված գումար՝ 44,570,000 ՀՀ դրամ:	«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի շրջանակում դրամաշնորհի դիմած ընկերությունների քանակը կրճատվել է՝ ոլորտային որոշ միջոցառումների (EWC, MITQ

	տնտեսության բոլոր հատվածներում նոր արժեք ստեղծելու և տեխնոլոգիական լուծումների կիրառու-թյան ապահովում		2. «Գաղափարից մինչեւ բիզնես» դրամաշնորհային ծրագրի «Մուտք դեպի շուկա» բաղադրիչով մրցույթը նույնպես հայտարարվել է և արդյունքներն ամփոփվել են 2-րդ եռամսյակում: Բյուջե՝ 200,000.0 հազ. ՀՀ դրամ, փաստացի շնորհված գումար՝ 169,680,000 ՀՀ դրամ: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ պայմանագիր է կնքվել համապատասխանաբար 9 (Գաղափարի փուլ) և 17 (Մուտք դեպի շուկա) ընկերությունների հետ:	և այլն) չկայանալու պատճառով:
5.	Աշխարհի տեխնոլոգիական, կրթական, գիտահետազոտական կենտրոններից գիտելիքի և հմտությունների ներհոսքն ապահովելու, տեխնոլոգիական ոլորտում զարգացումը, ներդրումների ներգրավումը խթանելու նպատակով կրթական և աքսելերացիոն ծրագրերի իրականացում	5.2 Հայկական և արտերկրյա աքսելերատորների/տեխնո լոգիական կենտրոնների միջև կապերի զարգացում, համագործակցության հաստատում	Աքսելերացիոն ծրագրեր իրականացնող միջազգային ընկերությունների մուտքը և գործունեության ծավալումը հայաստանյան շուկայում խթանելու նպատակով աշխատանքներ են տարվում աշխարհի թոփ 10 լավագույն աքսելերացիոն ծրագրեր իրականացնող ընկերություններից մեկին Հայաստան հրավիրելու ուղղությամբ: Ներկայումս բանակցություններ են տարվում Techstars-ի, Plug and Play-ի, 500 Global-ի և այլ աքսելերատորների հետ: Վերոնշյալ նախաձեռնության իրականացումը նախատեսվում է 2024թ. բյուջեով:	
6.	ՀՀ առկա տեխնոլոգիական կենտրոնների,	6.1 «Ինժեներական քաղաք» ծրագրի իրականացում	Ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի շինարարությունը մեկնարկել է 2023 թ. հուլիսին և այս պահին իրականացվում են շինարարական	

	տեխնոպարկերի, աքսելերատորների և ինկուբատորների կարողությունների բարելավում, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացման նպատակով ՀՀ մարզերում նոր կենտրոնների հիմնում, այդ թվում՝ միջազգային համագործակցության հիման վրա:		աշխատանքներ «Tunnel Sadd Ariana Company»-ն կողմից: Շինարարության ավարտը նախատեսվում է 2024թ. մայիսին:	
		6.2 Ձեռնարկատիրական ենթակառուցվածքների ստեղծում 6.3 Նոր հիմնվող տեխնոլոգիական կենտրոնների, տեխնոպարկերի, աքսելերատորների և ինկուբատորների ստեղծման նպատակով ծրագրի մշակում, ֆինանսավորման մեխանիզմների հստակեցում	Ձեռնարկատիրական ենթակառուցվածքների ստեղծման ուղղությամբ ընթանում են բանակցություններ COAF-ի, ԱՏՁՄ-ի և ՁԻՀ-ի ընկերությունների հետ՝ ՀՀ մարզերում տեխնոպարկեր հիմնելու հնարավորությունների ուղղությամբ:	
7.	«Ինժեներական քաղաքի» օրինակով ճարտարագիտական և արդյունաբերական հատուկ գոտիների ստեղծում և զարգացում	7.1 Տեխնոլոգիական և արդյունաբերական կենտրոնների ստեղծում	Տեխնոլոգիական կլաստերի ստեղծման նախապատրաստական աշխատանքների իրականացման ուղղությամբ ընթանում են բանակցություններ մի շարք ընկերությունների հետ: Ներկայումս մարզերում իրականացվում են ապագայում հիմնվող և տեխնոպարկերում ներդրվելիք պոտենցիալների գնահատումը:	
8.	Աշխարհում, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում, միջոցառումներում հայկական բարձր տեխնոլոգիական ոլորտի (ընկերությունների) ներկայության	8.3 Հայկական ընկերությունների հետ համատեղ միջազգային և երկկողմ բիզնես ֆորումների կազմակերպչական աշխատանքների իրագործում	«1043 Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի «11007 շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառման ծրագիրը հաստատելու համար 2023 թվականի մարտի 2-ի թիվ 422-Ա հրամանով 2023 թվականին հաստատվել և իրականացվել են հետևյալ միջոցառումները.	

	ապահովում և առաջխաղացում		1.«Վիվաթեք 2023» տեխնոլոգիական միջազգային ցուցահանդեսի (14-17 հունիսի 2023 թ., Փարիզ, ՖՀ) շրջանակներում անցկացվող «Հայկական տեխնոլոգիական ցանցի գլոբալ օգտագործումը՝ հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով գործարար համաժողով: Ցուցահանդեսին մասնակցել է նաև «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամը: 2. «Ավստրիա Showcase «Խելացի տեխնոլոգիաներ» Հայաստանում» հայ-ավստրիական գործարար համաժողով (27 ապրիլի 2023 թ., Երևան, ՀՀ): 3.Միավորված ազգերի կազմակերպության Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի Ասիա-խաղաղօվկիանոսյան տեղեկատվական գերարագընթաց կապուղու համակարգող կոմիտեի 7-րդ նիստ (ESCAP) (8-9 նոյեմբերի 2023 թ., Երևան, ՀՀ):	
		8.4 Հայրենական և միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներին հայկական ԲՏ, ոլորտի ընկերությունների հետ համատեղ մասնակցությունն, ապահովելուն ուղղված կազմակերպչական աշխատանքներ	«1043 Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագիր» ծրագրի «11007 շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառման ծրագիրը հաստատելու համար 2023 թվականի մարտի 2-ի թիվ 422-Ա հրամանով 2023 թվականին հաստատվել և իրականացվել են հետևյալ միջոցառումները. 1.«Այդեքս 2023» պաշտպանական տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդես (20-24 փետրվարի 2023թ., Աբու Դաբի, ԱՄԷ): Հայկական միասնական	

			տաղավարում ներկայացվել են 18 ոլորտային ընկերություններ: 2.«Էքսպոէլեկտրոնիկա 2023» տեխնոլոգիական միջազգային ցուցահանդես (11-13 ապրիլի 2023 թ., Մոսկվա, ՌԴ): Հայկական միասնական տաղավարում ներկայացվել են 3 ոլորտային ընկերություններ: 3.«Վիվաթեք 2023» տեխնոլոգիական միջազգային ցուցահանդես (14-17 հունիսի 2023թ., Փարիզ, ՖՀ): Հայկական միասնական տաղավարում ներկայացվել են 10 ոլորտային ընկերություններ: 4.«Էդեքս 2023» պաշտպանական տեխնոլոգիաների միջազգային ցուցահանդես (4-7 դեկտեմբերի 2023թ., Եգիպտոս, ԵԱՀ): Հայկական միասնական տաղավարում ներկայացվել են 12 ոլորտային ընկերություններ: 5.«Դիջիթեք 22» տեխնոլոգիական ցուցահանդես (10-12 մարտի 2023թ., Երևան, ՀՀ): Հայկական միասնական տաղավարում ներկայացվել են 11 հայկական և 10 վրացական ոլորտային ընկերություններ: «Digitec 2022» միջոցառման շրջանակնում վրացական ստարտափերին, ՀՀ ԲՏԱ նախարարության աջակցությամբ, տրամադրվել է միասնական տաղավար՝ համաձայն ՀՀ և Վրաստանի Հանրապետության միջև 2023թ. հունվարի 23-ին տնտեսական համագործակցության միջկառավարա-կան հանձնաժողովի 12-րդ նիստի արձանագրության: 6.«Դիջիթեք 23» տեխնոլոգիական ցուցահանդես (13-15 հոկտեմբերի 2023 թ., Երևան, ՀՀ): Հայկական	

			միասնական տաղավարում ներկայացվել են 12 ոլորտային ընկերություններ:	
9.	Բարձր տեխնոլոգիական ոլորտի առաջանցիկ զարգացման նպատակով տեխնոլոգիական ընկերությունների և բուհերի արդյունավետ համագործակցության խթանում՝ նոր մասնագետների պատրաստման և այլ ոլորտի մասնագետներին վերամասնագիտանալու հնարավորություն ընձեռելու միջոցով	9.3 Մարզերում և Երևան քաղաքում դասընթացների կազմակերպման միջոցառման շրջանակում տարեկան մինչև 2000 շահառուների ուսուցման պատշաճ պայմանների ստեղծում և ուսուցում	2023թ. «Բարձրագույն ուսումնական հաստատություններ-մասնավոր հատված համագործակցություն» ծրագրի իրականացման նպատակով երկու անգամ հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ: Հայտարարված մրցույթների արդյունքում 500 մասնագետների համար արդեն իսկ կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ, ևս շուրջ 850 մասնագետ վերապատրաստման դասընթացներ է անցնում: Վերոնշյալ մասնագետները համաձայն ուսումնական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի աշխատանքի են անցնելու ոլորտային կազմակերպություններում, իսկ արդեն իսկ աշխատող մասնագետները գրանցելու են աշխատանքային առաջընթաց:	

10.	Ոլորտի ընկերությունների բիզնես կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում	Տեխնոլոգիական ընկերությունների համար կարողությունների ամրապնդմանն ուղղված դասընթացների և սեմինարների կազմակերպում	Դրամաշնորհային մրցույթի արդյունքում «Գաղափարի փուլ» բաղադրիչի շրջանակում պետական աջակցություն ստացած 9 և «Մուտք դեպի շուկա» բաղադրիչով 17 կազմակերպությունների ներկայացուցիչներին հնարավորություն է ընձեռնվել մասնակցելու համապատասխանաբար ինկուբացիոն և աքսելերացիոն ծրագրերին: Բացի այդ, իրականացվել է նաև 2022թ. «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհային ծրագրի «Շուկա մուտք գործելու փուլում գտնվողների համար» բաղադրիչի 13 շահառուների աքսելերացիոն ծրագիրը:	
20.	Նույնականացման և իրավասությունների ճանաչման արդիական համակարգի ներդրում	Ինքնության նույնականացում, վավերացում և էլ. ստորագրության նոր ենթակառուցվածքի ստեղծում	Մշակվել է նոր սերնդի կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի (eID) մանրամասն բիզնես մոդելը: Ստեղծվել է «Ես եմ» ազգային նույնականացման միասնական հարթակը: «Ես եմ» ազգային նույնականացման հարթակը պարտադիր կերպով հանդիսանալու է պետական ծառայությունների մատուցման մուտքի պատուհանը: Հեռահաղորդակցության բոլոր ընկերությունները միավորել են ջանքերը՝ հաճախորդների հեռախոսային չիպերն էլեկտրոնային նույնականացում և ստորագրություն ապահովող չիպերով փոխարինելու համար: Համաձայնություն է ձեռք բերվել 10 բանկի և 3 հեռահաղորդակցության օպերատորի միջև համատեղ ընկերություն ստեղծելու վերաբերյալ: Ընկերությունը կտրամադրի	

			համաշխարհային մակարդակի թվային ինքնության լուծումներ:	
22.	Թվային միջավայրի հիմնական ստանդարտների մշակում և ներդրում	22.4 Պետական ամպային ենթակառուցվածքային պահանջների/ ստանդարտների ազգային ստանդարտների ստեղծում	Տեղեկատվական համակարգերում և կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքներում կիբեռանվտանգ միջավայրի ստեղծման նպատակով մշակվել է «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագիծ: Նախագիծը քննարկվել է Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդում, ինչպես նաև շահագրգիռ մարմինների հետ: Նախագծով սահմանվել է կիբեռանվտանգության ապահովման ազգային ստանդարտների մշակում: Նախագծի եզրափակիչ և անցումային դրույթներով սահմանվել է, որ օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ տասներկուամսյա ժամկետում:	
		22.5 Կիբեռանվտանգության ստանդարտների, ձևաչափերի և ընթացակարգերի մշակում	Մշակվել է տվյալների դասակարգման մեթոդաբանությունը, որը հիմնված է տեղեկատվական անվտանգության սկզբունքների վրա՝ գաղտնիություն, ամբողջականություն և հասանելիություն: Նախատեսվում է տվյալների դասակարգման հիման վրա նախագծել և կիրառել ամպային անվտանգության պահանջներ, որոնք կհամապատասխանեն առաջարկվող տվյալների դասակարգման մակարդակներին:	

23.	Հանրային ծառայությունների թվայնացում, դրանց առցանց հասանելիության ապահովում, ծառայությունների միասնական կենտրոնների հիմնում	23.1 Ծրագրերի կառավարման էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծում	Կայացել է «Ծրագրերի կառավարման էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմման խորհրդատվական ծառայություններ» ձեռքբերման գնման մրցույթ: Պայմանագիրը լուծվել է «Գնումներ մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն: Նախատեսվում է իրականացնել 2024թ.:	
		23.2 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի «Պետական փոխգործելիության հարթակի» (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր պահանջների համապատասխան գործարկման վերահսկում	Պետական փոխգործելիության հարթակի (GIP-Goverment Interoperability Platform) միջոցով փոխանակվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկատվական համակարգերում հավաքագրվող տվյալները: Ներկայումս փոխգործելիության հարթակին են միացված հիմնական տվյալների շտեմարանները, որոնցից են Բնակչության պետական ռեգիստրը, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրը, Արփիս համակարգը, Ոստիկանության տվյալների շտեմարանները, ՔԿԱԳ տվյալների շտեմարանը և այլն: Շուրջ 50 վեբ ծառայությունների միջոցով հնարավոր է տվյալներ ստանալ տարբեր պետական շտեմարաններից: GIP-ի հնարավորությունները հասանելի են ոչ միայն պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, այլև առևտրային կազմակերպություններին (բանկեր, վարկային կազմակերպություններ, հեռահաղորդակցության	Միջոցառումների լիարժեք կատարումը ենթադրում է համարժեք օրենսդրական հիմքերի և ենթաօրենսդրական կարգավորումների ապահովում, ինչպես նաև հենքային մի շարք ուսումնասիրությունների ու վերլուծական աշխատանքների ապահովում: Նշվածը հաշվի առնելով՝ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 2300-Լ որոշմամբ թվայնացման հետ կապված միջոցառումները ներկայացվել են նոր՝ ճշգրտված խմբագրությամբ և

			ծառայություններ մատուցողներ, ապահովագրական կազմակերպություններ և այլն):	իրատեսական ժամկետներով:
		23.3 Պետական թվային համալիր համակարգի ճարտարապետության մշակում և հաստատում	Հաստատվել են Հայաստանի թվային ճարտարապետության հայեցակարգային սկզբունքները, որոնք հիմք կհանդիսանան տվյալների քաղաքականության մոտեցումների ֆորմալացման համար: Ճարտարապետությունը ներառում է 4 հիմնական «շերտ»՝ Էլեկտրոնային ինքնություն (Electronic identity), Մատակարարման ուղիներ (Delivery channels), Ինտեգրում (Integration) և Ենթակառուցվածք (Infrastructure):	
		23.4 Միասնական թվային հենքի ստեղծում (Systems development unified framework)	Մշակվել է միասնական հենքի նկարագիրը: Մշակվել է «դիզայն» համակարգի նոր գործիք՝ «Հենակետ», որը կապահովի պետական թվային հարթակների նախագծերի միասնականությունը:	
		23.5 Տվյալների ազգային պահոցի ստեղծում	Մշակվել է «Հանրային տեղեկությունների» մասին օրենքի նախագիծը: Օրենքը ներառելու է տվյալների փոխանցմանը, պահպանմանը և մշակմանը վերաբերող դրույթներ: Պետական հատվածում հավաքագրվող տվյալների քարտեզագրման և դասակարգման նպատակով մշակվել է մեթոդաբանություն: Այլ կարգավորումները տրվելու են ենթաօրենսդրական իրավական ակտերով: Որոշ դեպքերում տվյալների կառավարման և վերլուծության այլընտրանքային մոտեցումները կարող են ավելի արդյունավետ լինել: Այս	

			պարագայում կենտրոնացված տվյալների պահոցի ստեղծումը ոչ նպատակահարմար է: Կառավարության միջոցառումների ծրագրում կատարվել է փոփոխություն:	
24.	Պետական և համայնքային ծառայությունների մեկանգամյա դիմումի համակարգի ներդրում՝ բացառելով քաղաքացուց տեղեկություններ պահանջելու դեպքերը, եթե այն արդեն առկա է տեղեկատվական որևէ շտեմարանում	24.1 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի «Պետական փոխգործելիության հարթակի» (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր պահանջների համապատասխան գործարկման վերահսկում:	Տես 23.2 կետը:	
		24.2 Պետական թվային համալիր համակարգի ճարտարապետության մշակում և հաստատում	Տես 23.3 կետը:	
		24.3 Միասնական թվային հենքի ստեղծում (Systems development unified framework)	Տես 23.4 կետը:	
		24.4 Տվյալների ազգային պահոցի ստեղծում	Տես 23.5 կետը:	

25.	Արտերկրում գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ավտոմատացում՝ անձնագրի փոխում, վավերականության ժամկետի երկարաձգում, տեղեկանքների տրամադրում և մի շարք այլ ծառայություններ	25.1 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի «Պետական փոխգործելիության հարթակի» (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր պահանջների համապատասխան գործարկման վերահսկում	Տես 23.2 կետը:	
		25.2 Պետական թվային համալիր համակարգի ճարտարապետության մշակում և հաստատում	Տես 23.3 կետը:	
		25.3 Միասնական թվային հենքի ստեղծում (Systems development unified framework)	Տես 23.4 կետը:	
		25.4 Տվյալների ազգային պահոցի ստեղծում	Տես 23.5 կետը:	
26.	Իրավաբանական անձանց հետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝	26.1 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման	Տես 23.2 կետը:	

	բացառապես էլեկտրոնային եղանակով հաղորդակցության ապահովում	համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի «Պետական փոխգործելիության հարթակի» (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր պահանջների համապատասխան գործարկման վերահսկում		
		26.2 Պետական թվային համալիր համակարգի ճարտարապետության մշակում և հաստատում	Տես 23.3 կետը:	
		26.3 Միասնական թվային հենքի ստեղծում (Systems development unified framework)	Տես 23.4 կետը:	
		26.4 Տվյալների ազգային պահոցի ստեղծում	Տես 23.5 կետը:	
27.	Քաղաքացիների հետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ գերազանցապես էլեկտրոնային եղանակով հաղորդակցության ապահովում	27.1 Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի «Պետական փոխգործելիության հարթակի» (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր	Տես 23.2 կետը:	

		պահանջների համապատասխան գործարկման վերահսկում		
		27.2 Պետական թվային համալիր համակարգի ճարտարապետության մշակում և հաստատում	Տես 23.3 կետը:	
		27.3 Միասնական թվային հենքի ստեղծում (Systems development unified framework)	Տես 23.4 կետը:	
		27.4 Տվյալների ազգային պահոցի ստեղծում	Տես 23.5 կետը:	
		27.5 Ազգային սուպերհամակարգչային կենտրոնի ստեղծում	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի ներկայացուցիչները մեկնել են Ֆրանսիա, որտեղ 2022թ. դեկտեմբերի 15-ին տեղի է ունեցել Գերհամակարգչի նախնական ընդունումը, հաջորդիվ՝ տեղափոխվել Հայաստան, մաքսազերծվել և 2023թ. հունիսից պահեստավորվել է «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ՊԼԱԶԱ» ՍՊ ընկերության տարածքում: 2022թ. մշակվել է Գերհամակարգչային կենտրոնի տեղակայման կառուցապատման նախագիծը և հաստատվել Երևանի քաղաքապետարանի կողմից: Նախագծային փաթեթը 2022թ. դեկտեմբեր ամսին Երևանի քաղաքապետարանի կողմից ստացել է	

			շինարարության թույլտվություն: Շինարարական ընկերության ընտրության մրցույթը հայտարարվել է և հայտնի է հաղթող ճանաչված ընկերությունների կոնսորցիումը, որի հետ կնքվել է պայմանագիր՝ կառուցապատման աշխատանքները կատարելու մասին: Այժմ իրականացվում է շենքի կառուցապատումը: Շինարարության ավարտը ակնկալվում է 2024թ. առաջին եռամսյակում: Նախատեսվում է 2024թ. առաջին եռամսյակում «Աթոս» ընկերության մասնագետների ժամանումը Հայաստան և Գերհամակարգչի տեղադրման, միացման գործընթացի իրականացումը:	
29.	Կիբեռանվտանգության և փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման կենտրոնի ստեղծում	29.1 Կիբեռանվտանգության ազգային գործակալության ստեղծում	Մշակվել է «Կիբեռանվտանգության մասին» օրենքի նախագիծ: Նախագծով տրված է կիբեռանվտանգության գործակալության սահմանումը, գործառույթները: Գործակալությունը գործելու է իրավասու մարմնի կառուցվածքում, օժանդակելու է կիբեռանվտանգության ոլորտում պետական քաղաքականության մշակմանն ու իրականացման ապահովմանը:	
		29.2Կիբեռանվտանգության ինկուբատորի, հետազոտությունների և մշակումների (R & D) լաբորատորիայի ստեղծում	Կիբեռանվտանգության ինկուբատորի և R&D լաբորատորիայի ստեղծման շրջանակում հայտարարվել են համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման/լիցենզիաների և ծառայությունների, ինչպես նաև լաբորատորիայի համար կահույքի ձեռք բերման մրցույթները: Կնքվել են համապատասխան	

			պայմանագրեր հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ: Համակարգչային սարքավորումները , լիցենզիաները և կահույքը արդեն մատակարարվել են:	
31.	ՀՀ ամբողջ տարածքում ռադիոեթերի շուրջօրյա վերահսկում և մինչև 100% եթերի մաքրության ապահովում. այդ նպատակով շարժական և բազային ռադիոմոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրում	31.1 ՀՀ տարածքում բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգերի ձեռքբերում, ՀՀ տարածքում (10 մարզ կենտրոններում) ռադիոհսկման կայանների կառուցում և համակարգի ներդրում	2023թ. հունվարի 31-ին ավարտվել և շահագործման են հանձնվել 2022թ. համար պլանավորված գլխավոր և թվով 1 չսպասարկվող կայանները: 2023թ. համար ծրագրով նախատեսված է իրականացնել թվով 5 սպասարկվող ստացիոնար (ք. Երևան՝ 2 հատ, ք. Գյումրի՝ 1 հատ, ք. Վանաձոր՝ 1 հատ և ք.Գորիս՝ 1 հատ) և թվով 4 շարժական կայանների ներդրման (տեխնիկական միջոցների ձեռքբերում, տեղակայում, կարգավորում և շահագործման հանձնում), ինչպես նաև 2022թ. 2023թ. տեղափոխված թվով 1 շարժական կայանի հավաքման, կարգավորման և շահագործման աշխատանքները: Համակարգի թվով 5 սպասարկվող ստացիոնար տեղորոշման կայանների տեխնիկական շինություններում էլեկտրամոնտաժային աշխատանքների ձեռքբերման համար 2023թ. մարտի 16-ին www.armeps.am էլեկտրոնային կայքում հրապարակվել է ընթացակարգի հայտարարություն և հրավեր, որի արդյունքում հաղթող ճանաչված «ԱԴԱՄՈՒՍ» ՍՊ ընկերության հետ կնքվել է պայմանագիր: Ընկերությունը 2023թ. մայիսի 3-րդ տասնօրյակում ամբողջությամբ իրականացրել է պայմանագրով նախատեսված աշխատանքները:	Թվով 5 շարժական կայանների ավտոմեքենաների վրա հավաքման և մոնտաժային աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են և «Rohde & Schwarz» գերմանական ընկերության գնահատմամբ կավարտվեն 2024 թվականի 1-ին եռամսյակի վերջին տասնօրյակում: Հավաքման և մոնտաժային աշխատանքների կատարման ժամկետի տեղափոխումը պայմանավորված է «Rohde & Schwarz» գերմանական ընկերության կողմից Ռուսաստանի նկատմամբ սահմանված պատժամիջոցների հետևանքով շարժական կայանների կազմի մեջ մտնող որոշակի կոմպոնենտների այլ

			Միաժամանակ, ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման ծրագրով նախատեսված օժանդակ տեխնիկական միջոցների (անխափան սնուցման սարքեր, ջերմային արկղեր և բենզինային էլ. գեներատոր) ձեռքբերման նպատակով 2023թ. մայիսի 25-ին հրապարակվել է էլեկտրոնային աճուրդ հայտարարություն և հրավեր: Հակադարձ աճուրդի արդյունքում անխափան սնուցման սարքեր և ջերմային արկղեր չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել «Գ.Գ.Է. հոլդինգ» ՍՊ ընկերությունը, իսկ բենզինային էլեկտրական գեներատոր չափաբաժնի մասով մրցույթը չի կայացել: 2023թ. դեկտեմբերի 19-ի դրությամբ ամբողջությամբ ավարտվել են թվով 5 սպասարկվող ստացիոնար կայանների տեղակայման, կարգավորման, փորձարկման (թեստավորման) և հանձնման-ընդունման աշխատանքները: Հաշվի առնելով, որ ՀՀ բազային և շարժական ռադիոմոնիթորինգի համակարգի ներդրման աշխատանքների ավարտից հետո, ամբողջ համակարգի և դրա կազմի մեջ ներառվող հիմնական տեխնիկական միջոցների, շարժական և անշարժ գույքի հետագա շահագործումը, պահպանումը և սպասարկումը պետք է իրականացվեն ՀՀ ԲՏԱ նախարարության «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ–ի կողմից, ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի ««Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային	արտադրողներից ձեռքբերման և մատակարարման ուշացումով:

			կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» թիվ 1935-Ա որոշման համաձայն՝ ներկայումս ընթանում են գույքի անհատույց օգտագործման՝ պայմանագրի կնքման և գույքի հանձնման–ընդունման աշխատանքները:	
32.	Թվային ինտերակտիվ հեռուստատեսության համակարգի ներդրում	32.4 ՀՀ մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալում	Արբանյակային ունակության վարձակալությունն իրականացվում է երկարաժամկետ պայմանագրի շրջանակներում: Երկկողմ ստանձնած պարտավորություններն իրականացվել են ժամանակին: Միաժամանակ, արբանյակային ունակության վարձակալության դիմաց վճարումները ևս կատարվել են ժամանակին: Պայմանագիրը կրում է շարունակական բնույթ:	
34.	Ընդունել տիեզերական գործունեության ոլորտում ՀՀ տնտեսության և գիտության զարգացման, անվտանգության ամրապնդման ոլորտում ՀՀ միջազգային համագործակցության ընդլայնման համապարփակ ռազմավարությունը	34.1 Մշակել ՀՀ տիեզերական գործունեության ոլորտի համապարփակ ռազմավարություն	Հաշվի առնելով Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 13.11.2023 թ. նիստի (այսուհետ՝ Նիստ) ընթացքում ստացված առաջարկությունները՝ ռազմավարության նախագծում կատարվել են լրամշակումներ և ռազմավարության նախագծի փաթեթն ուղարկվել է Նիստի N ԿԱ/338-2023 արձանագրության 9-րդ կետում նշված գերատեսչություններին, ինչպես նաև ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղարին և ՀՀ արտաքին հետախուզության ծառայությանը՝ կարծիքներ ստանալու նպատակով:	
35.	Փոստային կապի ունիվերսալ	35.2 «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության	ՀՀ ԱԺ-ի կողմից 24.05.2023թ. ընդունվել է ««Փոստային կապի մասին» օրենքում	

	ծառայությունների հասանելիության, մատչելիության և մատուցման բարձր որակի ապահովում	օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքից բխող իրավական ակտերի մշակում	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը: Օրենքից բխող իրավական ակտերն ընդունվելու են օրենքի ուժի մեջ մտնելուց հետո իննամսյա ժամկետում: Ներկայումս, ՀՀ ԲՏԱ նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել են՝ • ՀՀ փոստային վճարման պետական նշանների հրատարակման և գործողության մեջ դնելու, ինչպես նաև հատուկ փոստային դրոշմակների կիրառման կարգը՝ 29.11.2023թ. N 13-Ն հրաման. • Փոստային կապի գործունեության ոլորտի հաշվետվությունների և վիճակագրական տվյալների ներկայացման և վերլուծության իրականացման կարգը՝ 16.11.2023թ. N 11-Ն հրաման: • Պետական-իրավական փորձաքննության է ներկայացվել «ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 16-ի N 211-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ժամկետ՝ 2024թ. փետրվարի 1-ին տասնօրյակ): Մշակվել և շահագրգիռ մարմինների քննարկմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 16-ի N 173-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ժամկետ՝ 2024թ. փետրվարի 1-ին տասնօրյակ):	

37.	Փոստային բաժանմունքներում ծառայությունների լայն շրջանակի մատուցում	37.2 «Հայփոստ» ՓԲԸ-ի փոստային ենթակառուցվածքի արդիականացում և վերազինում	«Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է թվով 8 փոստային բաժանմունքների արդիականացման աշխատանքներ: Միաժամանակ, «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակը բարելավելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները. Գործակվել է ծանրոցների «տուն առաքում» ծառայությունը հանրապետության 16 բնակավայրերում: Կրճատվել է փոստային առաքանիների առաքման ժամկետները, մասնավորապես՝ 80%-ից ավել փոստային առաքանիները Հայաստան մուտք գործելուց հետո հասցեատիրոջը հասնում են 2 օրվա ընթացքում: Կրճատվել են Միջազգային ելից առաքանիների առաքման ժամկետները՝ 15-20%: Այժմ HayPost+ (ՀայՓոստ պլյուս) բջջային հավելվածով հնարավոր է ոչ միայն հետևել առաքանու հետագծին և ստանալ առաքանու հետ կապված թարմացումներ, այլև անմիջապես հավելվածից պատվիրել տուն առաքում ցանկացած հասցեով:	
38.	Էլեկտրոնային առևտրի զարգացում	38.1 «Էլեկտրոնային առևտրի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում	Նախագծի մշակման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու համար գրություններ են ուղարկվել շահագրգիռ պետական մարմիններ: Վերջիններս ներկայացրել են թեկնածուներ:	

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.	Տնտեսական աճի ապահովում՝ 7-9%	1.1 Տնտեսական զարգացման քաղաքականության մշակում և իրականացում «Տնտեսական զարգացման քաղաքականությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	Ընդունվել է ՀՀ կառավարության 20 հուլիսի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության 2023-2023թթ. հայեցակարգը հաստատելու մասին» N 1238-Լ որոշումը	
		1.2 Հանրային ներդրումների կառավարման բարելավում	- Հանրային ներդրումների կառավարման գործընթացի կիրարկման և շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների ու միջազգային փորձագետների մասնակցությամբ իրականացված մասնագիտական ու աշխատանքային քննարկումների արդյունքների հիման վրա նախաձեռնվել է հանրային ներդրումների կառավարման համակարգի օրենսդրական դաշտի բարելավման աշխատանքներ, մասնավորապես՝ 2023թ. փետրվարի 9-ին ընդունվել է «Հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների որոշման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N	

			175-Ն որոշումը և ուժը կորցրած է ճանաչվել 2021թ. մայիսի 4-ի ՀՀ վարչապետի N 472-Լ որոշումը: Նախաձեռնվել և իրականացվել է թվով 5 Հանրային ներդրումային կոմիտեի նիստ:	
		1.3 Աշխատանքի շուկայում տնտեսության պահանջարկի վերհանում	Էկոնոմիկայի նախարարությունը մշակել է «Կրթական համակարգի պատվերի ձևավորման» մեթոդաբանությունը, որի նպատակն է տնտեսական քաղաքականության համապատասխան հեռանկարային և պահանջված մասնագիտությունների վերհանումը, այդ թվում՝ ըստ վարչատարածքային բաժանման՝ առանձնացնելով պահանջվող մասնագիտությունների համար կրթության մակարդակները: Մեթոդաբանությունը 11.01.2024թ. ներկայացվել է կարծիքի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն այն հիմնավորմամբ, որ մեթոդաբանության փորձարկման և ներդրման համար հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության զբաղմունքների դասակարգիչն է:	
		1.4 Պետություն-մասնավոր գործընկերության զարգացում, «Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և կառավարման կարգը հաստատելու, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային	- 2022թ. հուլիսի 28-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 1183-Ն որոշումը պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը հաստատելու մասին: ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023թ. փետրվարի 14-ի N 363-Ա հրամանով հաստատվել են պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի մշակման և իրականացման գործընթացների նկատմամբ կիրառելի ուղեցույցները:	

		ծառայությունների ոլորտները, պետություն-մասնավոր գործընկերության ստորաբաժանումը, պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 20-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատում		
		1.6 Պղնձաձուլական կլաստերների ձևավորման հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում	ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մշակել է պղնձաձուլական կլաստերների ձևավորման հայեցակարգը և ներկայացրել ՀՀ կառավարության քննարկմանը: Նախագիծն ընդգրկվել է ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 20.09.2022թ. նիստում և քննարկման արդյունքում ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի առաջարկով որոշվել է հանել օրակարգից (N ԿԱ/276 արձանագրության 9-րդ կետ), որի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության 26.10.2023թ. N 01/17004-2022 գրությամբ զեկուցվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Համաձայն արձանագրության՝ որոշվել է հարցի քննարկումը հետաձգել և անդրադառնալ Նախագծին ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի մոտ հարցը քննարկելուց հետո:	Հաշվի առնելով, որ նախագիծը ներկայացվել է վարչապետ աշխատակազմ և կայացվել է համապատասխան որոշում՝ նախագծի հետագա քննարկումը նպատակահարմար կլինի անդրադառնալլ նշված քննարկումների արդյունքում:

			Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ ՀՀ վարչապետի հետ «Գեոպրոմայնինգ» ընկերության տնօրենների խորհրդի անդամ Ռոման Տրոցենկոյի հանդիպման ժամանակ վերջինիս կողմից առաջարկվել է իրականացնել մի շարք ներդրումային խոշոր ծրագրեր, այդ թվում՝ նոր պղնձաձուլարանի կառուցման: Հարցն ընգրկվել է նաև 2022 թվականի դեկտեմբերի 23-ին Մոսկվայում կայացած՝ Հայ-Ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 21-րդ նիստի օրակարգում (Արձանագրության 8.1-ին կետ), համաձայն որի՝ ռուսական կողմը «Գեոպրոմայնինգ» ընկերության հետ համատեղ պետք է ներկայացնի Հայաստանում պղնձաձուլական կլաստերի ստեղծման Ճանապարհային քարտեզ:	
		1.7 Խոշոր ներդրումային ծրագրերի հայեցակարգի հաստատում վար-չապետի աշխատակազմ, հաստատ-ման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում	Միջոցառման իրականացման նպատակով իրականացվում են ուսումնասիրություններ և քննարկումներ, մշակման փուլում է գտնվում փաստաթուղթը:	Միջոցառման նախագիծը մշակվել և գտնվում է շահագրգիռ մարմինների հետ քննարկման փուլում: Առաջիկայում լրամշակվելուց հետո կներկայացվի Կառավարության քննարկմանը:
		1.8 Ամուլսարի ոսկու հանքի շահագործման ծրագրի իրագործ-մանն ուղղված աշխատանքների համակարգում	Ընդունվել է ՀՀ կառավարության 2024թ. հունվարի 18-ի «Որպես նվիրատվություն բաժնետոմսեր ընդունելու մասին» N 81-Ա որոշումy Բաժնետոմսերի նվիրատվության պայմանագրի կնքումն ու գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքներն ընթացքում են:	

2.	Արտադրողականության աճ և գործազրկության կրճատում Արտադրողականու-թյուն 12$ ՀՆԱ/ մարդչժամ; գործազրկություն՝ <10%	2.1 Ռազմավարական և առաջնահերթ ոլորտներում տեխնոլոգիական արդիականացում և բիզնես պրոցեսների օպտիմալացում	ՀՀ կառավարության 29.03.2020թ. N355-Լ որոշման 1-ին հավելվածով հաստատված Արտադրողականության խթանման նպատակային ծրագրի շրջանակներում մինչև 42 ամսով սուբսիդավորվում է նպատակային վարկերի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի 6-10%-ը: Օժանդակությունը կիրառելի է այն վարկերի/լիզինգի նկատմամբ, որոնք տրամադրվում են միջոցառման իմաստով նպատակային ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին՝ նոր/չօգտագործված մեքենա-սարքավորումներ ձեռք բերելու և(կամ) մեքենա-սարքավորումների մոնտաժման կամ սպասարկման դեպքում կապիտալ շինարարություն իրականացնելու նպատակով: 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ միջոցառման շրջանակներում ձևավորված պորտֆելը կազմում է 207 մլրդ դրամ՝ 3591 պայմանագրերով:	
		2.2 Աշխատաշուկայում բարձր որակավորում ունեցող մաս-նագետների ներգրավում տեղական ընկերություններում	Կառավարության 29.03.2020թ. N355-Լ որոշման 2-րդ հավելվածով հաստատված Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագրի շրջանակներում օժանդակություն է տրամադրվում ՀՀ տարածքում գրանցված այն տնտեսավարողներին, որոնք աջակցության համար դիմելուն նախորդող 12 ամսվա ընթացքում ներգրավել են միջոցառման իմաստով բարձր որակավորում համարվող մասնագետի: Օժանդակությունը տրամադրվում է մասնագետին հաշվարկված աշխատավարձի 20-70%-ի չափով՝ կախված	

			մասնագետի որակավորման աստիճանից: 2023 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ օժանդակություն է տրամադրվել 28 տնտեսավարողի 621,807.8 հազ. դրամի չափով՝ 367 ԲՈՈՒՄ-ների համար:	
		2.3 Տնտեսության մեջ թվային գործիք-ների կիրառման խթանման հայեցակարգի հաստատում	Էկոնոմիկայի նախարարի 09.10.2023թ. N1932-Ա հրամանով հաստատվել է Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների կողմից թվային գործիքների կիրառման խթանման հայեցակարգային մոտեցումները, որի նպատակն է նպաստել Հայաստանի ՓՄՁ թվային հասունության և արտադրողականության մակարդակների բարձրացմանը, ներդնել թվային գործիքների խթանման և խրախուսման մեխանիզմներ: Կառավարության 29.03.2020թ. N355-Լ որոշման Հավելված 1-ով հաստատված Արտադրողականության խթանման նպատակային ծրագրով սուբսիդավորվում է նաև բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման և արտադրողականության աճի խորհրդատվության նպատակով տրամադրված վարկերի/լիզինգի տարեկան տոկոսադրույքի 6-10%-ը:	
3.	Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում	3.1 Ներդրումային քաղաքականու-թյան մշակում և իրագործում, Ներդրումային քաղաքականությունը հաստատելու մասին իրավական ակտի մշակում	2023 թվականի օգոստոսի 28-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Ներդրումների ներգրավման ծրագիրը հաստատելու մասին» N 1450-Լ որոշումը:	

	Ներդրումներ/ՀՆԱ՝ 25%, ՕՈՒՆ/ՀՆԱ՝ 6%	3.2 Ընկերություններում արդիական կորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման խթանում	Մշակվել և 2024թ. հունվարի 22-ին Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակը:	
		3.3 Գործարար միջավայրի բարելավման ծրագրի մշակում և իրականացում, «Գործարար միջավայրի բարելավման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	«Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2020-2023 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի թիվ 246-Լ որոշման հավելվածով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր ամիս ներկայացվում է հաշվետվություն ՀՀ վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ վերը նշված որոշման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն միջոցառումների կատարման վերաբերյալ նախարարության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 25-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Մշակվել է Գործարար միջավայրի բարելավման 2024-2026թթ. նոր ծրագրի նախագիծը:	
		3.4 «Տնտեսական բարդ ներդրումային ծրագրերի չափորոշիչները սահմանելու մասին»	2023 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունվել է ՀՀ առավարության «Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ	

		ՀՀ կառավարության որոշման հաստատում և դրա շրջանակներում ներդրումային խորհրդի ստեղծում	զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 1867-Ն որոշումը:	
		3.5 Համագործակցություն միջազգային կարևոր ցուցիչներ և ռեյտինգներ հրապարակող ընկերությունների հետ	Մշակվել է «ՀՀ մակրոտնտեսական ընթացիկ վիճակը 2022թ. հունվար–դեկտեմբերին», ինչպես նաև վերոնշյալ զեկույցի 2023թ. հունվար–մարտի, հունվար–հունիսի և հունվար–սեպտեմբերի զեկույցները: Մշակման փուլում է 2023թ. տարեկան զեկույցը: Վերոնշյալ զեկույցները ՀՀ կենտրոնական բանկի միջոցով տրամադրվել են ռեյտինգներ և ցուցիչներ հրապարակող միջազգային կազմակերպություններին (FITCH, Mood's, S&P Global), ինչպես նաև միջազգային ներդրումային բանկերին՝ ԱԶԲ և այլ:	
		3.6 Պետական ֆինանսական ենթակառուցվածքների միավորում /DICA, FREDA և այլ/	Պետական ֆինանսական ենթակառուցվածքների միավորման ճանապարհային քարտեզը քննարկումների փուլում է: ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի մոտ կայացած խորհրդակցության արդյունքներից ելնելով հանձնարարվեց հավաքագրել և վերլուծել պետական ֆինանսական ենթակառուցվածքների կողմից իրականացվող ծրագրերը և գործառույթները, դիտարկել և ուսումնասիրել նմանօրինակ համակարգերի միջազգային փորձը և կիրարկման արդյունավետությունը:	
		3.7 «Գույք ներդրումների դիմաց» օժանդակության տրամադրման միջոցառման իրականացման	2022 թվականին մշակվել է «Գույք ներդրումների դիմաց» միջոցառումը և դրա կիրառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման	Նախագծի ընդունումը ենթադրում է որոշակի օրենսդրական

		անհրաժեշտ բազային պահանջները, օժանդակության տրամադրման կարգը եվ պայմանները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունում և իրագործում	նախագիծը և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Նախագիծը քննարկվել է ֆինանսատնտեսագիտական նախարարական կոմիտեում, որից հետո վերադարձվել է լրամշակման: Այնուհետև փոփոխվել է միջոցառման տրամաբանությունը և կրկին քննարկվել շահագրգիռ պետական մարմինների հետ: Ներկայումս գտնվում է լրամշակման փուլում:	փոփոխությունների իրականացում: Նախագծի փոխհամաձայնեցված տարբերակ ունենալու մասով իրականացվում են աշխատանքներ, և քանի որ օրենսդրական փոփոխությունների իրականացումը երկարատև գործընթաց է, նախագծի լրամշակված տարբերակը հնարավոր կլինի վարչապետի աշխատակազմ ներկայացնել նշված փոփոխություններից հետո:
		3.9 Մտավոր սեփականության ոլորտի զարգացում, «Ապրանքային նշանների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունում և «Մտավոր սեփականության ոլորտի զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	«Ապրանքային նշանների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 13.04.2023թ. Ազգային Ժողովում ընդունվել է երկրորդ ընթերցմամբ: Էկոնոմիկայի նախարարի 09.10.2023թ. N1933-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության համակարգի զարգացման հայեցակարգային մոտեցումները, որի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության պահպանության ինստիտուցիոնալ համակարգի արդիականացմանը և հասարակայնության լայն շրջանակի իրավագիտակցության բարձրացմանը, սահմանել	

			համակարգի զարգացման այնպիսի հենասյուններ, որոնք կապահովեն անցումը դեպի մրցունակ և գիտելիքահենք տնտեսություն:	
4.	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում, ՓՄՁ-ի մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ 55%	4.1 Նորարարական նախաձեռնությունների հայեցակարգի հաստատում, հաստատումից հետո ծրագրերի մշակում և իրագործում	Էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի հունվարի 31-ի թիվ Հ/281-2024 հրամանով հաստատվել է Նորարարական նախաձեռնությունների հայեցա-կարգը: Հիմնվելով հայեցակարգային ուղղությունների վրա՝ մշակվում են համապատասխան միջոցառումներ, որոնք ուղղված են դրանցով սահմանված նպատակներին:	
		4.2 Մասնավոր հատվածի մասնագիտական կարողությունների զարգացում	Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է Մասնագիտական կարողությունների զարգացման միջոցառումը, որը սահմանված կարգով շրջանառվելու է շահագրգիռ գերատեսչություններ:	
		4.4 Ֆինանսների հասանելիության ապահովում, «ՓՄՁ ներդրումային ֆոնդի և զարգացման բանկի հայեցակարգի հաստատում, հաստատման դեպքում իրագործում	• Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է Սկսնակ և փոքր ձեռներեցներին աջակցության ծրագիրը, որով առաջարկվում է համապարփակ աջակցություն սահմանել ՓՄՁ սուբյեկտների համար՝ ձեռնարկատիրական զարգացման դասընթացների մասնակցության վճարի փոխհատուցման, արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրման և հովանոցային մեխանիզմով պետական երաշխավորությունների տրամադրման ձևով՝ նպաստելով աճի ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտների ընդլայնմանը և մրցունակության բարձրացմանը: Միջոցառման համար 2024 թվականի ՄԺԾԾ շրջանակներում հատկացվել է 1.8 մլրդ դրամ գումար:	

			• Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և սույն թվականի հունվարի 18-ին N93-Լ որոշմամբ կառավարության կողմից ընդունվել է «Ներդրումային ֆոնդերում ներդրումներ կատարելու մասին» որոշումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառավարության մասնակցությունը տնտեսության գերակա ոլորտներում ներդրումներ իրականացնող ֆոնդերում՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տվյալ Ֆոնդում ներդրողի կողմից առնվազն 250,000,000 (երկու հարյուր հիսուն միլիոն) դրամի չափով փայերի ձեռքբերման պարագայում՝ ֆոնդի ընդհանուր կապիտալի 30%-ի չափով, սակայն ոչ ավել քան 3,000,000,000 (երեք միլիարդ) դրամը: Ծրագրի իմաստով գերակա ոլորտներ են համարվում մշակող արդյունաբերությունը, էներգետիկան և զբոսաշրջությունը:	
5.	Արտահանման խթանում Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ՝ 60%	5.1 «ՀՀ արտահանման ռազմավարության և կից ճանապարհային քարտեզի մշակում և իրականացում»	ԱՄՆ ՄԶԳ «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրի աջակցությամբ մշակվում է ՀՀ արտահանման ռազմավարությունն և կից ճանապարհային քարտեզը: Ռազմավարության մշակման աշխատանքներն ընթանում են համաձայն հետևյալ ժամանակացույցի. - Արտահանման ռազմավարություն-Գործողությունների պլան Ապրիլի 8, 2024 - Արտահանման ռազմավարություն 2030 և արդյունքների շրջանակ, ներառյալ գործողությունների ծրագիրը-Մայիսի 15, 2024 Ներկայումս մշակվում է ռազմավարության վերլուծական զեկույցը:	

		5.2 Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2021-2026 թթ. միջոցառումների իրականացում, «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2022թ. միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի հաստատում	«Ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2023թ. միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի մայիսի 26-ի N 919 հրամանի շրջանակներում իրականացվել են. Արտահանմանն խթանմանն ուղղված 5 ու ներդրումների ներգրավմանն ուղղված 2 ցուցահանդեսներ և 1 ներդրումային համաժողով. PRODEXPO սննդարդյունաբերության ցուցահանդես - 2023 թվականի փետրվարի 6-ից 10-ը, ՌԴ, Մոսկվա. Տարեկան ներդրումային հանդիպում - 2023 թվականի մայիսի 8-ից 10-ը, Արաբական Միացյալ Էմիրություններ, Աբու Դաբի. Օրիոն 2023 ներդրումային գագաթնաժողով- 2023 թվականի հունիսի 19-ից 22-ը, ԱՄՆ, Նյու Յորք. Իննոպրոմ արդյունաբերական ցուցահանդես- 2023 թվականի հուլիսի 10-ից 13-ը, ՌԴ, Եկատերինբուրգ. Ներդրումների կառավարման ցուցահանդես- 2023 թվականի սեպտեմբերի 14-ից 15-ը, ԳԴՀ, Ֆրանկֆուրտ. Իննոպրոմ Ղազախստան 2023 արդյունաբերական ցուցահանդես-2023 թվականի սեպտեմբերի 24-ից 27-ը, Աստանա, Ղազախստան. Չինաստանի 6-րդ միջազգային ներմուծման ցուցահանդես-2023 թվականի նոյեմբերի 5-ից 10-ը, Չինաստան, Շանհայ. «Eurasia Expo 2023» միջազգային ցուցահանդես, 2023 թվականի դեկտեմբերի 4-ից 7-ը, Իրան, Թեհրան.	

			Այլ երկրների երկրների հետ գործարար կապերի ընդլայնմանն նպատակով կազմակերպվել են թվով 5 գործարար համաժողովներ. 2023 թվականի փետրվարի 5-ին Երևանում հայ-խորվաթական գործարար համաժողով. 2023 թվականի մայիսի 4-ին Պրագայում Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև առևտրի, ներդրումների և գործարար կապերի զարգացմանը նվիրված գործարար համաժողով. 2023 թվականի օգոստոսի 4-ին Տաշքենդում տեղի է ունեցել ուզբեկա-հայկական գործարար համաժողով, որն անցկացվել է Առևտրատնտեսական հարցերով համագործակցության հայ-ուզբեկական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստի շրջանակում. 2023 թվականի օգոստոսի 25-ին Երևանում հայ-իրանական գործարար համաժողով, որին հայկական և իրանական կողմից մասնակցել է մոտ 200 գործարար. 2023 թվականի Երևանում սեպտեմբերի 14-ին հայ-կորեական տնտեսական համագործակցության համաժողով:	
		5.3 ՀՀ տարածքից արտահանման/ներմուծման նպատակով բեռների՝ լաստանավով, օդանավով և այլ տրանսպորտային միջոցներով տեղափոխման ծախսերի	Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման նպատակով բեռների՝ լաստանավով (լաստանավերով) և (կամ) բեռնարկղերով (կոնտեյներներով) բեռնվող նավով (նավերով) տեղափոխման դեպքում առաջացած	

		փոխհատուցման ծրագրերի մշակում և իրականացում	լրացուցիչ ծախսերի նվազեցմանն ուղղված միջոցառմանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշումը (ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի թիվ 400-Լ որոշում): Ներկայումս շահագրգիռ մարմիններում քննարկման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման նպատակով արագ փչացող բեռի՝ օդային տրանսպորտով տեղափոխման դեպքում առաջացած ծախսերի նվազեցմանն ուղղված միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	
		5.4 Մաքսասակագնային, ոչ սակագնային կարգավորման ոլորտի վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացում	2023թ. ընթացքում, պարենային անվտանգության և տնտեսության կայունացման ապահովման նպատակով, ՀՀ նախաձեռնողական առաջարկությունների հիման վրա, Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել են սակագնային արտոնություններ մի շարք ապրանքատեսակների մասով՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի կողմից ընդունված համապատասխան որոշումների: Մասնավորապես՝ խոշոր եղջերավոր անասունների միս – 11,3 հազ. տոննա, որից՝ 10,0 հազ. տոննա ոչ ավելի ծավալով, մսամթերքի արտադրության համար նախատեսված միսն ազատվել է ներմուծման մաքսատուրքից, խոզի միս - 7,5 հազ. տոննա, ընտանի թռչունների միս – 39,1 հազ տոննա, կաթնային շիճուկ – 1,2 հազ տոննա, էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոց – 8 հազ. հատ և լաքեր/ներկեր - 500,0 տոննա: Նշված ապրանքների մասով սակագնային արտոնության կիրառումն ապահովելու նպատակով	

			ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են հետևյալ որոշումները՝ - ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 1765-Ն որոշումը. - ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի N 353-Ն որոշումը. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 23 թվականի օգոստոսի 22-ի N 121 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1959-Ն որոշումը. 2023 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը /ՀՕ- 383-Ն/, համաձայն որի երկարաձգվել է էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը ավելացված արժեքի հարկից ազատելու մասով գործող օրենսդրական նորմը: Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունը երկարաձգել ևս երկու տարով՝ մինչև 2026 թվականի հունվարի 1-ը: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 22-ի N140 որոշման դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է սակագնային արտոնություն՝ 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի կիրառման պայմանով,	

			ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3208 90 190 9 և 3208 90 910 9 80 000 2 ծածկագրերին դասվող լաքերի և ներկերի, որոնք նախատեսված են սննդի արդյունաբերությունում օգտագործվող պահածոյացված բանկաների մետաղական կափարիչների արտադրության համար՝ 500 տոննայից ոչ ավելի ծավալով:	
		5.5 Ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականության մշակում	Միջոցառման շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես. Եվրասիական տնտեսական միջկառավարական խորհրդի 2021 թվականի օգոստոսի 20-ի №8 Կարգադրության դրույթներին համաձայն՝ արգելվել է Հայաստանի Հանրապետությունից մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների, այդ թվում՝ ցորենի, մեսլինի, գարու, եգիպտացորենի, հնդկացորենի, արևածաղկի սերմի, արևածաղկի ձեթի արտահանումը, ինչի հիման վրա սահմանվել են հետևյալ իրավական կարգավորումները՝ - ընդունվել է ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N1055-Ն որոշումը. - ընդունվել է 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1913-Ն որոշումը: ՀՀ կառավարության կողմից ընդունվել են մի շարք որոշումներ, համաձայն որոնց սահմանափակվել կամ արգելվել է ՀՀ տարածքից որոշ տեսակի ապրանքների արտահանումը կամ ներմուծումը, մասնավորապես՝ - ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 13-ի N1183-Ն որոշմամբ 6 ամիս ժամկետով	

			լիցենզավորման պահանջ է դրվել ՀՀ տարածք ցեմենտի ներմուծման նկատմամբ. - ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 13-ի N1160-Ն որոշմամբ սահմանվել է արտահանման ժամանակավոր արգելք վեց ամիս ժամկետով հայկական ծագում ունեցող խոշոր եղջերավոր անասունների կամ ձիազգի կենդանիների չմշակված մորթերի, ոչխարների չմշակված մորթերի և այլ չմշակված մորթերի արտահանման հանդեպ (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության երկրներ տեղափոխման). - ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 22-ի N994-Ն որոշմամբ սահմանվել է արտահանման /այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ տեղափոխման/ ժամանակավոր արգելք /6 ամիս ժամկետով/ սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների ինչպես նաև գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի վրա՝ ըստ համապատասխան ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերի՝ 2023 թվականի հուլիսի 28-ից մինչև 2024 թվականի հունվարի 28-ը. - ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N1077-Ն որոշմամբ ժամանակավոր /6 ամիս ժամկետով/ արգելք է սահմանվում ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման նկատմամբ. ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 11-ի N2052-Ն որոշմամբ ևս 6 ամիս ժամկետով /մինչև	

			2024 թվականի հուլիսի 1-ը ներառյալ/ երկարաձգվել է ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման արգելքը.	
6.	Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնում և խորացում	6.1 ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացում, ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ապահովում	2023թ. հոկտեմբերի 17-ին Երևանում կայացել է ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի 5-րդ նիստը: Քննարկվել են ՀԸԳՀ Մաս VI-ի (Առևտուր և առևտրին առնչվող հարցեր) ներքո համագործակցության շրջանակներում իրականացվող միջոցառումները և համապատասխան 12 ճանապարհային քարտեզների լրամշակված տարբերակները, ինչպես նաև ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցությանն ուղղված այլ հարցեր: Ընդունվել է «Գործառնական եզրակացություններ» փաստաթուղթը: 2023թ. հոկտեմբերի 13-ին կայացել է ՀԸԳՀ Աշխարհագրական նշումների ենթակոմիտեի 4-րդ նիստը: Քննարկվել են ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ով ամրագրված «Շամպայն» և «Կոնյակ» աշխարհագրական նշումների վերաբերյալ դրույթների իրականացման ուղղությամբ տարվող աշխատանքների ներկա վիճակը, աշխարհագրական նշումների ցանկերի փոփոխությունները և այլ հարցեր: 2023թ. մարտի 14-ին տեղի է ունեցել Տնտեսական համագործակցության և այլ հարակից ոլորտների հարցերով համագործակցության ենթակոմիտեի 3-րդ նիստը:	

			2023թ. մարտի 28-ին Բրյուսելում տեղի է ունեցել Մաքսային հարցերով ենթակոմիտեի 3-րդ նիստը: ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության շրջանակներում ապահովվել է ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի նախորդ՝ 4-րդ նիստի «Գործառնական եզրակացություններ» փաստաթղթում նշված երկկողմ պայմանավորվածությունների կատարումը: 2023թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ շրջանակներում կազմակերպվել է ՀՀ-ԵՄ գործարար համայնքի իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառում: 2023թ. հուլիսի 12-ին կազմակերպել է նաև «Արտահանման խթանման գործիքներ՝ Շվեյցարիայի Համադաշնության կողմից տրամադրվող «Արտոնությունների ընդհանրացված համակարգ» (Swiss GSP) հայկական արտահանողների համար» խորագրով իրազեկման միջոցառումը: ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ շրջանակներում ՀՀ-ից ծագող ապրանքների համար «Կոնյակ» աշխարհագրական նշումի օգտագործման դադարեցման ուղղությամբ տարվա ընթացքում իրականացված տարաբնույթ միջոցառումների և, մասնավորապես, «Backbone» ընկերության հետ իրականացված աշխատանքների և վերջիններիս կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում որպես հայկական կոնյակի անվանման համար նախընտրելի տարբերակ առաջարկվել է օգտագործել «Armenian Brandy» անվանումը, որի	

			մասին պաշտոնական գրությամբ տեղեկացվել է եվրոպական կողմին: Այս համատեքստում ԵՄ կողմի հետ նախատեսվում է քննարկել նոր անվան օգտագործման հետ կապված մի շարք միջոցառումների և գործընթացների իրականացման, այլընտրանքային և նոր շուկաներում դրա առաջխաղացման, ինչպես նաև որակի վերահսկման մեխանիզմների մասով ակնկալվող հետագա աջակցության հարցերը:	
		6.2 ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափով համագործակցության ապահովում, ԵՄ ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացում	ԵՄ Արևելյան Գործընկերության «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության (ԱլԳ) առաջնահերթությունները 2020-ից հետո» շրջանակներում ԵՄ-ից ակնկալվող 2,6 մլրդ եվրոյի չափով օժանդակության՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավասության ներքո գտնվող ուղենիշ 1-ի (աջակցություն կայուն, նորարար և մրցակցային տնտեսությանը. ուղղակի աջակցություն 30,000 ՓՄՁ-ների) շրջանակներում՝ • Մշակվել են Ուղենիշ 1.2 (ՓՄՁ գործունեության և զարգացման խթանում կապիտալում ներդրումներով) և Ուղենիշ 1.3 (Որակի ենթակառուցվածքների բարելավում) ներքո ծրագրային փաթեթները և ներկայացվել ՀՀ կառավարություն: • Վարկային երաշխավորությունների ծրագրի շրջանակներում՝ ԵՄ և Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ մշակվել է վարկային երաշխավորությունների տրամադրման մեխանիզմի կոնցեպտ, որը ներկայացվել է ՀՀ տարածքում	

			գրանցված և գործող ֆինանսական կազմակերպություններին: Նախագիծը ներկայացնելու համար նախնական փուլում ընտրվել է 4 բանկ՝ Ամերիաբանկ, Ինեկոբանկ, Արմսվիսբանկ, Ակբա Բանկ: • ՓՄՁ մրցունակության բարձրացման ծրագրի շրջանակներում ՓՄՁ-երի մրցունակության գնահատման և մոնիթորինգի կայուն համակարգի ստեղծման նպատակով EY (Ernst & Young Global Limited)-ի կողմից մշակվել է մրցունակության կենտրոնի նախագծի մոտեցումն ու շրջանակը, որն իրականացվելու է EBRD-ի կողմից՝ ԵՄ-ի հաստատմամբ: • Արտահանման դիվերսիֆիկացիայի աջակցման ծրագրի շրջանակներում նախատեսվում է փորձագիտական կարողությունների աջակցություն տրամադրել Էկոնոմիկայի նախարարությանը՝ արտահանման ներուժը բարելավելու նպատակով: EBRD-ի կողմից մշակվել և Էկոնոմիկայի նախարարությանն է ներկայացվել արտահանման դիվերսիֆիկացիայի աջակցման ծրագրի տեխնիկական առաջադրանքը, որը հաստատվել է Էկոնոմիկայի նախարարության կողմից: • Կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ծրագիրն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել նախնական համաձայնություն EBRD-ի հետ՝ մշակելու և ներկայացնելու կապիտալի շուկայի աջակցմանն ուղղված ծրագրի տեխնիկական առաջադրանքը:	

			• Որակի ենթակառուցվածքի համակարգի արդիականացման (լաբորատորիաներ և սերտիֆիկացման համակարգեր) ծրագրի շրջանակներում իրականացվել են հանդիպում-քննարկումներ EBRD ներկայացուցչի, ԵՄ համապատասխան գործընկերների հետ: Հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումները՝ ԵՄ կողմից վերջին ժամանակաշրջանում ԵՄ Արևելյան գործընկերության տնտեսական պլատֆորմի և դրա ներքո գործող պանելների նիստեր չեն կազմակերպվել:	
		6.3 ԱՀԿ հետ համագործակցության խորացում և ընդլայնում, ԱՀԿ անդամակցության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարում	• Առևտրային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովման նպատակով, որպես ՀՀ ծանուցումների պատասխանատու մարմին, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 2023թ. ԱՀԿ քարտուղարություն է ներկայացվել ԱՀԿ համաձայնագրերով սահմանված 43 ծանուցումներ, որոնց նախագծերը նախապատրաստվել և համաձայնեցվել են ՀՀ համապատասխան շահագրգիռ մարմինների, իսկ մի մասը՝ նաև ԵՏՀ համապատասխան ստորաբաժանումների հետ: • ԱՀԿ շրջանակներում ստանձնած ՀՀ պարտավորություններին համապատասխանեցնելու նպատակով՝ փորձաքննության են ենթարկվել մի շարք միջազգային և ներպետական փաստաթղթեր, օրենքների նախագծեր: • ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված՝ ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի սահմանային	

			դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության բանակցային գործընթացի ապահովման շրջանակներում հայկական կողմի ներկայացված փաթեթի հիման վրա՝ ԱՀԿ Ապրանքների առևտրի Խորհրդի՝ 2023թ. նոյեմբերի 30-ին կայացած նիստում ընդունվել է որոշում նշված բանակցությունների ժամկետը մինչև 2025թ. հունվարի 2-ը երկարաձգման վերաբերյալ: • Նախաձեռնվել է ԱՀԿ Քարտուղարությունում ընթացող՝ ԱՀԿ Զարգացման նպատակով ներդրումների դյուրացման համաձայնագրի մշակման գործընթացներին ՀՀ ներգրավվածության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքները, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը միացել է վերոնշյալ համաձայնագրի շրջանակներում ընթացող բանակցային գործընթացին: • Իրականացվել են անհրաժեշտ ներպետական ամբողջական աշխատանքները՝ ԱՀԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների ապրանքների առևտրի համաձայնագրին ՀՀ անդամակցության ապահովման ուղղությամբ: Համապատասխան փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմին: • Մասնակցություն է ապահովվել ԵԱՏՄ տարբեր ստորաբաժանումների և փորձագիտական խմբերի կողմից կազմակերպված 37 նիստերին և քննարկումներին՝ ԱՀԿ-ին առնչվող հարցերի քննարկման նպատակով:	

			• Հայաստանի Հանրապետության անունից դիրքորոշումներ են ներկայացվել նաև ԱՀԿ տարբեր ոլորտային կոմիտեների նիստերի և այլ քննարկումների շրջանակներում:	
		6.4 ՀՀ տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակում և իրականացում, քվոտաների համակարգի ներդրում	«Եվրասիական տնտեսական միության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2023 թվականի օգոստոսի 22-ի N 122 որոշման դրույթներին համապատասխան հաստատվել են 2024 թվականի համար Հայաստանի Հանրապետությանը տրամադրված սակագնային քվոտաների ծավալները, որի հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է՝ ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի «2024 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության ծագում ունեցող երկարահատիկ բրնձի նկատմամբ սակագնային քվոտա սահմանելու, ներմուծման լիցենզիայի ընթացակարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 1932-Ն որոշումը: «Եվրասիական տնտեսական միության և Սերբիայի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրի շրջանակներում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի 2023 թվականի օգոստոսի 28-ի N 133 որոշման դրույթներին համապատասխան՝ ՀՀ կառավարության կողմից	

			հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «2024 թվականի ընթացքում Սերբիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերբիական ծագում ունեցող առանձին տեսակի ապրանքների նկատմամբ սակագնային քվոտա սահմանելու, ներմուծման թույլատրելի ծավալի բաշխման ընթացակարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 2110-Ն որոշումը. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից երրորդ երկրներ արտահանվող թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով պատված մետաղների նկատմամբ քվոտա սահմանելու մասին» N 716-Ն որոշումը:	
		6.5 Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ արտոնյալ առևտրային ռեժիմների առևտրա-տնտեսական համագործակցության ընդլայնում	2023թ. ընթացքում շարունակական աշխատանքներ են տարվել ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրների հետ նախատեսվող և կնքված ազատ առևտրի, ինպես նաև առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրերի շրջանակներում տվյալ երկրի շուկա՝ ՀՀ արտադրատեսակների մուտքի ազատականացման ուղղությամբ, մասնավորապես՝ 2023 թվականի դեկտեմբերի 25-ին Սանկտ Պետերբուրգում կայացած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում ստորագրվել է «Եվրասիական	

			տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագիրը: Բանակցությունների հաջորդական փուլերի իրականացում ԵԱՏՄ շրջանակներում՝ երրորդ երկրների հետ թվով 6 ազատ առևտրի համաձայնագրերի ուղղությամբ՝ ԵԱՏՄ-ԻԻՀ, ԵԱՏՄ–Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, ԵԱՏՄ-Արաբական Միացյալ էմիրություններ, ԵԱՏՄ–Ինդոնեզիայի Հանրապետություն, ԵԱՏՄ-Հնդկաստանի Հանրապետություն, ԵԱՏՄ-Իսրայել. ԵԱՏՄ - ԻԻՀ ազատ առևտրի համաձայնագրով կայացել են բանակցությունների թվով վեց փուլ, ԵԱՏՄ - Եգիպտոսի Արաբական Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրով՝ բանակցությունների վեց փուլ, ԵԱՏՄ – Ինդոնեզիայի Հանրապետություն ազատ առևտրի համաձայնագրով՝ բանակցությունների երեք փուլ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մասնակցել է ԵԱՏՄ շրջանակներում Արաբական Միացյալ էմիրությունների, Ինդոնեզիայի, Եգիպտոսի հետ իրականացվող ազատ առևտրի համաձայնագրերի կնքմանն ուղղված համատեղ աշխատանքային խմբերի հանդիպումներին, վերլուծություններին և ուսումնասիրություններին: 2023թ. նոյեմբերի 13-ին կայացել է ԵԱՏՄ – Վիետնամի Սոցիալիստական Հանրապետություն	

			ազատ առևտրի համաձայնագրի շրջանակներում հիմնված համատեղ կոմիտեի հերթական հինգերորդ նիստը: 2023թ. փետրվարի 16-ին կայացել է ԵԱՏՄ - Չինաստան առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրի իրագործման նպատակով հիմնված համատեղ կոմիտեի երրորդ նիստը, որի ընթացքում քննարկվել են ԵԱՏՄ անդամ երկրների և Չինաստանի միջև փոխադարձ առևտրի խոչընդոտների, մաքսային համագործակցության, պետական գնումների, լոգիստիկայի, ոլորտային համագործակցության այլ հարցեր: Հաստատվել է Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների ու Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացման ծրագիրը (Ճանապարհային քարտեզը): 2023թ. դեկտեմբերի 13-15-ին կայացել է Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Ինդոնեզիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի համաձայնագրի կնքման բանակցությունների երրորդ փուլը: 2023թ. դեկտեմբերի 18-19-ին կայացել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի նախագծի բանակցությունների երկրորդ փուլը, որի ընթացքում	

			քննարկվել և մասամբ համաձայնեցվել են Համաձայնագրի նախագծի տեքստերը:	
		6.6 ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև երրորդ երկրների հետ փոխադարձ առևտրում խոչընդոտների և արգելքների բացահայտում և վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում	Միջոցառման շրջանակներում իրականացվում են ինչպես ԵԱՏՄ անդամ պետությունների փոխադարձ առևտրում առկա խոչընդոտների, այնպես էլ երրորդ երկրների հետ առևտրում առկա խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության և Բելառուսի Հանրապետության հակամենաշնորհային կարգավորման ու առևտրի նախարարության միջև համագործակցության ընդլայնման մասին» Հուշագիր: Ստորագրվել է «Եվրասիական վերաապահովագրական ընկերության հիմնադրման մասին» համաձայնագիրը: Հայաստանի Հանրապետության մասնակցության մասնաբաժնի ծավալը սահմանվել է Ընկերության կանոնադրական կապիտալի 3%-ի չափով՝ 450 մլն ՌԴ ռուբլի: Նախատեսվում է ընկերության գլխամասային գրասենյակը հիմնել ք. Երևանում: 2023 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունվել է «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-307-Ն օրենքը: Վերոնշյալ իրավական կարգավորման արդյունքում՝ արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ արտահանելու և (կամ)	

			ներմուծելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած լիազոր մարմնի կողմից լիցենզիաների կամ թույլտվությունների կամ հավաստագրերի տրամադրումը կիրականացվի բացառապես էլեկտրոնային եղանակով, արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան էլեկտրոնային հարթակում հասանելի «Թույլատվական փաստաթղթեր» համակարգի միջոցով: ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2077-Ն որոշմամբ սահմանվել են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի արտադրության պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարման փորձաքննության ակտի տրամադրման կարգն ու վճարի չափը և արդյունաբերական ապրանք արտադրողների կողմից փորձաքննություն անցկացնելու և փորձաքննության ակտ ստանալու համար դիմումի ձևերը:	
		6.7 ՀՀ և այլ երկրների առևտրային հարաբերությունների զարգացման ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում	Միջոցառման շրջանակներում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման և արտերկրյա շուկաներում ապրանքների վաճառքի ծավալներն մեծացնելու աշխատանքների շրջանակներում կազմակերպվել են խորհրդա-տեղեկատվական միջոցառումներ, մասնավորպես.	

			ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2023 թվականի ապրիլին 4-ին ԱՄՆ առևտրի ներկայացուցչի (USTR) Եվրոպայի և Միջին Արևելքի գրասենյակը ներկայացրել են ընդհանրացված նախապատվությունների համակարգի (GSP) միջոցով ԱՄՆ ապրանքների արտահանման վերաբերյալ շնորհանդես, որին մասնակցել է մոտ 160 գործարար: 2023 թվականի ընթացքում գործարարներին պարբերաբար տրամադրվել է ԱՄՆ արտահանում իրականցնելու առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկատվություն: Հայկական արտադրանքի համար նոր շուկաներ մուտքի աշխատանքների շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները. 2023 թվականի ապրիլի 20-ին շվեդական շուկա արտահանմամբ հետաքրքրված հայկական կազմակերպությունների համար Շվեդիայի Առևտրի ազգային խորհուրդի հետ միասին կազմակերպվել է «Opportunities for food ingredients on the Swedish market» խորագրով վեբինարը. Ապահովվել է շուրջ 15 հայկական ընկերությունների մասնակցությունը 2023 թվականի մայիսի 7-ից 10-ը Թեհրանում կայացած «IRAN EXPO 2023» ցուցահանդեսին. 2023 թվականի մայիսի 13-ից 14-ը Թբիլիսիում տեղի ունեցած 2-րդ միջազգային «Metrica fashion show» նորաձևության փառատոնին ապահովվել է Հայաստանը ներկայացնող 4 ապրանքանիշների՝ «Seda manukyan by atex fashion», «Shushani»	

			«Margarita Magakyan» «Themis» մասնակցությունը. 2023 թվականի սեպտեմբերի 9-ից 12-ը Իտալիայի Լևանտեի տոնավաճառում /Fiera di Levante/ իրականացվել է 14 հայկական ընկերությունների արտադրանքի շնորհանդես-ներկայացում. 2023 թվականի սեպտեմբերի 9-ից 17-ը Հունաստանի Սալոնիկ քաղաքի «Helexpo» ցուցահանդեսների կենտրոնում կայացած Թեսալոնիկիի 87-րդ միջազգային տոնավաճառի՝ Հայաստանին ազգային ստենդ-տաղավարում բրոշյուների և տեղեկատվական այլ նյութերի միջոցով իրականացվել են 16 հայկական ընկերությունների արտադրանքի հանրաճանաչման աշխատանքներ. 2023 թվականի հոկտեմբերի 10-13-ը Իրանի Զանջան նահանգի միջազգային ցուցահանդեսների կենտրոնում կայացած «Իրիքս» արտահանման ցուցահանդեսին, իրանական կողմի հետ իրականացրած աշխատանքների արդյունքում մասնակցել են թվով 10 գործարարներ. 2023 թ. հոկտեմբերի 27-ին Թբիլիսիում կայացած Մետաքսի ճանապարհի 4-րդ գործարար համաժողովին 10 հայկական ընկերությունների մասնակցություն. ՀՀ և այլ երկրների առևտրային հարաբերությունների զարգացման ճանապարհային քարտեզով նախանշված աշխատանքների շրջանակներում, ՀՀ և այլ երկրների միջև առևտրային հարաբերությունների զարգացման նպատակով 2023	

			թվականի ընթացքում նախանշված աշխատանքների շրջանակներում իրականացվել են. 2023 թվականի փետրվարի 24-ին Փարիզում Ֆրանսիա-Հայաստան առաջին տնտեսական գագաթնաժողով, որի շրջանակներում հայ և ֆրանսիացի գործարարները հնարավորություն են ունեցել ծանոթանալ միմյանց գործունեությանն ու արտադրանքին, ինչպես նաև հաստատվել են նոր գործարար կապեր: 2023 թվականի հոկտեմբերի 26-ին Լոնդոնում հայ-բրիտանական գործարար համաժողով 2023 թվականի սեպտեմբերի 18-ին Երևանում հայ–էմիրաթական գործարար համաժողով:	
7.	Արդյունաբերության զարգացում՝ ոլորտին ուղղելով 80 մլրդ ֆինանսական միջոցներ Մշակող արդյունաբերություն/ՀՆԱ՝ 15%, Տնտեսական բարդության ցուցանիշը՝ -0.3-ից հասցնել 0.1-ի	7.1 Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների (1. Ոսկերչություն և ադամանդագործություն, 2. Թեթև արդյունաբերություն (սնունդ, տեքստիլ և այլն), 3. Ծանր արդյունաբերություն (լեռնամետալուրգիա, քիմիա), 4. Սարքաշինություն (սարքեր, մեքենաներ, արևային տեխնոլոգիաներ), 5. Դեղագործություն) հայեցակարգի մշակում և իրականացում, գերակա ոլորտների ռազմավարությունների հաստատում	Ընդունվել են՝ ՀՀ կառավարության 13.04.2023թ. «Արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտների հայեցակարգը հաստատելու մասին» N534-Լ որոշումը. ՀՀ կառավարության 26.05.2023թ. «Դեղագործական արդյունաբերության զարգացման հնգամյա ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N811-Լ որոշումը. ՀՀ կառավարության 26.10.2023թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 1867-Ն որոշումը:	

			«Ոսկերչության և ադամանդագործության զարգացման հնգամյա ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» և «Սարքաշինության զարգացման հնգամյա ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը գտնվում են շահագրգիռ մարմինների հետ շրջանառման փուլում:	
		7.2 Մշակող արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների տեխնիկական հագեցվածությունը բարձրացնելու և ժամանակակից սարքավորումների ձեռքբերմանը նպաստելու նպատակով ֆինանսական, տեղեկատվական և մի շարք այլ աջակցության գործիքակազմի ծրագրի ընդունում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից արդյունաբերական ոլորտի կազմակերպություններին պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվում միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսների անցկացման վայրի, ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև նախորդ տարիների ցուցահանդեսների արդյունքների և հնարավորությունների վերաբերյալ: Միաժամանակ, Նախարարության կողմից կազմակերպություններին մշտապես տեղեկատվություն է տրամադրվում գործող աջակցության ծրագրերի վերաբերյալ (2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշման շրջանակներում՝ ներմուծման մաքսատուրքից ազատելու վերաբերյալ, տնտեսության արդիականացման միջոցառում, ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց միջոցառում և այլն):	
		7.3 Արդյունաբերական 3 գոտիների որպես ենթակառուցվածքների և միջավայրի գերազանցության	Ներկայումս շահագրգիռ մարմինների հետ քննարկման փուլում է գտնվում «Արդյունաբերական երեք գոտիների՝ որպես ենթակառուցվածքների և	Ծրագրի մշակման գործընթացում անհրաժեշտ է եղել իրականացնել

		կենտրոնների հիմնման փաստաթղթի մշակում և իրականացում, «Արդյունաբերական 3 գոտիների որպես ենթակառուցվածքների և միջավայրի գերազանցության կենտրոնների հիմնման հայեցակարգի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	միջավայրի գերազանցության կենտրոնների հիմնման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի վերջնական, փոխհամաձայնեցված տարբերակի առկայության դեպքում այն կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:	տարատեսակ քննարկումներ ինչպես ոլորտի ներկայացուցիչների, այնպես էլ շահագրգիռ մարմինների հետ, և վերջնական տարբերակի հանգելու համար անհրաժեշտ է եղել որոշակի ժամանակ:
		7.4 Տնտեսական բարդություն ապահովող արտադրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագրի մշակում և իրականացում, «Տնտեսական բարդություն ապահովող արտա-դրությունների աջակցության կառուցակարգի և գործիքակազմի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստա-տում	2023 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության N 1867-Ն որոշումը:	
		7.5 Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացում, «Թեթև արդյունաբերության և ստեղծագործ ոլորտների զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	• ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 138-Լ որոշմամբ հաստատվել է տեքստիլ արդյունաբերության զարգացման ռազմավարությունը, որի արդյունքում իրականացվում են Հավելված 2-ի գործողությունների ծրագրի միջոցառումների կետերը: Ծրագրի միջոցառումների կետերի կատարման ընթացքի վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ վարչապետի աշխատակազմ: • ՎԶԵԲ-ի հետ համատեղ մշակվել է Տեքստիլ	

			արդյունաբերության զարգացման ծրագրերն իրականացնող Օպերատորի ստեղծման հայեցակարգը, որի արդյունքներով ապրիլին հայտարարվել է գնման հայտը: Գնումների արդյունքում ընտրված խորհրդատվական ընկերության հետ մշակվել է օպերատորի բիզնես գործընթացների և կառուցվածքի նախնական հայեցակարգը: (Գնումների գործընթացը անցկացվել է էկոնոմիկայի նախարարության և ՎԶԵԲ-ի հետ համատեղ մշակված հայեցակարգի հիման վրա): Ընտրված կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր: Ընթանում են քննարկումներ Հայաստանի տեքստիլագործության հիմնադրամ ստեղծելու, կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ:	
8.	Կանաչ և կայուն տնտեսական զարգացում Վերականգնվող էներգիայի մասնաբաժինը	8.1 Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակում և հաստատման դեպքում՝ դրա իրագործում	Մշակվել է Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության նախագիծը, շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների միջև և վերջիններիս կողմից տրամադրված դիտարկումների հիման վրա վերջնականացվել է ռազմավարության նախագիծը և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:	

	էլեկտրաէներգիայի արտադրությունում հասցնել 50%, էլեկտրական շարժիչով մեքենաների մասնաբաժինը հասցնել 10%	8.2 Արևային էներգետիկայի համար տեխնոլոգիաների զարգացում, արտադրության խթանում: Ըստ անհրաժեշտության համապատասխան իրավական ակտերի ընդունում	«Սարքաշինության զարգացման հնգամյա ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» շահագրգիռ մարմիններում քննարկման փուլում գտնվող ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներառում է նշվածը:	Ռազմավարության մշակումը աշխատատար և ժամանակատար գործընթաց է, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացումը ենթադրում է տարատեսակ քննարկումների իրականացում ինչպես ոլորտի ներկայացուցիչների, այնպես էլ շահագրգիռ մարմինների հետ:
		8.4 Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծում, «Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և հաստատում	- 2022 թվականի սեպտեմբերի 9-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ 1503-Լ հրամանով հաստատվել է «Բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման նախադրյալների ստեղծման ճանապարհային քարտեզը»: Շրջանաձև տնտեսությանն առնչվող գործողությունները կոնսոլիդացվել են Կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության նախագծում:	
		8.5 Կանաչ ջրածնի արտադրության զարգացում	ՀՀ-ում կանաչ ջրածնի արտադրության զարգացմանը միտված նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը քննարկվել է Հանրային ներդրումային կոմիտեի 5-րդ նիստի ընթացքում, ինչի արդյունքում որոշվել է ձևավորել «Կանաչ ջրածնի» հիմնահարցերով աշխատանքային խումբ:	

9.	Գյուղատնտեսության զարգացում և արտադրողականության բարձրացում ԳՀԱ՝ 1.4 տրլն դրամ Անմշակ վարելահողերը < 120 հազար հա	9.1 ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության իրականացում	2023 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է շուրջ 948.04 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.3%-ով, այդ թվում՝ բուսաբուծությունը կազմել է 447.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճել է 2.7%-ով, և անասնաբուծությունը՝ 500.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազել է 3.4%-ով: ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ ռազմավարության կատարումն ապահովող 2023 թվականի միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ տեղեկացվում է, որ 9.1 միջոցառման կատարման ընթացքը ներառված է նաև ստորև ներկայացված 9.2-9.12 կետերում	
		9.2 Բուսաբուծության ճյուղի զարգացման խթանում	«ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագրի շրջանակներում 2023 թվականին վարկային բաղադրիչով հաստատվել է 1874.4 հա այգեհիման հայտ, իսկ փոխհատուցման բաղադրիչով կնքվել է 138 պայմանագիր՝ շուրջ 488 հա այգեհիմնման նպատակով. ՀՀ-ում կարտոֆիլի առաջնային սերմնաբուծության զարգացման նպատակով կարտոֆիլի վիրուսազերծ	

			տնկանյութի արտադրության համար ՀՀ Արմավիրի մարզում 2000 քմ մակերեսով ջերմատան կառուցման աշխատանքները ավարտական փուլում են. «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի լաբորատորիայում 2023 թվականին իրականացվել են շուրջ 12.1 հազար տոննա սերմի լաբորատոր փորձարկում, 76%-ը կազմել է տեղական արտադրության սերմը: 2023 թվականին տրամադրվել է թվով 81 հավաստագիր՝ տեղական արտադրության 1971.61 տոննա սերմի համար, որից 1741.0 տոննան կազմել է ցորենի և գարու սերմը: 2023 թվականին փորձագիտական խորհրդին է ներկայացվել օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկում ներառելու համար 10 սորտ և հիբրիդ, որից 7-ը՝ արտոնագրման համար տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրում. Տնկանյութի հավաստագրման համակարգի ներդրման նպատակով «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ում հիմնվել է կենսաքիմիական լաբորատորիայի բաղադրիչներից մեկը, մշակվել են հավաստագրման գործընթացի հրահանգ-ուղեցույցներ, մշակվել և ընդունվել է խաղողի տնկանյութի ազգային ստանդարտը. «ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության	

			2021-2023 թվականների» ծրագրի շրջանակներում 2023 թվականին հաստատվել է 7 հա մակերեսով ծնեբեկի ցանքատարածություն հիմնելու հայտ. Ջերմատնային տնտեսությունների հիմնման նպատակով պետության կողմից իրականացվող աջակցության ծրագրերի շրջանակում շուրջ 9 հա ջերմատնային տնտեսության հիմնման պայմանագրեր են կնքվել. ՀՀ կառավարության 27.01.2022թ. N105-Լ որոշմամբ հաստատված ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում շարունակվում է մատչելի մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրումը գյուղատնտեսութամբ զբաղվող տնտեսավարողներին: Ծրագրի շրջանակում 2023 թվականին ձեռք է բերվել 719 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում 213 միավոր տրակտոր և 5 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 3.1 մլրդ դրամ. ՀՀ կառավարության 24.10.2019թ. N1485-Լ որոշմամբ իրականացվում է Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիրը, որի շրջանակում իրականացվում է ապահովագրավճարի առնվազն 50-60%-ի սուբսիդավորում: Ծրագրի շրջանակում 2023 թվականին ապահովագրվել են ծիրան, խաղող, դեղձ, սալոր, խնձոր, կեռաս, բալ, ձմերուկ, սեխ, կարտոֆիլ, աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ մշակաբույսերը: Ապահովագրվող ռիսկերն են՝ գարնանային ցրտահարությունը, երաշտը,	

			կարկուտը և հրդեհը: 2023 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 10192 ապահովագրական պայմանագիր, իսկ համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 1.8 մլրդ դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 11662 հա: 2023 թվականին տրվել է 3864 ապահովագրական հատուցում՝ շուրջ 2.7 մլրդ դրամ ծավալով:	
		9.3 Անասնաբուծության ճյուղի զարգացման խթանում	ՀՀ-ում 2019-2023թթ. ոչխարաբուծության և այծաբուծության զարգացմանը աջակցության ծրագրի շրջանակում 2023թ. փոխհատուցման բաղադրիչով ձեռք է բերվել 251 գլուխ տոհմային ՄԵԿ, որի փոխհատուցման գումարը կազմել է շուրջ 12.7 մլն ՀՀ դրամ, իսկ վարկային բաղադրիչով ձեռք է բերվել 50 գլուխ տոհմային ՄԵԿ, վարկի գումարը կազմել է շուրջ 12 մլն ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակում վարկային բաղադրիչով հանրապետություն է ներկրվել շուրջ 1132 գլուխ բարձր պտղատվությամբ և մսային հատկանիշներով օժտված՝ դորփեր, բլանշ, ռոմանովյան և այլ ցեղերի տոհմային ոչխարներ: Եվս 1000 գլուխ բլանշ ցեղի տոհմային ոչխարներ ներկրվել է միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Ներկրված կենդանիներից և հանրապետությունում արդեն իսկ առկա տոհմային կենդանիներից ստացվել է շուրջ 78000 մաքրացեղ տոհմային կենդանիներ, ինչը կազմում է հանրապետությունում առկա մանր եղջերավոր	

			կենդանիների ընդհանուր գլխաքանակի (շուրջ 701 հազար գլուխ) 11.1%: ՀՀ-ում 2019-2024թթ. տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակում 2023թ. ձեռք է բերվել 369 գլուխ տոհմային ԽԵԿ: Ծրագրի շրջանակում 2019-2023թթ. հանրապետություն է ներկրվել շուրջ 2093 գլուխ հոլշտին, սիմենթալ, շվից, ջերսեյ և անգուս ցեղերի տոհմային երինջներ, որոնցից ստացվել է շուրջ 8100 գլուխ բարձրարժեք սերունդ: Դրան զուգահեռ հանրապետությունում արդեն իսկ առկա ավելի քան 9500 գլուխ տոհմային կենդանիներից այդ տարիների ընթացքում ստացվել է ևս շուրջ 45000 սերունդ կամ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ հանրապետության տավարի ընդհանուր գլխաքանակից (502 հազար) 53 հազարը կամ 10.6%-ը կկազմեն մաքրացեղ տոհմային կենդանիները: ՀՀ-ում անասնաբուծության ճյուղում խոշոր ներդրումային ծրագրերին աջակցություն տրամադրելու նպատակով 6 կազմակերպությունների հետ կնքվել են պայմանագրեր (թռչնաբուծության, խոզաբուծության և տավարաբուծության ոլորտներում)՝ շուրջ 32 մլրդ ՀՀ դրամի ներդրումներ կատարելու նպատակով. «ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում» ծրագրի շրջանակում 2023 թվականին իրականացվել է 410505 համարակալում. Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց	

			տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագրի շրջնակում 2023 թվականին կառուցվել և շահագործման է հանձնվել 2 անասնաշենք, իսկ 4 անանսնաշենքեր ավարտվել և ստացել են դեռևս ծրագրի առաջին փուլով նախատեսված փոխհատուցման գումարը:	
		9.4 Ագրոպարենային արտադրանքի իրացման և արտահանման խթանում	Էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի ներդրումային խորհրդի կողմից, ՎԶԵԲ-ի և Միացյալ Թագավորության կառավարության աջակցությամբ մշակվում է գյուղմթերքի մթերման և բաշխման կենտրոնների ստեղծման ծրագիրը: Գերմանիայի Դաշնության Բեռլին քաղաքում ստեղծվել է մեկ հավաքական պահեստ և Եվրոպայում հայկական գինիների առցանց վաճառքի հարթակ, որը հասանելի է winesofarmenia.store կայքով: Կառավարության 28.02.2019թ. N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2023թ.-ին հաստատվել է 124 շահառուի 221 հայտ շուրջ 15542.8 մլն դրամ ծավալով, իսկ սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 3816.5 մլն դրամ: Ծրագրի մեկնարկից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը հաստատվել է 584 շահառուի 1121 հայտ 105.1 մլրդ դրամ ծավալով, իսկ	

			սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 11424.4 մլն դրամ: 2023 թվականին մթերվել է շուրջ 86.3 հազար տոննա պտուղբանջարեղեն: Կառավարության կողմից 07.9.2023թ. ընդունվել են «2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները հաստատելու մասին» N 1520-Լ, «2023 թվականի խաղողի ավելցուկային բերքի մթերման գործընթացը կազմակերպելու նպատակով «Հայ-Ալմաստ» ՓԲԸ բյուջետային վարկ տրամադրելու և գնման գործընթացի առանձնահատկությունները սահմանելու մասին» N 1523-Լ և «2023 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարողներին գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 1530-Լ որոշումները, որոնց հիմնական նպատակն է 2023 թվականին արտադրված խաղողի բերքի մթերման գործընթացը կազմակերպելու համար խաղողի վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին աջակցելը: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում խաղողի մթերումներն ընթացել են առանց խոչընդոտների և մթերվել է շուրջ 160.0 հազար տոննա խաղող: ՀՀ ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2023թ. հաստատվել է 119 շահառուի 142 լիզինգի հայտ 6230.5 մլն դրամ ծավալով, որ շրջանակներում	

			ձեռք է բերվել 495 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 3552.5 մլն դրամ: Ծրագրի մեկնարկից մինչև 2023 թվականը հաստատվել է 734 շահառուի 1052 լիզինգի հայտ 42170.9 մլն դրամ ծավալով, որի շրջանակներում ձեռք է բերվել 2731 միավոր սարքավորում, իսկ տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 7353.2 մլն դրամ Կազմակերպվել է՝ - գինու միջազգային մասնագիտացված ցուցահանդեսի մասնակցություն, մասնավորապես՝ 2023թ. փետրվարի 6-10-ը Մոսկվայում կայացած Prodexpo ցուցահանդեսին, որին մեկ միասնական տաղավարով ապահովվել է հայկական 20 գինեգործական ընկերության մասնակցություն: - «Հայաստանի գինիներ» միասնական հովանոցային ապրանքանիշի ներքո ընդգրկվելու նպատակով հայկական գինիների կույր համտես-մրցույթ է անցկացվել սույն թվականի ապրիլի 28-ին և 29-ին. - արտահանման հնարավորությունների ընդլայնման նպատակով B2B ձևաչափով հանդիպում ռուսական Լյուդինգ խոշոր ներմուծող ընկերության և հայկական փոքր ծավալների գինի արտադրող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որի ընթացքում քննարկվել են փոքր արտադրողների արտադրանքի արտահանման հնարավորությունները. - 2023թ. մարտի 19-21-ը ԳԴՀ Դյուսելդորֆ քաղաքում կայացած «ProWein 2023» գինիների և ալկոհոլային խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդեսի	

			մասնակցություն, որին ապահովվել է հայկական գինեգործական 23 ընկերության մասնակցություն՝ ազգային միասնական տաղավարով. - 2023թ. մայիսի 15-17-ը Լոնդոնի Օլիմպիա կենտրոնում կայացած «London Wine Fair 2023» գինու միջազգային ցուցահանդեսին մասնակցություն: Տաղավարում ներկայացվել է հայկական 12 գինեգործական ընկերության արտադրանքը. - Գերմանիայում հիմնադրված և համաշխարհային ճանաչում ունեցող Mundus Vini միջազգային մրցանակաբաշխության մասնակցություն: 2023թ.-ին Mundus Vini հեղինակավոր մրցույթում Հայաստանը վաստակել է 8 մեդալ՝ 3 ոսկի, 5 արծաթ. - Concours Mondial de Bruxelles-ը եվրոպական գինիների համտեսի ամենամեծ մրցույթին մասնակցություն: Հայաստանը ներկայացրել են 27 ընկերության 61 տեսակ գինի: Հայկական գինիները եվրոպական գինիների համտեսի այս մրցույթում նվաճել են 17 մեդալ. - GIZ-ի ֆինանսավորմամբ և Հիմանդրամի աջակցությամբ «Կատապուլտ տաղավար» ստեղծարար արդյունաբերության էքսպոյին մասնակցություն, որը կազմակերպվում է Հայկական բարեգործական ընդհանուր միության «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի կողմից՝ ՀայԱրտ մշակութային կենտրոնի և «ԱՐԷ» կատարողական արվեստի փառատոնի հետ համատեղ ու ֆինանսավորվում է Եվրոպական միության կողից: էքսպոն «Կատապուլտի» ամենամյա հիմնական միջոցառումն է Հայաստանում, որտեղ	

			ցուցադրվել են ցուցանմուշներ և նախագծեր, որոնք ընդգրկում են տեսողական արվեստի, ստեղծագործական տեխնոլոգիաների, դիզայնի, ճարտարապետության, նորաձևության, տպագրության և կատարողական արվեստների ոլորտները. Հիմնադրամը մայիսին հյուրընկալել է գինու ամերիկյան Grape Collective ամսագրի հեղինակ Քրիստոֆեր Բարնեսին և իր թիմին: Ազգային Ժողովի կողմից 2022թ. հոկտեմբերի 26-ին ընդունվել է «Աշխարհագրական նշումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը (ՀՕ-398-Ն, այսուհետ՝ Օրենք), որի կիրարկումն ապահովելու նպատակով 2023թ. հունվարի 19-ին ընդունվել է «ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի N 310-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության N 75-Ն որոշումը. Օրենքով սահմանված կարգով Մտավոր սեփականության գործակալությունում որպես աշխարհագրական նշումով արտադրանք գրանցելու նպատակով USAID-ի աջակցությամբ և միջազգային փորձագետի ներգրավմամբ մշակվել և Էկոնոմիկայի նախարարի 2023թ. նոյեմբերի 27-ի N 2381-Լ հրամանով հաստատվել են «Հայկական մածուն», «Հայկական լավաշ», «Հայկական բաստուրմա» և «Հայկական սուջուխ» աշխարհագրական նշումների տեխնիկական հատկորոշումները:	

			Տեխնիկական հատկորոշումների հիման վրա համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման նպատակով Էկոնոմիկայի նախարարությունում 2023թ. դեկտեմբերի 4-ին կազմակերպվել է քննարկում տվյալ ոլորտներում հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց տրամադրվել են տեխնիկական հատկորոշումները: Տեխնիկական հատկորոշումների հիման վրա համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրումից հետո վերը նշված աշխարհագրական նշումներով ապրանքների գրանցման նպատակով կկազմվեն և Մտավոր սեփականության գործակալություն կներկայացվեն համապատասխան հայտեր: ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) Հայաստանի գործարար միջավայրի բարելավում ծրագրի աջակցությամբ աշխատանքներ են իրականացվել Վայոց ձորի գինիների աշխարհագրական նշումների գրանցման գործընթացն իրականացնելու ուղղությամբ: Վայոց ձորի գինեգործների և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացուցիչների հետ 2023թ. հունիսին կազմակերպվել է աշխատաժողով՝ Վայոց ձորի գինիների տեխնիկական հատկորոշումների մշակման և ամբողջականացման նպատակով	

		9.5 Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026թթ. գործողությունների ծրագրի մշակում	2023թ. հունիսի 29-ի N 1083-Լ որոշմամբ հաստատվել է Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը: Ռազմավարության 2023-2026թթ. գործողությունների ծրագիրը ներառում է պարենային անվտանգության 4 բաղադրիչների (հասանելիություն, մատչելիություն, որակ և անվտանգություն, կայունություն և հարմարվողականություն) մասով 50 միջոցառում:	
		9.6 Սննդամթերքի անվտանգության ապահովում «Սննդամթերքի անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում	ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և ընդունվել են սննդամթերքի անվտանգության ապահովմանն ուղղված հետևյալ իրավական ակտերը՝ «ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 26-ի N 504-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով կարգելվի E128 սննդային հավելման ներմուծումը ՀՀ տարածք, սննդամթերքի արտադրության մեջ օգտագործումը և այդ հավելումը պարունակող ապրանքների վաճառքը՝ բացառելով մարդու առողջությանը սպառնացող վտանգ. «ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 21-ի N 1422-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որի դրույթները արդիականացվել և համապատասխանեցվել են գործող օրենսդրությանը. «Աշխատանքային նոր խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2011թ. հուլիսի 26-ի N 711-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի որոշումը	

			(Աշխատանքային նոր խումբը կապահովի և կիամակարգի սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտների մասնագետների համագործակցությունը). ՀՀ կառավարության 23.03.2023թ. «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2023-2028 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 356-Լ Կառավարության որոշում:	
		9.7 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	ՀՀ ԷՆ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների կողմից բույսերի հիվանդությունների, վնասատուների և մկնանման կրծողների հայտնաբերման նպատակով ՀՀ համայնքների 184940 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում իրականացվել են մոնիթորինգի աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա ՀՀ մարզերի առավել վարակված շուրջ 83000 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների, մորեխների, ծղրիդների, հունիսյան բզեզի և օկնոգինա թրթուրների դեմ պայքարի աշխատանքներ իրականացնելու նպատակով ՀՀ մարզերին անհատույց տրամադրվել են «Բրոմոցիդ-Ֆլյուիդ», «Բրոմեդ» տեսակի մկնասպան և «Տրիումֆ» տեսակի միջատասպան թունանյութեր, մասնավորապես, 2600 հա-ի վրա՝ օկնոգինա, բզեզ և ծղրիդ վնասատուների դեմ՝ 855լ թունանյութի կիրառմամբ, ընդ որում, Արագածոտնի և Կոտայքի մարզերի առավել վարակված 1350 հա-ի վրա քիմիական	

			պայքարի աշխատանքներն իրականացվել են ավիացիոն եղանակով: Մկնանման կրծողների դեմ պայքարն իրականացվել է շուրջ 80000 հեկտար առավել վարակված գյուղատնտեսական հողատեսքերում՝ մոտ 6400լ թունանյութի կիրառմամբ: ՀՀ մարզերում 46349 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի ագրոքիմիական հետազոտությունների իրականացման նպատակով վերցվել են 15449 հատ հողանմուշներ, կատարվել են լաբորատոր փորձաքննություններ՝ հողում մակրո և միկրոտարրերի քանակները որոշելու նպատակով, որոնց արդյունքների հիման վրա կազմվել և ՀՀ մարզերի 85 համայնքներին են հանձնվել գյուղատնտեսական նշանակության հողերի թվով 85 ագրոքիմիական քարտեզներ և պարարտացման կիրառման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրեր:	
		9.8 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում	ՀՀ անասնահակահամաճարակային կայուն վիճակ ապահովելու նպատակով, «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակում ՀՀ բոլոր համայնքներում իրականացվել են անասնահակահամաճարակային կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ: Միջոցառման իրականացման նպատակով, ԷՆ կողմից, գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով, ձեռք են բերվել 1,688,880 մլ և 1,765,762 մլ՝ դաբաղի բազմավալենտ և 3,500,420 մլ SAT-2 դաբաղի տիպի դեմ, 1,003,900 մլ՝ սիբիրախտ, 2,060,000 մլ՝ խշխշան պալար և 2,386,550 մլ հանգուցավոր մաշկաբորբ	

			հիվանդությունների դեմ պատվաստանյութեր և հանձնվել են «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:	
		9.11 Հողային ռեսուրսների նպատա-կային և ջրային ռեսուրսների խնայողական ու արդյունավետ օգտագործում	ՀՀ-ում գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023-2025թթ. ծրագրի շրջանակում կնքվել է 1 պայմանագիր՝ 10-30 հա մակերեսով հողատարածքների միավորման համար: Ծրագիրն իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակը: ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան և Խոյ համայնքի Հայթաղ բնակավայրերում իրականացվել է վարելահողերի և բազմամյա տնկարկների իրավական խնդիրների ամբողջական գույքագրում: Հայթաղ բնակավայրում ձեռք է բերվել 11.4 հա ընդհանուր մակերեսով 39 հողակտոր: Ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել իրավական խնդիրների կարգավորման նպատակով: «ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի	

			արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների» ծրագրի շրջանակներում 2023 թվականին փոխհատուցման և վարկային բաղադրիչներով կնքվել են այգեհիմնման (այգեհիմնման դեպքում պարտադիր է ոռոգման առաջադիմական համակարգի ներդրումը) և ոռոգման արդիական համակարգերի ներդրման շուրջ 3095 հա-ի համար պայմանագրեր:	
		9.12 Աջակցություն գիտակրթական համակարգերին, թվային գյուղատնտեսության զարգացմանը և շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմանը	Ամփոփվել և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել. ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության տեղերը հաստատելու նպատակով՝ տեղեկատվություն նախարարության համակարգում գործող գիտական կազմակերպությունների 2023-2024 և 2024-2025 ուսումնական տարիների ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի հայտերի վերաբերյալ. նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ՀՀ պետական ուսումնական հաստատությունների 2023թ. ընդունելության տեղերը ձևավորելու նպատակով՝ տեղեկատվություն գյուղատնտեսական և հարակից մասնագիտությունների գծով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի վերաբերյալ՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի.	

			պետության իրական պահանջարկի վրա հիմնված գիտական հետազոտական նախագծերի իրականացման մեխանիզմը ներդնելու և դրա ուղղությամբ հետագա աշխատանքները կազմակերպելու նպատակով, կարևորելով պարենային անվտանգության դերը և գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, ներկայացվել է 9 թեմա՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում ընդգրկելու համար. կարծիքներ գիտակրթական ոլորտին առնչվող իրավական ակտերի վերաբերյալ: Շարունակաբար իրականացվել են աշխատանքներ՝ ԷՆ համակարգում գործող գիտական կազմակերպություններին գյուղատնտեսական գիտության և կադրերի պատրաստման բնագավառում միջազգային երկկողմ և բազմակողմ համագործակցությանը մասնակից դարձնելու ուղղությամբ: Մշակվել է Էկոնոմիկայի նախարարի «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում «Պատվաստող (վակցինատոր)՝ գյուղատնտեսական կենդանիների» պատրաստման հնգօրյա և վերահավաստագրման երկօրյա դասընթացների կազմակերպման կարգը հաստատելու և Էկոնոմիկայի նախարարի 2021թ. փետրվարի 5-ի N 103-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2023թ. նոյեմբերի 30-ի N 2421-Լ հրամանը, շրջանառվում է Էկոնոմիկայի նախարարության,	

			«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի միջև պատվաստողների (վակցինատոր) պատրաստման հնգօրյա և վերապատրաստման երկօրյա դասընթացների կազմակերպման վերաբերյալ եռակողմ պայմանագրի նախագիծը: Համալսարանի տարբեր մասնաճյուղերում 2023թ. կառուցվել է 2 ջերմատուն, 1 «Խելացի» անասնաշենք, սննդագիտության 3 լաբորատորիա (պահածոների, կաթի վերամշակման, մսի վերամշակման), հիմնվել է 1 ինտենսիվ այգի (0.5 հա), տեղադրվել է 3 եղանակային կայան, ստեղծվել է «Բի-Օն» կենսատեխնոլոգիական նախատիպային լաբորատորիա (ներառում է 3 լաբորատորիա) և հողի անալիզի 3 լաբորատորիա: Փաստահենք հիմքի վրա քաղաքականության մշակման օժանդակման շրջանակներում ստեղծված agridata.am կայքի հոստինգը տեղափոխվել է Նախարարության սերվերների վրա և դրա հիման վրա գործարկվել է agridata.mineconomy.am կայքը, որն առաջիկայում հասանելի է լինելու Նախարարության գյուղատնտեսության ոլորտի քաղաքականությունը մշակող ստորաբաժանումների համար: Նախարարության կայքին ինտեգրվել է gaia.am կայքը, որը մշակվել է տնտեսությունների կազմակերպման և կառավարման գործընթացում ուղեցուցային հաշվարկները հասանելի դարձնելու և նախնական խորհրդատվության տրամադրման	

			նպատակով՝ օգտագործելով ֆինանսական կանխատեսումների և հաշվարկների 10 գործիք: ՀՀ բոլոր մարզպետների աշխատակազմերին տրամադրվել են յուրաքանչյուր մարզի բնակավայրերի քանակին համապատասխան քանակով (ընդհանուր ՀՀ 919 բնակավայրերի հաշվով) գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերը համառոտ ներկայացնող տեղեկատվական պաստառներ (ընդհանուր 3300 օրինակ)՝ դրանք բնակչության լայն զանգվածների համար հասանելի և տեսանելի վայրերում փակցնելու նպատակով. ՀՀ բոլոր մարզպետների աշխատակազմերին տրամադրվել է 900-ական օրինակ գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության գործող ծրագրերը ներկայացնող գրքույկ. ՀՀ բջջային բաժանորդներին ուղարկվել է 30000 հեռախոսային կարճ հաղորդագրություն (յուրաքանչյուր մարզում՝ 3000 օրինակ, թիրախային լսարան՝ 25 և բարձր տարիքի տղամարդիկ և կանայք)՝ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջի՝ գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի էջի հղումով. Եվս 30000 նույնաբնույթ հաղորդագրություն ուղարկվել է Viber բջջային հավելվածի բաժանորդներին. ՀՀ բոլոր մարզպետների աշխատակազմեր ներկայացվել է տեղեկատվություն ՀՀ-ում դաշտային, պտղահատապտղային և բանջարաբոստանային	

			մշակաբույսերի արդյունավետ գոտիականության վերաբերյալ. Համայնքապետարանների միջոցով տնտեսավարողներին հասցնելու համար ՀՀ բոլոր մարզպետների աշխատակազմերին են տրամադրվել գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի մասին տեղեկատվական թերթիկներ՝ 9000 օրինակ՝ Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման ծրագրի, 5000 օրինակ՝ «ՀՀ տավարաբուծության 2019-2024թթ. զարգացման» ծրագրի, 5000 օրինակ՝ «ՀՀ-ում 2019-2023թթ. ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման աջակցության» ծրագրի, 5000 օրինակ՝ ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի ծրագրի, 3000 օրինակ՝ ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի, 2000 օրինակ՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի, 1500 օրինակ՝ ՀՀ-ում արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024-2026թթ. ծրագրի վերաբերյալ: ՀՀ բոլոր մարզպետների աշխատակազմերին ուղարկվել է կաթիլային ոռոգման եղանակի առանձնահատկությունները և արդյունավետությունը	

			նկարագրող գրքույկի 4250 օրինակ՝ մարզերի գյուղատնտեսության ոլորտի տնտեսավարողներին տրամադրելու համար: Էլեկտրոնային փոստով ՀՀ 237 հումք մթերող կազմակերպությունների ուղարկվել է տեղեկատվություն գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրերի վերաբերյալ: Համալսարանի կողմից 2023թ.-ին իրականացվել են վերապատրաստման դասընթացներ՝ ընդամենը 18 դասընթաց՝ 546 մասնակցի համար: Համալսարանի կողմից իրականացվել են վերապատրաստումներ հետևյալ ուղղություններով՝ Չանախ պանրի պատրաստման տեխնոլոգիա և Ավանդական պանիրների պատրաստման գաղտնիքները (103 մասնակից), Շոկոլադագործություն (8 մասնակից), ԵՏՀ և հեռահար զոնդավորումը կանաչ գյուղատնտեսությունում (38 մասնակից), Սառնարանային պահպանման նախագծման և զարգացման դասընթաց (12 մասնակից), Բուսաբուծական մթերքների վերամշակում՝ պահածոյացման տեխնոլոգիաներ (123 մասնակից), Դեկորատիվ բույսերի ագրոտեխնոլոգիա և լանդշաֆտային դիզայն (18 մասնակից), Տրակտորիստ-մեքենավարների (8 մասնակից), Հացատեսակների և հրուշակեղենի արտադրություն (40 մասնակից),	

			Ձկնաբուծություն (24 մասնակից), Չրագործություն (14 մասնակից), Քրաֆտ գարեջրագործություն (43 մասնակից), Մեղվաբուծության հիմունքներ (12 մասնակից), ԱԹՍ-ների կիրառմամբ գյուղատնտեսական սրսկումների իրականացում (24 մասնակից), «Պտղաբուծություն: Դասավանդման ժամանակակից մեթոդներ» (20 մասնակից), «Գինու զբոսավարների վերապատրաստման» ծրագիր (24 մասնակից), Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» (10 մասնակից):	
10.	Զբոսաշրջության զարգացում Տարեկան 2.5 մլն զբոսաշրջիկի այցելություն, 20 զբոսաշրջային կլաստերների զարգացում 50 պատմամշակութային	10.1 «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և օրենքի ընդունումից բխող մի շարք իրավական ակտերի նախագծի մշակում և իրականացում	«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2023թ. դեկտեմբերի 22-ին: Ներկայումս մշակվում են օրենքով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:	
		10.2 «Հայաստանի զբոսաշրջության 2022-2030 թթ. ռազմավարությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատում և իրագործում	«Զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը և ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ, որտեղից վերադարձվել է համապատասխան եզրակացությամբ: Նախագծում փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո այն կրկին կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	

	օբյեկտների վերականգնում	10.3 Զբոսաշրջային տվյալների հավաքագրում և թվայնացում	2023 թվականի հունվարից՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում ՀՀ սահմանային վեց անցման կետերում («Զվարթնոց», «Շիրակ» օդանավակայաններ, «Այրում», «Բագրատաշեն», «Մեղրի», «Բավրա» անցման կետեր) ՀՀ շահագրգիռ կողմերի հետ համատեղ իրականացվում է զբոսաշրջային այցելությունների վիճակագրական 3-րդ հետազոտությունը: Հետազոտությունը իրականացվում է «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի շրջանակներում հայտարարված «Հայաստանի միջազգային այցելուների ուսումնասիրության իրականացման համար» խորհրդատվական ծառայությունների գնման մրցույթի հաղթող «IZI Metodi, Analisi e Valutazioni economiche S.p.A. (Իտալիա) և ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի (Հայաստան) ՀՁ-ի կողմից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ համագործակցությամբ: Հետազոտությունը կնպաստի զբոսաշրջային այցելությունների աշխարհագրական բաշխվածության, սեռատարիքային կազմի, ճամփորդության կազմակերպման տարբերակների, զբոսաշրջիկների կատարված ծախսերի կառուցվածքի վերաբերյալ հնարավորինս ճշգրիտ տվյալների ստացմանը և ոլորտում որակյալ հետազոտությունների իրականացմանը:	

		10.4 Ներքին զբոսաշրջության զարգացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2022 թվականի սեպտեմբերի 30-ի N 4567-Լ հրամանով հաստատվել է սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայություն մատուցող զբոսաշրջային օպերատորների հաշվառման, էլեկտրոնային համակարգում ընդգրկման, ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում զբոսաշրջային օպերատորների ցանկի հրապարակման և հաշվառված զբոսաշրջային օպերատորներին հաշվառումից հանելու կարգը: Ներքին զբոսաշրջային այցելությունները 2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմել են 1.952.385՝ ապահովելով 2022 թվականի նույն ժամանակահատվածի 1.665.334 այցելությունների նկատմամբ 17,2% աճ: Ներքին զբոսաշրջության զարգացման և Հայաստանի զբոսաշրջային առաջարկի հարստացմանն ուղղված միջոցառման իրականացման նպատակով ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից 2023 թվականին հայտարարված դրամաշնորհի հատկացման մրցույթների շրջանակում հաղթող ճանաչված բիզնես նախաձեռնության առաջարկ ներկայացրած 7 կազմակերպության տրամադրվել է պետական աջակցություն:	

		10.5 Ներգնա զբոսաշրջության զարգացում	ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2022թ. դեկտեմբերի 9-ի N2024-Ա հրամանով հաստատվել է «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2023 թվականի ծրագիրը, որի շրջանակներում ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի կողմից 2023 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները՝ Ապահովվել է Հայաստանի մասնակցությունը 4 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսին. Ապահովվել է համագործակցություն Հայաստան ուղիղ չվերթներ իրականացնող խոշոր 4 ավիաընկերությունների հետ՝ Wizz Air, Air France, Air Arabia, և Air Baltic. Կազմակերպվել են գովազդային արշավներ/ փոխճանաչողական այցեր (road show) թիրախային 3 առանցքային երկրներում՝ Բալթյան երկրներում, Արաբական Միացյալ Էմիրություններում և Իտալիայում. «Հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրում» միջոցառման շրջանակներում հոդվածներ են հրապարակվել հայտնի ամսագրերում և պարբերականներում. «Ճանաչողական այցերի կազմակերպում» միջոցառման շրջանակներում՝ հյուրերն այցելել են Հայաստանի մի շարք զբոսաշրջային վայրեր՝ ծանոթանալով Հայաստանի զբոսաշրջային ներուժին, զբոսաշրջիկներին առաջարկվող տարաբնույթ զբոսաշրջային արդյունքին, հայ մշակույթին ու ավանդույթներին.	

			2023 թվականին 24 հազար և ավել տպաքանակով գովազդատեղեկատվական նյութեր են տպագրվել /«Արմենիա» կատալոգ, «Արմենիա» գրքույկ, Տավուշի մարզը ներկայացնող կատալոգներ, «Armenia The Hidden Track» բրենդով նոթատետր, քարտեզներ/, որոնք տարածվել են տարբեր հանթակներում, միջազգային ցուցահանդեսներում և Զբոսաշրջության կոմիտեի կողմից կազմակերպված այլ միջոցառումներում: 2023 թվականին սոցիալական ցանցերում և այլ թվային հարթակներում հրապարակվել են Հայաստանի մասին գովազդատեղեկատվական նյութեր. Armenia.travel վեբ – կայքի /https://armenia.travel/ սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում, տեքստային բովանդակություն. «Զբոսաշրջության ոլորտին առնչվող միջոցառումների լուսաբանում ու տարածում» միջոցառման շրջանակում պատրաստվել են 25 տեսա հաղորդաշարեր և 1 ռեպորտաժ՝ ներկայացվել են Հայաստանի 6 մարզերին բնորոշ միջոցառումներ, տեղանքներ, իրադարձություններ. Պետական աջակցություն «ՀՀ մարզերում փառատոների կազմակերպում» միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել 16 փառատոների. «Ներքին շուկայում ներքին ցուցահանդեսի կազմակերպում» միջոցառման շրջանակներում 2023թ. մայիսի 27-28-ը Երևան քաղաքի Խաչքարերի	

			պուրակում տեղի է ունեցել «Ճանաչի՛ր Հայաստանը» խորագրով ներքին զբոսաշրջային ցուցահանդեսը. «Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը» միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել 6 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի բնականոն գործունեությանը:	
		10.6 Օտարերկրյա պետությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն	2023թ. մայիսի 31-ից հունիսի 3-ը Բուլղարիայի Սոֆիա քաղաքում կայացել է ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 68-րդ նիստը, որին մասնակցել են ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի նախագահը և նախագահի առաջին տեղակալը: Նիստի շրջանակներում հանդիպում է կայացել ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղարի հետ և քննարկվել է առաջիկայում Հայաստանում ՄԱԿ ԶՀԿ հետ համագործակցությամբ նախատեսվող ներդրումային զբոսաշրջային ֆորումը և հաջորդ տարի Հայաստանում ՄԱԿ ԶՀԿ գինու կոնֆերանսի անցկացման հնարավորությունը: 2023թ. հունիսի 16-ին Պետերբուրգյան տնտեսական համաժողովի շրջանակներում ստորագրվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի և ՌԴ տնտեսական զարգացման նախարարության միջև զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզը: Զբոսաշրջության կոմիտեի հրավերով հունիսի 16-18-ը պաշտոնական այցով Հայաստան են ժամանել	

			Վրաստանի զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի ղեկավարի տեղակալը: Այցի շրջանակներում հունիսի 17-ին կայացել է պատվիրակության այցը քաղաք Դիլիջան՝ մասնակցելու առաջին անգամ Հայաստանում Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ անցկացվող «Միմինո» հայ–վրացական մշակութային-խոհարարական փառատոնին: «Արմվայն» ՍՊԸ-ի, Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի և ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի համագործակցությամբ 2023 թվականի հուլիսի 9-ից 10-ը Սանկտ Պետերբուրգում կայացել է հայկական գինեգործությանը նվիրված ArmWine ցուցահանդեսը: ArmWine-ի շրջանակներում ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն ներկայացրել է էնոգաստրոնոմիկ տուրերի ոլորտում մասնագիտացած հայաստանյան տուրօպերատորներին և «Հայաստան՝ թաքնված ուղի» ֆոտոցուցահանդեսը: Ցուցահանդեսի օրերին կայացել են նաև պանելային քննարկումներ «ԵԱՏՄ գինու շուկա. կանոններ, սահմանափակումներ, հեռանկարներ» խորագրով, ելույթներ և շնորհանդեսներ, հայկական գինու առանձնահատկությունների ներկայացում: Համաձայն ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստի շրջանակներում 2022 թվականի հունիսի 1-ից 3-ը ՀՀ վարչապետի և ՄԱԿ ԶՀԿ գլխավոր քարտուղարի	

			միջև պաշտոնական հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության՝ 2023թ. սեպտեմբերի 6-ից 8-ը ՄԱԿ ԶՀԿ հետ համագործակցությամբ Երևանում անցկացվել է Համաշխարհային զբոսաշրջային ներդրումային ֆորումը: Ֆորումի ընթացքում ելույթով հանդես են եկել ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (UNWTO) գործադիր տնօրենը և ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) ներդրումների և ձեռներեցության բաժնի պատասխանատու ներդրումային և գործընկերային նախաձեռնությունների ղեկավարը: Ֆորումի մասնակիցների թվում էին ՄԱԿ ԶՀԿ ներկայացուցիչները, Մոլդովայի, Բահրեյնի, Ուզբեկստանի, Իրանի զբոսաշրջության լիազոր մարմինների ներկայացուցիչները, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանությունների, մի շարք երկրների զբոսաշրջության և ներդրումային ոլորտների պետական և մասնավոր հատվածի, միջազգային կառույցների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հայաստանի պետական և մասնավոր հատվածների շահագրգիռ ներկայացուցիչներ, լրատվամիջոցներ: 2023թ. հոկտեմբերի 15-20-ը Ուզբեկիստանի. Սամարղանդ քաղաքում կայացել է ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի նիստը: 2023 թվականի նոյեմբերի 24-ին Իսպանիայի Լա Ռիոխա քաղաքում կայացել է ՄԱԿ ԶՀԿ Գինու զբոսաշրջության 7-րդ համաշխարհային համաժողովը, որտեղ Հայաստանը ներկայացել է ի	

			դեմս Զբոսաշրջության կոմիտեի և Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի: Համաժողովի ընթացքում Հայաստանին պաշտոնապես շնորհվել է 2024 թվականին հաջորդ՝ ՄԱԿ ԶՀԿ Գինու զբոսաշրջության 8-րդ համաշխարհային համաժողովը անցկացնելու ԿԱՐԱՍԸ:	
		10.7 Զբոսաշրջային ծառայություն-ների որակի բարելավում	2023թ. հունվարին ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից հայտարարվել է դրամաշնորհի հատկացման մրցույթ զբոսաշրջության ոլորտում ՀՀ մարզերում մարդկային ռեսուրսների զարգացման դասընթացների կազմակերպմանն աջակցելու համար: Դասընթացները իրականացրել են մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունները՝ «ԲԻ ԷՍ ՍԻ» Բիզնեսի աջակցման կենտրոն ՍՊԸ-ի միջոցով ՀՀ Տավուշի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում կազմակերպվել է դասընթաց արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար, «Թրեյնինգս էՅ էՄ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ մարզերում կազմակերպվել է դասընթաց հյուրընկալության ոլորտի աշխատողների համար և «Վիստա փորձագիտական կենտրոն» խորհրդատվական կենտրոնի կողմից ՀՀ Շիրակի և ՀՀ Արագածոտնի մարզերում կազմակերպվել է դասընթաց զբոսաշրջային ծառայություններ մատուցող աշխատողների համար:	

			Յուրաքանչյուր դասընթաց կազմակերպվել է 40 մասնակիցների համար, 2 խմբով՝ յուրաքանչյուր խմբում 20 մասնակից: Անցկացված 3 դասընթացներին ապահովվել է 120 մասնագետի վերապատրաստում: Իրականացված դասընթացները նպաստել են ոլորտի աշխատակիցների գիտելիքների, հմտությունների և կարողությունների զարգացմանը:	
		10.8 Զբոսաշրջային ենթակառուց-վածքների զարգացում, «Զբոսաշրջա-յին գյուղ», «Զբոսաշրջային կենտրոն» հայտարարելու մասին ՀՀ կառա-վարության որոշման նախագծերի հաստատում	Համաշխարհային բանկի և ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» ծրագրի (այսուհետ՝ ՏՏԵԶ Ծրագիր) շրջանակներում 2023թ. իրականացվել են՝ Գյումրու քաղաքային «Բարեկամություն» զբոսայգու վերակառուցման նախապատրաստման աշխատանքներ, Գառնու տաճարի շրջակա տարածքի բարեկարգում. Շինարարության փուլում են գտնվում մի շարք աշխատանքներ, այդ թվում՝ Գյումրի - Հաղթանակի պողոտայի վերականգնում, Գյումրի – մի շարք փողոցների վերականգնում, Մարմաշեն վանական համալիր տանող ճանապարհի վերանորոգում և հարակից տարածքի բարեկարգում, Ջերմուկ – մի շարք փողոցների վերանորոգում և Քարայծ տանող ճեմուղու կառուցում,	

			Ջերմուկ - Ըմպելասրահի ճեմուղիների վերանորոգում, բարեկարգում և կանաչապատում, տաղավարների տեղադրում և տեղեկատվական կենտրոնի կառուցում, Ջերմուկ - Եղնիկի արձանին մոտեցնող ճանապարհի և դիտահրապարակի կառուցում: Զբոսաշրջային 20 կլաստերի, այդ թվում Արենի հանգույցի զարգացում բաղադրիչի ներքո իրականացվում է «Արենի և հարակից գյուղերի ժառանգության հանգույցի վերականգնում» զարգացման հայեցակարգի իրագործման ծրագրի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը դոնոր կազմակերպության՝ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ «Տնտեսական հիմքեր՝ հանուն դիմակայուն Հայաստանի» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրությունը նախատեսվում է ավարտին հասցնել 2024թ. փետրվարին: Նախատեսված 20 զբոսաշրջային կլաստերի ձևավորման համար նախնական գնահատականներով 10 տարվա կտրվածքով (մի շարք ենթափուլերով) անհրաժեշտ է յուրաքանչյուր կլաստերի համար ներգրավել շուրջ 50 մլն. ԱՄՆ դոլար: Ծրագրի 80%-ը նախատեսվում է իրականացնել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի վարկային միջոցների հաշվին, իսկ 20%-ը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Ծրագրի առաջին փուլի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 6 կլաստերի ծրագիր, որոնք արդեն իսկ ընդգրկված են	

			2024-2026թթ Միջնաժամկետ ծախսերի ծրագրում: Սահմանված 6 կլաստերի համար նախատեսվող բյուջեն կազմում է 150 մլն. ԱՄՆ դոլար: ՏՏԵՋ ծրագրի շրջանակներում 2023 թվականի ընթացքում իրականացվել է Զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (ՋԱԿԿ - Destination Management Organization, այսուհետ՝ DMO) մոդելի մշակում՝ իտալական «ARS Progetti SPA»-ի և հայկական «Արփա» բնապահպանական լանդշաֆտ կոնսորցիումի հետ համատեղ:	
11.	Որակի ենթակառուցվածքի համակարգի զարգացում	11.1 Կանոնակարգվող ոլորտներում լաբորատոր կարողությունների զարգացում, մասնավորապես, գործող փորձարկման լաբորատորիաներում որոշ ուղղություններով համապատասխան սարքավորումներով հագեցվածության ապահովում և վերազինում, ՀՀ-ում բացակա լաբորատոր կարողությունների ձևավորում:	Միջոցառման շրջանակներում իրականացվել է բացակա (ներառյալ վերազինման կարիք ունեցող) լաբորատոր դաշտի ուսումնասիրություն, արդյունքում կազմվել է ՀՀ-ում տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի նկատմամբ համապատասխանության գնահատում իրականացնելու իրավասություն ունեցող և այս պահին բացակա հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների (փորձարկման լաբորատորիաների) վերաբերյալ ուղեցույցային տեղեկատվություն: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել թվով 5 սարքավորումներ, վերազինվել է ՀՀ-ում գործող միակ նավթամթերքի փորձարկման լաբորատոիան	

			Ստեղծվել է ծխախոտային և նիկոտին պարունակող արտադրանքի փորձարկման լաբորատորիա:	
		11.2 Արդյունաբերական չափագիտական կարողությունների ձևավորում և զարգացում՝ տրամաչափարկման լաբորատորիաների ձևավորում, գործարկում և զարգացում	Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են. 1. միջազգային ճանաչման ձեռքբերման նպատակով հիմնված թվով 2, այն է՝ ջերմային չափումների և հարակից մեծությունների, զանգվածի և հարակից մեծությունների տրամաչափարկման լաբորա-տորիաների միջազգային հավատարմագրման մարմնի ընտրության աշխատանքներ, ընտրվել է Իտալիայի հավատարմագրման մարմինը, մեկնարկել է միջազգային հավատարմագրման գործընթացի իրականացումը. 2. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից մասնակցության պատրաստակամություն է ներկայացվել 2023-2025 թվականներին ԿՕՕՄԵՏ-ի միջոցով իրականացվելիք էտալոնների գրեթե բոլոր համեմատություններին՝ համապատասխան ուղղություններով. 3. ՍՉԱՄ-ի կողմից իրականացվել են Վրաստանի չափագիտության ազգային մարմնի հետ երկկողմ միջլաբորատոր համեմատություններ. 4.տրամաչափարկման և փորձարկման լաբորատորիաներում և առողջապահության համակարգում ոչ միայն չափման միջոցների չափագիտական սպասարկմամբ, այլև միջլաբորատոր համեմատությունների կազմակերպ-մամբ չափումների միասնականության ապահովման	

			նպատակով ՍՉԱՄ-ն իրականացրել է անհրաժեշտ աշխատանքները ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17043 «Համապատասխանության գնահատում. Որակավորման ստուգման ընդհանուր պահանջներ» ստանդարտի պահանջներին բավարարելու համար և դիմել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ին՝ որպես միջլաբորատոր համեմատություն-ների պրովայդեր հավատարմագրվելու: Հավատարմագրման գործընթացը ավարտվել է. 5. Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով սահմանված և 23.12.2021թ.-ին UNIDO-ի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության միջև կնքված «Աջակցություն Հայաստանի որակի ենթակառուցվածքին» ծրագրի մեկնարկային փաստաթղթով նախատեսված ևս չորս տրամաչափարկման լաբորատորիաների՝ ուժի և հարակից մեծությունների, քիմիական մեծությունների, էլեկտրական մեծությունների, գծային (անկյունագծային) տրամաչափարկման լաբորատորիաների հիմնման համար իրականացվել են հարցումներ հստակեցնելու համար նշված լաբորատորիաների կողմից մատուցվելիք տրամաչափարկման ծառայությունների ճշտությունների մակարդակի կարիքները հայաստանյան շուկայում: Հայաստանում նշյալ լաբորատորիաների ուղղություններով տրամաչափարկման կարիքների և պահանջարկի գնահատման աշխատանքները շարունակվել են 2023 թվականի ընթացքում ևս:	

			Կազմակերպվել են հեռավար հանդիպումներ ՕՉՄԿ և ՉԿՄԲ (OIML, BIPM) պաշտոնատար անձանց հետ Էկոնոմիկայի նախարարության աշխատակիցների մասնակցությամբ՝ նշված կազմակերպություններին Հայաստանի՝ ի դեմս ՍՉԱՄ-ի անդամակցության և CIPM/ԿՉՄԿ-ի չափումների և էտալոնների փոխադարձ ճանաչման համաձայնագրին միանալու հեռանկարները հստակեցնելու նպատակով: Իրականացվել է ՕՉՄԿ և ՉԿՄԲ անդամակցության Ծախսեր-արդյունք վերլուծություն:	
		11.3 Համապատասխանության գնահատման և հավատարմագրման կարողությունների զարգացում՝ թիրախ սահմանելով հավատարմագրման ազգային մարմնի միջազգային ճանաչմանն ուղղված բազմակողմ ճանաչման համաձայնագրերի կնքումը տարածաշրջանային և միջազգային հավատարմագրման կազմակերպությունների հետ (EA, ILAC, IAF):	24.05.2023թ.-ին ընդունվել է «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխու-թյուններ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է եղել Հավատարմագրման ազգային մարմնի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) եվրոպական և միջազգային հավատարմագրման կազմակերպություններին անդամակցության հետ: Իրականացվել են փոփոխություններ հավատարմագրման ոլորտին առնչվող ենթաօրենսդրական ակտերում (ՀՀ կառավարության 2012 թ.-ի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշում, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2012 թ.-ի օգոստոսի 10-ի N 665-Ա հրաման), ԱՐՄՆԱԲ-ի կողմից մշակված հավատարմագրման ընթացակարգում և կառավարման համակարգի փաստաթղթերում: Հավատարմագրման եվրոպական համագործակցության (EA) հետ բազմակողմ ճանաչման համաձայնագրի կնքմանն ուղղված միջոցառումներն իրականացնելու	

			նպատակով «Ստեղծել պայմաններ Հավատարմագրման եվրոպական համագործակցության կողմից Հայաստանի հավատարմագրման համակարգի ճանաչման համար» ԹՎԻՆԻՆԳ (EU funded project, TWINNING TOOL) ծրագրի շրջանակում իրականացվել են մի շարք դասընթացներ, աշխատաժողովներ՝ համաձայն ISO/IEC 17011:2017, ISO/IEC 17065:2012, ISO/IEC 17025:2018 միջազգային ստանդարտների: ԱՐՄՆԱԲ-ի աշխատակիցները մասնակցել են EA-ի կողմից կազմակերպված աշխատաժողովներին և գագաթնաժողովներին՝ փորձի փոխանակման և իրազեկության բարձրացման նպատակով: ԹՎԻՆԻՆԳ ծրագրի շրջանակում ուսումնասիրվել են ԱՐՄՆԱԲ-ում ներդրված բոլոր ընթացակարգերը, կարգերը, որոնց վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների արդյունքում լրամշակվել են դրանք: Գործընկերային գնահատումների ընթացքում իրականացվել են հավատարմագրման մարմնի կողմից իրականացված ուղղիչ գործողությունների ստուգումը, փաստաթղթերի և գրառումների կառավարման վերաբերյալ ընթացակարգերի, ներքին աուդիտների արդյունքների, անհամապատասխանությունների և ուղղիչ գործողությունների, բարելավումների և այլ թեմաների վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունը: 2023 թ.-ին ԱՐՄՆԱԲ-ը միջազգային ստանդարտներին համապատասխան	

			հավատարմագրել և համապատասխան ռեեստրներ են ներառվել՝ - 14 փորձարկման և 1 տրամաչափարկման լաբորատորիա՝ ISO/IEC 17025 ստանդարտին համապատասխան, - 7 արտադրանքի սերտիֆիկացման մարմին՝ ISO/IEC 17065 ստանդարտին համապատասխան, - 6 հսկողություն իրականացնող մարմին, այդ թվում՝ 1-ը ստուգաչափման լաբորատորիա՝ ISO/IEC 17020 ստանդարտին համապատասխան, - 1 ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին՝ ISO/IEC 17024 ստանդարտին համապատասխան, - 2 կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին՝ ISO/IEC 17021-1 ստանդարտին համապատասխան: Հավատարմագրման ենթակա նոր ոլորտների մասով «Հավատարմագրման մասին» օրենքում կատարվել է փոփոխություն՝ համապատասխանության գանահատման մարմինների ցանկում ներառելով նաև որակավորման ստուգում իրականացնողների (PT պրովայդերի) հավատարմագրման սխեման: Այդ նպատակով մշակվել է «PR-7/APT-01 Որակավորման ստուգում իրականացնողների հավատարմագրումը» ընթացակարգը, հայտի և կից փաստաթղթերի ձևաչափերը, որոնք տեղադրվել են ԱՐՄՆԱԲ-ի պաշտոնական կայքում: 2023 թվականին ԱՐՄՆԱԲ-ը գրանցել է PT պրովայդերի հավատարմագրման առաջին հայտը: Հավատարմագրման Եվրոպական Համագործակցու-թյան (EA) հետ բազմակողմ ճանաչման	

			հանաձայնագիր կնքելու նպատակով օրենսդրական և ԱՐՄՆԱԲ-ի կողմից մշակված բոլոր փաստաթղթերը թարգմանվել են անգլերենով և 2023 թ.-ի դեկտեմբերի 8-ին հայտը կից փաստաթղթերով ներկայացրել է EA քարտուղարություն և դեկտեմբերի 22-ին պատասխան գրությամբ հաստատվել է հայտի գրանցումը: Համաշխարհային բանկի «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածք» վարկային ծրագրով նախատեսված ՀՀ էկոնոմիկայի նախարարի և ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի հետ կնքված TPQI-C-3.2.1.2 Պայմանագրի շրջանակում «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթական զարգացման հիմնադրամի կողմից մշակվել է էլեկտրոնային հավատարմագրման գործընթացի (e-accreditation) ավտոմատացված համակարգը, որը այժմ գտնվում է պիլոտային գործարկման փուլում:	
		11.4 ՀՀ-ում գործող տեխնիկական կանոնակարգերի, համապատասխանության գնահատման ընթացակարգերի և ստանդարտների վերանայում, ԵԱՏՄ նոր մշակվող տեխնիկական կանոնակարգերի, համա-պատասխանության գնահատման ընթացակարգերի եւ ստանդարտների մշակմանը մասնակցություն, արտադրանքի անվտանգության	1. ԵԱՏՄ շրջանակներում. ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսությունների կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում (տեխնիկական կանոնակարգման ոլորտին առնչվող) հայկական կողմը դիրքորոշում է ներկայացրել Թվային տեխնիկական կանոնակարգման, ԵԱՏՄ արտադրողների լիազոր ներկայացուցիչներ ներառելու ընթացակարգին առնչվող նախագծերում փոփոխությունների, ինչպես նաև թվով 25 ԵԱՏՄ պարենային և ոչ պարենային արտադրանքի մասով տեխնիկական կանոնակարգերի և/կամ դրանց	

		ապահովման նպատակով նոր տեխնիկական կանոնակարգերի մշակում և համակարգում	կիրարկումն ապահովող ստանդարտների, համապատասխանության գնահատման ընթացակարգերի վերաբերյալ. 2. ՀՀ շրջանակներում. Մշակվել է «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկա փուլում համաձայնեցման է ներկայացվել շահագրգիռ կողմերին: Ամբողջությամբ վերանայվել են և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են հետևյալ իրավական ակտերը. 1. ՀՀ կառավարության 26.10.2023թ. N 1837-Ն որոշում (Քաղաքացիական և ծառայողական զենքի ու դրա փամփուշտների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին), 2. ՀՀ կառավարության 11.05.2023թ. N 692-Ն որոշում (Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին), 3. ՀՀ կառավարության 18.05.2023թ. N 771-Ն որոշում (Ցեմենտներին, պորտլանդցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին), 4. ՀՀ կառավարության 21.04.2023թ. N 556-Ն որոշում, 5. ՀՀ կառավարության 27.04.2023թ. N 597-Ն որոշում (Շինարարական ապակիներին ներկայացվող անվտանգության պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին),	

			6. ՀՀ կառավարության 08.06.2023թ. N 905-Ն որոշում (Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին), 7. ՀՀ կառավարության 20.07.2023թ. N 1200-Ն որոշում (Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին), 8. ՀՀ կառավարության 08.06.2023թ. N 916 որոշում (Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին), 9. ՀՀ կառավարության 16.06.2023թ. N 957-Ն որոշում, 10. ՀՀ կառավարություն 26.10.2023թ. N 1853-Ն որոշում:	
		11.5 Որակի ենթակառուցվածքի համակարգի բաղակացուցիչ ոլորտ-ների՝ բարեփոխման ռազմավարու-թյան մշակում և ՀՀ կառավարության կողմից հաստատում	ԵՄ ֆինանսավորմամբ և Միավորված ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները. 1. Շահագրգիռ կողմերի մասնակցությամբ կազմակերպվել է իրազեկում-սեմինար, որի նպատակն էր առաջնորդել միջազգայնորեն ճանաչված, պահանջարկի վրա հիմնված և կայուն որակի ենթակառուցվածքի համակարգի ազգային ռազմավարության մշակումը.	

			2. Մշակվել և շահագրգիռ կողմերին է ներկայացվել Որակի ենթակառուցվածքի ռազմավարության սահիկաշարը. 3. Հայաստանյան շուկայում գործունեություն ծավալող մոտ 100 կազմակերպություններում տրամաչափարկման ուղղությունները, կիրառվող չափման միջոցների տրամաչափարկման առկա պահանջարկը հստակեցնելու, կարիքների գնահատում իրականացնելու համար կազմակերպություններին ներկայացվել է նախապես մշակված հարցաշար. 4. Եվրոպական փորձագիտական խորհրդատվության տրամադրման գործիքի ներքո չափագիտության ոլորտի փորձագետի կողմից առաջարկներ են ներկայացվել «Չափումների միասնականության մասին» ՀՀ օրենքի արդիականացման մասով. 5.«Աջակցություն Հայաստանում որակի ենթակառուցվածքին» ծրագրի փորձագետի կողմից իրականացված ՀՀ օրենսդրություն-եվրոպական լավագույն փորձ համեմատական վերլուծության հիման վրա ՍՀԱՄ մասնակցությամբ էկոնոմիկայի նախարության կողմից պատրաստվել է «Չափումների միասնականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ. 6.Իրականացվել է որակի ենթակառուցվածքի համակարգային ոլորտների առանձին բաղադրիչների մասով ռազմավարական հավելվածների մշակում, աշխատանքները ավարտական փուլում են, ինչից հետո ամփոփ նախագիծը կդրվի շրջանառության մեջ:	

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԱՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում պատճառները
2.	Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառում ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում	2.4 Ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման գործընթացներին առնչվող վարչարարության թվայնացում	Ուսուցիչների ատեստավորման և վերապատրաստման գործընթացների վարչարարությունը կրճատված է, թվայնացված են հետևյալ գործառույթները՝ 1) կամավոր ատեստավորման դիմումներն ընդունվում են ինքնաշխատ եղանակով, 2)ատեստավորման տարածքային հանձնաժողովներն էլեկտրոնային եղանակով համակարգում և իրականացնում են իրենց աշխատանքները:	
		2.5 Նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության /ՆՄՄԿ/ համակարգում թվային տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների ստեղծում, մեխանիզմների մշակում	Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ ՄԿԿՏՀ) ներդրված է ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններում: ՄԿԿՏՀ-ը վարում են 56 արհեստագործական և 101 միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ:	

3.	Նախադպրոցական կրթության մատչելիության ընդլայնում՝ 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնելով 85 տոկոսի	3.7Նախադպրոցական այլընտրանքային ծախսարդյունավետ մոդելների ներդրում	Ծրագրի իրականացման 3 տարիների ընթացքում նախադպրոցական այլընտրանքային ծախսաարդյունավետ մոդելներ են ներդրվել հանրապետության 13 բնակավայրում: ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ նմանատիպ 25 մոդել 2022-2023 թթ. ներդրվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Ապագան այսօր» ծրագրի շրջանակում: 2023 թվականին Համաշխարհային բանկի «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակում հիմնվել է 51 նախակրթարան:	
4.	Անցում համընդհանուր ներառման՝ հանրապետության բոլոր նախադպրոցական հաստատություններում	4.3 ՀՀ Արարատի, Կոտայքի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Արմավիրի մարզերում անցում համընդհանուր ներառման	ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում անցում է կատարվել համընդհանուր ներառման:	
5.	Ուսուցիչ-դաստիարակների աշխատանքային առաջխաղացման, շարունակական մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմի ներդրում	5.3 Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենների և մանկավարժական աշխատողների վերապատրաստումների մեկնարկ	Հանրապետական մանկավարժահոգեբա-նական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակված «Կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախադպրոցականների գնահատում» և «Կրթության և զարգացման առաձնահատուկ պայմանների կարիք ունեցող նախա-դպրոցականներին մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում» թեմաներով վերապատրաստումներ են մեկնարկել 2023 թվականի նոյեմբերի 1-ից՝ ընդգրկելով համայնքային նախադպրոցական ուսումնական հաստա-տությունների շուրջ 1500 մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստում:	

6.	Համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծում	6.1. Հանրակրթության պետական չափորոշիչների փորձարկման նպատակով Տավուշի մարզի բոլոր դպրոցներում բնագիտական և ՏՀՏ լաբորատորիաների ստեղծում:	Տավուշի մարզի բոլոր դպրոցները հագեցած են բնագիտական և ՏՀՏ լաբորատոր սարքավորումներով:	
		6.6 Սովորողների մոտ մեդիագրագիտության հմտությունների զարգացում:	Տավուշի մարզի դպրոցներում փորձարկման արդյունքում լրամշակվել և հաստատվել են Հասարակագիտական առարկաների առարկայական չափորոշչը և ծրագրերը, մասնավորապես նաև՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքի հիման վրա սովորողների մոտ մեդիագրագիտության մակարդակի բարելավմանը վերաբերող բաղադրիչները:	
		6.8 Հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար ապահովելու շրջանակում հանրակրթական ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակների վերանորոգում և կահավորում, տարածքային մանկավարժական աջակցության կենտրոնների վերազինում:	27 հանրակրթական ուսումնական հաստատությունների ռեսուրս-սենյակները վերանորոգված և կահավորված են, 3 տարածքային մանկավարժական աջակցման կենտրոններ վերանորոգված և ապահովված են անհրաժեշտ գույքով:	
7.	Ուսուցիչների մասնագիտական շարունակական զարգացման և	7.2 Ուսուցչի մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմների ներդրում	Ուսուցիչների մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմների ներդրման գործնթացում մշակվել են մի շարք իրավական ակտեր:	

	աշխատանքային առաջխաղացման տարբերակված քաղաքականություն՝ ելնելով ուսուցիչների տարբեր խմբերի կարիքներից	7.3 Հանրակրթության պետական նոր չափորոշիչներին համապատասխան՝ մանկավարժական կրթության ծրագրերի ամբողջական վերանայում	2023թ. բուհերում ամբողջությամբ վերանայվել են մանկավարժական կրթության ծրագրերը՝ դրանք համապատասխանեցնելով Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներին, այդ թվում՝ վերջնարդյունքներին:	
8.	Կառուցել, հիմնանորոգել և վերանորոգել առնվազն 300 հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ապահովել դրանց ամբողջական հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով	8.4 Ցանկում ընդգրկված հաստատություններում շինարարական աշխատանքների իրականացում և անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում	2023թ. կառուցվել, հիմնանորոգվել և վերանորոգվել է 32 դպրոց: Շինարարության փուլում է գտնվում 39 դպրոց: Նախագծանախահաշվարկային փուլում է գտնվում 21 դպրոց: Կառուցվել, հիմնանորոգվել և գույքով ապահովել է 24 մարզադահլիճ:	
10.	ՀՀ բոլոր մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտներին ապահովում դպրոցական սննդով	10.3 ՀՀ Կոտայքի մարզի հանրակրթական դպրոցների ընդգրկում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում	ՀՀ բոլոր մարզերի դպրոցներն ընդգրկվել են «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում, այն դարձել է ազգային ծրագիր:	
		10.4 Վերապատրաստումների իրականացում՝ սննդի տրամադրման ծրագիրը պատշաճ իրականացնելու համար	«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրում ՀՀ բոլոր մարզերի դպրոցների ընդգրկմանը զուգահեռ ամբողջությամբ իրականացվել են վերապատրաստումները:	

11.	Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացում	11.1 «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն /ՆՄՄԿ/ իրականացնող ուսումնական հաստատությունների վերակազմակերպում	Վերակազմակերպվել է թվով 5 ՆՄՄԿ հաստատություն:	
12.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացում և դրանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնում	12.1 «ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում կառավարման «պետություն–մասնավոր» համագործակցության մոդելների փորձարկում և ներդրում	- «ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի վերակազմավորելու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. հուլիսի 14-ի N 1086-Ա որոշմամբ ստեղծվել է նշված հաստատությունը, որն արդեն ծավալում է բնականոն գործունեություն: -Ներկայումս «Ֆրանսիայում հայկական հիմնադրամի» հետ համատեղ քննարկվում է «պետություն–մասնավոր» համագործակցության մոդելով Չարենցավանի պետական քոլեջի հենքի վրա ստեղծել հաստատություն:	

13.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի զբաղունակության բարելավում	13.2 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում փորձարարական կարգով աշխատանքի վրա հիմնված ուսուցման և դուալ ուսուցման համակարգի ներդրում	Գերմանական միջազգային համագործակ-ցության ընկերության հետ (GIZ) համագործակցության շրջանակներում դեռևս 2017 թվականից մեկնարկել է Հայաստանում դուալ ուսուցման համակարգի փորձարարական ներդրման գործընթացը:	
14.	ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացում	14.1 ՆՄՄԿ իրականացնող հաստատությունների վարչական, կառավարման խորհուրդների անդամների, տարբեր աշխատանքային խմբերում ներգրավված ճյուղային և ոլորտային միությունների ներկայացուցիչների, մանկավարժական անձնակազմի վերապատրաստում	Իրականացվել է թվով 1101 նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատությունների ղեկավարների, մանկավարժների, փորձագետների և աշխատողների վերապատրաստում:	
		14.2 «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի ատեստավորման, վերապատրաստման կարգերը հաստատելու մասին» ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	Մշակվել է և ներկայացվել է շահագրգիռ կողմերին և հանրային քննարկման /e-draft.am/ ՀՀ ԿԳՄՍ նախարարի համապատասխան հրամանի նախագիծը: 2024 թ. փետրվարի 7-ին ընդունվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, դրանց գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգը հաստատելու մասին» N 07-Ն հրամանը:	2024թ. փետրվարի 7-ին ընդունվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողովների ձևավորման, դրանց գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական

				աշխատողների վերա-պատրաստման և ատեստավորման կարգը հաստատելու մասին» 07-Ն հրամանը:
15.	ՆՄՄԿ գրավչության, մատչելիության, բարձրացում, ներառականության ապահովում	15.2 Նախնական Մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող թվով 8 հաստատությունների վերա-կառուցում, վերանորոգում, բարեկարգում	Ընթացքի մեջ են թվով 7 ուսումնական հաս-տատությունների շենքային պայմանների բա-րելավման՝ վերանորոգման և կառուցման աշխա-տանքները, որից 1-ը՝ կառուցում, 1-ը՝ վերակառուցում, 1-ը՝ հիմնանորոգում, 4-ը՝ մասնակի նորոգում: Այլ երկու ուսումնական հաստատությունները ավարտվել են և գտնվում են վերջնական փաստաթղթերի հանձնման-ընդունման՝ ավարտական ակտի կնքման փուլում: 2 ուս. հաստատություն գտնվում է ՇՄԱԳ փորձաքննության և 2 ուս.հաստատություն նախա-հաշվային փաստաթղթերի լրամշակման փուլում:	
		15.4«Գյուղատնտեսական ուղղվածու-թյան ՆՄՄԿ հաստատությունների ստեղծում	1. ՀՀ կառավարության 14.08.2022թ. N 1086-Ա որոշմամբ վերակազմավորման միջոցով ստեղծվել է «Տավուշի Պատրիկ Տէվեճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամը, որը սահմանված կարգով գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2022թ. սեպտեմբերի 16-ին: Համագործակցության շրջանակներում հիմնադրամում ներդրվել են նոր մասնագիտություններ գյուղատնտեսության ոլորտի, ինչպես նաև իրականացվել են վերանորոգման աշխատանքներ և հատկացվել է նյութատեխնիկական բազա: 2. ՀՀ կառավարության 24.08.2023թ. N N 1432-Ա որոշմամբ վերակազմավորման միջոցով ստեղծվել է	

			«Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ, որտեղ իրականացվում է գյուղատնտեսական ոլորտի հետևյալ մասնագիտությունները. 1. Գյուղատնտեսագիտություն, 2. Խմորման արտադրանքի տեխնոլոգիա և գինեգործություն, 3. Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա, 4. Գյուղացիական/ֆերմերային/ տնտեսության կազմակերպում, 5. Կաթիլային ոռոգման համակարգերի մոնտաժում և շահագործում:	
18.	Տարածաշրջանային լեզուներով կրթության ապահովում	18.2. Համապատասխան ուսումնա-կան տարիներին 2 կրթական ծրագրով մինչև 8 անվճար տեղերի հատկացում» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ՀՀ կառավարության 16.03.2023թ. N 350-Ն որոշմամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություն-ների 2023/2024 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով «Ադրբեջա-նագիտություն» և «Վրացագիտություն» կրթական ծրագրերին հատկացվել են համապատասխանաբար 4-ական ընդունելության տեղեր: ՀՀ կառավարության 16.03.2023 թ. N 352-Ն որոշմամբ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական աստիճանում «Ադրբեջանագիտություն» կրթական ծրագրին	

			հատկացվել է 5 ավճար տեղ: Նույն մոտեցումը կկիրառվի նաև 2024/2025 ուս. տարվա համար:	
19.	Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ ուղղելով դեպի ուսումնառության վերջնարդյունքներ՝ որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխան	19.1 Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) մշակում և հաստատում ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով	2022թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) պահանջներին համապատասխան 21 որակավորումների ոլորտային շրջանակներ (ՈՈՇ), ինչն արդեն իսկ կազմում է 2025 թվականի համար նախատեսած ցուցանիշի կեսը: Ներկայումս կարիք է առաջացել գործընթացը ունիֆիկացնելու, մասնագի-տական հանձնաժողովների ձևավորման սկզբունքները ճշտելու և բուհերում կրթական ծրագրերը ՈՈՇ-ներին համապատասխանեցնելու գործընթացի մոնիթորինգի մեխանիզմները հստա-կեցնելու, ինչպես նաև բուհական կրթության մեջ հետազոտական բաղադրիչի մեծացմանն ուղղված պետական քաղաքականության հետ համադրման ուղղությամբ:	
		19.2 Կրթական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի վերանայում՝ որակավորումների ոլորտային շրջանակներից բխող կրթական վերջնարդյունքների հիմքով	2022 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատած «Մաթեմատիկա», «Քիմիա», «Սերվիս», «Աշխարհագրություն», «Երկրաբանություն», և «Փիլիսոփայություն» որա-կավորումների ոլորտային շրջանակի բնութագրերի հիման վրա 2023-2024 ուսումնական տարվա մեկնարկին վերանայվել են Երևանի պետական համալսարանի համապատասխան որակավորումներ շնորհող «Մաթեմատիկա», «Մաթեմատիկա և կիրառություններ», «Քիմիա», «Դեղագործական քիմիա», «Սննդի անվտանգություն», «Նյութագիտություն», «Աշխարհագրություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ»,	

			«Երկրաբանություն», «Սերվիս», «Ջրաօդերևութաբանություն», «Հասարակական աշխարհագրություն», «Երկրաֆիզիկա, ջրաերկրաբանություն, ճարտարագիտական երկրաբանություն», «Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն և հետախուզում», «Փիլիսոփայություն» կրթական ծրագրերը՝ սահմանելով ուսումնառության վերջնարդյունքները որակավորման ոլորտային շրջանակներին համապատասխան: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կողմից իրականացվող «Սերվիս» բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերը ևս համադրելի են հաստատված որակավորումների ոլորտային շրջանակներից բխող ակնկալվող վերջնարդյունքներին: Բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից շարունակվում են ուսումնառության վերջնարդյունքներին միտված կրթական ծրագրերի լրամշակման աշխատանքները՝ հիմք ընդունելով հաստատված ՈՈՇ-ները՝ հաշվի առնելով նաև ոլորտի բարեփոխումներն ու նախանշված թիրախները, աշխատաշուկայի պահանջները: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:	
20.	Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակում	20.1«Ակադեմիական քաղաքի հիմնադրամի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Ակադեմիական քաղաքի հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման նպատակով՝ ՀՀ վարչապետի 21.04.2023թ. N 585-Ա որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը: ՀՀ կառավարության 19.10.2023թ. N 1802-Լ որոշմամբ հաստատվել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը:	

21.	Բարձրագույն կրթության շարունակական բարելավում, բարձրագույն կրթության մեջ հետազոտական բաղադրիչի շարունակական մեծացում	21.2 Բուհերում հետազոտություններ իրականացնելու համար համապատասխան միջավայրի բարելավմանն ուղղված համագործակցության հուշագրերի կնքում	Բուհերում հետազոտություններ իրականաց-նելու համար համապատասխան միջավայրի բարելավմանն ուղղված գիտահետազոտական կազմակերպութունների հետ բուհերի կողմից իրենց գիտական հետաքրքրությունների շրջանակներին ու համատեղ գիտական նախագծերի իրականացման թեմատիկ ուղղություններին համապատասխան արդեն իսկ կնքված համագործակցության հուշագրերի կողքին 2023 թ. կնքվել են շուրջ 30 նոր հուշագրեր:	
24.	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) անդամակցությամբ պայմանավորված բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներ	24.1 ՀՀ ներկայացուցիչների մասնակցություն Բոլոնիայի հետամուտ խմբի և աշխատանքային խմբերի հանդիպումներին	ԵԲԿՏ-ի բարեփոխումների իրականացման նպատակով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված Բոլոնիայի գործընթացի հետամուտ և աշխատանքային խմբերի՝ ՀՀ ներկայացուցիչներն ապահովել են վերոնշյալ գործընթացով պայմանավորված աշխատանքային հանդիպումներին մասնակցությունը: Աշխատանքային հանդիպումների արդյունքները ներկայացվել են ՀՀ բուհերին՝ Բոլոնիայի գործընթացի շրջանակներում նախարարական համաժողով-ների ընթացքում ստորագրված փաստաթղթերից բխող բարեփոխումներին միտված գործողություններն իրականացնելու համար: Ըստ պլանավորված գործողություն-ների՝ 2023 թ. առաջին կիսամյակում կայացել է Բոլոնիայի գործընթացի հետամուտ և աշխատանքային խմբերի 9 աշխատանքային հանդիպումներ:	
		24.2 ՀՀ բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի հավելվածի 8-րդ բաժնի	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թ. հուլիսի 17-ի № 94-Ն հրամանով հաստատվել է դիպլոմի հավելվածի 8-րդ վերանայված բաժինը:	

		/կրթական համակարգի նկարագրի/ վերանայում: ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում		
27.	Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում	27.1 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում ու համատեղ օգտագործ-ման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծում	Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու, ենթակառուց-վածքների զարգացվածության, ինչպես նաև մրցունակ գիտական հետազոտություններ իրականացնելու նպատակով՝ 2022 թվականի դեկտեմբերին հայտարարված Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավո-րումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթի արդյունքները ամփոփվել են 2023 թ. մայիս ամսին, համաձայն որի՝ 25 պետական գիտական կազմակերպություններ և բուհեր սարքավորումներով վերազինելու համար Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե միջոցով ձեռք կբերեն 54 սարք/սարքավորում, որոնց նախահաշվային ընդհանուր գումարը կկազմի 4 մլրդ. 221 մլն. 188 հազ. ՀՀ դրամ: Վերոնշյալ մրցույթը շարունակական է, և այդ նպատակի համար 2023 թ. հայտարարվել է նոր մրցույթ, որի արդյունքներով 2024թ. 18 պետական գիտական կազմակերպություններ և բուհեր ձեռք կբերեն 41 սարք/սարքավորումներ, որոնց նախահաշվային ընդհանուր գումարը կկազմի 2 միլիարդ 852 միլիոն 494 հազար ՀՀ դրամ:	

		27.2 Գիտական կենտրոնների վերանորոգում		ՀՀ վարչապետի 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1841-Ա որոշման համաձայն «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականաց-ման շրջանակներում ՀՀ-ում գործող պետական բուհերի և պետական գիտական կազմակերպությունների մի մասը նախատեսվում է ֆիզիկապես տեղափոխել ակադեմիական քաղաքին հատկացված տարածքներ: Մնացած մասը տեղա-փոխման ենթակա չեն լինի և միավորվելով՝ ըստ անհրա-ժեշտության կվերանորոգվեն «Գիտական կենտրոնների վերանորոգում» միջոցառման շրջանակներում:
		27.3 Հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրերի իրականացում 2023-2026թթ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ		ՀՀ ԳԱԱ մի շարք կազ-մակերպություններում սկսվել է (Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության և Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբ-լեմների ինստիտուտներ, Մոլեկուլային կենսաբա-նության և Հ.Բունիաթյանի

				անվան կենսաքիմիայի ինստիտուտներ) միավորման գործընթաց:
		27.6 Գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի կնքում	Միջազգային գործընկերության աշխարհագրության ընդլայնման, ինչպես նաև համագործակցային կապերի հաստատման նպատակով գիտական և գիտատեխնիկական բնագավառում կնքվել են 1 միջպետական և 7 միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրեր:	
28.	Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում	28.1 Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականացում	2023թ. մայիսին կազմակերպվել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2023» մրցույթ, որն անցկացվում է երեք ենթածրագրերով՝ 12, 24 և 36 ամիս տևողությամբ: Մրցույթի արդյունքներով՝ արտերկրի լավագույն ասպիրանտական կրթության կազմակերպման նպատակով 2023 թվականի սեպտեմբերից ֆինանսավորման են երաշխավորվել 42 ասպիրանտների և հայցորդների հետազոտական ծրագրեր 12-36 ամիս տևողությամբ, որոնք հնարավորություն կունենան մինչև ասպիրանտական կրթության ավարտը ստանալ հավելյալ ֆինանսավորում՝ որոշակի որակական չափանիշներ հաղթահարելու պայմաններով:	Ասպիրանտների և երի-տասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագրի շրջանակներում առկա է գիտական կազմակեր-պություններում ասպի-րանտական ուսուցում անցած 21 ասպիրանտ/հայցորդ և ֆի-նանսավորման երաշ-խավորված 42 ասպի-րանտներ ու հայցորդ:
		28.2 Հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացում		2022թ. նոյեմբերին կազ-մակերպվել է Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրա-գրերի հայտերի ընտրության

				մրցույթ, որի արդյունքում (երկու փուլ) 2023 թվականի ապրիլից առաջին փուլում ներկայացված 8 հայտերից ֆինանսավորման է երաշխավորվել 5 ծրագիր, իսկ երկրորդ փուլում՝ ներկայացված 7 հայտերից 5 ծրագիր: Ծրագրերի վերապատրաստման տևողությունը 3-12 ամիս է: 2023 թվականին միջոցառման շրջանակներում կազմակերպված մրցույթներին ներկայացվել է ընդամենը 15 հայտ, որից ֆինանսավորման են երաշխավորվել 10 (5+5) հետազոտական ծրագրեր:
		28.3 Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերի իրականացում:		2023թ. կազմակերպվել է Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ, որի արդյունքում առաջին փուլով ներկայացված 7 հայտերից ֆինանսավորման են երաշխավորվել 5 ծրագրեր,

				իսկ երկրորդ փուլով՝ 6 հայտերից մեկ ծրագիր: Վերապատրաստման ծրագրերը կֆինանսավորվեն 2-12 ամիս տևողությամբ: 2023 թվականին միջոցառման շրջանակներում կազմակերպված մրցույթներին ներկայացվել է ընդամենը 12 հայտ, որից ֆինանսավորման են երաշխավորվել 6 ծրագրեր:
29.	Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում	29.1 Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացում	Իրականացվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացը՝ համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-2025 թթ. բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի:	
		29.4 Վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծում	Տարվա ընթացքում ամփոփվել են թվով 6 մրցույթ և ներկայացված հայտերից ֆինանսավորման են երաշխավորվել 34 թեմաներ: 2023 թվականին առկա են արտերկրի գիտնականների ղեկավարությամբ 21 գիտական ստորաբաժանում և ՀՀ վերադարձած 12	

			գիտնականներ, որոնցից շուրջ 22-ը բացի գիտական ժամանակակից հետազոտություններից իրականացնում են նաև բարձր տեխնոլոգիական ոլորտում ստեղծագործական աշխատանքի ընդունակ կադրերի պատրաստում:	
		29.5 Գիտության ոլորտի կառավարման միասնական էլեկտրոնային հարթակի ներդրում	2022թ. սկսել է գործել առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում՝ անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն, արդյունավետության մշտադիտարկման համար կայք: Կայքի միջոցով ընդունվել են գիտական կազմակերպությունների 2021 թվականի տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև 2023 թվականի պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերի հայտերը: Պետական բյուջեից ֆինանսավորվող յուրաքանչյուր գիտական կազմակերպություն ունի անհատական էջ, որտեղ լրացվում են գիտական և վարչական կառուցվածքի և աշխատակիցների վերաբերյալ տվյալները:	:
30.	Ապահովել Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման և կոչումների շնորհման արդյունավետ համակարգ	30.4 «ՀՀ գիտական աստիճանա-շնորհման կանոնակարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում		ԲՈԿ-ի կողմից Նախագիծը մշակվել և սահմանված կարգով դրվել է շրջանա-ռության մեջ: Հաշվի առնելով, որ Նախագծը հիմնված չէր բարձրագույն կրթության և գիտության բնագավառում պետական միասնական կառավարման տրամաբանության վրա,

				անհրաժեշտություն է առաջացել վերանայել այն:
31	Գրագողության դեմ պայքարի արդյունավե-տության բարձրացում	31.1 Գրագողության դեմ պայքարի համակարգչային ծրագրի նոր ֆունկցիոնալությամբ համալրում	ՀՀ գիտական աստիճանաշնորհման գործընթացում գրագողության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով Բարձրագույն որակավորման կոմիտեն ներդրել է նոր համակարգչային ծրագիր, որը համալրված է գրագողության դեպքերի բացահայտման ավելի արդյունավետ ֆունկցիոնալությամբ՝ ներառյալ համացանցային բաց հարթակներում տեղադրված նյութերի հետ հնարավոր համընկնումների ստուգմամբ: Համակարգչային ծրագրի գործունեությունն ապահովելու համար Բարձրագույն որակավորման կոմիտեի բյուջետային միջոցներով ձեռք է բերվել սերվեր:	
32.	Մշակութային ժառանգության բնագավառի օրենսդրության կատարելագործում	32.1«Թանգարանների և ՀՀ թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	ՀՀ կառավարությունը 2023 թվականի նոյեմբերի 17-ի N 1984-Ա որոշմամբ հավանություն է տվել «Թանգարանների մասին» օրենքի նախագծին: Օրենքի նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային Ժողով:	
33.	Հայ մշակույթի հանրահռչակում, հանրային լայն մասնակցության ապահովում մշակութային կյանքին	33.1 Թանգարաններում և գրադարաններում կրթական ծրագրերի իրականացում	ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող թանգարաններում՝ ներառյալ մասնաճյուղերում, իրականացվել է 1459 կրթական ծրագիր, որոնց մասնակցել են տարբեր տարիքային և սոցիալական խմբերի, այդ թվում սահմանափակ կարողություններով շահառուներ: Ընդհանուր մասնակիցների թիվը կազմել է 30606 մասնակից, որից՝ 605-ը սահմանափակ կարողություններով շահառուներ:	

			Նախարարության ենթակայության 12 գրադարաններում իրականացվել են 115 կրթական ծրագիր, որն ունեցել է 5239 մասնակից, որից՝ 96-ը՝ սահմանափակ կարողություններով անձիք:	
		33.2 Հուշարձանների վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	Իրականացվել են • 44 կրթական ծրագրեր, • 14 տեղեկատվական արշավ, • 12 արտաքին գովազդի հարթակ, • 4 գիտաժողով	
		33.3 Հայաստանում միջազգային և հանրապետական փառատոների և մրցույթների, ստեղծագործական նախագծերի, ցուցահանդեսների իրականացում (այդ թվում՝ Դաշտադեմի ամրոցում «Զարկ ֆեստ» (Յարխուշտա), ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ փառատոների իրականացում)	Տարվա ընթացքում իրականացվել են. - Կերպարվեստի 1 ծրագիր և 1 մրցույթ - 10 միջազգային երաժշտական մրցույթ-փառատոն - Հուլիսի 21-ին Արագածոտնի մարզի Դաշտադեմի/Քաղենիի ամրոցում իրականացվել է Զարկ-ֆեստ (Յարխուշտա) փառատոնը - Թատերարվեստի 4 միջոցառում և 5 միջազգային կինոփառատոն - 40 ստեղծագործական նախագծեր:	
		33.4 Արվեստի քննադատների ինստիտուտի ակտիվացում	Թատերակետեր ծրագրի շրջանակներում ֆեյսբուքյան և այլ հարթակներում պարբերաբար հրապարակվել են թատերական գրախոսականներ: Երաժշտարվեստի ոլորտում նույնպես պարբերաբար հրապարակվել են վերլուծական հոդվածներ: Արվեստի քննադատները մշատպես ներկա են գտնվում թատերական և երաժշտական փառատոներին, ներկայացումներին, համերգներին և ցուցահանդեսներին:	
		33.5 Համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության	ՀՀ 10 մարզերում և համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացման	

		իրազեկման և կրթամշակութային ծրագրերի իրականացում	նպատակով իրականացվել է 8 ծրագիր: Իրականացվել է Վրաստանի Նինոծմինդայի շրջանի 8 համայնքների ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրում, որի միջոցով մոռացումից կփրկվի տարածքի հայկական մշակութային ժառանգությունը, կապահովվի ոչ միայն լայն հասարակության, այլև երիտասարդության շրջանում դրա իրազեկման, ճանաչելիության բարձրացման ու կենսունակության խթանումը:	
		33.6 Դպրոցականների համար բաժանորդային ծրագրի իրականացում	Ծրագրի շրջանակներում այցելություններ են գրանցվել՝ -Թանգարաններ՝ 118143 այցելու, որից՝ 113811 աշակերտ, 4332 ուսուցիչ, -Թատրոն՝ 102577 այցելու, որից՝ 101332 աշակերտ, 1245 ուսուցիչ, Համերգային կազմակերպություններ՝ 9169 այցելու, որից՝ 9078 աշակերտ, 91 ուսուցիչ:	

34.	Մշակութային ժառանգության թվայնացում, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում	34.1 Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի համալրում	«Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային ժառանգություն» շտեմարան՝ https://int-heritage.am/ մուտքագրվել 3 եռալեզու հոդվածներ, 10 նորություններ՝ 110, հայտարարություններ՝ 22, և տեսանյութեր՝ 22: ՀՀ Ոչ նյութական մշակութային ժառանգության շտեմարանի գլխավոր էջում ավելացել է նոր բաժին՝ «Ուտեստների շտեմարան» խորագրով: Կայքի տեսադարան դաշտը համալրվել է ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտին վերաբերող 25 տեսանյութերի հղումներով: Շտեմարանի և դրան կից ֆեյսբուքյան էջի օգտատերերի թիվը ավելացել է 13771-ով:	
		34.2 Գրադարաններում էլեկտրոնային սպասարկման ծրագրի ներդնում «ԿՈՀԱ» (Հայաստանյան գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակ) ծրագրի շրջանակում	Ծրագիրը ներդրվել է Հայաստանի ազգային, Շիրակի մարզային և Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարաններում: Էլեկտրոնային ընթացակարգով սպասարկվել է 23.688 ընթերցող, տրամադրվել է 32.324 միավոր գիրք:	
		34.3 Թանգարանային հավաքածուների թվայնացում	Թվայնացվել և մշակութային արժեքների «Գանձարան» էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան է մուտքագրվել 44.965 և հաստատվել 23.475 թանգարանային առարկա:	
35.	Օտարերկրյա պետություններում հայկական գրավոր ժառանգության պահպանություն և հանրահռչակում	35.1 Արտերկրում հիմնված հայկական կրթական և մշակութային կենտրոններում, համայնքային նշանակության, ինչպես նաև անհա-տական գրադարաններում, պահպանված հայկական գրավոր	2023 թվականին **ՄԹ-ում** ՀՀ դեսպանությունը կազմակերպել է լոնդոնաբնակ պատմաբան Վրեժ Ներսեսյանի կողմից ձեռք բերված հայկական պատմամշակութային ժառանգու-թյան վերաբերյալ եզակի նյութերի, հին ձեռագրերի և գրքերի նոր խմբաքանակի տեղափոխումը Մատենադարան:	

		ժառանգության Հայաստան տեղափոխման «Լքյալ գրադարաններ» ծրագիր:		
		35.2 Արտասահմանյան գրադարան-ների համալրում հայագիտական գրականությամբ	Միջոցառմամբ նախատեսված 2000 օրինակ գրքից 1200 օրինակ տրամադրվել է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին՝ գրքափոխանակության ծրագրի շրջանակում արտասահմանյան գործընկեր գրադարաններին տրամադրելու նպատակով: ՀՀ ԱԳ նախարարությանը հատկացվել է 800 օրինակ գիրք՝ դիվանագիտական ճանապարհով արտասահմանյան կարևորագույն կրթական հաստատությունների հայագիտական կենտրոն-ներին, գրադարաններին, թանգարաններին տրամադրելու նպատակով:	
36.	Ստեղծագործական կարողությունների լիարժեք արտահայտման և իրացման համար բարենպաստ միջավայրի ապահովում	36.1 «Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագիր	Ծրագրի շրջանակում 2023 թվականին ֆինանսավորվել է 28 պարբերական. այդ թվում. ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում լույս տեսնող 9, Գրական տպագիր և էլեկտրոնային 10, մշակութային տպագիր և էլեկտրոնային 9 պարբերականներ, որոնք ամբողջ տարվա ընթացքում լույս են տեսնելու տպագիր և էլեկտրոնային տարբերակներով:	

		36.2 «Աջակցություն գրականության հանրահռչակմանը, գրական ծրագրերին և գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» ծրագիր:	- Մայիսի 25-27-ը տեղի է ունեցել Գրքի երևանյան միջազգային փառատոնը: -Հայաստանը հոկտեմբերի 18-22-ը առանձին տաղավարով մասնակցել է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ցուցահանդեսին	*Մասնակի* Մոսկվայի գրքի միջազգային ցուցահանդեսին Հայաստանը չի մասնակցել, քանի որ ցուցահանդեսը կորցրել է միջազգային համարումը, և այն այլևս բանակցությունների արդյունավետ հարթակ չէ հայաստանյան հրատարակիչների և գրական գործակալությունների համար:
		36.3 Մշակույթի տարբեր ոլորտներում ստեղծագործական ծրագրերի աջակցություն՝ դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով, ինչպես նաև դեբյուտային ստեղծագործական ծրագրերի և արվեստի փորձարարական և նորարարական ձևերի խրախուսում:	Մշակույթի տարբեր ոլորտներում դրամաշնորհների հատկացման բաց-մրցութային համակարգի միջոցով 5 անվանակարգում աջակցություն է ցուցաբերվել 38 նախագծի, ինչպես նաև 15 դեբյուտային ստեղծագործական և 4 նորարարական ծրագրերի:	

37.	Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացում և ժառանգության ոլորտի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ընդլայնում	37.2 «Արտաշատ մայրաքաղաք» պատմամշակութային արգելոց ստեղծելու, «Արտաշատ մայրաքաղաք» արգելոցի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում:	Մարտի 30-ին ՀՀ կառավարությունը ընդունել է «Արտաշատ մայրաքաղաք» պատմամշա-կութային արգելոց ստեղծելու, «Արտաշատ մայրաքաղաք» արգելոցի մասնաճյուղ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 312-Ն որոշման մեջ լրացումներ կա-տարելու մասին» N 418-Ն որոշումը:	
40.	Մշակույթի կառավարման ժամանակակից համակարգերի ներդրում	40.1 Ոլորտի կազմակերպությունների մարքեթինգի, սեգմենտացիայի, թիրախավորման, դիրքավորման, գիտելիքների և ռեսուրսների ձևավորում, դասընթացների իրականացում	Ոլորտի կազմակերպությունների մարքեթինգի, սեգմենտացիայի, թիրախավորման, դիրքավորման, գիտելիքների և ռեսուրսների ձևավորման ուղղու-թյամբ իրականացվող դասընթացներն անց են կացվել 2023 թվականի մայիս-հոկտեմբեր ամիսներին: Իրականացվել է 10-12 դասընթաց, 3 երկրների միջազգային փորձի ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպես նաև 20 ՊՈԱԿ-ի շուրջ 30 աշխատակցի վերապատրաստում:	
41.	Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների հանրային ինստիտուտիցիոնալացում	41.1 Ինքնազբաղ/ անկախ ստեղծագործողների գործունեության խթանում	2023 թվականին Հայաստանում կազմակերպվող շուրջ 10 միջազգային երաժշտական փառատոներին ու մրցույթներին արտերկրից մասնակցել են շուրջ 80 անվանի երաժիշտ-կատարողներ: Շուրջ 140 ինքնազբաղ արվեստագետ մասնակցել է արտերկրում կայացած միջազգային փառատոների, մրցույթների, բիեննալեների, վարպետության դասերի: Ինքնազբաղ արվեստագետների մասնակ-ցությամբ Հայաստանում կազմակերպվել է 161 համերգ:	

		41.2 Կինոնկարների արտադրություն	Միջոցառման շրջանակում աջակցություն է տրամադրվել ընդհանուր թվով 32 կինոնախագծի՝ արտադրության տարբեր փուլերի համար (զարգացման, արտադրական, հետարտադրական): 2023թ-ին Հայկական արտադրության ֆիլմերը մասնակցել են 110 միջազգային կինոփառատոնի, ստացել են 28 մրցանակ: 9 անհատ արվեստագետներ մասնակցել են կինոփառատոնների և վերապատրաստման ծրագրերի, 20-ից ավելի կինոգործիչներ մասնակցել են կինոշուկաների և կինոնախագծերի զարգացման համարտադրության հարթակների: Ավելի քան 8 երկրներում կազմակերպվել են հայկական ֆիլմերի օրեր, ինչպես նաև կինոշուկաներում ներկայացվել է հայկական ժամանակակից կինոարտադրանքն ու կինոժառանգությունը:	
42.	Մշակույթի մեկենասության ինստիտուտի ներդրում և կայացում և պետություն-մասնավոր համագործակցության ընդլայնմանն ուղղված փոխշահավետ մեխանիզմների խթանում	42.1 Մշակույթի մեկենասի հանրային վարկանիշի ձևավորում, մեկենասության պետական խրախուսում տեղեկատվական դաշտում	Մեկենասի հանրային վարկանիշի ձևավորման մեկենասության դերի բարձրացման նպատակով իրականացվել են մի շարք գովազդա-տեղեկատվական քարոզչական աշխատանքներ, որոնց արդյունքում հանրությանը իրազեկվել է մասնավոր անձանց և կազմակերպությունների կողմից իրականացվող աջակցության ծրագրերի մասին, մեկենասները արժանացել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության պարգևների: Իրականացվել է միջազգային և հայաստանյան փորձի ուսումնասիրություն մեկենասության վերաբերյալ, որի հիման վրա հաջորդ տարի կիրականացվեն համապատասխան փոփոխու-թյուններ «Բարեգործության մասին» ՀՀ օրենքում,	

			ինչը միտված կլինի պետական մակարդակով մեկենասության խրախուսմանը: Իրականացվել է մեկենաս տարեգրքի նյութերի հավաքագրումը: Ալբոմը կտպագրվի 2024 թվականի առաջին կիսամյակում:	
		42.2 Բարերարների հետ համագործակցություն, պետական միջոցներով կազմված վերականգնման նախագծերի անվճար տրամադրում, մասնագիտական խորհրդատվություն, հուշագրերի ստորագրում, մեկենասության տարեգրքի համար տեղեկատվության տրամադրում	ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը համագործակցել է մի շարք բարերարների հետ՝ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով, բարերար կազմակերպություններին կամ ֆիզիկական անձանց անվճար հիմունքներով տրամադրվել են արխիվային նյութեր, գիտանախագծային փաստաթղթեր, համաձայնեցվել են գիտանախագծային փաստաթղթեր և տրամադրվել է վերականգնողական աշխատանքների թույլտվություն:	
44.	Պետական կոլեկտիվների լիարժեք գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծագործական միությունների գույքային ռեսուրսի քարտեզագրում	44.1 Ստեղծագործական միությունների և պետական կազմակերպությունների համագործակցության խթանում, գույքային պակասորդի մեղմացում գույքային ռեսուրսների և մասնագիտական ներուժի վերլուծություն, քարտեզագրում	2023թ.-ի ընթացքում ՀՀ-ում գործող 5 ստեղծագործական միավորումների և 3 ընկերության հարթակները և ռեսուրսները քարտեզագրվել են և վերջիններիս գույքային ռեսուրսների օգտագործման համատեքստում իրականացվել են բազմաթիվ նախագծեր:	
45.	Մշակութային-կրթական նպատակային ծրագրերի իրականացում	45.1 «Դասարան «Դասական» ստեղծագործական կրթական ծրագրի իրականացում	Իրականացվել է «Դասարան+Դասական» ստեղծագործական կրթական ծրագիրը: Նախագծի հիմնական թիրախային խումբը ավագ դպրոցի աշակերտներն են: 2023թ. ծրագրի հայտերում փոփոխություն է տեղի ունեցել: Մոտիվացիոն նամակներին փոխարինել են տեսանյութ-հայտերը,	

			որոնք հնարավորություն են տվել ավելի հստակ պատկերացում կազմել դիմորդների հմտությունների ու հակումների մասին: Հայտերի հիման վրա կատարվել է նախնական ընտրությունը, որին հետևել է հարցազրույցների փուլը: Մրցութային երկու փուլերը հաղթահարել և ծրագրին մասնակցել է 70 աշակերտ՝ Երևանից, ՀՀ մարզերից: Երկշաբաթյա ծրագրի ընթացքում մասնակիցներն աշխատել են խմբերով՝ իրենց մենթոր-ղեկավարների և դասախոսների ղեկավարությամբ:	
		45.2 Ներառական փառատոների կազմակերպում, մշակույթի ոլորտի մասնագետների, արվեստագետների հետ համատեղ միջոցառումների իրականացում	Իրականացվել է 5 նախագիծ:	
		45.3 Երևանի և մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» կրթական նպատակային ծրագրի իրականացում	Տարվա ընթացքում Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների սաներն ու դասատուները այցելել են ՀՀ մարզեր, իսկ ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների սաներն ու դասատուները այցելել են ք. Երևան: Սովորողները հանդես են եկել համերգային ծրագրերով, այցելել թանգարաններ, տեսարժան և պատմամշակութային վայրեր: Մարզաբնակ սովորողների համար Երևանից ժամանած մանկավարժների մասնակցությամբ կազմակերպվել է նաև վարպետության դասընթացներ:	
		45.4 «Քո արվեստը դպրոցում» ծրագիր:	Իրականացվել են Հայաստանի անվանի մշակու-թային գործիչների, արվեստագետների կյանքի ու գործունեության ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Կազմակերպվել է 50	

			հանդիպում-դասախոսություն: Ծրագրին մասնակցել է Երևանի և ՀՀ 10 մարզերի շուրջ 450 ուսումնական հաստատություն և 50 արվեստագետ:	
		45.5 «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի իրականացում:	2023 թվականի ընթացքում «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի շնորհալի երեխաները մասնակցել են 15 երաժշտական միջազգային մրցույթների և արժանացել են 1-ին և 2-րդ մրցանակներին:	
		45.6 «Երաժշտական և արվեստի դպրոցների համար ուսումնամեթոդական գրականության մշակում և հրատարակում» ծրագրի իրականացում:	Իրականացվել է 13 ուսումնական ձեռնարկի մշակում և հրատարակում:	
48.	Միջազգային հեղինակավոր մարզական միջոցառումներին մասնակցության ապահովում, ՀՀ մարզական հեղինակության բարձրացում, միջազգային մրցասպարեզներում բարձր մարզական արդյունքների ցուցաբերում	48.2 2023թ. Կրակովի Եվրոպական խաղերին Հայաստանի Հանրապետության մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	Լեհաստանի Կրակով քաղաքում հունիսի 20-ից հուլիսի 3-ը անցկացվել են Եվրոպական 3-րդ խաղերը, որտեղ ՀՀ մարզական պատվիրակությունը մասնակցություն է ունեցել 10 մարզաձևում: Հայաստանի մարզիկները նվաճել են 5 մեդալ, այդ թվում՝ 1 ոսկե մեդալ շախմատ մարզաձևից, 2 արծաթե մեդալ հրաձգություն մարզաձևից /խառը զույգ վարժությունում/ և շախմատ մարզաձևից, 2 բրոնզե մեդալ՝ կարատե և մուայթայ մարզաձևերից:	

49.	Մանկապատանեկան սպորտի զարգացում	49.1 «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական հասարակական կազմակերպություններ գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ:	Հայաստանի Հանրապետության մանկապա-տանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում ծրագրի շրջանակում 61 մարզական կազմակերպությունների հատկացվել է մարզական գույք:	
50.	Բնակչության տարբեր տարիքային խմբերի համար զանգվածային սպորտի տարածմանը և առողջ ապրելակերպի քարոզմանն ուղղված ծրագրերի իրականաց-ման անընդհատության ապահովում	50.1 «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծա-նվավազքի մրցաշարի անցկացում	Մրցաշարն անցկացվել է մայիսի 28-ին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի թերակղզի-Շողակաթ համայնքի (նախկին Շորժա)-Սևանի թերակղզի 40 կմ ճանապարահատվածում՝ մեկ փուլով՝ երկու տարիքային խմբով՝ Պարգևատրման արարողությունը իրականացվել է ՀՀ Վարչապետի և ՀՀ կառավարության անդամների կողմից:	
		50.2 «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի անցկացում	«ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարը անցկացվել է երկու փուլով՝ 1-ին փուլն իրականացվել է մինչև 2023 թվականի մարտի 3-ը՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում, 2-րդ եզրափակիչ փուլը ապրիլի 1-2-ը՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Մրցաշարի պարգևատրման արարողությունը իրականացրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ կառավարության անդամները:	
		50.3 «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի անցկացում	«ՀՀ Վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարը իրականացվել է օգոստոսի 19-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի	

			Շողակաթ բնակավայրի (նախկին՝ Շորժա) լողափնյա տարածքում:	
		50.4 «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղավազքի մրցաշարի անցկացում	Մրցաշարը անցկացվել է նոյեմբերի 4-ին՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար-Էջմիածին մայրուղու ընտրված հատվածում:	
		50.5 Մասսայական սպորտին առնչվող ծառայությունների իրականացում	Ընդհանուր առմամբ իրականացված 3 մասսայական միջոցառումներին մասնակցել է 31308 մասնակից:	
		50.6 «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի անցկացում	«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքը անցկացվել է 2023 թվականին երկու փուլով՝ 1-ին փուլ մինչև 2023 թվականի մայիսի 1-ին տասնօրյակ՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում, 2-րդ եզրափակիչ փուլ 2023 թվականի մայիսի 19-20-ին՝ ՀՀ Տավուշի մարզի Պարզ լճի ճանապարհի 5 կմ հատվածում: Միջոցառման պարգևատրման արարողությունը իրականացրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը և ՀՀ կառավարության անդամները:	
51.	Պետական երիտասարդական քաղաքականության իրավական հիմքերի կատարելագործում	51.3 Երիտասարդության ոլորտում պետական քաղաքականության որակի ապահովման մեխանիզմների մշակում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍ նախարարի Հաստատմանը:	ՀՀ ԿԳՄՍ նախարարի նոյեմբերի 29-ի N 2460-Ա/2 հրամանով հաստատվել է Երիտասարդության ոլորտում պետական քաղաքականության որակի ապահովման մեխանիզմը հաստատելու մասին հրամանը: Նախագիծը:	
52.	Հայաստանի մարզային համայնքներում երիտասարդության ներուժի բացահայտ-ման, համակողմանի	52.2 Աջակցություն «երիտասարդա-կան միջավայրի» ձևավորմանը	Հունվարի 25-ին հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում 2023 թվականին ստեղծվել են երկու երիտասարդական կենտրոններ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան և ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքներում:	

	զարգացման,ինքնիրացման, ինքնադրսևորման և ինտելեկտուալ ժամանցի կազմակերպ-ման համար նպաստա-վոր միջավայրի ձևավ-որում			
53.	Հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացմանը երիտասարդ ների մասնակցության բարձրացում	53.3 Ժողովրդավարական և քաղաքացիական մասնակցության, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հանրային միջոցառումների կազմակերպում ազգային մակարդակով՝ ներառելով հաշմանդամություն ունեցող երիտասարդներին	2022թ. նոյեմբերին հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում իրականացվել է «Լինել քաղաքացի» խորագրով ծրագրի թողարկում, որի շրջանակում երիտասարդների մասնակցությամբ պատրաստվել և հեռարձակվել է ժողովրդավարության, դրա հիմնասյուների, սկզ-բունքների, կոռուպցիայի, պետության կառավարման ձևերի, քաղաքացիական ակտիվ մասնակցության, սոցիալական պատասխանատվության և այլնի մասին 10 մասից բաղկացած հաղորդաշար: Հաղորդաշարը հեռարձակվել է Boon TV-ի աշնանային նոր եթերաշրջանի շրջանակում:	
		53.4 Մարզաբնակ երիտասարդների կարողությունների զարգացում՝ ուղղված մեդիագրագիտությանը, թվային գրագիտությանը և կիբեռգրագիտությանը	2023թ. հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում իրականացվել է «Սերունդ Z. Թվային փոխակերպիչ» ծրագիրը Վայոց Ձորի մարզի Վայք, Արենի, Եղեգնաձոր, Զառիթափ և Մալիշկա համայնքների 30 երիտասարդների համար: Ծրագիրն իր մեջ ներառել է 6 դասընթաց՝ անվտանգություն, թվային հետք, փաստերի ստուգում, բոտեր, վիրուսներ, ֆիշինգ, քարոզ, ապատեղեկատվություն թեմաներով:	

			Իրականացվել է նաև «Թվային միջավայրում պաշտպանված և մեդիագրագետ ուսանող» մեդիագրագիտության, թվային գրագիտության և կիբեռգրագիտության կարողությունների զարգացման ծրագիր Լոռու մարզկենտրոնի բուհերում սովորող երիտասարդների համար» ծրագիրը:	
54.	Երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների բարելավում և մասնագիտական կարողությունների զարգացում	54.1 «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի իրականացում	2010 թ. մինչ այժմ ծրագրից օգտվել է 8404 (8140՝ երկրորդային +264՝ առաջնային) ընտանիք (թիվը ներառում է և շարունակական, և մարված, և դասակարգված վարկերը):	
		54.2 Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդության իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում	Հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում իրականացվել է «Հնարավորություններ և հեռանկարներ» ծրագիրը: Վերջինիս շրջանակում առկա և հեռավար ձևաչափերով մասնագիտական կողմնորոշման և փափուկ հմտությունների զարգացման 13 դասընթաց է իրականացվել Սյունիքի մարզի 4 համայնքների երիտասարդների համար:	
		54.3 Երիտասարդության ֆինանսական գրագիտության բարձրացման, ինչպես նաև կոռուպցիայի վերաբերյալ դասընթացների կազմակերպում	Դասընթացների կազմակերպման նպատակով հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում ապրիլ-մայիս ամիսներին իրականացված ծրագրի շրջանակում կազմակերպվել են 3 խումբ դասընթացներ Շիրակի մարզի Ամասիա, Մարալիկ, Գյումրի համայնքների ուսումնական հաստատություններում:	
		54.4 Աջակցություն երիտասարդների սոցիալական ձեռներեցության նախաձեռնություններին	Հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում իրականացվել է 15 ծրագիր՝ փետրվար-հուլիս ամիսներին:	

		54.6 Բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացման առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում երիտասարդության շրջանում	2023թ. հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում իրականացվել է «Առաջին բուժօգնություն և անձնական անվտանգություն» խորագրով 6-օրյա տեսական և գործնական դասընթաց՝ միտված երիտասարդների առաջին օգնության և անձնական անվտանգության հմտությունների զարգացմանը:	
55.	Երիտասարդության ոլորտում համահայկական և միջազգային համագործակցության զարգացում	55.1 Միջազգային փառատոներին, խորհրդաժողովներին, մրցույթներին, գիտաժողովներին, սեմինարներին, դասընթացներին և այլ հանրային միջոցառումներին ՀՀ երիտասարդների և երիտասարդական պատվիրակությունների մասնակցության աջակցություն	Երիտասարդների՝ միջազգային հարթակներում տարատեսակ միջոցառումներին մասնակցության աջակցության ավիատոմսի ծախսի փոխհատուցման շրջանակում 2023 թ. 21 երիտասարդ ստացել են փոխհատուցում: Աշխատանքներ են տարվել Միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու կարգը բարելավելու ուղղությամբ:	
57.	Սփյուռքի կրթօջախների կարողությունների հզորացում	57.1 Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում	2023 թ.վերապատրաստվել են 69 սփյուռքահայ ուսուցիչ: Ուսուցիչները վերապատրաստվել են առկա ձևաչափով, 7 խմբով՝ տարրական ուսուցում, 1-օրյա դպրոց, Հայոց լեզու և գրականություն, Հայոց պատմություն, մանկապարտեզ, պար և տնօրենների պատրաստում կրթական ծրագրերով:	
58.	Օտարերկրյա համալսարաններում հայագիտական կրթական ծրագրերի իրագործմամբ և ցանցային ձևի ներդրմամբ կադրերի	58.1 «Համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ԿԳՄՍ նախարարի հրամանի ընդունում	ԿԳՄՍ նախարարի 2023 թ. նոյեմբերի 30-ի 56-Լ հրամանով հաստատվել է Համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձևավորման և զարգացման հայեցակարգը: Ֆինանսավորվել է օտարերկրյա 15 համալսարան, որից 5-ը հետազոտական աշխատանքների համար:	

	պատրաստման որակի բարձրացում			

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
1	2	3	4	5
Ծրագրի հերթական համարը	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
Ոստիկանություն				
1.	Ներքին գործերի նախարարության ձևավորում՝ Ոստիկանու-թյան և Միգրացիոն ծառայության հիմքով:	1.3 Ներքին գործերի նախարարության ձևավորմանն ուղղված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումից հետո դրանից բխող անհրաժեշտ ենթաօրենսդրական և գերատեսչական ակտերի ընդունում, այդ թվում՝ նոր նախարարության կանոնադրության հաստատում ՀՀ Վարչապետիորոշմամբ:	Ընդունվել են Ներքին գործերի նախարարության և ենթակա մարմինների կանոնադրությունները, ինչպես նաև փոխվարչապետի «ՀՀ ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակելու դեպքում թեկնածուի հետ հարցազրույցի անցկացման կարգը սահմանելու մասին» N 288-Ա որոշումը:	
		1.5 Նոր ստեղծվող ներքին գործերի նախարարության աշխատակազմի ձևավորում:	Կառուցվածքային ստորաբաժանում-ների գերակշիռ մասը ձևավորվել են, դրանց կանոնադրությունները հաստատված են, ընթացքում են համալրման աշխատանքները: Միջոցառման նպատակը, այն է՝ աշխատակազմի 50%-ի համալրումն ապահովված է:	

			Կառուցվածքային ստորաբաժանում-ների ամբողջական ձևավորումն ավարտին կհասցվի 2024թ. հունվարին:	
2.	Ոստիկանության զորքերի կարգավիճակի վերանայում, խնդիրների և գործառույթների վերաիմաստավորում, Ոստիկանության զորքերի ծառայության կազմակերպաիրավական նոր ձևի սահմանում:	2.4 Ոստիկանության զորքերի վերապատրաստման ծրագրերի մշակում և հաստատում՝ հիմք ընդունելով գործառութային առանձնահատկություն-ներն ու միջազգային լավագույն ստան-դարտները:		ԵԽ-ի կողմից ներգրավված փորձագետների կողմից նախապատրաստված «Ոստիկանության գվարդիայի մասին» նոր օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ կատա-րելու մասին նախագծերի փաթեթը գտնվում է ՀՀ արդարադատության նախա-րարության պետական-իրավական փորձաքննության եզրակացության հիման վրա վերջնականացման փուլում, որից հետո կներկայացվի Վարչապետի աշխատակազմ:
3.	ՀՀ ողջ տարածքում Ոստիկանության պարեկային ծառայության և օպերատիվ կառավարման կենտրոնի ստորաբաժանումների ստեղծում	3.2 Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ստորաբաժանումների տեղակայման վայրերի ընտրություն, անհրաժեշտ ենթակառուցվածքների (այդ թվում՝ շենքային պայմաններ) ձևավորում:		Ընթանում են Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի տեղակայման հիմնական վայրի (հասցե՝ ք.Երևան, Էրեբունի վարչական շրջան՝ Խորենացի 158) շենք-շինությունների կառուցման աշխատանքները, որոնք շահագործման կհանձնվեն 2024թ. ապրիլին, որից հետո

				վերոնշյալ ստորաբաժանում-ները կտեղակայվեն տվյալ վարչական շենքում: Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի մարզային ստորաբաժանումների տեղակայման հիմնական շենքային պայմաններն ապահովված են:
		3.3 Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ստորաբաժանումների գործարկման համար անհրաժեշտ տրանսպորտային, տեխնիկական, գույքային ապահովման միջոցների, համազգեստի, զենքի ու սպառազինության ձեռք բերում, անհրաժեշտ ծրագրային և ռադիոկապի համակարգերի ներդրում և կարգաբերում:	Ձեռք են բերվել անհրաժեշտ պահանջարկին համապատասխան ամբողջությամբ նոր տրանսպորտային միջոցներ, ռադիոկապ, իրավախախտումների հայտնաբերման և ամրագրման, վարչական վարույթն էլեկտրոնային կարգով իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, սահմանված նմուշի համազգեստ, հրազեն, ինչպես նաև Պարեկային ծառայության կանոնագրքով նախատեսված սպառազինային և հատուկ միջոցներ: Օպերատիվ կառավարման կենտրոնները ևս հագեցվել են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և ծրագրային համակարգերով: Բացի այդ, աշխատանքներ են տարվում Օպերատիվ կառավարման կենտրոնների կարողությունների հզորացման ուղղությամբ, այն նպատակադրումով, որ տեխնիկական հնարավորություններ ստեղծվեն նաև նոր ձևավորվող համայնքային և Քրեական	
		3.4. Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ծառայողների ընտրության և ուսուցման (վերապատրաստման) իրականացում:		
		3.5 Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ծառայողների ընտրության և ուսուցման		

		(վերապատրաստման) իրականացում:	ոստիկանությունների հետ տեղեկատվության փոխանակման կազմակերպման համար: Պարեկային ծառայության վարչակազմի, տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև Օպերատիվ կառավարման կենտրոնների բոլոր ծառայողներն անցել են հատուկ ներդրված նոր կրթական ծրագրերով ուսուցում և վերապատրաստում:	
		3.6 Ջրային պարեկային ծառայության ներդրում՝ Գեղարքունիքի մարզի Պարեկային ծառայության կազմում մասնագիտացված ջրային պարեկային ստորաբաժանման ստեղծում	2023թ. դեկտեմբերին գործարկվել է պարեկային ծառայության ջրային ստորաբաժանումը, որը ջրային լողամիջոցներով իրականացնելու է պարեկություն Սևանա լճում, միաժամանակ, հասարակական կարգի պահպանության գործառույթ է իրականացնելու առափնյա հատվածում: Ծառայության գործառույթների շրջանակում է նաև Սևանա լճում լողամիջոցների շահագործման օրենսդրությամբ սահմանված պահանջների նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև ապօրինի որսի և ձկնորսության կանխարգելումը, հայտնաբերումը և բացահայտումը:	
4.	Ոստիկանության ծառայող-ների վարձատրությանև սոցիալական երաշխիք-ների բարելավում	4.2 Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի Պարեկային ծառայության ծառայողների աշխատավարձերի՝ նոր բարձրացված չափերով ապահովում:	Պարեկային ծառայության տարածքային մարմինների բոլոր ծառայողները ստանում են աշխատավարձերը՝ նոր բարձրացված չափերին համապատասխան:	
		4.3 Վայոց Ձորի, Սյունիքի, Արարատի, Արմավիրի մարզերի Պարեկային		

		ծառայության ծառայողների աշխատա-վարձերի՝ նոր բարձրացված չափերով ապահովում:		
		4.4 ՀՀ ոստիկանությունում աշխա-տավարձերի բարձրացում նախատեսող ոստիկանության ծառայողների կամավոր ատեստավորման համակարգի ներդրում:	4.4 2023թ. ընդունվել է ոստիկանության ծառայողների ատեստավորման գործընթացը կանոնակարգող օրենս-դրական փաթեթը և մեկնարկել ատեստավորման գործընթացը, որը շարունակվելու է նաև 2024թ. ընթացքում: Ատեստավորումը ծառայողների համար սոցիալական լրացուցիչ երաշխիք կստեղծի՝ զգալի բարձրացնելու, ընդհուպ կրկնապատկելու իրենց աշխատավարձերը:	
5.	5. Ոստիկանության տեխնի-կական հագեցվածության մակարդակի բարձրացում:	5.2 Ոստիկանությունում համակարգչային տեխնիկական փորձաքննությունների իրականացման նպատակով անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերում և ծրագրային ապահովում:	-	ՀՀ վարչապետի մոտ աշխատանքային զեկուցման ընթացքում որոշվել է ՆԳՆ ոստիկանության փորձաքրեագիտական վարչությունում նոր, առանձին համակարգ չներդնել՝ հաշվի առնելով, որ ՀՀ քննչական կոմիտեում ստեղծված համակարգչատեխնիկական լաբորատորիան ունակ է բավարարել նախաքննական մարմինների կարիքները:
7.	«Զենքի մասին» նոր օրենքի ընդունում	7.2 Գործող օրենսդրության մեջ առկա խնդիրների վերհանում: 7.3 «Զենքի մասին» նոր օրենքի նախագծի՝ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանանալու վերաբերյալ որոշման	Միջազգային փորձի ուսումնասիրությունների արդյունքներով Ոստիկանության կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա լրամշակվել է պատգամավորական նախաձեռնության կարգով շրջանառության	

		ընդունում:	դրված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» նոր օրենքի նախագիծը, որը ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է 05.10.2022թ. և ուժի մեջ մտել 01.06.2023թ. :	

Միգրացիայի և քաղաքացիության ծառայություն				
9.	Միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում	9.1 ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 23-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 638-Լ որոշմանը համապատասխան Ներքին գործերի նախարարության կազմում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորում	«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 16.12.2022թ. ՀՕ-457-Ն օրենքի և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 16.12.2022թ. ՀՕ-458-Ն օրենքի համաձայն՝ միգրացիոն գործընթացների կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը, իսկ Միգրացիոն ծառայությունը անվանափոխվել է Միգրացիայի և քաղաքացիության ծառայության, որը ՀՀ կառավարության 05.01.2023թ. N 17-Ա որոշմամբ սահմանվել է որպես ՆԳՆ ենթակա մարմին:	
		9.2 Միգրացիայի և քաղաքացիության ծառայության առաջին կազմը ձևավորելու նպատակով Միգրացիոն ծառայության և Անձնագրային և վիզաների վարչության	500 ծառայող վերապատրաստվել է 2023թ. մայիս-նոյեմբերին: 471 ծառայողի հետ հարցազրույցի փուլն ավարտվել է 2024թ. հունվարին:	

		աշխատակիցների վերապատրաստման կազմակերպում:	Հարցազրույցն անցկացվել է երկու առանձին հանձնաժողովներով, որպես կանոն՝ շաբաթական երեք անգամ:	
10.	Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացում	10.1 Միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացման տեխնիկական բազայի ստեղծում		Թվայնացման տեխնիկական բազան նախատեսվում է ստեղծել դրամաշնորհային միջոցներով՝ 2022թ. հոկտեմբերի 3-ին և 28-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական հանձնաժողովի միջև «ԵՄ-ն դիմակայուն և հաշվետու հաստատություն-ների համար. ոստիկանության և միգրացիոն բարեփոխում-ներն ու մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաս-տանում» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակ-ներում իրականացվող ծրագրի շրջանակներում, որը հաստատելու մասին ՀՀ նախագահի հրամանագրի նախագիծը հավանություն է ստացել ՀՀ կառավարու-թյունը 01.12.2022թ. N 1844-Ա որոշմամբ: Թվայնացման տեխնիկական բազայի ստեղծման աշխա-տանքները կմեկնարկեն

				միգրացիոն գործընթացների կառավարմանն ուղղված համակարգերի թվայնացումն ապահովող ծրագրից բխող օրենսդրական փոփոխությունների իրականացումից հետո:
12.	Օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ-ում աշխատանքի թույլտվության և կացության տրամադրման համակարգի թվայնացում և պարզեցում	12.1 ՀՀ-ում աշխատող, այդ թվում՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալների հավաքագրում	ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 07.07.2023թ. N 14-Ա որոշմամբ հաստատվել են օտարերկրացի աշխատողների ներգրավման միասնական էլեկտրոնային հարթակում առկա տեղեկատվության հիման վրա մշակվող վիճակագրական ամփոփ հաշվետվությունների հետևյալ ձևերը՝ Ձև 1-ԱԹ, Ձև 2-ԱԹԸ, Ձև 3-ԺԿԿ:	

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

17.	Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի (այսուհետ՝ ՌՀՄԱԿ) արձագանքման բաղկացուցիչը կազմող ուժերի կարողությունների զարգացում	17.1 ՌՀՄԱԿ արձագանքող ուժերի բաղկացուցիչը կազմող ՓԾ ուժերի գույքի բարելավում (հատուկ տեխնիկայի և սարքավորումների, տրամադրում): Կադրերի վերապատրաստում (որակավորման բարձրացում)	2023թ. ՌՀՄԱԿ տարածքում ՌԴ ֆինանսավորմամբ Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունը (ՔՊՄԿ) կառուցել է մոդուլային վարժահամալիր՝ մոտ 3,3 մլն դոլլար արժեքով: Այն հնարավորություն կտա տարբեր ուղղություններով (վերա)պատրաստել փրկարարական ծառայողներին: 2023թ. պատրաստվել է 176 փրկարարական ծառայող, Հայկական Կարմիր Խաչի ընկերության 10 կամավորական, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտի 50 ուսանող և ՔՊՄԿ կողմից ՀՀ գործուղված տարբեր երկրների 6 փրկարարական ծառայող:	
18.	Սեյսմիկ վտանգի գնահատում	18.1 Ազգային մոնիթորինգային դիտացանցի արդիականացում և ընդլայնում նոր GPS կայաններով	«ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ծառայության համակարգի ազգային դիտացանցի արդիականացում» հանրային ներդրումային ծրագիրն անցնելով մրցութային փուլ ճանաչվել է հաղթող, որից հետո կնքվել է պայմանագիր՝ Էկոնոմիկայի նախարարության և մրցույթը հաղթող կազմակերպության միջև: Ծրագիրը հաստատվել է ՀՀ վարչապետի մոտ 2023թ. սեպտեմբերի 28-ին և հոկտեմբերի 6-ին կայացած հանրային ներդրումային կոմիտեի նիստերում և որոշվել է ծրագիրը ներառել առաջնահերթությունների ցանկում: Ամերիկյան նախկին UNAVCO (NASA-ի	

			գործընկեր) կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են ARUC (Արուճ) և GARN (Գառնի) GPS կայանների արդիականացման աշխատանքներ՝ նոր DELTA-3 GPS ընդունիչի և SUPERLOGICS մինի համակարգչի հիման վրա, որոնք ստացվել են ամերիկյան կողմից: Ֆրանսիայի ատոմային և այլընտրանքային էներգիայի կոմիսարիատի (CEA) Շրջակա միջավայրի վերահսկողության և վերլուծության դեպարտամենտի (DASE) հետ համագործակցության շրջանակում Վայքում տեղադրված «Վայք» սեյսմիկ կայանների փնջի համար նվիրատվությամբ ստացվել են նոր մարտկոցների պարկ՝ 2630 կգ ընդհանուր քաշով և 22440 Եվրո (մոտ 8815550 ՀՀ դրամի համարժեք) արժողությամբ: Ս.թ. ապրիլի 20-ից 23-ը CEA/DASE կազմակերպությունից ժամանած մասնագետների հետ կատարած աշխատանքային այցի ժամանակ՝ շահագործվող SONNENSCHEIN A600/2V 335AH մարտկոցները փոխարինվել են նոր մարտկոցներով:	
20.	Քաղաքացիական պաշտպանության համապետական համակարգի զարգացում	20.1 Քաղաքացիական պաշտպանության համակարգի ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստման ծրագրերի մշակում և ներդրում	«Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2023թ. ուսումնական տարում կազմակերպվել են առկա դասընթացներ 93 ուսումնական խմբերում 2445 ունկնդիրների մասնակցությամբ, որոնցից 877-ը՝ ՀՀ մարզերից, 340-ը՝ Երևանի քաղաքապետարանից և վարչական	

			շրջաններից, 602-ը՝ ՀՀ նախարարություններից ու գերատեսչություններից, 626-ը՝ այլ կազմակերպություններից:	
21.	Փրկարար ուժերի կարո-ղությունների զարգացում	21.2 ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի մարզերում փրկարարական և արագ արձագանքման թվով 6 թիմերի ստեղծում	Իրականացվում է քաղաքային որոնողափրկարարական (ՔՈՓ) թիմերի անձնակազմի ընտրության գործընթացը, որի նպատակով «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում անցկացվել են տարբեր թեմաներով դասընթացներ, որոնց մասնակցել են INSARAG-ի չափորոշիներին համապատասխան ներքին որակավորում անցած Փրկարար ծառայության Լոռու, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերի ՔՈՓ թիմերը, ինչպես նաև ներգրավվել են Գեղարքունիքի և Արարատի մարզային փրկարարական վարչությունների 9-ական փրկարարական ծառայողներ: Փրկարար ծառայության Գեղարքունիքի և Արարատի մարզային փրկարարական վարչություններին տրամադրվել է 6-ական վրան (3x6մ):	

		21.4 Անօդաչու թռչող թվով 6 սարքավորումների ձեռքբերում	ԵՄ Բնակչության պաշտպանության մեխանիզմի «Երկրաշարժի համակողմանի կառավարումը Հարավային Կովկասի խոցելի տարածքներում՝ արդյունավետ պլանավորման, արձագանքման և համատեղ գործողությունների միջոցով» ծրագրի (HOPE) շրջանակներում և ֆինանսավորմամբ՝ Փրկարար ծառայության կողմից ձեռք է բերվել 2 անօդաչու թռչող սարք, որոնք հատկացվել են Փրկարար ծառայության փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնին:	

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակ	Միջոցառումներ	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ	2. Հյուսիսային ջրավազանային տա-րածքի կառավարման պլանի մշակում և Կառավարության որոշման ընդունում	Իրականացվել են մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների ուսումնասիրմանն ուղղված դաշտային աշխատանքներ՝ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրային ռեսուրսների ընտրված 25, իսկ	

	համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը.		ստորերկրյա ջրային ռեսուրսների՝ 30 տեղանքում: Մշակման փուլում է գտնվում Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանի առաջին մասի տեխնիկական հաշվետվության նախագիծը, որի միջոցով ամփոփ տարբերակով ներկայացվելու են կատարված աշխատանքները:	
2.		3. Արարատյան դաշտի գյուղատնտեսական և ձկնաբուծական, ջրօգտագործողների մոտ ավտոմատ կառավարման առցանց ջրաչափական համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում	2023 թվականի Արարատյան դաշտի Արարատի և Արմավիրի մարզերում գործող գյուղատնտեսական և ձկնաբուծական 46 ջրօգտագործողի մոտ տեղադրվել և կնքվել է 94 առցանց հոսքաչափական սարքավորում: Հաշվի առնելով 2022թ. հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-316-Ն օրենքի պահանջը, ինչով առցանց հոսքաչափական սարքավորումների տեղադրման վերջնաժամկետ է սահմանվել 2024 թվականի հունվարի 1-ը, սույն միջոցառումը համարվում է ավարտված:	
3.		7. Մակերևութային ջրային ռեսուրսների մոնիտորինգի տվյալների արժանահավատության բարձրացում, որոշում կայացնողներին առավել ճշգրիտ տեղեկատվությամբ ապահովում, ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում	2023 թվականին նախատեսված արդիականացման շրջանակներում՝ իրականացվել է Քասախի և Հրազդանի գետավազանների 7 դիտակետի (2 ջրամբարային, 5 գետային) արդիականացում:	Սահմանային Արաքս-Սուրմալու հիդրոլոգիական դիտակետերի արդիականաց-ման միջոցառումը չի իրականացվել՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

4.	**2.** Սևանա լճի էկոհամակարգային հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը.	2.Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքների իրականացում	«Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի տեխնիկական միջոցներով նախարարության և ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում նախատեսված 28,01 հեկտարից փաստացի մաքրվել է 23,81 հա:	Կապալառուի միջոցով շուրջ 195,6 մլն դրամ գումարի շրջանակներում 7 տեղամասում նախատեսված 395.0 հա աշխատանքները չեն իրականացվել կրկնակի հայտարարված բաց մրցույթների արդյունքում մասնակից չլինելու պատճառով: Գումարն ամբողջությամբ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:
5.		3. Սևանա լճի ավազանում հիդրոօդերևութաբանական և շրջակա միջավայրի մոնիթորինգի դիտարկումների համակարգի բարելավում և արդիականացում, ջրային ռեսուրսների կանխատեսումների որակի և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիության բարելավում	Ճապոնիայի կառավարության կողմից ֆինանսավորվող ՄԱԶԾ «Աջակցություն Հայաստանում կլիմայական ռիսկերի դիմակայունությանն ուղղված ազգային ներդրումներին» ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել «Միկրոստեպ-Միս» ընկերության 11 ավտոմատ օդերևութաբանական կայան: 5 կայանները, որոնցից 2 համալրված են գոլորշաչափով, տեղադրվել են Սևանա լճի ավազանում, 6 կայանը՝ Սունիքի և Տավուշի մարզերում: Բոլոր 11 կայանները ինտեգրվել են տվյալների ստացման և մշակման միասնական համակարգին:	
6.	Անտառների կայուն կառավարումը՝ անտառ-ների պահպանությունը, պաշտպանությունը,	1. Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի համար անտառաշինական նախագծերի	Շրջակա միջավայրի նախարարի հրամաններով հաստատվել են Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 7 «անտառտնտեսություն» մասնաճյուղերի	

	օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը.	(անտառկառավարման պլանների) մշակում և հաստատում նախարարի հրամանով	(Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի, Ջիլիզայի, Նոյեմբերյանի, Իջևանի, Գյումրիի) անտառակառավարման պլանները: ՀՀ պետական բյուջեից հատկացված 489 261. 6 հազ. դրամ գումարի շրջանակներում մշակվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 4 «անտառտնտեսություն» մասնաճյուղերի (Արծվաբերդի, Թումանյանի, Կապանի, Սյունիքի) անտառակառավարման պլանները, որոնք ներկայացվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման: Աշխատանքների կատարման արդյունքում 2024 թվականի 1-ին եռամսյակից «Հայանտառ» ՊՈԱԿ-ի բոլոր 17 մասնաճյուղ կունենան կառավարման պլաններ:	
		2.Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում	2023 թվականի գարնանը շաբաթօրյակի միջոցով կատարվել են 5 հա անտառմշակույթների հիմնադրման աշխատանքներ: • Իրականացվել են 435 հա անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ, որից պետական բյուջեի միջոցներով 413011.7 հազ. դրամ գումարի շրջանակներում՝ 226 հա (130 հա անտառմշակույթների հիմնում և 96 կոճղաշիվային վերաճի օժանդակում) և անտառային տնտեսությանը հասցվող վնասի հատուցման ծրագրի շրջանակներում՝ 209 հա: Աճեցվել է 250 հազար հատ փակ արմատային	

			համակարգով տնկանյութ, հիմնադրվել՝ 8.0 հա տնկարան:	
		3. Անտառների կառավարման ոլորտում անտառպահպանության, անտառվերա-կանգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում	Փակ արմատային համակարգով որակյալ տնկանյութ աճեցնելու նպատակով Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության աջակցությամբ Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 3 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում հիմնադրվել են 6 ժամանակակից ջերմոցային համալիր: 2024 թվականին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերում կգործեն ընդհանուր առմամբ 8 ժամանակակից ջերմոցային համալիր, որտեղ հնարավոր կլինի աճեցնել շուրջ 1մլն հատ փակ արմատային համակարգով տնկանյութ: Վերը նշված կազմակերպության աջակցությամբ Հրազդանի և Սիսիանի անտառտնտեսություններում տեղադրվել են նաև սերմերի պահպանման սառնարաններ: Հիմնադրված ջերմոցների համար 2023 թվականին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցների հաշվին՝ 98. 5 մլն. դրամ գումարի չափով, որպես պետության կողմից ներդրում կատարվել են սերմնաբուսակների ջերմատներից դուրս աճեցման տարածքների հարթեցում, խճապատում, ստվերացման համակարգի տեղադրում, անձրևացման եղանակով ոռոգման խողովակաշարերի, ջրհորի հորատման և ջրագծերի կառուցում,	

			հոսանքագծերի անցկացում, ցանկապատում և այլն:	
		4. Վնասատուներից և հիվանդություն-ներից անտառների պաշտպանության նպատակով անտառպաթոլոգիական ուսումնասիրությունների իրականացում, վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական պայքարի իրականացման կազմակերպում,	2023 թվականի հունիս ամսին Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 4120 հա անտառածածկ տարածքներում (Արագածոտնի անտառտնտեսություն 1320 հա, Հրազդանի անտառտնտեսություն 1600 հա, Վայոց ձորի անտառտնտեսություն 1200 հա) վնասատուների և հիվանդությունների դեմ կատարվել են ավիացիոն-կենսաբանական պայքարի աշխատանքներ:	
		5. Անտառային կադաստրի վարում	Անտառային հողերի սահմանները հստակեցնելու և կադաստրի կոմիտեում առկա տվյալների բազայում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով կատարվել է 175 հա անտառային հողերի չափագրում: Ուսումնասիրվել են անտառկառավարման պլաններով վեր հանված քարտեզագրական անճշտությունները, որոնց հիման վրա ձեռնարկվում են դրանց ճշգրտման աշխատանքներ: Իրականացվել են համայնքներից հատակագծերի հաստատման և հասցեների տրամադրման (90 հասցե) գործընթացների կազմակերպման աշխատանքներ, որոնց հիման վրա ձեռք են բերվել պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերի համար 37 ՀՀ վկայական: Վկայականների ձեռքբերման գործընթացը շարունակվում է:	

		7. Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության գործընթացի արդյունավետության բարձրացում	2023թ. նոյեմբերի 21-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Էկոպարեկային ծառայության մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը՝ ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 1-ից:	
7.	4. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը	4. «Բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագրի իրականացում	Ծրագիրն իրականացվել է «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից 1. Կառուցվել է՝ • Աղավնավանք բնակավայրում՝ 1604գծ.մ ոռոգման ջրագիծ, • Հաղարծին բնակավայրում՝ 531գծ.մ ոռոգման ջրագիծ և 1 ջրարբիացման կետ, • Ուրցաձոր բնակավայրում՝ 1500գծ.մ ջրագիծ և 1 ջրարբիացման կետ, • Դաշտաքար բնակավայրում՝ 400գծ.մ ոռոգման ջրագիծ, • Շաղափ բնակավայրում՝ 1 ջրարբիացման կետ, 2. Ուրցաձոր և Շաղափ բնակավայրերում հիմնվել են կաթիլային ոռոգմամբ և հակակարկտային ցանցով 5,2 հա պտղատու այգիներ, 3. Ուրցաձոր բնակավայրում վերականգնվել է 3,0 հա դեգրադացված լանջը՝ կաթիլային ոռոգման համակարգով անտառայգու (ագրոպուրակ) հիմնման եղանակով: Ծրագիրն ամբողջովին ավարտվել է և ավարտական հաշվետվությունը 19.09.2023թ. ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:	

8.	5.Կենսաբազմազանու-թյան պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանա-կան և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառումը.	1.«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում:	Ընդունվել է «Կենդանական աշխարհի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2022 թվականի մարտի 23-ի N ՀՕ-74-Ն օրենքը:	
		4.ՀՀ տարածքում հանդիպող արդյունագործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և պաշարների գնահատման աշխատանքների իրականացում	Շրջակա միջավայրի նախարարության և ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև կնքված «Որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառման» պայմանգրի համաձայն, որի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 4 388.0 հազ. դրամ, ինչի շրջանակներում ներկայացվել է որսի կենդանիների ցանկում ներառված կենդանիների հաշվառման, որսի նպատակով օգտագործման թույլատրելի չափաքանակների, որսի ժամկետների, որսատեսակների տարածման հիմնական վայրերի վերաբերյալ հաշվետվություն, որի հիման վրա շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի օգոստոսի 16-ի N 284-Ն հրամանով սահմանվել է 2023-2024 թվականների որսի կենդանիների ցանկը, դրանց օգտագործման թույլատրելի չափաքանակները և որսի ժամկետները: 2023 թվականին ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել է 156 պայմանագիր՝ 212387 հատ թռչունների և 542	

			կաթնասունների սիրողական որս իրականացնելու համար:	
		5. Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում	Մշակվել է ծրագրային հայեցակարգ, որը ներկայացվել է 12 դոնոր կազմակերպությունների:	Պայմանով մրցույթի արդյունքում կատարման ենթակա աշխատանքների արժեքը կազմել է 61,5 մլն դրամ, սակայն ֆինանսավորման բացակայության պատճառով 2023 թվականի մարտի 16-ին պայմանագիրը լուծվել է՝ միջոցառման շրջանակներում նախատեսված աշխատանքները չեն իրականացվել:

9.	Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղման գործողությունների իրականացումը	7.«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» դրամաշնորհային ծրագրի «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվողականություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի իրականացում	Ծրագրի բաղադրիչն իրականացվել է «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից • 8 բազմաբնակարան շենքերի և 18 հասարակական շենքերի համար կազմվել են Էներգետիկ անձնագրեր և իրականացվել է էներգետիկ աուդիտներ, իրականացվել է ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների կրճատման հաշվարկներ, • էներգաարդյունավետ արդիականացման թեմայով մարզային տարբեր խոշոր համայնքներում տեղադրվել է 11 բաներային գովազդներ և մարզային 2 հեռուստաընկերությունով եթեր են հեռարձակվել ծրագրի հետ կապված հոլովակներ, • Հավաքագրվել և մշակվել են Երևան քաղաքի ավելի քան 300 հասարակական շենքերի էներգետիկ կառավարմանն առնչվող ցուցանիշները: Ծրագիրը երկարաձգվել է ևս 3 տարով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրով նախատեսված ոչ բոլոր շենքերն են ՄԱՋԾ-ի կողմից ջերմաարդիականացվել: Ելնելով վերոնշյալից մշակվել է 2023-2026թթ. գործողությունների նոր պլանը, բյուջեն և աշխատանքների շրջանակը: Կատարված աշխատանքների մասին հաշվետվությունը 30.11.2023թ. N 1/27.1/15778 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:	

10.		8.«Անցում էլեկտրական շարժիչով մեքենաների Հայաստանում» ծրագրի իրականացում	• Մշակվել և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվել է «ՀՀ-ում էլեկտրական շարժունակության զարգացման ռազմավարությունը», որը ներառում է քաղաքականության ազդեցության շրջանակը, ֆինանսական և նորմատիվային խթանները, ապահովագրական ռիսկերը: • Մշակվել և քննարկման փուլում է էլեկտրական շարժունակության ազգային քաղաքականության նախագիծը: • Տեղադրվել է 14 լիցքավորման կայան Երևանում և մարզերում, ինչպես նաև՝ ընթացքի մեջ են 6 լիցքավորման կայանների տեղադրման աշխատանքները:	
11.		9.«Հայաստանի անտառների կայունություն, հարմարվողականության բարձրացում և համայնքային զարգացման կանաչ աճի խթանում՝ կլիմայի փոփոխության մեղմման միջոցով» ծրագրի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում և հարմարվողակա-նություն՝ նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով» բաղադրիչի իրականացում	• «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Տաշիր Հրազդան և Սիսիան անտառտնտեսության մասնաճյուղերում կառուցվել են միաթունել ջերմատներ (ընդհանուր 3000քմ մակերեսով): • Ձեռք են բերվել և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Տաշիր, Սիսիան և Հրազդան անտառտնտեսության մասնաճյուղերին են հանձնվել մեկամյա տնկիների աճեցման համար նախատեսված թաղարներ (ընդհանուր 45 000 հատ) և թաղարների համար նախատեսված սեղաններ (ընդհանուր 900 հատ): •«Հայանտառ» ՊՈԱԿ-ի Սիսիան անտառտնտեսության մասնաճյուղում տեղադրվել է սերմերի պահպանության համար նախատեսված սառնարանային խցիկ:	Ծրագրով 3000քմ նախատեսված ջերմատների կառուցման 1000քմ ջերմատներ կառուցումը իրականացվել է 2022 թվականին, իսկ 700 հա անտառտնկման աշխատանքները չեն իրականացվել տարածքների հստակեցման, փոփոխման և քարտեզագրման աշխատանքների ուշացման պատճառով:

			• Ընթացքի մեջ է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Տաշիր, Սիսիան և Հրազդան անտառտնտեսության մասնաճյուղերում անտառտնկման աշխատանքների համար անհրաժեշտ գործիքների և սարքավորումների մատակարարման գործընթացը: • Ավարտվել են Սյունիքի մարզի Սիսիանի և Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջաններում անտառտնկման տարածքների քարտեզագրման աշխատանքները:	
19.		10. «Հայաստանի Հանրապետության արիդ (Վայոց ձորի մարզ) գոտում կլիմայի փոփոխության ընթացքի մեղմում և հարմարվողականության կարողությունների հզորացում» ծրագրի իրականացում	• Մշակվել և Կանաչ կլիմայի հիմնադրամ է ներկայացվել «Ծրագրային հայտի» հայեցակարգը, • Հիմնադրամի կողմից ներկայացված մեկնաբանությունների հիման վրա հայեցակարգը լրամշակվել և վերստին ներկայացվել է Կանաչ կլիմայի հիմնադրամ:	
20.	**7.**Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը.	3. ՀՀ քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորում	ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում օգտագործվող քիմիական նյութերի վերաբերյալ տվյալների թարմացման, հավաքագրված տվյալների մշակման նպատակով շրջակա միջավայրի նախարարությունը դիմել է ՊԵԿ-ին և ստացել 2021-2022թթ. ընթացքում ՀՀ ներմուծված և արտահանված ԱՏԳ ԱԱ 28 (անօրգանական քիմիական նյութեր.) և 29 (օրգանական քիմիական միացություններ) խմբերին դասվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվություն, իրականացվել է տվյալների ուսումնասիրություն, խմբավորուն և ցանկի կազմում:	

21.	**9.**Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների լքված, տիրազուրկ տեղամասերի ռեկուլտիվացիայի իրականացումը.	1. Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակում	2023 թվականի համար նախատեսված ռեկուլտիվացիայի նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացված 137,900.0 հազ. դրամի շրջանակներում կնքվել է 2 պայմանագիր՝ Նազիկ և Փխրուտ փակված պոչամբարների մասով՝ համապա-տասխանաբար 69,0 մրն դրամի և 68.9 մլն դրամի չափով: • Նախագծանախահաշվային փաստա-թղթերը մշակվել և ներկայացվել են ՇՄ նախարարություն:	
22.	Հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը.	1. ՀՀ տարածքում աղտոտված, դեգրա-դացված հողերի մոնիթորինգի իրականացում	Ընդերքօգտագործման հետևանքով հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման նպատակով իրականացվել են. - 3 տեղամասում (Մադան, Ալավերդու մկնդեղի գերեզմանոց, Ալավերդու լքված տիրազուրկ մետաղական հանքարդյունաբերության թափոնների լցակույտեր) դաշտային հետազոտական աշխատանքներ, - 3 տեղամասում հողերի նմուշառումներ, - հողի նմուշների լաբորատոր հետազոտություններից ստացված տվյալների վերլուծություն:	2023թ. համար նախատես-ված աշխատանքները կատարված են մասնակի: Հիմնական աշխատանքների իրականացման համար 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը չի բավարարվել, ֆինանսավոր-ման հնարավորությունները քննարկվում են նաև միջազգային կառույցների հետ:
23.	Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկման միասնական համակարգի	4. Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի	Մթնոլորտային օդի դիտացանցի արդիականցման նպատակով ներկայացվել է հայտ և 2024 թվականի ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է 300 000.0 հազ.դրամ՝ 2	Դիտացանցերի արդիականացման նպատակով, մասնավորապես մթնոլորտային օդի,

	կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի բարելավումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրմամբ	մոնիթորինգի դիտացանցերի արդիականացում	ավտոմատ դիտակայան ձեռք բերելու նպատակով:	ներկայացվել է ներդրումային հայտ, որը չի բավարարվել 2023թ. համար նախատես-ված աշխատանքներ չեն իրականացվել ֆինանսական միջոցների բացակայության պատճառով;
24.	Հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի արդիականացումը՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ.	1. Հիդրոօդերևութաբանական դիտար-կումների, կանխատեսումների, տեղե-կատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, տրամադրվող ծառայությունների որակի և հասանելիության մեխանիզմների զարգացում	2023 թվականի պետական բյուջեից 200,0 մլն դրամ հատկացումների շրջանակներում ձեռք է բերվել 9 ավտոմատ օդերևութաբանական կայան և 20 հողի խորքային ջերմաստիճանի և ձյան բարձրության չափման տվիչներ, որոնց տեղադրման աշխատանքները կավարտվեն 2024 թվականին:	

25.	16.Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի մասին հասարակության իրազեկումը, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, ոլորտի գործունեության թափանցիկության ապահովումը, նորարական տեխնոլոգիաների դերի բարձրացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն ակադեմիական ու գիտական ոլորտների հետ:	2. «Ապագա առաջնորդների ներգրավում, երիտասարդների համար հարմարվողա-կանության հիմնախնդիրների և լավագույն փորձի վերաբերյալ թվային կրթական մոդուլի ստեղծում» ծրագրի իրականացում	Ծրագիրն ամբողջությամբ ավարտվել է և հաշվետվությունը 30.11.2023թ. N1/27.1/15789 գրությամբ ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:	

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
1	2	3	4	5

NN	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1.	Ստեղծել ռազմաքաղաքական իրավիճակին, ռազմական սպառնալիքների գնահատված (կանխատեսվող) մակարդակին և հավանական ռազմական գործողությունների բնույթին համապատասխանող զինված ուժեր	1.1 ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների փոփոխությունների իրականացում, գործառույթների հստակեցում ու բաշխում	Շարունակվում են ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցված-քային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների փոփոխությունների իրակա-նացման, գործառույթների հստակեցման և բաշխման աշխատանքները: Հիմք ընդունելով 2022թ. հուլիսին «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, ՀՀ կառավարության 19.10.2023թ. թիվ 1825-Լ և թիվ 1820-Լ որոշումներով հաստատվել են ՊՆ և ԶՈՒ ԳՇ կանոնադրություններն ու կառուցվածքը, որոնց շրջանակներում հստակեցվել են ՊՆ և ԶՈՒ ԳՇ, ինչպես նաև վերջիններիս կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթներն ու կառուցվածքները: Կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություն-ների և կառուցվածքների հաստատումն ընթացքի մեջ է:	
		1.2 Զորամիավորումների, միավորումների, զորամասերի, ստորաբաժանումների կազմկառուցվածքի վերանայում	Կազմավորվել և վերահայտարարվել են մի շարք նոր զորամասեր:	
		1.3 ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների նոր կառուցվածքների ներդրման համար	Իրականացվում են ՊՆ և ԶՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների նոր կառուցվածքների ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական	

		անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում	փոփոխությունների նախագծերի մշակման աշխատանքներ:	
2.	ՀՀ զինված ուժերի համալրում ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով	2.1 ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների համալրում վերանայված կազմկառուցվածքին համապատասխանող սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով	2023թ. մատակարարվել են ՍՌՏ միջոցներ՝ համաձայն Սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման և նոր նմուշների ձեռքբերման նպատակով մի շարք արտասահմանյան և հայրենական ընկերությունների հետ կնքված ՍՌՏ միջոցների մատակարարման պայմանա-գրերի:	
3.	ԶՈՒ կառավարման համակարգի արդիականացում և կառավարման արդյունավետության բարձրացում	3.1 Շարունակել կապի համակարգի կատարելագործումը	Նոր պահպանության գոտի (տեղամաս) զբաղեցրած զորամիավորումների, զորամասերի առաջնագծում փռվել են օպտիկամանրաթելային, ծանր և դաշտային տարբեր տիպերի մալուխներ: Մարտական դիրքերում և ՀԴԿ-ներում, ինչպես նաև զորամասերի մշտական տեղակայման վայրերի կապը բարելավելու նպատակով տեղադրվել են տարբեր տեսակի կոմու-տատորներ: Նշված աշխատանքների արդյունքում բարելավվել է ՀՀ զինված ուժերում մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի դիրքերի «IP» թվային կապի համալրվածությունը և բարձրացվել է մարտական դիրքերի հետ լարային կապի ապահովվածությունը: Կահավորվել և ավարտին են հասցվել մի շարք կառավարման կետեր:	

			Շարունակվել է բանակային կորպուսների շարակազմերում և զորամասերի պահպանության տեղամասերի մարտական հենակետերում տեսադիտարկման համակարգերի տեղադրումը՝ համակցելով ընդհանուր ցանցին և հասցնելով ՀՈՒ օպերատիվ կառավարման կենտրոն: Շարունակվում են վերահաղորդիչ և նոր ռադիոցանցերի կազմակերպման, վերահաղորդիչ կետերի ռեզերվացման, նոր ռադիոկայաններով ռադիոցանցերի ստեղծման աշխատանքները: Շարունակվել են զինված ուժերում արբանյակային կապի համակարգի ներդրման աշխատանքները:	
		3.2 Շարունակել կառավարման ավտոմատացված համակարգի (ստացիոնար և շարժական տարրերով) արդիականացման աշխատանքները՝ զորատեսակների և ծառայությունների ղեկավարման ենթահամակարգերով	Ամբողջացվել են ավտոմատ կառավարման նոր համակարգի ստեղծման աշխատանքները: Իրականացվում է տվյալների ներմուծում, որից հետո կիրականացվի համակարգի տեստավորում:	
		3.3 Բարձրացնել հրամանատարների դերը, ստորաբաժանումների ինքնավարությունը, անձնակազմի շարժառիթավորվածությունն ու նախաձեռնողականությունը:	Զինված ուժերումում իրականացվում են «Հրամանատրում առաջադրանքի միջոցով» կառավարման հայեցակարգի ներդրման աշխատանքներ: Հայեցակարգում կենտրոնական դերը պատկանում է բոլոր օղակների հրամանատարներին, ինչը ենթադրում է որոշումների կայացման և ղեկավարման հարցում հրամանատարների	

			ինքնուրույնության և պատասխանատվության մակարդակի բարձրացում: ՀՀ ԶՈՒ-ում գործողության է դրվել արհեստավարժ սերժանտների ինստիտուտի կայացման ճանապարհային քարտեզ: Մի շարք ուսումնական զորամասերում բացվել և համալրվել են դասակի և վաշտի սերժանտների հաստիքներ:	
4.	Պաշտպանության ոլորտի ռազմավարական պլանավորման համակարգի ստեղծում, համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացում	4.1 Իրականացնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ և կազմել պետության պաշտպանության համար մեկ միասնական մտահղացում, ոլորտի Պետության պաշտպանության պլանավորման փաստաթղթերի մշակման համար (ԶՈՒ կիրառման պլան, ԶՈՒ ծավալման պլան, ԶՈՒ զարգացման պլան, Տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլան, Զորահավաքային պլան և այլն)	Կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքներով մշակվել և Անվտանգության խորհրդի որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2023-2027 թվականների զարգացման պլանը», «Հայաստանի Հանրապետության սպառազինության և ռազմական տեխնիկայի 2023-2027 թվականների զարգացման պետական ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կիրառման պլանը՝ ծավալման և զորահավաքային պլաններով (2023թ. փոփոխություններով և լրացումներով)»:	
		4.2 Մշակել և Անվտանգության խորհրդի հաստատմանը ներկայացնել նոր ռազմական դոկտրինի նախագիծը	Ռազմական դոկտրինի մշակման աշխատանքները կմեկնարկեն գործող Ազգային անվտանգության ռազմավարության վերանայումից հետո:	
5.	Գործող զորահավաքային նախապատրաստության, պահեստազորային պատ-	5.1. Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի համակարգի վերանայում, պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործում	Անցկացվել են պահեստազորային ԱԹՍ մասնագետ սպաների և ենթասպայական, սերժանտական և շարքային կազմերի վարժական հավաքներ:	

	ռաստության, պահեստազորայինների հաշվառման և զորահավաքի համակարգի համապատասխանեցում արդի պահանջներին		Մշակվել է ՀՀ պետական և տարածքային կառավարման, ՏԻՄ զորահավաքային մասնագետների (վերա)պատրաստման 10-օրյա պատրաստության ծրագիր: Պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործման նպատակով ընդլայնվել է վարժական հավաքների անցկացման շրջանակը, որոնք 2023թ.-ից անցկացվում են 25 օր տևողությամբ: Վարժական հավաքներն անցկացվում են նաև պահեստազորայիններին մարտական հերթապահության ներգրավմամբ:	
		5.2 Ստեղծել քաղաքացիների հաշվառման միասնական բազա	Ներկայումս ՊՆ ԶՀ և ԶՀ ծառայությունում իրականացվում է պահեստազորայինների տվյալները կառավարման ավտոմատացված համակարգ փորձնական ներբեռնման աշխատանքներ: Համակարգի պիլոտային ծրագիրը կգործարկվի 2024թ. 1-ին եռամսյակում:	
6.	ՀՀ-ում տարածքային պաշտպանության համակարգի ներդնում	6.1 «Պաշտպանության մասին» և այլ անհրաժեշտ ՀՀ օրենքներում կատարել փոփոխություններ և լրացումներ, ստեղծել տարածքային պաշտպանության կառավարման մարմին	Տարածքային պաշտպանության համակարգի ներդրման վերաբերյալ օրենքների նախագծերը վերջնական մշակման փուլում են: ՀՀ ՊՆ հրամաններով կազմավորվել է տարածքային պաշտպանության և պահեստային ուժերի հրամանատարությունը և հաստատվել են տարածքային պաշտպանության բրիգադների հաստիքները, որոնք վերահայտարարվել են նոր հաստիքներով:	

			ՏՊ և ՊՈՒՀ-ի կողմից մշակվել և ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի կողմից հաստատվել է տարածքային պաշտպանության բրիգադների կազմավորման, համալրման և մարտական ներդաշնակման մասին դիրեկտիվը, որի համաձայն մշակվել են կազմավորման և ներդաշնակման ու մարզումների և պարապմունքների անցկացման պլանները: Մշակվել է ՏՊ և ՊՈՒՀ պաշտոնամասնագիտական պատրաստության ծրագիրը:	
7.	Ռազմական ենթակառուցվածքի օպտիմալացում և զորքերի տեղակայման վայրերի բարելավում	7.1 Ռազմական ենթակառուցվածքն ու զորքերի տեղակայման վայրերը համապատասխանեցնել նորմատիվային պահանջներին	Հաստատվել է «ՀՀ ԶՈՒ զորանոցաբնակելի ֆոնդի զարգացման ծրագիրը»: Շարունակվում են նոր տեղակայման վայրերի կառուցման աշխատանքները: Սահմանված ընթացակարգերով աշխատանքներ են տարվում ՀՀ ՊՆ կարիքների համար տարածքների ձեռքբերման ուղղությամբ: Մի շարք ստորաբաժանումների համար ընտրվել են նոր տեղակայման վայրեր, հաստատվել է մոդուլային զինվանների կառուցման պլանը: 2 համայնքներում կառուցված զինվանները պատրաստ են շահագործման, իսկ 2024թ. շահագործման կհանձնվի ևս 4 զինվան: Ռազմական ենթակառուցվածքներն ու զորքերի տեղակայման վայրերը նորմատիվային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով	

			իրականացվում են անհրաժեշտ աշխատանքներ:	
8.	Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում, հրամանատարի դերի բարձրացում, զինվորական կարգապահության ապահովում և ոչ կանոնադրական հարաբերությունների նվազեցում	8.1 Զինված ուժերում զարգացնել զինծառայողի անհրաժեշտ բարոյական հատկությունները, ամրապնդել հոգեբանական կայունությունը և մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը: Բարձրացնել զինվորական կարգապահության մակարդակը և նվազագույնի հասցնել ոչ կանոնադրային հարաբերությունները Զինված ուժերում	Կազմվել է «2023-2027թթ. ՀՀ զինված ուժերում կարգապահության ապահովման միջոցառումների պլան-ժամանակացույցը»: ԶՈՒ զորամասերում բարոյահոգեբանական ապահովման ուղղությամբ իրականացվել են վերահսկողության և մեթոդագործնական օգնության ցուցաբերման աշխատանքներ: Նախապատրաստվել և ղեկավարման համար զորքեր են առաքվել «Նոր մոդելի արհեստավարժ սերժանտական կազմի պատվի կանոններ»-ը, «Զինծառայողների հոգևոր-բարոյական արժեհամակարգի բնութագրիչներ»-ը, «ՀՀ զինված ուժերի ավանդույթներն ու զինվորական արարողությունները (արարողակարգերը)» ուղեցույցը հաստատելու մասին համապատասխան հրամանները, տեղեկատվական-քարոզչական թեմատիկ նյութեր: 2023թ. ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության կառուցվածքում ավելացել է հատուկ գումարտակ, ՌՈ կառուցվածքում և հաստիքացուցակում կատարվել են մի շարք փոփոխություններ, իրականացվել են պրոֆիլակտիկ և կանխարգելիչ բնույթի, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:	

		8.2 Սահմանված թվով զորամասերում հոգեբանական օգնության կետերի ու հոգեբանական հաղթահարման արգելագոտիների լրասարքավորում	Հոգեբանական հաղթահարման արգելագոտիների կահավորման նպատակով զորամասերին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդագործնական օգնություն, իրականացվել են հոգեբանական հաղթահարման արգելագոտու կահավորման աշխատանքներ, ձեռք է բերվել համապատասխան նյութատեխնիկական միջոցների 23 լրակազմ, մշակված հոգեախտորոշիչ ծրագրային ապահովման համակարգում ներառելու նպատակով ընտրվել է հոգեբանական հետազոտությունների համար նախատեսված 28 մեթոդիկա՝ անձնակազմի և զինվորական կոլեկտիվների հոգեբանական վիճակի ուսումնասիրման գործընթացներում կիրառելու համար: Մուլտիպսիխոմետր հոգեախտորոշիչ համակարգի 16 ՖԼՕ թեստավորմամբ ՀՈՒ ուսումնական զորամասերի ժամկետային պարտադիր զինծառայողների շրջանում իրականացվել են «Անձի հոգեկան հատկանիշների ուսումնասիրման» աշխատանքներ, որոնց արդյունքները վերլուծվել և տվյալները փակցվել են ՀՊԱԳ-ներում: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:	
10.	Միջազգային համագործակցության և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի	10.1 Կատարելագործել ՀՀ-ՌԴ և ՀԱՊԿ շրջանակներում հավաքական պաշտպանության գործող ընթացակարգերը, զարգացնել համատեղ պլանավորման և ուժերի կիրառման կարողությունները	Իրականացվել են ՀԱՊԿ անդամ պետությունների նախարարությունների և գերատեսչությունների աշխատանքային խմբերի հանդիպումներ և խորհրդատվություններ՝ ՀԱՊԿ անդամ	

	հնարավորությունների ընդլայնում		պետությունների օդային տարածքում թռիչքների կազմակերպման ու իրականացման, ռազմական ավիացիայի միջազգային թռիչքների, ռազմական բժշկության, ՀԱՊԿ ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի նախագահին առընթեր ռազմատնտեսական համագործակցության և այլ հարցերով: Հաշվի առնելով ՀԱՊԿ ուղղությամբ առկա ռազմաքաղաքական ճգնաժամը, կազմակերպության շրջանակներում համատեղ պլանավորման աշխատանքներն առժամանակ կասեցվել են, ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչները չեն մասնակցել ՀԱՊԿ զորավարժություններին և վարժանքներին:	
		10.2 Ամրապնդել ՀՀ-ՌԴ համատեղ (միացյալ) և ՀԱՊԿ ուժերի մարտական կարողությունները, բարձրացնել ՀՀ ԶՈՒ փոխգործունակության աստիճանը	ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի 2023թ. աշխատանքային պլանի համաձայն իրականացվել են ՊՆԽ առընթեր մարզական խորհրդի, ՊՆԽ առընթեր ԱՀՏԱ գծով ղեկավար մարմինների, ռազմահուշային և ՀՕՊ հարցերով համադրման կոմիտեների նիստեր, ԶՈՒ ՀՕՊ զորքերի հրամանատարների ուսումնամեթոդական հավաք, ՊՆԽ առընթեր թռիչքների անվտանգության հարցերով, պետությունների ռազմատեղագրական ծառայությունների պետերի համակարգող կոմիտեի նիստեր և այլն:	

			Այլ պետությունների և կազմակերպությունների հետ ՀՀ ԶՈՒ փոխգործունակության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումները և խմբերը մասնակցել են թվով 10-ից ավելի զորավարժությունների և վարժանքների, որոնցից մեկն անցկացվել է Հայաստանում (“Արծիվ գործընկեր” հայ-ամերիկյան զորավարժություն): ՀՀ ԶՈՒ խաղաղապահ բրիգադն անցել է ՆԱՏՕ-ի ՕԿՀ ինքնագնահատում:	
		10.3 Իրականացնել բազմակողմ և երկկողմ ձևաչափով ռազմաքաղաքական խորհրդակցություններ	Իրականացվել են Պաշտպանության նախարարի, ԳՇ պետի և պաշտպանության նախարարի տեղակալների այցերը ԱՄՆ, Ֆրանսիա, Հունաստան, Կիպրոս, Վրաստան, Հնդկաստան, Գերմանիա, Բելգիա, ՉԺՀ, ԱՄԷ, Եգիպտոս, Գանա: Հայաստան են այցելել Վրաստանի պաշտպանությնա նախարարը, ԱՄՆ Կանզաս նահանգի նահանգապետը և ազգային գվարդիայի հրամանատարը, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, ԱՄՆ և ԵՄ մի շարք բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, կազմակերպվել են մի շարք այլ պետությունների բարձրաստիճան զինվորական պատվիրակությունների այցեր: Կազմակերպվել են 100-ից ավելի հանդիպումներ տարբեր պետությունների և կազմակերպությունների բարձրաստիճան	

			պաշտոնյաների, պատվիրակությունների և դեսպանների հետ: Կազմակերպվել են Հայաստան-Հունաստան, Հայաստան-Հունաստան-Կիպրոս, հայ-ամերիկյան, հայ-բրիտանական, հայ-ֆրանսիական, ՀՀ-ՆԱՏՕ ձևաչափերով պաշտպանական և ռազմաքաղաքական խորհրդակցություններ: Երկկողմ ձևաչափով համագործակցության ամենամյա տարեկան պլաններ են ստորագրվել Հունաստանի, Կիպրոսի, Լիտվա, Լեհաստան, Բուլղարիա, Գերմանիա, Ֆրանսիա, Վրաստան, Միացյալ Թագավորության, Հնդկաստանի (1-ին անգամ) հետ, ինչպես նաև ՀՀ-Հունաստան-Կիպրոս եռակողմ ամենամյա պլանը:	
		10.4 Ապահովել ՀՀ ներգրավվածությունը միջազգային գործողություններին	2019թ. փետրվարի 7-ից սկսած ՀՀ ԶՈւ մասնագետները ՌԴ ԶՈՒ զինծառայողների հետ համատեղ մասնակցում են Սիրիայում իրականացվող մարդասիրական առաքելությանը: Մասնագետների հերթափոխերն իրականացվում են յուրաքանչյուր չորս ամիսը մեկ անգամ: ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումը շարունակում է խաղաղապահ առաքելության իրականացումը Կոսովոյում: Զինծառայողների հերթափոխն իրականացվում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ: ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումը շարունակում է խաղաղապահ առաքելությունը Լիբանանում:	

			ՀՀ ԶՈՒ ներկայացուցիչը, որպես շտաբային սպա 2023թ. մայիս-նոյեմբեր ամիսներին մասնակցել է Բամակոյում (Մալի) ՄԱԿ-ի Մինուսմա առաքելությանը, որից հետո ՄԱԿ-ի որոշմամբ առաքելությունը փակվել է:	
		10.5 Ապահովել ՀՀ պաշտպանության համակարգի բարեփոխումների խորհրդատվական ու փորձագիտական աջակցություն	ՆԱՏՕ-ի կողմից մշակվել և ՀՀ ՊՆ քննարկմանն է ներկայացվել Հայաստան-ՆԱՏՕ Անհատապես հարմարեցված գործընկերության ծրագրի 1-ին նախագիծը: ՆԱՏՕ-ի շտաբ-կայան է ներկայացվել Պլանավորման և Վերանայման Գործընթացի հարցաշարը: ՆԱՏՕ-ի «Պաշտպանական կրթության զարգացման» հայաստանյան ծրագրի 2023թ. համագործակցության պլանի շրջանակներում իրականացվել են ռազմակրթական համակարգի բարեփոխումների խորհրդատվական մի շարք այցեր: Երկկողմ համագործակցության շրջանակներում ՀՀ ԶՈՒ բարեփոխումների ուղղությամբ խորհրդատվական և փորձագիտական աջակցության ծրագրեր են պլանավորվել Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի հետ: Խորհրդատվական աջակցությունն ուղղվում է ՀՀ ԶՈՒ ղեկավարման համակարգի և կառուցվածքի, պաշտպանական պլանավորման, համազորային և ըստ զորատեսակների մարտական պատրաստության ծրագրերի	

			վերանայման, սերժանտական համակարգի ներդրման, ՀԱՄ ներդրման, տարածքային պաշտպանության համակարգի ներդրման, ռազմական կրթության ծրագրերի վերանայման, նոր ՍՌՏ յուրացման և ինտեգրման և այլ ուղղություններով:	
		10.6 Զարգացնել դաշնակից և գործընկեր երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցությունը	Ռազմատեխնիկական համագործակցության դիվերսիֆիկացման և աշխարհագրության ընդլայնման քաղաքականության շրջանակներում համագործակցություն է ծավալվել ինչպես արևմտյան, այնպես էլ ասիական տարածաշրջանի երկրների հետ: ՍՌՏ միջոցների պայմանագրեր են ստորագրվել ռուսական, ֆրանսիական, հնդկական և այլ պետությունների ընկերությունների հետ:	
11.	Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և բարեվարքության ամրապնդում	11.1 ՊՆ ՌՈՒՀ-ի ՍՈԲԿ-ում և ՀՇՖ-ում «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում պաշտպանության և անվտանգության ոլորտներում» կրթական ծրագրի և «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի վերանայված ծրագրի ներդրում	«Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում առարկան /պիլոտային ծրագրով/ ներդրվել է Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի սպաների որակավորման բարձրացման կենտրոնի կրթական ծրագրերում, իսկ հրամանատարաշտաբային ֆակուլտետի համար մշակված պիլոտային ծրագիրը փորձաքննության է ենթարկվել և հավանության է արժանացել:	
		11.2 Կանանց իրավունքների պաշտպանության թեմաներով դասընթացների կազմակերպում, ԶՈՒ ստորաբաժանումներին քաղաքացիական և	Պաշտպանության նախարարի՝ կին զինծառայողների հետ տարվող աշխատանքների գծով օգնականը և ՄԻԲԿ կենտրոնի ներկայացուցիչը անակնկալ այցեր	

		քաղաքական իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում	են իրականացրել ՊՆ զորամասեր՝ կին զինծառայողների շրջանում առկա խնդիրների վերհանման նպատակով: Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, ՄԱԿ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024թթ. գործողությունների ազգային երկրորդ ծրագրի շրջանակներում իրականացվել են իրազեկման դասընթացներ: 2023թ. հունիսի 26-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու ցանկություն ունեցող իգական սեռի քաղաքացիներին հնարավորություն է ընձեռնվել համապատասխան տարվա մինչև մարտի 1-ը կամ հոկտեմբերի 1-ը դիմում ներկայացնել իրենց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչին մասնակցելու համար՝ 6 ամիս ծառայության ժամկետով: Կառավարության որոշմամբ սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգում ներառվել են դրույթեր, որոնք հնարավորություն են տալիս 18-27 տարեկան իգական սեռի քաղաքացիներին անցնելու կամավոր պարտադիր զինվորական ծառայություն:	

			Ծառայության ժամկետի ավարտից հետո նախատեսվում է հավելավճարի տրամադրում, ինչպես նաև հնարավորություն՝ անցնելու պայմանագրային ծառայության: ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ՊՆ զորամասի կազմում ձևավորվել է հրաձգային գումարտակ (պայմանագրային կազմավորում), որը պլանավորված է համալրել բացառապես կին զինծառայողներով: Գումարտակի համալրման գործընթացը շարունակվում է:	
		11.3 Պաշտպանության ոլորտում մշտադիտարկում և քաղաքացիական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության զարգացում	Հանդիպումներ են իրականացվել զինված ուժերում քաղաքացիական վերահսկողություն և մշտադիտարկում իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:	
12.	Ռազմական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակում և իրագործում, ռազմակրթական համակարգի մրցունակության բարձրացում, ռազմական գիտության զարգացում	12.1 Սահմանել ռազմամասնագիտական թեքումով դասախոսների ընտրության համար արժանիքահեն և մրցութային ճկուն ընթացակարգեր	Պաշտպանության նախարարի հրամանով սահմանվել են ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերը, հաստատվել են այդ կազմի ընտրության, թափուր պաշտոնների համալրման կարգերը:	
		12.2 Մշակել և ընդունել ռազմական կրթության նկատմամբ գրավչության բարձրացմանն ուղղված ծրագիր և դրա իրականացման ժամանակացույց	ՀՀ կառավարության 14.09.2023թ. N 1588-Ն որոշմամբ բարձրացվել են ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովության չափերը, սահմանվել են դրամական ապահովության չափերի ավելացում ուսման առաջադիմությամբ պայմանավորված և՛ ՀՀ, և՛ օտարերկրյա ռազմաուսումնական	

			հաստատություններում սովորող կուրսանտների համար: ՀՀ կառավարության 09.02.2023թ. N 162-Ն որոշմամբ սահմանվել է պայմանա-գրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների ատեստավորման կարգը, ՀՀ կառավարության 09.02.2023թ. N 166-Ն որոշմամբ՝ այդ ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարների չափերը և վճարման կարգը: ՀՀ կառավարության 27.10.2022թ. N 1665-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ ռազմաուսումնական հաստատություն ավարտած և սպայական պաշտոնի նշանակված զինծառայողին անհատույց օգտագործման իրավունքով հատկացվում է բնակարան: Պաշտպանության նախարարի հրամանով գործող զինծառայողներից (այդ թվում՝ կուրսանտների ընդգրկմամբ) ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնց անդամները պարբերաբար (տարվա ընթացքում 4 անգամ) հանդիպումներ են ունենում հանրապետության դպրոցների բարձր դասարանների աշակերտների հետ՝ վերջիններիս՝ ռազմական կրթություն ստանալու և զինվորականի մասնագիտու-թյունն ընտրելու կողմորոշման նպատակով,	

			նախատեսվում է հանդես գալ ՀՀ ԲՈՒՀ-երում սովորող՝ սպաների, նրանց զավակների, մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողների և նրանց զավակների համար ուսման վարձի զեղչեր սահմանելու օրենսդրական նախաձեռնությամբ: Ներկա փուլում կազմվում է ֆինանսական գնահատականը՝ նախագծի իրականացման նպատակահարմարությունը որոշելու համար:	
		12.3 Ռազմական գործողությունների պլանավորման ու վարման ձևերի վերանայում	ՀՀ ԱԽ կողմից հաստատվել է ՀՀ զինված ուժերի կիրառման պլանը՝ ծավալման և զորահավաքային պլաններով: Մշակվել և գործողության է դրվել «ՀՀ զինված ուժերի պատրաստության հայեցակարգը», «ՀՀ զինված ուժերում մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն իրականացնելու կանոնները», «ՀՀ զինված ուժերում մարտական հերթապահության կազմակերպման և իրականացման կարգը», «ՀՀ զինված ուժերում մարտական հերթապահության նախապատրաստման և վերահսկման կարգը», «ՀՀ զինված ուժերում տեսադիտարկման համակարգերի կիրառման կանոնները», «Մարտական պատրաստականության ուսումնամեթոդական ուղեցույցը»: Լրամշակման փուլում են գտնվում «Օպերացիաների նախապատրաստման և	

			վարման հիմունքներ» և «Օպերատիվ շտաբների ծառայության հրահանգ» ձեռնարկները:	
13.	Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխում: Տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացում, օրենսդրական դաշտի կատարելագործում	13.1 Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ տեղեկատվական անվտանգության և կիբեռհարձակման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով կիբեռհարձակման դեպքերի արագ արձագանքման խմբերի ընդլայնում	ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գործառույթներում ավելացվել են տեղեկատվական հակա-պայքարի և հակազդման միջոցառումների իրականացման գործառույթներ, ներդրվել են տեղեկատվական հոսքերի մշտադիտարկ-ման, վերլուծության, գնահատման նոր մոտեցումներ, ինչը հնարավորություն է տվել իրականացնել ներքին և արտաքին լսարանի առավել արհեստավարժ մշտադիտարկում: Զինծառայողների մեդիագրագիտության մակարդակը բարձրացնելու նպատակով ՊՆ զորամասերում պարբերաբար իրականացվել են «Տեղեկատվական անվտանգության» թեմայով մեթոդագործնական պարապմունք-ներ:	
		13.2 Հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացում, թիրախավորող բացասական տեղեկատվական հոսքերին և հավանական հակառակորդի կողմից իրականացվող սոցիալական, ազգային, կրոնական ատելության, զինված ուժերի վարկաբեկմանն ուղղված քարոզչությանը հակազդելու գործընթացի ապահովում:	Զինվորական ծառայության գրավչության բարձրացման նպատակով իրականացվել են զինված ուժերում ներդրված շարքային և սպայական կազմերի պայմանագրային զինվորական ծառայության անցման նոր համակարգի օրենսդրական և գործնական հնարավորությունների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ: Ճգնաժամային իրավիճակներում պաշտպանության նախարարության, ՀԼՄ-ների, տեղական ինքնակառավարման	

			մարմինների, ՊՆ ՌՈ և ՆԳՆ ոստիկանության փոխգործակցության մակարդակի բարձրացման, տեղեկատվական միասնական միջավայրի ստեղծման, հանրային իրազեկման գործընթացի պատշաճ կազմակերպման և ճգնաժամային իրավիճակներում տեղեկատվական դաշտը կառավարելի դարձնելու նպատակով 2023թ. օգոստոսի 22-23-ը գործնական և տեսական փուլերով անցկացվել է **«Փակ շղթա-2023»** տեղեկատվական վարժանքը: ՊՆ-ում հավատարմագրված ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ պարբերաբար անցկացվել են տարբեր ձևաչափերով հանդիպումներ, ինչպես նաև այցելություններ առաջնագծի զորամասեր, ամրացված շրջաններ՝ ինժեներական և ամրաշինարական աշխատանքների իրականացման հատվածներ: Հայաստանի հանրային ռադիոյի հետ համագործակցությամբ նախաձեռնվել և իրագործվել է «Հրամանատարական դիտակետ» հաղորդաշարը:	
14.	Սոցիալական պաշտպանության ապահովման և կենսաթոշակային ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում, սոցիալական երաշխիքների	14.1 Ապահովել «Մատչելի բնակարան զինծառայողին» պետական նպատակային ծրագրի իրականացման հասանելիությունն ու շարունակականությունը, նախաձեռնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում	ՀՀ կառավարության 22.08.2019թ. N 1091-Ն որոշմամբ հաստատվել է Սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության	

	ընդլայնում և զինվորական ծառայության գրավ-չության ապահովում	ստանալու իրավունքը պահպանած զինծա-ռայողների բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը	նպատակային ծրագիրը և սահմանվել է ՊՆ համակարգի սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման կամ բնակելի տան կառուցման նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը: ՀՀ կառավարության 18.05.2023թ. N 786-Ն որոշմամբ սահմանվել է առանց վիճակահա-նության ծրագրում ընդգրկել 2023թ. ծրագրի շրջանակներում դիմում-հայտ ներկայացրած և ռեեստրում գրանցված զինծառայողներին: Ծրագրի միջոցով 31.12.2023թ. դրությամբ բնակարան կամ բնակելի տուն են ձեռք բերել թվով 1537 զինծառայող, որից 538-ը՝ 2023թ., այդ թվում՝ 31-ը՝ 2022թ. ծրագրի մասնակիցներից և 507-ը՝ 2023թ-ի: 2023թ. հաշվետու ժամանակահատվածում 916.705 մլն դրամի շրջանակներում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 78 շահառուների մեկ տարի ժամկետով հատկացվել է ԲԳՎ (Բնակարանի գնման վկայագիր), որից 40 զինծառայող արդեն իսկ ձեռք են բերել բնակարան կամ բնակելի տուն: Փատացի ծախսը կազմել է 460.569 մլն դրամ:	

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

NN	Նպատակը	Միջոցառումների անվանումը	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.		1.2 Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում	Մշակվել է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և ներկայումս գտնվում է լրամշակման փուլում: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 26.09.2023թ. «Համայնքային ծառայողի վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» 09-Ն հրամանով հաստատվել են համայնքային ծառայողների վարքագծի միասնական կանոնները: ՀՀ վարչապետի մոտ 03.04.2023թ. կայացած՝ ՀՀ Արագածոտնի մարզի 2022 թվականի հաշվետվության մասին խորհրդակցության արձանագրության 3.6 կետի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2024 թվականի կարիքների համար դասընթացների կազմակերպման ծառայությունների գնման հայտով նախատեսվել է թվով 300 համայնքների ղեկավարների, համայնքների ղեկավարների տեղակալների և ավագանու անդամների վերապատրաստումներ:	

			Համայնքային ծառայության ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման շրջանակներում՝ կրկին լրամշակվել և ՀՀ մարզերի համայնքներին է տրամադրվել «Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման» մեթոդական ուղեցույցը:	
2.	Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում	2.1. Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացում:	ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների առօրյա հոգսերը հնարավորինս մեղմելու և կենսապայմանները բարելավվելու նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշումը, որով սահմանվում է Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալները, փոխհատուցման կարգն ու փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների ցանկը: 2023 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացված 1 005 372.6 հազ. դրամ գումարը ՀՀ կառավարության 23.02.2023թ. N243-Ն և 21.12.2023թ. N2236-Ն որոշումներով բաշխվել է համապատասխան ՀՀ մազրպետնների աշխատակազմերի և Ջրային կոմիտեի միջև՝ սահմանամերձ 13 համայնքների 82 բնակավայրերին գազի, էլեկտրաէներգիայի և ոռոգման ջրի սակագնի մասնակի	

			փոխհատուցման և անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցման համար: Փաստացի ծախսն ըստ կատարողների կազմել է ՀՀ Արարատի մարզ՝ 19079.3 հազ. դրամ, ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 119582.9 հազ. դրամ, ՀՀ Սյունիքի մարզ՝ 202333.4 հազ. դրամ, ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 57276.7 հազ. դրամ, ՀՀ Տավուշի մարզ՝ 549165.9 հազ. դրամ, Ջրային կոմիտե՝ 52792.3 հազ. դրամ, ընդամենը՝ 1 000 230.6 հազ. դրամ: Չօգտագործված գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:	
		2.2 «ՀՀ 2022-2027թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը:	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը սերտ համագործակցում է ԵՄ կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ–ի զարգացման ծրագրի ու Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագրի փորձագետների հետ: Աշխատանքներ են տարվել իրավիճակի վերլուծության, համապատասխան խնդիրների վերհանման, հիմնական նպատակների ձևակերպման ու համապատասխան թիրախների սահմանման ուղղությամբ, որոնց ապահովմանն ուղղված են լինելու նախատեսվող քաղաքականությունն ու միջոցառումները: Ակնկալվում է, որ առաջիկայում ՀՀ 2024–	2023թ. համայնքների միավոր-ման գործընթացի արդյունքում անհրաժեշտություն էր առաջացել հստակեցնել և համադրել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները, որով պայմանավորված՝ ՀՀ 2022-2027թթ. տարածքային զարգացման ռազմավարու-թյունը վերանայման ու լրամշակման կարիք ունի: Այժմ լրամշակման փուլում է:

			2030թթ. տարածքային զարգացման ռազմավարության նախագիծը կներկայացվի շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանը:	
4.	Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանն ուղղված՝ ՀՀ համայնքների ենթա-կառուցվածքների զարգացում	4.1 ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում:	Սուբվենցիայի ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու, այդ թվում՝ սուբվենցիայի փաթեթների ներկայացման և քննարկման ժամկետների հստակեցման, փողոցների, ջրամատակարարման ու ոռոգման համակարգերի, նախադպրոցական հաստատությունների, համայնքապատկան շենքերի կառուցման ու նորոգման ծրագրերի հստակեցման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ մշակվել և ՀՀ կառավարության 02.03.2023թ N 270-Ն և 02.11.2023 թ. N 1909-Ն որոշումներով համապատասխան փոփոխություններ ու լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 16.11.2006թ N 1708-Ն որոշման մեջ: 2023 թվականի սուբվենցիայի ծրագրերի քննարկման համար անց է կացվել սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի թվով վեց նիստ և հավանության է արժանացել սուբվենցիայի 273 ծրագիր՝ 92,72 մլրդ դրամ ընդհանուր արժեքով և 49,4 մլրդ դրամ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ: Դրա հետ մեկտեղ իրականացվել են 2021-2022 թթ հաստատված և շարունակվող ծրագրերի իրականացման աշխատանքները:	

			Արդյունքում ՀՀ 2023 թվականի պետական բյուջեից համաֆինանսավորվել է շուրջ 446 ծրագիր և ենթածրագիր՝ 30,3 մլրդ դրամով: Դրա հետ մեկտեղ, սուբվենցիայի կարգում կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ համայնքներից հավաքագրվել, ուսումնասիրվել և քննարկվել են 2024թ. թվով 380 սուբվենցիայի նախնական հայտ՝ 115,4 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, այդ թվում՝ 60,82 մլրդ դրամ ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ, 51,71 մլրդ դրամ՝ ՀՀ համայնքների համաֆինանսավորմամբ և 2,88 մլրդ դրամ՝ այլ ներդրողների համաֆինանսավորման:	
		4.2 Համայնքների խոշորացման արդյունքում ձևավորված համայնքների խոցելիության գնահատման նոր համակարգի մշակում, որը հիմք կհանդիսանա ենթակառուցվածքները բարելավելու նպատակով իրականացվելիք ներդրումային ծրագրերի մշակման համար:	Մշակվել է համայնքների խոցելիության գնահատման նոր համակարգ (մեթոդական փաստաթուղթ), որը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Համակարգը պիլոտավորվել է ճանապարհային, ջրային և էներգետիկ ենթակառուցվածքների մասով: Համակարգում մուտքագրելով համայնքների (բնակավայրերի մակարդակով) վերաբերյալ առակա տեղեկատվությունը, այն ավտոմատ գեներացվում է և ցույց է տալիս ենթակառուցվածքների խոցելիության աստիճանը, որը հնարավոր է դիտարկել/համեմատել համայնքի, մարզի և/կամ Հայաստանի Հանրապետության մակարդակով:	

5.	Միավորված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում	5.2 Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում:	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքում կառուցվել է հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրը՝ ենթակառուցվածքների ներառմամբ: Իսկ փակման ենթակա աղբավայրերի մասով՝ համայնքներում արդեն իսկ փակվել են շուրջ 100 աղբավայր և աղբանոց, հաշվի առնելով, որ համայնքների միավորման գործընթացից հետո աղբի փոխադրումն ու տեղադրումն իրականացվում է հիմնականում կենտրոնացված ձևով:	
		5.3 Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների ապահովում:	ՀՀ Ազգային ժողովը 13.04.2023թ. ընդունել է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնցով առաջարկվում է օրենսդրական և ինստիտուցիոնալ հենք ստեղծելով՝ բարելավվել աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ոլորտը: Մշակվել են ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի բոլոր բնակավայրերի համար աղբահանության «խելացի» սխեմաները, այդ թվում՝ ելնելով հաշվարկված գոյացող աղբի քանակից՝ յուրաքանչյուր բնակավայրում աղբամանների քանակի ու տեղադիրքերի, աղբատար մեքենաների քանակի ու տեսակի և արդյունավետ երթուղիների ներառմամբ,	

			որոնց կիրառումը նախատեսվում է 2024 թվականի ընթացքում: Մշակվել է «Հանրապետության 8 մարզերում կոշտ թափոնների ինտեգրված համակարգի ներդրման» ծրագրի շրջանակներում ուսումնասիրություն կատարելու և համապատասխան առաջարկություններ ներկայացնելու համար տեխնիկական առաջադրանքը, որը համաձայնեցվել ՎԶԵԲ-ի հետ: Նշված տեխնիկական առաջադրանքի հիման վրա ՎԶԵԲ-ի կողմից ընտրվել է համապատասխան խորհրդատվական ընկերությունը, որն իր աշատանքները սկսել է 2023թ. հունիս ամսվա կեսերից: Ակնկալվում է, որ ուսումնասիրության արդյունքներով կներկայացվեն հանրապետության տարածքի աղբահանության գոտիավորման սխեմաները, աղբահանության կիրառելի մոդելը, այդ թվում՝ ինստիտուցիոնալ և կառավարման մասով, ինչպես նաև գոյացող աղբի հավաքման, տեսակավորման, վերամշակման մասով: Համակարգվել են Շվեդական SIDA և Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի թափոնների կառավարման քաղաքականու-թյան իրագործման բարելավում» ծրագրի բաղադրիչ հանդիսացող տեսակավորված աղբի հավաքման մոդելի կիրառմանն	

			ուղղված աշխատանքները, որոնց շրջանակներում ծրագրի փորձնական համայնքում՝ Սևան բնակավայրում, մշակվում է սկզբնաղբյուրում աղբի տեսակավորման ազգային մոդել: Տարվա ընթացքում բնակավայրում իրականացվել են լայնածավալ իրազեկման աշխատանքներ:	
6.	ՀՀ պետական հանրա-կրթական դպրոցական շենքերի սեյսմիկ ան-վտանգության բարելավում	6.1 Սեյսմիկ տեսանկյունից առավել խոցելի և առաջնահերթ կարգով բարելավման անհրաժեշտություն ունեցող դպրոցական շենքերի ուժեղացում/ նորերի կառուցում 2021-2023թթ	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում կառուցվել և շահագործման է հանձնվել 16 դպրոց: Ընթացքի մեջ են 20 դպրոցի շինարարական աշխատանքները և 10 դպրոցի նախագծանախահաշվային փաստաթղթերը գտնվում են փորձաքննության փուլում: ՀՀ կառավարության 02.11.2023թ N1873-Լ որոշմամբ հավանության է արժանացել ԱԶԲ-ի հետ լրացուցիչ վարկային համաձայնագրի ստորագրման առաջարկությունը, որով նախատեսվում է ծրագրի շրջանակներում ներգրավվել լրացուցիչ 66.1 մլն դոլարին համարժեք դրամ:	
7.	Միավորված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիներին տրամադրվող վարչական	7.1 Միավորված համայնքներում համայնքային կառավարման տեղեկատ-վական համակարգի (ՀԿՏՀ) ներդրում:	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվող համայնքային կառավարման տեղեկատվական համա-կարգը (ՀԿՏՀ) 2023թ.-ի ընթացքում արդիականացվել և տեղայնացվել է 26	

	ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում		միավորված համայնքների 210 բնակավայրերում: Վերոնշյալ գործընթացի շրջանակում թարմացվել է նշյալ համայնքների բնակավայրերում գործող վարչական գրասենյակների կազմակերպչական տեխնիկայի պարկը. աշխատակազմերին տրվել են սերվերներ, համակարգիչներ, տպիչ և տեսաներածիչ սարքեր: ՀԿՏՀ-ն շահագործվում է խոշորացված բոլոր համայնքներում:	
		7.2 Միավորված բազմաբնակավայր համայնքներում «մեկ պատուհան» սկզբունքով գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակների (ՔՍԳ) հիմնում:	2023 թվականի ընթացքում քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՍԳ) է հիմնվել ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան միավորված բազմաբնակավայր համայնքում: Արդիականացվել են Տավուշի մարզի Իջևան և Արարատի մարզի Վեդի միավորված համայնքներում գործող ՔՍԳ-ները: Ներկա պահին ընթացքի մեջ են Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի ՔՍԳ-ի շինարարական աշխատանքները: ՔՍԳ-ներ են գործում հանրապետության 55 համայնքների 75 բնակավայրերի վարչական գրասենյակներում: Խոշորացված 64 համայնքներից ՔՍԳ չունեն 9-ը, որոնց բոլորի դեպքում պատճառը վարչական շենքում գրասենյակի նորմալ գործունեության համար անհրաժեշտ մակերեսով տարածքի բացակայությունն է:	

		7.3«Պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների ցանկը հաստատելու, գործառույթների իրականացումն օպերատորին պատվիրակելու, գործառույթների ցանկը հաստատելու, օպերատորի հետ կնքվող ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և օպերատորին առաջադրվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ ենթադրող որոշման նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ:	Նախագիծը վերաբերում է պետական ծառայություններ մատուցող օպերատորների ցանկում նոր համայնքների ներառմանը՝ հաշվի առնելով մինչ այժմ գրանցված դրական արդյունքները: 2023 թվականի ընթացում նախատեսված էր իրականացնել ուսումնասիրություններ և մշտադիտարկումներ այն ՏԻՄ-երի կողմից տրամադրվող ծառայությունների (այդ թվում՝ պետական) վերաբերյալ: Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների վերաբերյալ տեղեկանքը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Միաժամանակ, Որոշման նախագծին անհրաժեշտ լիազորող նորմեր սահմանելու նպատակով ՏԿԵՆ-ի կողմից շրջանառվում է օրինագծերի փաթեթ, որը քննարկվել է նաև ԱԺ համապատասխան հանձնաժողովների հետ:	
9.	Միջհամայնքային Համագործակցության տարբեր ձևերի ներդրում	9.1 «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ:	ԵԽ CDDG հարթակի միջոցով հավաքագրվել է անդամ երկրներում միջհամայնքային համագործակցության ձևերի կիրառման վերաբերյալ տեղեկատվություն: Այն ամփոփվել է և կտեղայնացվի օրենքի նախագծում: Ներկայումս կատարվում են նախագծի մշակման նախապատրաստման աշխատանքներ, մշակվում է աշխատանքային խումբ ստեղծելու մասին Նախարարի հրամանի նախագիծ:	2024թ. նախատեսվում է մշակել և Վարչապետի աշխատակազմ ներկայացնել «Տեղական ինքնակառավար-ման մասին» օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ օրենքի նախագիծ:«Միջհամայնքային համագործակցություն» վերտառությամբ գլուխը

				նախատեսվում է ներառել այդ նախագծում:
		9.2 Օրենքով միավորում ստեղծելու վերաբերյալ օրենսդրական փաթեթի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ:	Միավորված համայնքների առօրյա գործունեությունը հունի մեջ մտնելուց հետո՝ նախատեսվում է մշակել պիլոտային ծրագիր՝ օրենքով միջհամայնքային միավորում ստեղծելու նպատակով:	
11.	ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի կազմում և հրապարակում (շարունակական)	11.1 ՀՀ-ի կողմից ԱՃԹՆ/EITI-ի (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) շրջանակներում՝ հանքարդյունաբերության ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ տարեկան ազգային զեկույցի նախագծի կազմում, ներկայացում ՀՀ կառավարություն և հրապարակում	2023թ. հունիսին ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի կողմից ընդունվել է ԱՃԹՆ-ի 2023թ. ստանդարտը, որն, ի լրումն գործող պահանջների, համալրվել է մի շարք պարտադիր, խրախուսվող ու ակնկալվող պահանջներով, որոնք վերաբերում են հետևյալ 4 թեմատիկ խմբերին՝ հակակոռուպցիոն հարցեր, էներգետիկ անցում, տվյալների հավաքագրում, սոցիալական, բնապահպանական և գենդերային հարցեր: ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությունն առաջարկել է նոր պահանջների կիրառումը կամ դրանց ներդրման նպատակահարմարության ուսումնասիրությունը ներառել կազմվելիք ազգային զեկույցում: Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 5-րդ ազգային զեկույցի հրապարակման ժամկետը երկարաձգվել է՝ հիմք ընդունելով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության	

			տարածաշրջանային համակարգողի հետ քննարկումները: Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունը 2023թ. համար ԱՃԹՆ-ի ստանդարտով սահմանված բոլոր պահանջները կատարել է և ԱՃԹՆ-ի վավերացման նախնական գնահատումով պահպանել է ԱՃԹՆ-ի իրականացման «բարձր» գնահատականը: Գնահատումը կատարվել է վավերացման նոր մոդելով: Հայաստանի ազգային զեկույցը կհրապարակվի 2024 թվականի 1-ին կիսամյակի ավարտին:	
12.	Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում	Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի հետ կապված գործընթացին առնչվող իրավահարաբերությունների կարգավորում	2021թ. օգոստոսի 11-ի «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» թիվ 06-Ն հրամանի հավելվածներով 2023 թվականի ընթացքում հաստատվել է 3 հրահանգ՝ երկաթի հանքավայրերի, կավային ապարներով և կարբոնատային ապարներով ներկայացված հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգները:	
13.	Ստորերկրյա հանքային ջրերի հորատանցքերի գույքագրման և բազային տվյալների թարմացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովում	13.1 Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի (հորատանցք, աղբյուր) գույքագրում	Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի ջրակետերի գույքագրման և տեխնիկական վիճակի ուսումնասիրման նպատակով դաշտային այցելությունների ընթացքում հանքավայրերում իրականացվել են 164 ջրակետերի՝ 141 հորատանցքերի և 23 աղբյուրների չափագրման և ջրակետերի	

			տեխնիկական վիճակի ուսումնասիրման, 35 տարբեր ջրակետերից ջրի նմուշառման և վերցված նմուշների լաբորատոր հետազոտության աշխատանքներ: Իրականացված աշխատանքների վերաբերյալ կազմված հաշվետվությունը ընդունվել և հաշվառվել է Հանրապետական երկրաբանական ֆոնդում:	
25.	Եվրասիական տնտեսական միության էլեկտրաէներգետիկական և գազի ընդհանուր շուկաների ձևավորում	25.1.1 Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով և 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքների իրականացում	2023թ.-ի ընթացքում շարունակվել են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2016թ. դեկտեմբերի 26-ի թիվ 20 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով և 2018թ. դեկտեմբերի 6-ի թիվ 18 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման ծրագրով և միջոցառումների պլանով նախատեսված աշխատանքները: Հաստատվել են ընդհանուր էլեկտրաէներգետիկական շուկայի շրջանակներում էլեկտրաէներգիայի (հզորության) միջպետական հաղորդման ծառայություններին հասանելիության կանոնները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի փոխադարձ առևտրի կանոնները: Ավարտվել են Միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման մասին միջազգային պայմանագրի նախագծի և դրան	

			փոխկապակցված փաստաթղթերի (միասնական կանոններ, բորսային առևտուր և այլն)՝ փորձագիտական մակարդակով քննարկումները, սակայն, դեռևս կան չհամաձայնեցված դրույթներ, որոնց շուրջ քննարկումները շարունակվում են:	
26.	Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգում և արդիականացում	26.1.1 Իրականացնել Հայկական ԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի արդիականացման և շահագործման ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքները	Միջոցառման շրջանակներում իրականացվում են՝ Հայկական ԱԷԿ-ի առանձին հատկացրած տարածքում ապամոնտաժային, կառուցա-մոնտաժային, գործարկման, կարգաբերման, ինչպես նաև գլխավոր և հատուկ մասնաշենքերի 2ՊԷՄ-1, 2ՊԷՄ-2 օդի օդափոխության համակարգերի տեղակայման, Հայկական ԱԷԿ-ի շրջանառու ջրի հովացման համակարգի աշտարակների՝ թիվ 1 և թիվ 3 արդիականացման և այլ աշխատանքները: Միևնույն ժամանակ, 2023թ. մայիսի 5-ից ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկը կանգնել է ամենամյա պլանային նախազգուշական վերանորոգման՝ (ՊՆՎ-2023) 75 օր տևողությամբ: ՊՆՎ-2023-ի ընթացքում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները՝ - ռեակտորի միջին վերանորոգում՝ ակտիվ գոտու լրիվ բեռնաթափմամբ, - թիվ 2 և 3 գլխավոր շրջանառու պոմպերի հիմնանորոգում, - թիվ 2 և 3 շոգեգեներատորների հիմնանորոգում,	

			-տուրբոգեներատորների ընթացիկ վերանորոգում, - շոգետուրբինների ընթացիկ վերանորոգում: Վերը նշված հիմնական աշխատանքներից բացի, իրականացվել են անվտանգային որոշ համակարգերի արդիականացմանն ուղղված աշխատանքներ, ինչպես օրինակ՝ պատասխանատու սպառիչների հովացման համակարգի խողովակաշարերի փոխարինում:	
27.	ՀՀ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի մշակում	27.1.1 Նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման համար պահանջվող ելակետային տվյալների հավաքագրում և ամփոփում	2023թ· ընթացքում իրականացվել են ակտիվ աշխատանքներ Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկ կառուցելու նպատակով: Մասնավորապես՝ ուսումնասիրվել են ռուսական, ամերիկյան, հարավ-կորեական ռեակտորների տեխնոլոգիաները, այդ թվում՝ փոքր մոդուլային ռեակտորների: Մշակվում են տեխնիկատնտեսական հիմնավորումներ: Ատոմային էներգիայի գործակալության ուղեցույցներին համապատասխան նախատեսվում է նաև Հայաստանում ատոմային էլեկտրակայան կառուցելու ծրագիր իրականացնող կազմակերպության ստեղծում:	
28.	Էներգետիկ ենթակառուցվածքների վերազինում, արդիականացում, առաջատար	28.2 Իրականացնել «Չարենցավան-3» 110 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները	Միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները. «Չարենցավան-3» ենթակայանի վերակառուցման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ	

	տեխնոլոգիաներով հագեցման աշխատանքներ		ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «EFACEC Engenharia e Sistemas, S.A.» (Պորտուգալիա) ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն՝ Պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է 2023թ. մարտի 16-ին, սակայն Կապալառուն խախտել է Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների կատարումը և չի ավարտել ենթակայանի վերակառուցման աշխատանքները: Քննարկումների և բանակցությունների արդյունքում 2023թ. նոյեմբերի 30-ին Պատվիրատուի և Կապալառուի միջև սահմանված կարգով ստորագրվել է Հաշտության համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), ըստ որի՝ Կապալառուն բանկային փոխանցման միջոցով Պատվիրատուին վճարել է մոտ 1,446,585.4 ԱՄՆ դոլարի չափով գումար: Կանխավճարի և կատարման բանկային երաշխիքների բնօրինակները Պատվիրատուի կողմից սահմանված կարգով փոխանցվել են Կապալառուին: 2023թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ, Համաձայնագրի համաձայն՝ Պայմանագիրը համարվում է լուծված: Քննարկվում է ենթակայանի վերակառուցման իրականացման հետագա հարցը:	

		28.3.1 Իրականացնել «Զովունի» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները	Միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները. Միջոցառումն իրկանացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և China National Electric Engineering Co. Ltd ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված «Զովունի» ենթակայանի վերակառուցման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կապալառուի կողմից 2023թ. ընթացքում ներկայացվել են 142,560.0 ԱՄՆ դոլար գումարի նախագծային աշխատանքներ, որոնց դիմաց իրականացվել են համապատասխան վճարումներ (ժամկետի ուշացման համար հաշվարկվել է տույժ՝ 14,560.0 ԱՄՆ դոլար գումարի չափով): 2023թ. դեկտեմբերի 8-ի դրությամբ ավարտվել են առաջին փուլով նախատեսված՝ 110 կՎ Բաց բաշխիչ սարքավորումների չփոխարինվող սարքավորումների և պորտալների հիմքերի ուժեղացման ու երկաթբետոնե մալուխային խրամուղիների ու մալուխների ապամոնտաժման, յուղի բաքերի փորձարկման և նոր բետոնյա հիմքերի վրա տեղակայման աշխատանքները, բետոնյա յուղակուտակիչ հորի կառուցումը: Ենթակայանի վերակառուցման համար նախատեսված ընդհանուր սարքավորումների մոտ 80 %-ը ներկրված են	

			և գտնվում են ենթակայանի տարածքում: Պայմանագրով աշխատանքների իրականացման վերջնաժամկետը սահմանված է 2024թ. նոյեմբերի 28-ը:	
		28.4.1 Իրականացնել «Արարատ-2» 220 կՎ լարման ենթակայանի ամբողջական վերակառուցման աշխատանքները	Միջոցառումն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Kaskad-Energo» LLC ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքված «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կապալառուի կողմից 2023թ. ընթացքում ներկայացվել են 672,000.0 ԱՄՆ դոլար գումարի նախագծային աշխատանքներ, որի դիմաց իրականացվել են համապատասխան վճարումներ (ժամկետի ուշացման համար հաշվարկվել է տույժ՝ 67,200.0 ԱՄՆ դոլար գումարի չափով): 2023թ. նոյեմբերի 27-ի դրությամբ ավարտված են պահեստի շենքի վերակառուցման, նոր պահակատան շենքի կառուցման, ներքին հարդարման, 220 և 110 կՎ Բաց բաշխիչ սարքավորումների տարածքում 1-ին փուլով նախատեսված սարքավորումների և դրանց հիմքերի ապամոնտաժման և նոր հավաքովի ե/բ հիմքերի տեղակայման, պորտալների հիմքերի ամրանավորման և բետոնացման աշխատանքները: Ընթանում են՝ ենթակայանի արտաքին պարիսպի՝ մետաղյա ցանկապատի կառուցման, մալուխային	

			անցուղիներում և սարքավորումների մալուխների անցկացման, ղեկավարման շենքի վերակառուցման աշխատանքները: Ենթակայանի վերակառուցման համար նախատեսված ընդհանուր սարքավորումների մոտ 85 % -ը ներկրված են և գտնվում են ենթակայանի տարածքում: Պատվիրատուն, հաշվի առնելով Կապալառուի գրությամբ ներկայացված խնդրանքը, ինչպես նաև ենթակայանի վերակառուցման շրջանակներում առաջընթաց ապահովելու և ծրագրում դրամական հոսքեր ներգրավելու նպատակով սահմանված կարգով Պայմանագրում կատարվել են համապատասխան փոփոխություններ «Վճարման պայմաններ և ընթացակարգեր» հավելվածում:	
29.	Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք (ՀայաստանԻրան-ՎրաստանՌուսաստան) քառակողմ նախաձեռնության հետ կապված աշխատանքների իրականացում	29.1.1 Հյուսիս-հարավ էլեկտրա-էներգետիկական միջանցք նախաձեռնու-թյան տեխնիկատնտեսական հիմնավոր-ման մշակման նպատակով ելակետային տվյալների հավաքագրում և փոխանակում չորս երկրների միջև:	Հյուսիս-հարավ էլեկտրաէներգետիկական միջանցք (Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան) նախաձեռության իրականացման նպատակով 2023թ.-ի ընթացքում շարունակվել են աշխատանքները: Նախաձեռնության խոհրդատուի կողմից մշակվել է նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում, սակայն դեռևս կողմերի միջև չի համաձայնեցվել: Աշխատանքները շարունակվում են:	

30.	Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդ-ման օդային գծի և ենթակայանի կառուցում	30.1.1 Հենասյուների, սարքավորումների ներկրման և ենթակայանի կառուցման, հենասյուների հիմքերի փորման, բետոնավորման, ինչպես նաև հենասյուների և էլեկտրահաղորդման օդային գծերի մոնտաժման աշխատանքների իրականացում	Էլեկտրահաղորդման օդային գծի երկարությունը շուրջ 268 կմ է: 711 հենարաններից բետոնացվել է 674 հենարանի հիմք, մոնտաժվել է 494-ը: 711 հենարաններից ներմուծվել է 626 հատ ամբողջական հենարան: Ամբողջությամբ ներմուծվել են ամպրոպապաշտպան ճոպանը և օպտիկամանրաթելային մալուխը, իսկ նախատեսված 6604 տոննա հաղորդալարից ներմուծվել է մոտ 3465 տոննան: Իրականացվել են մոտ 70 կմ հաղորդալարերի մոնտաժման և լարաձգման աշխատանքներ: «Նորավան» ենթակայանի բարձր լարման և ցածր լարման սարքավորումներն ամբողջությամբ ներմուծվել և մոնտաժվել են: Մոնտաժվել են նաև հողանցման և կոշտ հաղորդաձողային համակարգերը: Ընթացքում են ջրահեռացման խրամուղու բետոնացման, շենք-շինությունների կառուցման և հողի հետլցման, արտաքին պարսպի պատի շարման աշխատանքները: Ծրագրի սկզբից մինչև հաշվետու ժամանակահատվածը միջոցառման կապալառու «Սանիր» ընկերությանը (այսուհետ՝ Կապալառու) վճարվել է մոտ 84,6 մլն եվրո գումար, որից 2023թ. ընթացքում՝ մոտ 2,5 մլն եվրո: 2023թ. դեկտեմբերի 21-ին Կապալառուն ներկայացրել էր առաջարկություն՝ Պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2024թ.	

			դեկտեմբերի 31-ը երկարաձգելու վերաբերյալ: Հաշվի առնելով միջոցառման կարևորությունը, ինչպես նաև դրա իրականացման վերաբերյալ երկու երկրների կառավարությունների միջև պայմանա-վորվածությունները, սահմանված կարգով իրականացվել է Պայմանագրի, 2011թ. հունիսի 26-ին ստորագրված N 900/M/ARM/09 ֆինանսական համաձայնա-գրի, 2012թ. փետրվարի 23-ին կնքված N 1390/1195/57175 Փոխառության պայմանագրի գործողության ժամկետները մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը երկարաձգելու գործընթաց: 2023թ. դեկտեմբերի 29-ին ստորագրվել է Պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը երկարաձգելու վերաբերյալ Համաձայնագիր N 9-ը:	
31.	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան էլեկտրահաղոդման գիծ/ենթակայաններ) ծրագրի իրականացում	31.2 220/400 կՎ ենթակայանի և 400 կՎ օդային գծի կառուցման, ինչպես նաև բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի մեկնարկ և ավարտ	Վերականգնման վարկերի (KfW) բանկի (այսուհետ՝ Բանկ) ֆինանսավորմամբ իրականացվող «Կովկասյան էլեկտրա-հաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» միջոցառ-ման (այսուհետ՝ Միջոցառում) շրջանակներում Բանկի համաձայնությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարկային և դրամաշնորհային ծրագրերի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշմամբ հաստատվել են Միջոցառման 3 լոտերի (Լոտ	

			1՝ Դդմաշեն ենթակայան, Լոտ 2՝ Էլեկտրահաղորդման գծերի, Լոտ 3՝ Բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի կառուցում) մրցութային փաստաթղթերը (այսուհետ՝ ՄՓ), որոնք Միջոցառման իրականացման խորհրդատու Fichtner GmbH & Co. KG ընկերության (այսուհետ՝ Խորհրդատու) կողմից սահմանված կարգով տրամադրվել են նախաորակավորված հայտատուներին՝ մրցութային առաջարկները ներկայացնելու վերջնաժամկետ սահմանելով Լոտ 1-ի համար՝ 2023թ. հոկտեմբերի 24-ը, Լոտ 2-ի համար՝ 2023թ. հոկտեմբերի 25-ը, իսկ Լոտ 3-ի համար՝ 2023թ. դեկտեմբերի 5-ը: Լոտ 1-ի մասով նախաորակավորված հայտատուներ Siemens Energy և Efacec ընկերությունները հրաժարվել են մրցույթին մասնակցելուց: Հիմնվելով մրցակցության բացակայության վրա, Բանկն առաջարկել է չեղարկել Լոտ 1-ի մրցույթը և ներկայացրել է մրցութային գործընթացի երկու տարբերակ: Հաշվի առնելով Բանկի առաջարկությունը, Խորհուրդն առաջարկել է միջոցառումն իրականացնող «Բարձրավոլտ էլեկտրացան-ցեր» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու) չեղարկել Լոտ 1-ի մրցույթը և բանակցել Բանկի հետ մրցութային գործընթացի հետագա իրականացման վերաբերյալ: Բացի այդ Լոտ 1-ի	

			շրջանակներում ենթակայանի կառուցման ընթացքում կանխատեսվող խնդիրների, ինչպես նաև վերջիններից խուսափելու համար այլընտրանքային լուծումներիով պայմանավորված, Խորհրդի առաջարկու-թյամբ ձևավորվել է տեխնիկական խորհուրդ՝ նշված խնդիրներն ուսումնասիրելու և եզրակացություն ներկայացնելու նպատակով: Լոտ 2-ի մասով նախաորակավորված հայտատուներ Kalpataru և KEC ընկերությունները հաստատել են իրենց մասնակցությունը մրցույթին: Հաշվի առնելով Բանկի առաջարկությունը սահմանված կարգով Խորհրդի որոշմամբ առաջարկվել է չեղարկել Լոտ 3-ի մրցույթը և վերջիններ հետ համատեղ բանակցություններից հետո իրականացնել նոր մրցույթ սկսելու համապատասխան գործընթաց:	
32.	Վերականգնվող էներգիայի աղբյուրների արդյունավետ օգտագործում և զարգացման խթանում	32.1 Մասրիկ-1 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրական կայանի կառուցում	«Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրով 2023թ.-ին թեև իրականացվել են աշխատանքներ և ապրանքների ու սարքավորումների մատակարարումներ, այնուամենայնիվ, դրանք բավավար չէին կայանի կառուցումը սահմանված ժամկետում ավարտելու համար: Հաշվի առնելով վերոնշյալը՝ «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային կայանի կոմերցիոն շահագործման ժամկետ է սահմանվել 2024թ. դեկտեմբերի 1-ը, միաժամանակ Կառուցապատողին տրված նոր	

			պայմաններով: Կառուցապատողը պարտավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և դրա նկատմամբ սույն Երկրորդ Լրացուցիչ Համաձայնագրի կնքման օրվանից մինչև փաստացի վճարման օրը տարեկան 7% հաշվեգրված տոկոսների հանրագումարը, Պայմանագրով նախատեսված՝ Կոմերցիոն Շահագործման Ամսաթվից հետո 30-օրյա (երեսնօրյա) ժամկետում, սակայն ոչ ուշ քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:	
		32.2.1 «Այգ-1» 200 ՄՎտ հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկ	200 ՄՎտ հզորության «Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագրով 2023թ.-ին շարունակվել են նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես՝ կայանի կառուցման անհրաժեշտ հողամասերի հատկացման, շրջակա միջավարի և այլ ազդեցությունների գնահատման, էլեկտրաէներգետիկական համակարգի հետ կայանի տեխնիկական համակցման և այլն: Միևնույն ժամանակ «Պետական Հետաքրքրությունների ֆոնդ հիմնադրամ» ՓԲԸ-ի և կառուցապատողի կողմից առաջարկ է ստացվել Կառավարության աջակցության համաձայնագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, որոնք գտնվում են քննարկման փուլում:	

		32.3.1 Հողմային ներուժի ուսումնասիրություն	Ասիական զարգացման բանկի տրամադրած տեխնիկական աջակցությամբ մեկնարկել է «Հողմային էլեկտրաէներգիայի արտադրության պոտենցիալ նախագծերի կենսունակության գնահատում» Ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նորագույն տեխնոլոգիաներով քամու ներուժի չափումներ, հաշվարկներ, օպտիմալ տեղանքների ընտրություն և վերլուծություններ, ինչի արդյունքում ակնկալվում է հողմային էլեկտրակայանի ներդրումային նախագծերի մշակում:	
33.	Օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում ստանձնած միջազգային պարտավորություններին	33.1 էներգետիկայի բնագավառի մի շարք տեխնիկական կանոնակարգեր տեխնիկական կանոնակարգման դաշտից դուրս բերում և նոր իրավական ակտերի մշակում	2023թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվել են էլեկտրաէներգետիկական ոլորտին վերաբերող թվով 12 իրավական ակտերին փոխարինող թվով 6 և գազի ոլորտին վերաբերող թվով 5 իրավական ակտերին փոխարինող թվով 3 իրավական ակտեր:	
35.	Գիտելիքահենք և խելացի էներգետիկա ունենալու համար ծրագրերի իրականացում	35.1 Էներգահամակարգի ընկերություններում նորարարական տեխնոլոգիաների ներդրում	2023թ. շարունակվել են աշխատանքները էներգահամակարգում ժամանակակից տեխնոլոգիական լուծումների և նորարարությունների ներդրման նպատակով: Ընդլայնվել են տվյալների ստացման վերահսկման ՍԿԱԴԱ համակարգին միացած էներգետիկ ենթակառուցվածքները: Բարելավվել է էլեկտրաէներգետիկական շուկայի կառավարման ծրագիրը:	
36.	Բնակարանների և անհատական բնակելի	36.1 Բնակարանների և անհատական տների էներգաարդյունավետ	2023թ. էականորեն աճել է Բնակարանների և անհատական բնակելի տների	

	տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացում	վերանորոգման համար պետական աջակցության ցուցաբերում	էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի շահառուների թիվը: 2023թ· արդյունքներով՝ շահառուների թիվը- 7638, տրամադրված վարկերը -16 մլրդ դրամ, պետական բյուջեից սուբսիդավորումը -860 մլն դրամ: ՀՀ կառավարության 2023թ. հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 15-ի N 520-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1066-Լ որոշմամբ «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի» գործողության ժամկետը երկարաձգվել է մեկ տարով: Բացի այդ, փոխվել է շահառուներին տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման սկզբունքը: Պետության կողմից էներգաարդյունավետ վերանորոգման վարկի տոկոսադրույքը սուբսիդավորվում է հետևյալ հաշվարկով՝ 1) սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում 14%. 2) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող գյուղական բնակավայրերում 12%. 3) սահմանամերձ բնակավայր չհանդիսացող քաղաքային բնակավայրերում 11%.	

			4) Երևան քաղաքում 9%:	
37.	Կանոնավոր ուղևորափոխադրումների կանոնակարգում	37.1 Միասնական երթուղային ցանցի ներդրում	Միջոցառման շրջանակներում ամբողջովին ներդրվել են Կոտայքի մարզի և Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցերը: Դատական կարգով վիճարկվում են Արարատի մարզի և Արմավիրի մարզի Արմավիրի տարածաշրջանի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորների ընտրության մրցույթների արդյունքները: Շիրակի մարզի միասնական օպերատորի ընտրության մրցույթները չեն կայացել հայտերի բացակության պատճառով: 2023 թվականին Գեղարքունիքի մարզի միասնական երթուղային ցանցը սպասարկող օպերատորի ընտրության մրցույթը չի կայացել հայտատուի մրցույթին չմասնակցելու պատճառով: Մշակվել են բոլոր մարզերի երթուղային ցանցերի չվացուցակները և ուղեգծերը: Միասնական երթուղային ցանցի ներդրման գործընթացը դյուրացնելու և առկա կարգավորումները առավել հստակեցնելու նպատակով մշակվել և 12.07.2023թ. ընդունվել է <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՕ—250-Ն օրենքը և հարակից օրենքները: Դրանց կիրարկումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 18.05.2023թ. N 750-Ն և	Միջոցառման չկատարման պատճառը՝ օրենսդրական գործող կարգավորումների շրջանակներում մարզերի միասնական օպերատորների ընտրության մրցույթների չկայանալը կամ կայացած մրցույթների արդյունքների բողոքարկման դատական երկարատև գործընթացներն են: Դատական գործընթացների ավարտից հետո միայն հնարավոր կլինի կրկին հայտարարել մրցույթները:

			05.10.2023թ. N 1714-Ն որոշումներով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված մրցութային կարգում:	
		37.2 Երթուղիների քարտեզավորում, էլեկտրոնային տոմսավորման համակարգի և էլեկտրոնային երթակարգավարական ծառայության ներդրում	Միասնական երթուղային ցանցի ներդրման շրջանակներում «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ստեղծվել է ներմարզային և միջմարզային երթուղային ցանցի մոդելավորման, օպտիմալ երթուղիների մշակման և դրանց շահագործման գործընթացի վերահսկողու-թյան ծրագրային համակարգը, որի վերջնական գործարկումից հետո դրա միջոցով կներդվեն էլեկտրոնային տոմսավորման համակարգը և էլեկտրոնային երթակարգավարական ծառայությունը:	Ծրագրային համակարգը ստեղծվել է 2019 թվականին: Այն հնարավոր կլինի ամբողջովին գործարկել բոլոր մարզերի միասնական երթուղային ցանցերի վերջնական ներդրումից հետո, որի ժամկետ է սահմանվել 2024 թվականը:
38.	ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրում	38.1 ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրում	ՀՀ-ում վթարների դեպքում արագ արձագանքման համակարգի ներդրման շրջանակներում շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ համատեղ քննարկվում են Հայաստանում համակարգի ներդրման և տեխնիկական լուծումներ տալու առանձնահատկությունների հետ կապված հարցերը: Համակարգի ներդրման գնման գործընթացը կազմակերպելու նպատակով մշակվել է տեխնիկական առաջադրանքը:	
		38.2 Ճանապարհային վճարների գանձման էլեկտրոնային համակարգի ներդրում	Ճանապարհային վճարների գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման շրջանակներում մշակվել է ««Ավտոմոբիլային ճանապարհների մասին» Հայաստանի	

			Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որը շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվելուց հետո ներկայացնել է Վարչապետի աշխատակազմ: Օրենսդրական փաթեթը քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2023 թվականի մարտի 6-ի նիստում, որի N ԿԱ/65-2023 արձանագրության 2-րդ կետի հանձնարարականի համաձայն՝ օրենսդրա-կան փաթեթը լրամշակվել և կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը: Օրենսդրական փաթեթը քննարկվել է նաև ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովում:	

39.	Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի կանոնակարգում	39.1 Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման պահանջները սահմանող օրենսդրության մշակում և ընդունում Վտանգավոր բեռների անվտանգ փոխադրումներին ներկայացվող պահանջների սահմանում	«Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) պահանջների կատարումն ապահովելու և հանրապետության տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրումների գործընթացը կանոնակարգելու նպատակով ձևավորվում է օրենսդրական դաշտ: ՀՀ Ազգային ժողովը 2023 թվականի հոկտեմբերի 3-ին ընդունել է «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N ՀՕ-297-Ն օրենքը և հարակից այլ օրենքների փաթեթը:	
41.	Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի և երկարակեցության շարունակական բարձրացում	41.1 Միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նորոգում (հիմնանորոգում, միջին նորոգում), վերակառուցում և կառուցում	2023թ. հիմնանորոգվել, նորոգվել, վերա-կառուցվել և կառուցվել են շուրջ 551 կմ ընդհանուր երկարությամբ ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ, որից 501 կմ-ի ճանապարհային պատվածքը ամբողջությամբ իրականացված է, իսկ 50 կմ-ն՝ իրականացվել է ասֆալտբետոնե ներքին շերտով: 2023 թվականին իրականացված 501 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհաշինական աշխատանքներից 456.4 կմ հատվածները իրականացվել են ՀՀ պետական բյուջեի միջոցներով, (այդ թվում՝ «Պետական	

			նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում՝ 307.7կմ, իսկ «Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների միջին նորոգում» միջոցառման շրջանակներում՝ 148.7 կմ), Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամով՝ 13.6 կմ, և վարկային միջոցներով՝ շուրջ 31 կմ (Հյուսիս–հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր):	
42.	Թունելների և կամուրջների վերականգնում և կառուցում	42.1 Թունելների և կամուրջների հիմնանորոգում, նորոգում, վերակառուցում, մասնավորապես՝ Դիլիջանի և Պուշկինի թունելների վերականգնում	Կամուրջներ «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում 2023թ. նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում իրականացվել են 4 կամրջի հիմնանորոգման, 1 վերգետնյա հետիոտնային անցման կառուցման, 1 տրանսպորտային հանգույցի (հենապատեր) վերականգնման աշխատանքներ: 2023թ-ին մեկնարկել է ևս 1 կամրջի և 1 տրանսպորտային հանգույցի հիմնանորոգման աշխատանքները և դրանք նախատեսվում է ավարտել 2024թ-ին: 2023թ.-ին նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում ձեռք են բերվել նաև 4 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթեր, որից 3-ը՝ կամուրջ, 1-ը տրանսպորտային հանգույց (հենապատ), իսկ	

			2 կամրջի և 3 տրանսպորտային հանգույցի (հենապատեր) հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը փորձաքննության փուլում են: Թունելներ Դիլիջանի, Պուշկինի և Նալբանդի (Սպիտակի) թունելների վերականգնման նպատակով իրականացվում են նախագծային աշխատանքներ: Դիլիջանի և Պուշկինի թունելների նախագծային և մրցութային փաստաթղթերի մշակումից հետո նախատեսվում է իրականացնել շինարարա-կան աշխատանքների ձեռքբերման միջազգային մրցութային գործընթաց: Նալբանդի (Սպիտակի) թունելի հիմնանորոգումը նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ: Ներկայումս թունելի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը փորձաքննության փուլում են:	
43.	Ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի բարելավում	43.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներով (ճանապարհային նշաններ, ճանապարհային լուսացույցներ, ճանապարհային ցանկապատներ, ճանապարհային գծանշում) վերազինում	2023թ. ընթացքում հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում կազմված նախագծերի հիման վրա իրականացվել են հին ճանապարհային կահավորանքի փոխարինումը նորով, մասնագիտական եզրակացություններ են տրվել հիմնանորոգման և համայնքների կողմից ներկայացված ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմաների վերաբերյալ: Միևնույն ժամանակ, «սև	

			կետերի» ծրագրի շրջանակներում ՃՏՊ-ների կուտակման հատվածներում իրականացվել են մի շարք անվտանգային միջոցառումներ՝ այդ թվում միջպետական ճանապարհների 2 հատվածներում (դպրոցի և բնակավայրերի մերձակա հատվածներ) հետիոտների անվտանգ անցման համար տեղակայվել են «կանչովի» փուլով լուսացուցային օբյեկտներ: Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին տեղադրվել և վերականգնվել են 3792 ճանապարհային նշաններ և շուրջ 13 զբոսաշրջիկային օբյեկտներ ցույց տվող նշաններ, վերականգնվել են 23162 գծմ մետաղական արգելափակոցներ:	
44.	Ճանապարհային ան-վտանգության մակար-դակի բարձրացում՝ «սև կետերի» բարելավում	44.1 ՀՀ ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանա-պարհների «սև կետերի» գույքագրում և դրանց վերացման նպատակով ճանապարհատրանսպորտային պա-տահարների տվյալների վերլուծության հիման վրա անվտանգության միջոցառումների շարունակական իրակա-նացում	Ներկայումս ԵՄ-ի հետ քննարկվում է նշված աշխատանքների իրականացման համար դրամաշնորհային միջոցներ ներգրավելու հարցը: Միաժամանակ՝ «Հայաստանում ճանապար-հային անվտանգության վերափոխում» ծրագրի աջակցությամբ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Հայաստա-նում ճանապարհային անվտանգության վերափոխում: Հայաստանում ճանապարհա-յին անվտանգության տվյալների, մարդկանց և քաղաքականության միացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանում ԿԶՆ ազգային նորարարական կենտրոնի (SDG Innovation Lab) միջոցով	

			մշակել է Ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) տվյալների կառավարման նոր համակարգ՝ վերլուծական գործիքներով: Ծրագրի իրականացման ընթացքում ԿԶՆ նորարարական կենտրոնի թիմը իրականացրել է՝	

			1. ՃՏՊ տվյալների քարտեզագրման և բիզնես գործընթացների վերլուծություն, 2. համագործակցելով SweRoad-ի հետ ուսումնասիրվել է Շվեդիայի (որպես միջազգային լավագույն պրակտիկա) և Վրաստանի (որպես դեպքի ուսումնասիրություն նմանատիպ երկրի համատեքստում) ՃՏՊ էլեկտրոնային նմանատիպ համակարգերը, և օգտագործելով այդ երկրերի պատահարների վերլուծության գործիքների գործնական կիրառությունները, ստեղծվել է Հայաստանում վթարների տվյալների վերլուծության նոր գործիք՝ հաշվի առնելով Հայաստանում ճանապարհային անվտանգության ոլորտի շահագրգիռ կողմերի առկա տվյալները և Հայաստանի համար ճանապարհային անվտանգության առանձնահատկությունները: 3. Պարեկային ծառայության կամ ՃՈ տեսուչի կողմից վթարի տվյալների մուտքագրման գործընթացի ավտոմատ ճշգրիտ կոորդինատների գրանցում՝ ՃՏՊ կոորդինատը կապելով Yandex maps-ի քարտեզներին, 4. տվյալների նոր համակարգում ֆիլտրման ճկուն համակարգի ներդրում, 5. ճանապարհային անվտանգության համար վարքագծային խոչընդոտների հետազոտություն և վերլուծություն, որը կարող	

			է օգնել խթանել վարորդների վարքագծի փոփոխությանը և հետևաբար՝ ճանապարհային անվտանգության բարձրաց-մանը: Իրականացման ընթացքում է գտնվում համակարգի փորձարկման (պիլոտա-վորման) աշխատանքները:	
		44.4 Մ-2, Մ-4, Մ-7, Մ-11 և Մ-14 միջպետական նշանակության ճանա-պարհների վրա նախանշված 10 և 12 վտանգավոր կետերի վերացում	Սույն միջոցառման շրջանակներում իրականացվող աշխատանքները հստակեցվել և ընդլայնվել/փոփոխվել են, մասնավորապես. 1. 2022թ. իրականացվել են Մ-3 և Հ69/Հ21 միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների 3 վթարավտանգ տեղամասերի բարելավման աշխատանքներ: 2. 2023թ. իրականացվել են սույն առաջադրանքով նախատեսված Մ-4 և Մ-16, միջպետական ճանապարհների վրա 3 վտանգավոր կետերի և Մ-4 միջպետական նշանակության ճանապարհի վրա լրացուցիչ շուրջ 38 կմ երկարությամբ հատվածի (լրացուցիչ շրջանակ) անվտանգության տարրերի բարելավման աշխատանքներ: 3. 2023թ. իրականացվել են Մ-2, Մ-3, Մ-12, Հ-17 և Մ5/Հ17 («Նորապատի տրանսպորտային հանգույց») միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների վրա նախանշված 16 և Մ-4, Մ-5 միջպետական ճանապարհների վրա	

			լրացուցիչ 6 վթարավտանգ տեղամասերի շինարարական աշխատանքներ:	
46.	«Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի իրականացման շարունակություն	46.5 Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի, 42 կմ ճանապարհահատվածի Շինարարական աշխատանքների իրականացում	***Թալին-Լանջիկ՝ 18.7կմ հատված*** Թալին - Լանջիկ ճանապարհահատվածի վերակառուցման հիմնական աշխատանքները ավարտվել են և ընդունվել տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից: Ճանապարհահատվածի 1.8 կմ հատվածում քարաթափման վտանգի կանխարգելման նպատակով նախաձեռնվել են հավելյալ անվտանգության հենապատերի կառուցման աշխատանքներ, որոնք կմեկնարկեն 2024թ. գարնանը: Թերությունների վերացման ժամանակա-շրջանը ավարտվում է 2024թ. հուլիսի 31-ին: Նշված հատվածի համար երկկողմանի երթևեկությունը բացվել է 13.10.2022-ից: ***Լանջիկ-Գյումրի՝ շուրջ 23 կմ հատված*** 2023թ. ընթացքում Լանջիկ-Գյումրի հատվածում իրականացվել է երկու ուղղությամբ եռաշերտ ասֆալտբետոնային ծածկի տեադրում 26 կմ հիմնական և 5 կմ մոտեցնող ճանապարհներին ու հանգույցներում: Իրականացվել են աշխատանքների 70 տոկոսը: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024թ. 3-րդ եռամսյակում:	

48.	Հյուսիսային միջանցքի արդիականացում	48.1 Բագրատաշենի սահմանային Հսկողության անցակետի նոր կամրջի շինարարություն	Սույն միջոցառումն իրականացվել է ՎԶԵԲ-ի վարկային միջոցներով: Մաքսային անցակետում երկու ուղղություն և 5 թռիչք ունեցող, արտաքին լուսավորության և ջրահեռացման համակարգով 2 կամուրջները (յուրաքանչյուր ուղղությամբ մեկ կամուրջ, յուրաքանչյուրը 2 երթևեկելի գոտիով) 2022 թվականի օգոստոսին հանձնվել են շահագործման: Ընթացքի մեջ է թերությունների վերացման ժամանակահատվածը, որի տևողությունը 2 տարի է և ավարտվում է 2024 թվականի օգոստոսին:	
52.	Ճանապարհային Ակտիվների կառավարման առկա համակարգի գնահատում և հետագա անհրաժեշտ բարելավումների իրականացում	52.2 «ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 265-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Սույն միջոցառումն իրականացվել է 2023թ.: Որոշման նախագիծը ընդունվել է 30.11.2023 թվականի ՀՀ կառավարության նիստի 19-րդ կետով: Որոշմամբ վերանայել են միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների անվանումները՝ դրանք համապատաս-խանեցնելով օրենքի սահմանումներին, մի շարք ճանապարհների կառուցման և վերակառուցման արդյունքում վերանայվել են նաև դրանց անվանումները և երկարությունները, ինչպես նաև անվանացանկում ավելացնել են նոր ճանապարհներ:	

53.	Ճանապարհների պետական գրանցում	53.1 Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների չափագրում և պետական գրանցում	Կադաստրի կոմիտեի հետ քննարկվել և համաձայնեցվել է ՀՀ Շիրակի մարզի ճանապարհների, այդ թվում նաև ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհ-ների, քարտեզագրման պիլոտային ծրագիր: ՀՀ սեփականության իրավունքի պետական գրանցումներ իրականացնելու նպատակով Կադաստրի կոմիտեի կողմից ներկայացվել են ՀՀ Շիրակի մարզի մի շարք բնակավայրերում գտնվող ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և դրանց օտարման շերտերի հատակագծերի նախագծերը՝ համադրված օրթոֆոտո-հատակագծերով: Նախագծերը ուսումնասիր-վել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ու «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի մասնագետների կողմից: Հաշվի առնելով հարցի առաջնահերթությունը ՀՀ ՏԿԵ նախարարությունը նախատեսում է առաջիկայում ձեռք բերել հատուկ սարքավորում, որը հնարավորություն կտա իրականացնել տեղանքի տեղագրական հանույթ: Դա թույլ կտա խուսափել օրթոֆոտոներից ստացված պատկերների թվայնացման ընթացքում հնարավոր անճշտություններից, որի արդյունքում կարող	

			են առաջանալ ճանապարհի օտարման շերտի և մասնավոր կամ հանրային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ շինությունների տարածքների համադրում:	
56.	Ճանապարհային ոլորտի մասնագետների և կազմակերպությունների կարողությունների զարգացում	56.1 Յուրաքանչյուր տարի ճանա-պարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում և դասընթացների կազմակերպում	2023թ. ընթացքում ՏԿԵՆ Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի, ինչպես նաև «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի համապատասխան մասնագետների, այդ թվում նաև ասպիրանտների, համար կազմակերպվել են 30-ից ավելի մասնագիտական վերապատրաստումներ և աշխատաժողովներ թունելների նախագծման, կառուցման, ճանապարհային սպասարկման առանձնա-հատկությունների, ճանապարհների ան-վտանգության գնահատման, ճանապար-հային անվտանգության աուդիտի անցկացման թեմաներով:	
		56.2 Ճանապարհային ոլորտում ընդգրկ-ված առանցքային սուբյեկտների (պատվիրատուներ, նախագծողներ, կապալառուներ, տեխնիկական հսկողություն իրականացնողներ և այլն) կարողությունների գնահատման և դրանց բարձրացման մեխանիզմների սահմանում	ԵՄ ԹԱՅԵՔՍ ծրագրի շրջանակում 2023թ. մայիսի 22-26-ը ճանապարհային ոլորտում ընդգրկված նախագծային, շինարարական և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները մասնակցել են Ճանապարհային անվտանգության աուդիտի ձեռնարկի մշակման նպատակով կազմակերպված աշխատաժողովին:	

			2023թ. նոյեմբերի 15-16-ը ԱՀԲ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության և «Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպվել է «Հայաստանի ճանապարհային անվտանգության ազգային ռազմավարությունը՝ ճանապարհային անվտանգության մոտեցումը: Հայաստանում ճանապարհային անվտան-գության մարտահրավերները» թեմայով աշխատաժողով (training), որին մասնակցել են ճանապարհային ոլորտում ընդգրկված նախագծային, շինարարական և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները: Աշխատաժողովի տեսական մասում մասնակիցներին ներկայացվել է IRAP ճանապարհների անվտանգության գնահատման միջազգային ծրագրի աշխատանքի սկզբունքները՝ մասնավորա-պես ճանապարհների կամ նախագծերի անվտանգության գնահատման աստղային վարկանիշավորման (ռեյտինգավորման) մեթոդաբանությունը:	
59.	Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը	59.1 Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համա-ձայնության կառուցված կամ կառուցվող	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 23.03.2023թ. N 484-Ա հրամանով ձևավորված աշխատանքային խմբի անդամները իրականացրել են ՀՀ Արմավիրի	

	տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելում	օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկության անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնտաժման նպատակով ՀՀ պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	մարզով անցնող, բնակավայրերից դուրս գտնվող ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհներին հարող հատվածներում կառուցված կամ կառուցվող օբյեկտների, շինությունների գույքագրման աշխատանքներ: ՀՀ վարչապետի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 2-ին ժամը 12:00-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում անցկացված խորհրդակցության արձանագրության 3. 17-րդ կետի կատարման համար՝ ՀՀ մարզպետների աշխատակազմերին հանձնարարվել է գույքագրել ՀՀ բոլոր միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների բնակավայրերից դուրս ճանապարհամերձ հատվածների և մուտքերի վրա առկա կառույցները (այդ թվում՝ ապօրինի կառուցված) և սահմանված ձևաչափին համապատասխան ներկայացնել գույքագրման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն: Ներկայացված տեղեկատվությունը ամփոփվում է:	
61.	Դեպի «ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր գրունտային ճանապարհի	61.1 «Ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր տանող գրունտային ճանապարհների կառուցում	Սույն միջոցառման շրջանակներում նախատեսվում է կառուցել շուրջ 60 կմ գրունտային ճանապարհ, մասնավորապես՝	

	կառուցում		2023թ-ին գրունտային ճանապարհների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում. 2024-2025թթ յուրաքանչյուր տարի 30 կմ գրունտային ճանապարհի կառուցում: Նշվածով պայմանավորված՝ ՏԿԵ նախարարությունը հանձնարարել է ՀՀ մարզպետների աշխատակազմերին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով անհապաղ կազմակերպել դեպի «Ալպյան» մարգագետիններ (դաշտավայրեր, արոտավայրեր և խոտհարքներ) տանող գրունտային ճանապարհների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման գործընթաց: Վերջիններիս կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ներկայումս նախագծանախահաշվային աշխատանքները գտնվում են գնման գործընթացում, մասնավորապես՝ ՀՀ Գեղարքունքի, Լոռու, Կոտայքի, Տավուշի, Վայոց ձորի մարզպետների աշխատակազմերում կնքվել են պայմանագրեր հաղթող կազմակերպությունների հետ, իսկ մնացած մարզերի մասով՝ մասնակից չլինելու հանգամանքով պայմանավորված՝ մրցույթները բազմիցս վերահայտարարվել են:	

62.	Երկաթուղային տրանսպորտով երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	62.1 Ուղևորատար և բեռնատար շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում	2023թ-ի ներդրումային ծախսերը կազմել են 1740,1 մլն. դրամ, որից՝ ենթակառուցվածքում 1674,4 մլն. դրամ, շարժակազմում՝ 65,7 մլն. դրամ: Իրականացվել է 14,3 կմ երկաթուղային գծի հիմնանորոգում:: Փոխարինվել են 24105 կոճեր, որից՝ 4340-ը փայտյա, իսկ 19765-ը՝ երկաթբետոնյա: Վերանորոգվել է 16 միավոր գծային տեխնիկա, 3 միավոր լոկոմոտիվ՝ 21 միավոր գծային սարքավորումների փոխարինմամբ, հիմնանորոգվել է 2 կմ հպակային ցանց և փոխարինվել է 2 կմ կոնտակտային հաղորդալար:	Մինչև 2024թ. ավարտը 39 մլրդ ՀՀ դրամ ներդրումային պարտավորությունների չկատարումը պայմանավորված է «Գեոպրոմայնինգ գոլդ» ընկերության կողմից երկաթուղային տրանսպորտով ոսկու հանքանյութի տեղափոխման և այլ ընկերություններից խտանյութի բեռնման դադարեցումով, ինչի հետևանքով 2023թ-ին 2022թ-ի համեմատությամբ ՀԿԵ ՓԲԸ-ն ունեցել է եկամուտների կորուստ՝ համապատասխանաբար 4,908 մլրդ դրամ և 756 մլն. դրամ: Ներկայումս ընթանում են ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբ-սիդավորման նոր մեխանիզմի ընտրության աշխատանք-ները, որը կենթադրի գործող շարժակազմի արդիականացում:
63.	Երկաթուղային ուղևորափոխադրումների	63.1 Սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակում և Կոնցեսիոն	Մշակվել է և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի քննարկմանն է ներկայացվել	Նախկինում քննարկվել էին սուբսիդավորման երկու

	g առաջացած վնասների սուբսիդավորման վերանայում	պայմանագրում փոփոխությունների կատարում	սուբսիդավորման նոր մեխանիզմի նախագիծը:	մոդելներ, սակայն «Գեոպրոմայնինգ գոլդ» ընկերության կողմից երկաթուղային տրանսպորտով ոսկու հանքանյութի տեղափոխման դադարեցումով պայմանավորված՝ մշակվվել են սուբսիդավորման նոր մեխանիզմ, որը պետք է երկկողմանի համաձայնեցվի:
64.	Առևտրային ծովագնացության հնարավորությունների զարգացում	64.1 Առևտրային ծովագնացության մասին օրենքի օրենքի նախագծին հավանություն տալու մասին կառավարության որոշման ընդունում	Մշակվել և շահագրգիռ գերատես-չություններին է շրջանառվել առևտրային ծովագնացությաան օրենսգրքի նախագիծը: Ստացված դիրքորոշումները ամփոփվել էին և առևտրային ծովագնացության օրենսգրքի նախագծի փաթեթը ներկայացվել էր ՀՀ արդարադատության նախարարություն: 07.02.2024թ-ի ստացվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացու-թյունը:	Կատարման ժամկետի ուշացումը պայմանավորված է Առևտրային ծովագնացության օրենսգրքի վերաբերյալ շահագրգիռ գերատեսչությունների դիտողությունների հիման վրա այլ իրավական ակտերում փոփոխությունների կատարման առաջացման հանգամանքով: Այլ իրավական ակտերում կատարվելքի փոփոխությունների և լրացումների առաջարկությունների փաթեթը օրենսգրքի լրամշակված տարբերակի

				հետ ներկայացվել է շահագրգիռ գերատեսչություններին:
65.	«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից ներկայացվող 5-ամյա Մաստեր պլանի հաստատման գործընթացի ապահովում, Մաստեր պլանի իրագործում,Կոնցեսիայի պայմանագրին կից ակտիվների ցանկերի ճշգրտում	65.1-65.2 Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայանի և ենթակառուցվածքների բարեկարգմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ	«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ընդլայնման ծրագրի գնահատման նպատակով ՀՀ վարչապետի 2023 թվականի հունվարի 27-ի N 93-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը դեռևս չի ավարտել իր աշխատանքները:	
		65.3 Կոնցեսիոն ակտիվների գույքագրում	ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հրամանով ստեղծվել է «Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան» ՊՓԲ և «Գյումրու «Շիրակ» օդանավակայան» ՓԲ ընկերությունների ակտիվների գույքագրման նպատակով համապատասխան հանձնաժողով: Նշված հանձնաժողովի կազմում բացի Կոմիտեի աշխատակիցներից ընդգրկվել են նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի և «Արմենիա» Միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության համապատասխան աշխատակիցներ: Գույքագրման աշխատանքները ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի նոյեմբերի 28-ին ավարտվել են:	

66.	Դեպի ՀՀ և ՀՀ-ից չվերթերի աշխարհագրության ընդլայնում և մատչելի ավիափոխադրումների ապահովում	66.1 Ավիաընկերությունների թվի ավելացմանն ուղղված միջոցառումներին աջակցություն	2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործել են օդանավ շահագործողի վկայական կրող 9 ավիաընկերություններ, որոնցից 5-ը կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագիր կրողներ են: 2023 թվականին օդանավ շահագործողի վկայական կրող ընկերությունների թվաքանակը չի փոփոխվել, սակայն կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագիր կրողների թիվը կազմել է 6 ավիաընկերություն: Եվս մեկ ավիաընկերություն՝ «Հայվեյզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը օդանավ շահագործողի վկայական տրամադրելու նպատակով իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան գործընթաց (արդեն իսկ Հայաստանի Հանրապետություն է ժամանել Բոինգ 737/400 տեսակի բեռնատար օդանավը):	
67.	Ավիացիոն շուկայի ազատականացում ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ	67.1 «ՀՀ և ԵՄ և ԵՄ անդամպետությունների միջև ընդհանուր Ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրման գործընթացի կազմակերպում	2021թ. նոյեմբերի 15-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և դրա անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև Ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը, որը 2022 թվականի	

			նոյեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է:	
68.	Թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացում՝ ապահովելով ՀՀ միջազգային համաձայնագրերին, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի դրույթներին և, առավել	68.4 Էլեկտրոնային համակարգերի ներդրում, ինչպես նաև գործող տեղեկատվական և վերլուծական տվյալների բազաների թվայնացում:	Ներկայումս իրականացվում են աշխատանքներ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համար GIZ ընկերության կողմից ձեռքբերված էլեկտրոնային համակարգի ներդրման և գործարկման նպատակով: Տվյալ համակարգը թույլ կտա թվայնացնել Քաղաքացիական ավիացիայի գործառույների մեծ մասը, ինպես նաև կծառայի որպես տվյալների արխիվացման բազա: Բացի այդ, թռիչքների թույլտվությունների տրամադրման համար EKENG գրասենյակի կողմից մշակվում է համապատասխան էլեկտրոնային հարթակ:	
		68. 5 Կոմիտեի մասնագետների անհրաժեշտ որակավորումների բարձրացում՝ տեսական և գործնական դասընթացների միջոցով	Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնագետների անհրաժեշտ որակավորում-ների բարձրացումը՝ տեսական և գործնական դասընթացների միջոցով իրականացվում է ամենամյա վերապատրաստումների պլանի համաձայն: Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2023 թվականի հունվարի 27-ի թիվ 18-Ա հրամանով հաստատվել է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի աշխատակիցների 2023թ. մասնագիտական վերապատրաստումների պլանները, որի համաձայն 2023 թվականի ընթացքում կազմակերպվել է 60 դասընթաց, որին մասնակցել են թվով 91 աշխատողներ:	

			2024 թվականի վերապատրաստումների պլանը գտնվում է մշակման և ընթացիկ քննարկումների փուլում:	
69.	Ընդհանուր նշանակության ավիացիայի անվտանգ զարգացում. անօդաչու թռչող համակարգերի, ինչպես նաև թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների շահագործման նոր ընթացակարգերի ընդունում	69.1 Անօդաչու թռչող համակարգերի շահագործման նոր ընթացակարգի ընդունում, թվային պլատֆորմի ստեղծում և համակարգում	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից մշակվում է համապատասխան իրավական նորմատիվ ակտի նախագիծը:	
70.	Միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ տարածաշրջանային ավիաուսումնական կենտրոնի ստեղծում	70.1 Ուսումնասիրել միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրված ավիաուսումնական կենտրոնները և բանակցություններ վարել ընտրված միջազգային ավիաուսումնական կենտրոնների ղեկավար կազմի հետ և նպաստել միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ տարածա-շրջանային ավիաուսումնական կենտրոնի կայացմանը: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկել ներդրողների մասնակցության նպատակահարմարու-թյունը, կոնցեսիոն կառավարման հնարավորությունները՝ չբացառելով պետական մասնակցությունը:	Տվյալ ուղղությամբ աշխատանքները ընթացքի մեջ են:	

73.	Երևանը «Զվարթնոց» օդանավակայանի հետ կապող տրանսպորտային ենթակառուցվածքների (ճեպագնաց, մետրո կամ ավտոմայրուղի) զարգացում	73.1 Կառավարությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և այլ գերատեսչությունների հետ քննարկելու և ձեռնարկելու է միջոցառումներ՝ ուղղված Երևանը «Զվարթնոց» օդանավակայանի հետ կապող տրանսպորտային ենթակառուցվածքների (ճեպագնաց, մետրո կամ ավտոմայրուղի) զարգացմանը:	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ կայացել են համատեղ քննարկումներ, որի ընթացքում ԱԶԲ-ի կողմից ներկայացվել է Երևանից դեպի «Զվարթնոց» օդանավակայան երկաթուղու կառուցման հնարավոր տարբերակների ընտրության վերաբերյալ վերլուծական սահիկաշարի լրամշակված տարբերակը՝ ֆինանսական գնահատականներով: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից առաջարկվել է ներկայացված տարբերակներից մեկում նախատեսել նաև բեռնափոխադրումների հնարավորության հարցը և հաշվարկներում կատարել համապատասխան փոփոխություններ: Ասիական զարգացման բանկի կողմից փոփոխությունները կատարելուց և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացվելուց հետո՝ ընտրված տարբերակները կներկայացվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ որպես հանրային ներդրումային ծրագիր:	
74.	Կառավարությունը «Արմենիա» միջազգային օդանավակայաններ»	74.2 Պայմանավորվածություն ձեռք բերել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ՝ դեպի	Տվյալ ուղղությամբ աշխատանքները ընթացքի մեջ են:	

	ՓԲԸ-ի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնակցությամբ բանակցություններ է վարելու աշխարհում առաջատար ավիաընկերությունների հետ՝ դեպի Հայաստան և Հայաստանից ավիափոխադրումներ իրականացնելու համար: Միաժամանակ բանակցություններ ենք վարելու հայաստանյան ավիաընկերությունների հետ՝ վերջիններիս գործունեության համար նպաստավոր միջավայր և պայմաններ ստեղծելու, ինչպես նաև մրցունակության բարձրացման ուղղությամբ:	ԱՄՆ ուղիղ չվերթերի ապահովման աշխատանքների իրականացման և համապատասխան թույլտվություններ ստանալու նպատակով		
76.	Ուղևորահոսքերի ծավալների բաձրացում	76.1 Օդանավակայանի Կոնցեսիոների հետ իրականացնել շարունակական աշխատանքներ՝ սպասարկման որակի բարձրացման, մատուցվող ծառայությունների սակագների	Տվյալ ուղղությամբ աշխատանքները ընթացքի մեջ են: 2023 թվականին օդային չանապարհով տեղափոխված ուղևորների թվաքանակը ՀՀ օդանավակայաններով կազմել է ավելի քան 5425 հազար ուղևոր:	

		նվազեցման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ		
77.	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում	77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության պայմանագրով նախատեսված վարձատուի ու վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Վարձակալության պայմանագրով սահմանված հիմնական կատարողական ցուցանիշների (ջրամատակարարման շարունակականություն, ջրի որակ, չհաշվառված ջուր, բաժանորդների բավարարվածություն և այլն, նորմալ գործող ստանդարտներ), ինչպես նաև պայմանագրի այլ պահանջների ապահովման վերաբերյալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը. Երևան քաղաքում կազմում է 23,2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 20,5 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 20,2 ժամ/օր: Ջրի որակը կազմում է 98.6% է, ջրաչափությունը կազմում է 99.8%: 2023 թվականին գանձվել է շուրջ 29,8 մլրդ դրամ 2022 թվականի համեմատ ավել է գանձվել 2,6 մլրդ.դրամ, գանձման տոկոսը կազմել է 95.0%, որը 2022 թվականի համեմատ առաջընթացը կազմում է 0,9%, իսկ բազիսային տարվա համեմատ աճել է 9,5%:	
		77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված	Ջրային կոմիտեի առաջարկով իրականացվում են ուսումնասիրություններ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից մի շարք չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման հետ կապված	

		բարեփոխումների (այդ թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթում	խնդիրների վերաբերյալ, որոնք պարբերաբար քննարկվում են Ջրային կոմիտեում: Ջրային կոմիտեի կողմից իրականացվել է ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սևքար և Աչաջուր բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերումը և սահմանված կարգով հանձնվել է Իջևան խոշորացված համայնքին: Համաշխարհային բանկի ֆինանսավոր-մամբ՝ Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի չսպասարկվող բնակավայրերում իրականացվել է տեխնիկական ուսումնասիրություն, ինչի արդյունքում ներկայացվել են խմելու ջրամատակարարման համակարգի կառուցման տարբերակներ: Ներկայացված տարբերակները եռակողմ քննարկման փուլում են:	
		77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում՝ ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար	Ներդրումների իրականացման արդյունքում Վարձակալի կողմից չսպասարկվող ՀՀ մարզերի մի շարք բնակավայրերից ստացված սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերն ու տեխնիկական բնութագրերն ուսումնասիրվել են Ջրային կոմիտեում և նախագծերի վերաբերյալ ներկայացվել են համապատասխան	

			դիրքորոշումներ: Սպասարկվող բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի հայտերը փոխանցվում են Վարձակալին՝ մասնագիտական դիրքորոշման ներկայացման նպատակով:	
		77.4 «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման համար սահմանված կարգով լիցենզիայի տրամադրում և այդ բնագավառում գործունեության վերսկսման անհրաժեշտ պայմանների ստեղծում		ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր-Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունները «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N 1399-Ա որոշման 2-րդ կետի հանձնարարականի կատարումն ապահովելու, մասնավորապես՝ ընկերությունների վերակազմակերպման և միացման պետական գրանցումն իրականացնելու պահանջը դեռևս չի կատարվել, քանի որ պարզվել է, որ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփական կապիտալը (-1,819,911.0 հազար դրամ) կազմել է բացասական թիվ:

				Հետագայում Ընկերություններն ուսումնասիրություններ են իրականացրել, որի արդյունքներով հայտնաբերվել է հաշվապահական սխալ: Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության, վերոհիշյալ հաշվապահական սխալի ձևակերպման և սխալի ուղղման արդյունքներով «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սեփական կապիտալը կկազմի դրական մեծություն, ինչն իրավական առումով հնարավորություն կտա սկսել Ընկերությունների վերակազմավորման գործընթացը:
		77.5 Ջրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիթորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում	Յուրաքանչյուր ամիս ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ բնակավայրերում իրականացվում է խմելու ջրի որակի մոնիթորինգ, որը սահմանված կարգով ներկայացվում է Ջրային կոմիտե: Վարձակալության պայմանագրով սահմանված 107 նմուշառման կետերից ամենօրյա պարբերականությամբ	

			Վարձակալի կողմից իրականացվում է նմուշառում, որը հետազոտվում է 4 որակական հատկանիշներով: Դեռևս բավարար չէ չսպասարկվող բնակավայրերում ջրի որակի մոնիթորինգի մակարդակը՝ ծառայություններ մատուցող մասնագիտական կազմակերպության բացակայությամբ պայմանավորված: Ջրային կոմիտեն՝ ամսական կտրվածքով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը ուղարկում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը՝ իր սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերում խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով: Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվել է դեկտեմբեր ամսվա խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը, որը փոխանցվել է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը: 2023թ. մատակարարվող ջրի որակը կազմում է 98. 6%:	
		77.6 «Աերացիա» կեղտաջրերի նոր մաքրման կայանի (ԿՄԿ) շինարարության		ՀՀ տարածքային կառավարման և

		կապալի միջազգային պայմանագրի ավարտի ապահովում, գույքի ձևավորումից հետո կայանի գործարկում և շահագործման հանձնում, ԿՄԿ-ի վերակառուցման ծրագրի հետագա փուլերի համար նախապատրաստական աշխատանքների իրականացում		ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին որոշակի իրավասություններ վերապահելու և «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման ծրագրի պայմանագիրն ավարտելու վերաբերյալ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված ընթացակարգով շրջանառվել և ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, նախագիծը բազմաթիվ անգամ քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի նիստերում և առաջարկությունների արդյունքում լրամշակվել է: Նախագծի վերադարձման հիմնական բարդույթը կայանում է նրանում, որ Վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված եզրակացությամբ՝ բացակայում է

				համապատասխան լիազորող նորմը: ՀՀ փոխվարչապետ Տ.Խաչա-տրյանի մոտ տեղի ունեցած վերջին քննարկման արդյունքներով կազմվել է հետագա քայլերի իրականա-ցման ճանապարհային քարտեզ:
		77.7 Սևանա լճի ավազանի քաղաքային 3 բնակավայրերում գործող ԿՄԿ-ներից արտանետվող կեղտաջրերի ամբողջական մաքրման ապահովման, տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կոյուղացման և տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների և սարքավորումների տեղադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» ծրագրով՝ Գավառի ԿՄԿ-ի համար պիլոտային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կայանը համալրել կեղտաջրերի պարզեցման HUBER ֆիրմայի կառուցվածքով, որն ավելի արդյունավետ կդարձնի կեղտաջրերի մեխանիկական մաքրման գործընթացը: 2023 թվականի մայիսի 22-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Ջրային կոմիտեի, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի և Գերմանական համագործակցություն Deutsche Zusammenarbeit GIZ–ի միջև կնքվել է համաձայնագիր՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի կեղտաջրերի մաքրման կայանի արդիականացման մասին:	
		77.8 Պետական սեփականություն հանդիսացող՝ գործող կեղտաջրի	Վարձակալության պայմանագրի 6-րդ Հավելվածով նախատեսված ներքին	

		մաքրման կայաններից արտահոսող մաքրված կեղտաջրի որակի մշտադիտարկման համակարգի ստեղծում	համեմատական ցուցանիշներում ներառված են մաքրված կեղտաջրերի որակն ու կոյուղու զննում և սպասարկում ցուցանիշները: Քանի որ գործող մաքրման կայաններում չի իրականացվում կեղտաջրի ամբողջական մաքրում, այնուամենայնիվ հաշվի առնելով մաքրման կայանների ներկա վիճակը և հետագա արդիականացումը, մշտադիտարկման համակարգի ներդնումը թույլ կտա ստանալ ամբողջական տեղեկատվություն թերի և/կամ ամբողջական մաքրում անցած կեղտաջրի որակի ցուցանիշների վերաբերյալ: Ջրային կոմիտեի և ՏԿԵՆ-ի կողմից քայլեր են իրականացվում նոր մաքրման կայանների կառուցման/վերակառուցման ուղղությամբ՝ ՊՄԳ գործիքակազմի կիրառմամբ: Որոշ տնտեսվարողների կողմից կառուցում-շահագործում-հանձնում ձևաչափով համագործակցության նախնական շահագրգռվածության նախաձեռնություններ են ներկայացվել: «Ջրային նախաձեռնություն+» ծրագրի միջնորդությամբ նախատեսվում է «Աերացիա» ԿՄԿ-ում տեղադրել կեղտաջրերի ավտոմատ նմուշառման սարք, որը թույլ կտա մշտական մոնիթորինգ կայան մուտք գործող կեղտաջրերի նկատմամբ՝ հիմնական շեշտադրումը դնելով COVID-19 հարուցիչի հայտնաբերման վրա: Գործընթացում	

			ներգրավված են նաև «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները:	
		77.9. Կոյուղու ցանցին չմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում	Տնտեսվարողների կողմից արտանետվող կեղտաջրերի տեսակի (ծագման), դրանց որակի և քանակի ցուցանիշների ճշգրտման և արդյունքում մաքրման տեխնոլոգիաների ընտրության և կիրառման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման ուղղությամբ իրականացվում են ուսումնասիրություններ: Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» ծրագրի շրջանակներում Խորհրդատուի կողմից ներկայացված տեխնիկատնտեսական հիմնավորման զեկույցում ընդգրկված է նաև առանձին տնային տնտեսությունների կամ դրանց խմբերի համար ապակենտրոնացված փոքր ԿՄԿ-ների առաջարկը՝ անջատված տիղմի կենտրոնացված մշակման հնարավորությամբ: Հաշվետվության վերաբերյալ Ջրային կոմիտեն ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ:	
		77.10 «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման	«Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման	Համաձայն Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական

		նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	նախագծի ՀՀ վարչապետի աշխատակազմի առաջարկություններով լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ ՏԿԵՆ:	կոմիտեի 2023 թվականի ապրիլի 17-ի նիստի N ԿԱ/107-2023 արձանագրության 2-րդ կետի՝ հանվել է օրակարգից՝ հաշվի առնելով այն, որ վերոնշյալ հայեցակարգն արդեն իսկ ընդգրկված է շրջանառության մեջ գտնվող «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի 2023-2031 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում և դրա առանձին ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:
		77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքների իրականացում	Միջոցառման մեջ ընդգրկված են 3 Լոտեր, որոնց շրջանակներում աշխատանքները մեկնարկել են 2021 թվականից, ավարտը նախատեսված է 2024 թվականի մայիսին: 2023թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ ջրատարի կառուցում՝ 12,3 կմ, բաշխիչ ցանցի վերակառուցում՝ 118,0 կմ, տնային մուտքագիծ՝ 55,7 կմ, կոյուղագծերի կառուցում՝ 6,5 կմ, անհատական տնային միացումներ՝ 7107 հատ:	2021-2022թթ. նախատեսված և սահմանված ժամկետում չիրականացված միջոցառումների մասին, Շին աշխատանքները ժամանակավորապես հետաձգվել են Եվրո-դրամ փոփարժեքի անկման արդյունքում: Նախատեսված և չիրականացված աշխատանքները

				տեղափոխվել են 2023-24թթ՝ ՀՀ կառավարության 01.06.2023թ. N 877-Ա որոշման հիման վրա:
		77.12 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործման ապահովում	Լոտ 4 - «560 գյուղերի ջրամատակարար-ման և ջրահեռացման համակարգերի նախագծում, տեխնիկական և հեղինակային վերահսկողություն» - գտնվում է մրցութային փուլում:	2021-2022թթ. նախատեսված և սահմանված ժամկետում չիրականացված միջոցառումների պատճառներն են՝ -Մրցութային փաստաթղթերի ուշացումը -Շահագործող կազմակերպության բացակայությունը:
		77.13 Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում	2023 թվականի ընթացքում Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերում կառուցվել է՝ - բաշխիչ ցանց՝ 17,6 կմ, - անհատական տնային մուտքագծեր՝ 2,36 կմ, անհատական ջրաչափական հորեր՝ 476 հատ:	

78.	Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ	78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և իրականացում	«Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգի արդյունավետ կառավարման և կայուն զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմից ստացված եզրակացությունների հիման վրա լրամշակվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն:	
79.	Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում	79.1.Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական, վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում	2023 թվականին շարունակվել և ավարտին է հասցվել ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքները: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են և վերանորոգվել կամ կառուցվել են և կահավորվել են «Արտաշատ», «Էջմիածին», «Արմավիր» և «Երևան» ջրօգտագործողների ընկերությունների կողմից շահագործվող թվով 748 ջրաչափական դիտակետեր: 2021-2023 թվականներին բոլոր 15 ՋՕԸ-ների և «Ջրառ» ՓԲԸ-ի սպասարկման տարածքների մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետրում ընդհանուր առմամբ տեղադրվել են 2235 հատ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներ:	Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջրօգտագործման թույլ-տվություն ունեցող բոլոր ջրառի կետերը ջրաչափական սարքավորումներով կահա-վորելու համար ևս 30 մակարդակաչափ կտրամա-դրվի 2024 թվականի 1-ին եռամսյակում:

			Ջրօգտագործողների ընկերությունների կողմից ջրօգտագործման թույլտվություն ունեցող բոլոր ջրառի կետերը ջրաչափական սարքավորումներով կահավորելու համար ձեռք են բերվել և ՋՕԸ-երին տեղադրման համար տրամադրվել են 781 հատ հոսքաչափեր:	
		79.2.Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում	Ակնկալվում է ստեղծել էլեկտրոնային կառավարման սերվերային համակարգ՝ համապատասխան տեխնիկական և կադրային ռեսուրսներով համալրված, ապահովելու 2021-2023թթ-երին տեղադրված ջրաչափական սարքավորումների կենտրոնացված կառավարման նպատակով: 2024 թ-ին կմեկնարկի տեխնիկական առաջադրանքի կազմման աշխատանքները:	
80.	Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում	80.1.Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով մշակել և իրականացնել կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ	Միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները բավարար չլինելու պատճառով այն հնարավոր կլինի իրականացնել «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրով նախատեսված ՀՏԿ-ների քարտեզագրումից և չափագրումից ու դրանց փաստացի վիճակի մասին թարմացված քանակական և որակական տվյալների ԱՏՀ ծրագրային հավելված մուտքագրումից հետո:	
		80.2.Իրականացնել ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և ներդրումային քաղաքականություն	Միջոցառման իրականացման համար 2023 թվականին ՀՀ պետական բյուջեով հատկացվել է 414,070.7 հազ. դրամ գումար, որով պետք է իրականացվեր «Արմավիր»,	

			«Երևան», «Արտաշատ» և «Արարատ» ՋՕԸ-երի սպասարկման տարածքներում գտնվող թվով 5 օբյեկտներում: Նշված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Կառուցվել է 2520 գծ.մ ջրանցք (ներառյալ դյուկեռներ և ակվեդուկ), 795 գծ.մ խողովակաշար և Մասիսի տարածաշրջանի 70 ինքնաշատրվանող խորքային հորեր կահավորվել են իմպուլսային ելքով ջրաչափական սարքավորումներով և փականներով: «Թալինի 1 պոմպակայանի վերականգնման աշխատանքներ» օբյեկտի մասով վերականգնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը գտնվում են փորձաքննության փուլում:	
81.	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	81.1.Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում	Միջոցառումն իրականացվում է «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում՝ Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ: Ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները մեկնարկել են 2018 թվականին և իրականացվել սահմանված ժամկետներում: 2023 թվականին շարունակվել են միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցման աշխատանքները: 2023 թվականին վերակառուցվել են երկրորդ կարգի ջրանցքների 45 կմ և ներտնտեսային	

			ցանցերի 17 կմ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածներ:	
82.	2021-2026թթ. ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում	82.1.«Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում	Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման 74,2 մլն եվրո արժեքով շիրանարական պայմանագիրը կնքվել է 2023թ ապրիլի 21-ին: Շինարարական աշխատանքներ մեկնարկել են 2023 թվականի հունիսի 9-ին և ներկայումս իրականացվում են մոբիլիզացիոն և հատակային ջրթողի վերանորոգման նպատակով գետի ջրի հեռացման համակարգի կառուցման աշխատանքները:	
		82.2. «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2. ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում	Փուլ 1-ի ֆինանսական դեֆիցիտը ծածկելու նպատակով «Ջրային ռեսուրսների համալիր կառավարում (ՋՌՀԿ)/Ախուրյան գետ, Փուլ 2» (BMZ N° 2012 66 956) ծրագրի միջոցներն ուղղվել են Կապսի ջրաբարի շինարարությանը:	
		82.3.Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ	2023 թվականի ընթացքում շարունակվել են Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները, մասնավորապես՝ Վեդի ջրամբարի հիմնական 85մ բարձրությամբ պատվարից արդեն կառուցված է ընդհանուր 81մ բարձրությամբ հատվածը, շարունակվել է ջրամբարի հիդրոմեխանիկական սարքավորումների տեղադրման գործընթացը (տարեվերջի դրությամբ կատարվել են ջրամբարի կառուցման աշխատանքների 96%-ը): Մեկնարկել է Վեդի ջրամբարի և Վեդի	

			գետի իշխման տակ գտնվող փորձնական հողատարածքներում (շուրջ 580 հա) ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման աշխատանքները: Ծրագրի տեխնիկական ավարտի ժամկետն է 2024 թվականի դեկտմբերի 31-ը:	
83.	Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն	83.1.Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Արգիճիի ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված մրցույթը կայացել է: Կնքվել է համապատասխան պայմանագիր: Ջրամբարի տարածքում առկա ՀԷԿ-ի ենթակառուցվածքներով պայմանավորված, նախագծային հետազոտությունները հետաձգվել են և կմեկնարկեն սեփականտիրոջ հետ բանակցություններից հետո: Ջրամբարի տեխնիկատնտեսական և նախնական նախագծերի աշխատանքների ավարտը նախատեսվում է 2024 թվականին:	
		83.2.Գեղարքունիքի մարզում Աստղաձորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Աստղաձորի ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված մրցույթը կայացել է: Կնքվել է համապատասխան պայմանագիր: Ջրամբարի տեխնիկատնտեսական և նախնական նախագծերի աշխատանքներն ավարտական փուլում են:	

		83.3.Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Ելփինի ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված մրցույթը կայացել է: Կնքվել է համապատասխան պայմանագիր: Ջրամբարի տեխնիկա-տնտեսական և նախնական նախագծերի աշխատանքներն ավարտական փուլում են:	
		83.4.Վայոց ձորի Խնձորուտի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎՋԵԲ-ի հետ քննարկվում են Խնձորեսկի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.5.Վայոց ձորի Վերնաշենի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎՋԵԲ-ի հետ քննարկվում են Վերնաշենի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.6.Վայոց ձորի Խաչիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎՋԵԲ-ի հետ քննարկվում են Խաչիկի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.7. Վայոց ձորի մարզում Գետիկ վանքի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎՋԵԲ-ի հետ քննարկվում են Գետիկ վանքի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման	

			տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.8. Վայոց ձորի մարզում Զիրակի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Զիրակի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.9. Արմավիրի մարզի Քասախի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Քասախի ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված մրցույթը կայացել է: Կնքվել է համապատասխան պայմանագիր: Ջրամբարի տեխնիկա-տնտեսական և նախնական նախագծերի աշխատանքներն ավարտական փուլում են:	
		83.10.Արմավիրի մարզի Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Սելավ-Մաստարայի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.11.Տավուշի մարզում Հախում-2 ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Հախում-2 ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	

		83.12.Տավուշի մարզում Կողբի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Կողբի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.13.Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Արթիկի ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված մրցույթը կայացել է: Կնքվել է համապատասխան պայմանագիր: Ջրամբարի տեխնիկա-տնտեսական և նախնական նախագծերի աշխատանքներն ավարտական փուլում են:	
		83.14.Սյունիքի մարզում Խնձորեսկի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	ՎԶԵԲ-ի հետ քննարկվում են Խնձորեսկի ջրամբարի կառուցման իրագործելիության հարցը, առաջիկայում նախատեսվում է իրականացնել ջրամբարի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները:	
		83.15 Սյունիքի մարզում Լիճքի (Մեղրի) ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում	Լիճքի ջրամբարի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված մրցույթը կայացել է: Կնքվել է համապատասխան պայմանագիր: Ջրամբարի տեխնիկա-տնտեսական և նախնական նախագծերի աշխատանքներն ավարտական փուլում են:	

		83.16.Կապսի ջրամբարից մինչև Թալինի մայր ջրանցքի ոռոգման ջրատարի կառուցում	Ախուրյանի ջրավազանի ջրային հոսքերը Կապսի ջրամբարում կուտակելու, այնուհետև դեպի Արագածոտնի և Արմավիրի մարզեր տեղափոխելու նպատակով՝ Ծրագրի իրագործման դեպքում, կկառուցվի շուրջ 70--80 կմ երկարությամբ ինքնահոս խողովակաշար: 2024թ. նախատեսվում է Ասիական Զարգացման Բանկի և/կամ գերմանական KfW բանկի հետ քննարկել Կապսի ջրամբարի 25 մլն մ3-ից 60մլն մ3 ծավալի ավելացման և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորվածության ուսումնասիրությունը:	
		83.17.Հերհերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցում	Հերհերի ջրամբարից սկիզբ առնող ինքնահոս համակարգի կառուցման նպատակով դեռևս 2019 թվականին, ձեռք է բերել ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհերի ջրամբարից ինքնահոս ջրատարի կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերը, որի կառուցման ընդհանուր արժեքը կազմում է 10 714 678.1 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Հաշվի առնելով, որ վերջին տարիներին մետաղական խողովակների գները կտրուկ թանկացել են, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի մասնագետների կարծիքով ծրագրի նախահաշվային արժեքի վերանայման արդյունքներով Ծրագրի ընդհանուր արժեքը կավելանա շուրջ 40%-ով: Միաժամանակ ջրագիծն անցնում է շուրջ 670 մասնավոր	

			հողակտորների միջով, որի արդյունքներով առաջանում է նաև հողերի օտարման և վերաբնակեցման ծրագրի պատրաստման և իրականացման, հետագայում նաև դրանց փոխհատուցման գումարներ: Հետագայում ինքնահոս համակարգի կառուցման և նոր նախագծանախահաշվային փաստաթղթեր կազմելու նպատակով ներկայացվել է բյուջետային հայտ 2024թ. ՀՀ պետական բյուջեի նախագծում ներառելու նպատակով: ՀՀ պետական բյուջեի ամփոփ քննարկման ժամանակ ծրագիրը չի ներառվել ՀՀ 2024 թվականի պետական բյուջեում և առաջարկվել է իրականացնել մանրամասն, լրացուցիչ տեխնիկատնտեսական ուսումնասիրություն:	
		83.18.Գեղարդալճի ջրամբարից ինքնահոս համակարգի կառուցում	Աշխատանքներն ավարտվել են 2022 թվականին:	
		83.19. Օրվա կարգավորիչ 31 հատ ջրավազանների կառուցում, վերակառուցում և նախապատրաստական աշխատանքների իրականացում	Օրվա կարգավորման թվով 31 ջրավազանների կառուցման և վերակառուցման համար, Ջրային կոմիտեի հետ կնքված համապատասխան պայմանագրերի շրջանակներում Խորհրդատու կազմակերպության կողմից ներկայացվել են օրվա կարգավորման թվով 28 ջրավազանների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ամբողջա-կան փաթեթները, որոնց վերաբերյալ ստացվել են քաղաքաշինական պարզ	

			փորձաքննության դրական եզրակացություն-ներ: Ներկայացված փաթեթները գտնվում են համալիր փորձաքննության փուլում, որոնց դրական եզրակացությունների արդյունքում 2024 թվականի առաջին կիսամյակում կմեկնարկեն շինարարության մրցույթները: Օրվա կարգավորման թվով 31 ջրավազաններից չեն իրականացվել 3 ջրավազանների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները: Ջրավազաններից 1-ը նախնական քննարկման փուլում հանվել է՝ հաշվի առնելով ջրօգտագործող ընկերության և խորհրդատու ընկերության կողմից ներկայացված հիմնավորումները՝ նշված ջրավազանի կառուցման աննպատակահարմարության վերաբերյալ, իսկ մյուս 2-ը չեն իրականացվել՝ համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ճարտարապետահատակագծային առաջա-դրանքները խորհրդատուին չտրամադրելու պատճառով:	
84.	«Արփա-Սևան» թունելի անվտանգ շահագործման շարունակականության ապահովում	84.1.Արփա-Սևան հիդրոտեխնիկական կառույցի վթարային հատվածների ուսումնասիրություն, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների իրականացում	2022թ. մեկնարկած հիմնանորոգման աշխատանքները ավարտվել են 2023թ.: Նախագծով նախատեսված շուրջ 220.1 մ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածները վերանորոգվել են: Ձեռք են բերել նախագծանախահաշվային փաստաթղթեր 2023թ. թունելի հիմնանորոգման աշխատանքների նոր՝	

			ընդհանուր 244.7 մ երկարությամբ առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը պատրաստ է: Գարնան վարարումների հալոցքի ջրերը թունելով Սևանա լիճ տեղափոխելով պայմանավորված՝ նախատեսվում է շինարարական աշխատանքներն իրակա-նացնել 01.09.2024-31.03.2025 ժամանակա-հատվածում:	
85.	Խոնավ (գերխոնավ) գյուղատնտեսական հողատարածքների մելիորատիվ վիճակի բարելավման աշխատանքների իրականացում	85.1.Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում: Գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացում	ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի «Կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում» ծրագրի շրջանակներում իրականացվել են կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման շուրջ 172.5 կմ երկարությամբ աշխատանքներ, իսկ խնայված միջոցների հաշվին՝ ևս 28.04 կմ: Արարատյան դաշտում տեղադրված 455 դիտողական հորատանցքներում իրականացվել են գրունտային ջրերի մշտական դիտարկումներ:	
86.	Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում, հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում, հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում	86.1.Հանրապետության բնակավայրերի, տնտեսական արժեք ներկայացնող տարածքների ու բնակչության գույքը վարարումների և սելավների ռիսկից պաշտպանելու տվյալների բազայի ստեղծման, հակահեղեղային առաջնահերթ միջոցառումների իրականացման կանոնակարգման,	2023 թվականին հակահեղեղային առաջնահերթ միջոցառումներից ավարտվել և շահագործման է հանձնվել ք.Ապարանի «ՔՅԱՆԴԱԼ» կոչվող սելավատարի մաքրում մոտ 2000 մ հատվածում» աշխատանքը: «Գետիկ գետի հունի մաքրում շուրջ 1600մ և ափերի ամրացում շուրջ 150 մ Ճամբարակ խոշորացված համանքի Մարտունի գյուղի	

		կառավարման համակարգչային ծրագրի միջոցով ոլորտի կենտրոնացված կառավարման իրականացում	տարածքում» և «Նարեկի սելավատարի հունի մաքրում 2945 մ և ափերի ամրացում 380 մ» աշխատանքների ավարտը նախատեսվում է 2024թ-ին: ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանների միջակայքում Արաքս գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ 130 մետր երկարությամբ և 8 մետր խորությամբ ողողված պատնեշի վերականգնման աշխատանքների նախագծային փաթեթները Թուրքական կողմի հետ համաձայնեցման փուլում է: ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի /Դեբեդավան, Բագրատաշեն, Պտղավան, Հաղթանակ բնակավայրերի/ տարածքում Դեբեդ գետի ափի ամրացման և սահմանային ճանապարհի /հայ-վրացական սահման/ ստեղծման աշխատանքների իրականացման նպատակով աշխատանքներ են տարվում նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը վրացական կողմի հետ համաձայնեցնելու համար: Վրացական կողմից համաձայնությունն ստանալու դեպքում կնախաձեռնվի շինարարության ծրագիրը մեկնարկելու աշխատանքներ:	
87.	Ոռոգման համակարգերում գույքի	87.1. Իրականացնել ոռոգման համակարգերի (ջրանցքներ, ջրամբարներ, խորքային հորեր, ջրատար խողովակներ,	«Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրով նախատեսվել էր իրականացնել քարտեզագրում և չափագրում, դրանց	

	առկայության և վիճակի գնահատում	պոմպակայաններ, շենքեր, շինություններ, մեքենամեխանիզմներ, հիդրոտեխնիկական այլ կառուցվածքներ և այլն) գույքագրում և գնահատում	փաստացի վիճակի մասին թարմացված քանակական և որակական տվյալների մուտքագրում ծրագրային հավելված: Սակայն ծրագրի դոնոր Կայունության և Զարգացման Եվրասիական հիմնադրամի վերջին առաքելության այցի ընթացքում որոշվել է այդ միջոցառման գումարները ուղղել կապիտալ շինարարական աշխատանքներին, իսկ չափագրման աշխատանքների առավել մեծ ծավալներով իրականացման հնարավորությունները քննարկել և դիտարկել առաջիկա հնարավոր նոր ծրագրերի շրջանակներում:	
88.	Գործող ջրամբարների պատշաճ շահագործում	88.1.Ջրամբարների վերականգնման և վերազինման աշխատանքներ	ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի վերականգնման և վերազինման աշխատանքներն ավարտվել են: Ձեռք են բերվել ՀՀ Տավուշի մարզի Տավուշի ջրամբարի պատվարի վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերը:	
		88.2.Յուրաքանչյուր ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակում	Ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը կզբաղվի ջրամբարի տեխնիկական անվտանգության ապահովման ծրագրի մշակմամբ:	
96.	Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության	96.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման	

	բարձրացում, այդ նպատակով մշտադիտարկման և վերլուծության գործող համակարգի արմատական բարեփոխում և առևտրային կազմակերպությունների կառավարման որակի բարելավում	որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	նախագիծը ընդունվել է (05.01.2023թ. N 30-Ն որոշումը):	
97.	Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծում, այդ նպատակով պետական սեփականություն համարվող հանրակացարանային տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացի ավարտում	97.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները նախատեսվում է իրականացնել «Պետական գույքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունումից հետո: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 29 բնակելի տարածքների նվիրատվությունը:	
		97.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ վարչապետի աշխատակազմ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները նախատեսվում է իրականացնել «Պետական գույքի	

			կառավարման մասին» նոր օրենքի ընդունումից հետո: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է 7 բնակելի տարածքի սեփականաշնորհումը:	
		97.3 «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու ու 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067-Ն որոշումն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	«Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրատվության և նվիրաբերության կարգերը հաստատելու ու 2016 թվականի հոկտեմբերի 3-ի N 1067- Ն որոշումն ուժն կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները նախատեսվում է իրականացնել «Պետական գույքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունումից հետո:	
98.	Պետական գույքի արդյունավետության բարձրացում, պետական գույքի էլեկտրոնային հաշվառման միասնական բազայի տվյալների հիման վրա պետական գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկման, վերլուծության, ինչպես նաև արդյունավետության մակարդակի գնահատման շնորհիվ պետական գույքի	98.1 Պետական անշարժ գույքի օգտագործման մշտադիտարկման շնորհիվ գույքի օգտագործման ժամանակահատվածում պատշաճ հսկողության սահմանում, վնասների բացահայտում և դրանք վերականգնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում, ինչպես նաև առաջին անգամ մշտադիտարկման շնորհիվ անշարժ գույքի օգտագործման արդյունավետության գնահատում: Իրավական ակտերի պահանջներից և կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորություններից թույլ տված շեղումների, խախտումների	Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.02.2021թ. N202-Ն որոշման պահանջները՝ պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակը բացահայտելու և բարելավելու նպատակով Կոմիտեին հանձնված պետական գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ, աշխատանքային խումբը մոնիթորինգն իրականացրել է պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի): Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում մշտադիտարկման է ենթարկվել թվով 53 անշարժ գույք: Մոնիթորինգն իրականացվել է գույքը օգտագործողի կողմից անհատույց	

	օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից շեղումների, խախտումների և դրանց պատճառած վնասի բացահայտում	բացահայտում, չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող պետական գույքի առանձնացում, արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների և գույքի օգտագործման բարելավման վերաբերյալ, Կոմիտեի գործող ստորաբաժանումների օպտիմալացման արդյունքում և հաստիքների օգտագործման շնորհիվ նոր մշտադիտարկման վարչության ստեղծելու մասին առաջարկությունների ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	օգտագործման, վարձակալության և պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերով: Գույքի մոնիթորինգի ընթացքում ի հայտ են եկել որոշ խախտումներ, որոնց վերացման հետ կապված աշխատանքներ են տարվում: Միաժամանակ պետական գույքի օգտագործման և պահպանման վիճակը բացահայտելու և բարելավելու նպատակով ընդունվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.04.2023թ. «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-Ի N 30-Լ հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 18-Լ հրամանը: Նշված հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել Պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրության մեջ: Հրամանով ստեղծվել է պետական գույքի հաշվառման և մշտադիտարկման վարչություն, որը Կոմիտեին հանձնված պետական գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ, իրականացնելու է պետական	

			սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկում (մոնիթորինգի):	
99.	Պետական համակարգի մարմինների և պետական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին օգտագործվող ոչ պետական սեփականություն համարվող տարածքները պետական սեփականություն համարվող տարածքներով փոխարինումը	99.1 «Պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքները պետական տարածքներով փոխարինելու մասին» Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Պետական կարիքների համար վարձակալած ոչ պետական տարածքները պետական տարածքներով փոխարինելու նպատակով մշակվել և շրջանառության մեջ են դրվել 3 իրավական ակտերի նախագծեր:	
100.	Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ և օտարման ոչ ենթակա պետական գույքի կազմի և կառուցվածքի սահմանում	100.1 Պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գույքի կազմը սահմանելու նպատակով Կոմիտեի նախաձեռնությամբ պետական մարմինների մասնակցությամբ ու առաջարկությունների, ինչպես նաև իրականացվող մշտադիտարկման արդյունքների հիման վրա պետական մարմինների գործառույթների իրականացման համար անհրաժեշտ անշարժ գույքի նկատմամբ պահանջների	ՀՀ կառավարության 01.04.2021 N 458-L որոշմամբ հաստատված պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրում ՀՀ կառավարության 22.06.2023թ. N 1036-L որոշմամբ կատարվել է լրացումներ և փոփոխություն, որի արդյունքում՝ մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի ցանկն ավելացվել է թվով 136 գույքով:	

		սահմանում և օտարման ոչ ենթակա գույքի կազմի և մակերեսի առանձնացում: Նշված տեղեկատվության հիման վրա համապատասխան փոփոխությունների կատարում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի ապրիլի 1-ի N 458-L որոշմամբ հաստատված պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրում		
102.	Պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետության բարձրացում, այդ նպատակով նոր գործիքակազմի ստեղծում՝ մասնագիտացված կառույցներին պատվիրակելու միջոցով	102.1 Մինչև 3 միավոր պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետ կազմակերպելու նպատակով (պիլոտային ծրագրի շրջանակներում) այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպություն-ների ներգրավում և դրանց մասնակցության կանոնակարգում՝ նոր գործիքակազմի ստեղծման շնորհիվ:	Մինչև 3 միավոր պետական ոչ պրոֆիլային գույքի օտարման գործընթացի արդյունավետ կազմակերպելու նպատակով) այդ աշխատանքներին մրցակցային եղանակով մասնագիտացված կազմակերպությունների ներգրավելու համար բրոկերային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Կոմիտեում 16.03.2023թ-ին տեղի է ունեցել աշխատանքային քննարկում: Աշխատանքային քննարկման ընթացքում կազմակերպությունների ներկայացուցիչները հայտնել են, որ իրենց միջոցով հնարավոր կլինի յուրաքանչյուր գույք օտարել միայն բացառիկ օտարման իրավասություն ունենալու և յուրաքանչյուր օտարման գործարքից 2-3% միջնորդավճար ստանալու դեպքում, ինչպես նաև օտարման գործընթացը պատշաճ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ստանալ տեղեկատվություն օտարման ենթակա	

			գույքերի քաղաքաշինական և այլ սահմանափակումների վերաբերյալ: Սակայն բարձր իրացվելիություն ունեցող գույքերը արդեն իսկ օտարվում են մրցութային կամ աճուրդային եղանակով, մինչդեռ բրոկերային կազմակերպություններին ևս հետաքրքրում են բարձր իրացվելիություն ունեցող գույքերով: Կարելի է արձանագրել, որ բրոկերային կազմակերպությունների միջոցով պետական գույքերի օտարման գործընթացը մի շարք ռիսկեր է պարունակում, մասնավորապես՝ օտարման գործընթացի ոչ մրցակցային լինելը: Առկա է նաև օտարման երկրորդ մոդելը՝ մասնագիտացված կազմակերպություններից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումը, որի ընթացքում նրանք կապահովեն գործընթացի հրապարակայնությունը և պոտենցիալ գնորդներին խորհրդատվության մատուցումը: Այս մոդելի ընթացքում հնարավորություն կընձեռվի արդեն իսկ վաճառքի դրված գույքերի համար գնորդներ ներգրավել նաև մասնագիտացված կառույցների միջոցով, որոնք գույքը վաճառվելու դեպքում վերջիններս ևս հնարավորություն կունենան 1% միջնորդավճար ստանալու օտարված գույքի մեկնարկային գնի արժեքից և 2%	

			միջնորդավճար մեկնարկային գնի և վաճառքի գնի տարբերությունից: Վերոնշյալ մոդելների վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից 2023 թվականի փետրվարի 7-ին Կոմիտեում անցկացված խորհրդակցության թիվ Վ/25-2023 արձանագրության 1.8 կետի և 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 102.1-րդ կետով նախատեսված միջոցառման կատարման ընթացքի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության շրջանակներում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
103.	Նպաստավոր ներդրումային միջավայրի ձևավորում և արժեթղթերի շուկայի կայացում, ինչպես նաև ֆոնդային բորսայի միջոցով համեմատաբար բարձր շահութաբերություն ունեցող պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման	103.1 «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	Տվյալ միջոցառման կատարման շրջանակներում Կոմիտեի կողմից միջոցներ են ձեռնարկվել «Արմենիկում» և «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ-ները մասնավորեցման ցանկում ընդգրկելու ուղղությամբ: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2022 թվականի հուլիսի 7-ին ընդունվել է «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը, համաձայն որի «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» և «Արմենիկում» ՓԲԸ-ները ընդգրկվել են մասնավորեցման ենթակա ընկերությունների ցանկում, որից հետո ընկերությունների 100 տոկոս	

	գործընթացի իրականացում		պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Կոմիտեին: ՀՀ վարչապետի 2022թ. թիվ 985-Ա որոշմամբ հաստատված՝ «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2022 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-282-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումներով «Արմենիկում» ՓԲԸ-ի և «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ-ի բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծերը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետ էր սահմանվել 2023 թվականի չորրորդ եռամսյակը: «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 21.04.2023թ. 25.08.2023թ. և 22.09.2023թ. գրություններով: Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստերով հարցի քննարկումը միշտ հանվել է օրակարգից:	

			Վերջին անգամ՝ Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի նիստի թիվ ԿԱ/289-2023 արձանագրության 9-րդ կետով «Հեր-Հեր» հիդրոէլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը հանվել էր նիստի օրակարգից՝ առաջարկելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին նշված հարցի շուրջ նախաձեռնել քննարկում Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մոտ: Քննարկումը դեռևս չի նախաձեռնվել: «Արմենիկում» ՓԲԸ-ի բաժնետոմսերը Կոմիտեին հանձնվելուց հետո Ընկերությունում անմիջապես իրականացվել է համակարգի գնահատման աուդիտ՝ ընդգրկելով 01.01.2021-31.12.2021թթ. ընկած ժամանակահատվածը: Աուդիտի հաշվետվության մեջ արձանագրվել է, որ ընկերության բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ հաշվում արտացոլված է «Արմենիկում+» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում «Արմենիկում» ՓԲԸ-ի ունեցած 30% բաժնետոմսերի արժեքը: Դեռևս 03.03.1999թ.-ին «ԱՊԱ-ՊՐԱԳԱ» ՍՊԸ-ի և «Արմենիկում» ՊՓԲԸ-ի միջև կնքվել է «Արմենիկում+» ԲԲԸ-ի ստեղծման մասին պայմանագիր, համաձայն որի	

			«Արմենիկում+» ԲԲԸ-ում «Արմենիկում» ՊՓԲԸ-ն ներդնում է 30% կամ 300 սովորական բաժնետոմս, որոնց արժեքն է 8 400 000 ԱՄՆ դոլոր, իսկ «ԱՊԱ-ՊՐԱԳԱ» ՍՊԸ-ն 70 % կամ 19 600 000 ԱՄՆ դոլար: «Արմենիկում» ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառվում է «Արմենիկում+» ՓԲԸ-ի նկատմամբ 1 մլրդ 500 մլն դրամ ոչ ընթացիկ պարտավորություն, որի վերաբերյալ ընկերությունում որևէ հիմնավորում առկա չէ: Նշվածի կապակցությամբ ներկայումս իրավապահ համակարգի մարմինների կողմից իրականացվում են ուսումնասիրություններ: Մասնավորապես՝ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր ստանալու նպատակով Կոմիտե են դիմել ՀՀ գլխավոր դատախազությունը և ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազի կողմից ՀՀ քննչական կոմիտե ներկայացված հանցանքի մասին հաղորդման հիման վրա 25.07.2023թ. նախաձեռնվել է թիվ 69122923 քրեական վարույթը, կատարվում է նախաքննություն: «Արմենիկում» ՓԲԸ-ի բաժնետոմսերը գնահատել և մասնավորեցման ներկայացնել	

			հնարավոր կլինի իրավապահ մարմինների կողմից ուսումնասիրություններն ավարտելուց հետո: ՀՀ վարչապետի N 1110-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ վարչապետի 2022թ. օգոստոսի 29-ի թիվ 985-Ա որոշմամբ հաստատված հավելվածում, համաձայն որի «Արմենիկում» ՓԲԸ-ի բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելու ժամկետ է սահմանվել 2024 թվականի դեկտեմբերի 30-ը: Շրջանառության մեջ է դրվել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 17-ի թիվ 1404-Ա որոշմամբ ստեղծված «Ռիփաբլիք Պլազա» փակ բաժնետիրական ընկերությունն ընդգրկել մասնավորեցման ցանկում:	
104.	Մասնավորեցման ոչ ենթակա պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կազմի և կառուցվածքի օպտիմալացում, ըստ	104.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 474-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացումը ՀՀ Վարչապետի աշխատակազմ	ՀՀ կառավարությունը 22.06.2023թ. ընդունել է N 983-Ն որոշումը:	

	ճյուղերի թվաքանակի սահմանում, ինչպես նաև վնասով, ոչ արդյունավետ և զարգացման հեռանկար չունեցող կազմակերպությունների առանձնացում և մասնավորեցման ծրագրում ընդգրկում			
106.	Մարզերում պետություն-համայնքներ գործընկերության բնագավառում ՓՄՁ-ի զարգացում չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող, ինչպես նաև նախկինում օտարման ներկայացված, սակայն չվաճառված գույքի առանձնացում, և այդ գույքի ներդրմամբ տարբեր ձևաչափերով տնտեսական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացում:	105.1 Մարզերում գտնվող չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի ներգրավմամբ տեղական նշանակության սոցիալ- տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացում, այդ նպատակով մինչև տասը միավոր ոչ բարձր իրացվելիություն ունեցող անշարժ գույքերի օտարում, վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրում ՀՀ ՏԿԵ նախարարության և համայնքների օժանդակությամբ	ՀՀ մարզերում գտնվող չօգտագործվող կամ ոչ արդյունավետ օգտագործվող գույքի ներգրավմամբ տեղական նշանակության սոցիալ-տնտեսական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով մի շարք ոչ բարձր իրացվելիություն ունեցող անշարժ գույքեր ներկայացվել են օտարման և վարձակալության տրամադրման, որի արդյունքում 25 միավոր գույք արդեն իսկ օտարվել է, 1 միավոր տրամադրվել է վարձակալության:	
107.	ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի	107.1 ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախընտրական խոստումներից բխող	ՀՀ վարչապետի 2021 թվականի հունիսի 4-ից 17-ը մարզերում և համայնքներում	

	նախընտրական խոստումների իրականացում	քայլերի իրականացում ուղղված համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը	նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների կարգավորմանն ուղղված՝ 2023թ. համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ մասնավորապես ճանապարհաշինություն /ճանապարհների հիմնանորոգում, վերանորոգում/, լուսավորության ցանցի ընդլայնում, ոռոգման համակարգերի արդիականացում, ինչպես նաև մանկապարտեզների և դպրոցների հիմնանորոգման/վերակառուցման աշխատանքներ:	

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ				
NN	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
2.	Պետական բյուջետային ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծում	2.5 Գնահատման համակարգի ներդրում	ՀՀ վարչապետի 28.04.2022թ. N 446-Ա որոշմամբ հաստատվել է «Պետական բյուջետային ծրագրերի գնահատման համակարգի ներդրման հայեցակարգը», մշակվել է «Բյուջետային ծրագրերի գնահատման մեթոդական ուղեցույց»-ը, իրականացվել է 3 բյուջետային ծրագրերի փորձնական գնահատումներ՝ նպատակ	

			ունենալով ավարտուն տեսքի բերել գնահատումների մեթոդաբանությունը: ԱԶԲ աջակցությամբ աշխատանքներ են տարվում բյուջետային ծրագրերի գնահատման գործընթացի ներդրման ուղղությամբ, որի շրջանակներում իրականացվում է նաև Ծրագրերի գնահատման Հայեցակարգի և մեթոդաբանության փորձաքննություն /ուսումնասիրություն՝ դրանց գործնական կիրառականության և ներդրման տեսանկյունից: ՀՀ կառավարության կողմից բյուջետային ծրագրերի գնահատման գործառույթի իրականացման համար իրավական հիմք ապահովելու նպատակով 06.11.2023թ. ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Մշակվել է «ՀՀ պետական բյուջետային ծրագրերի գնահատման կարգի», «ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային ծրագրերի գնահատման վարչության կանոնադրության», «ՀՀ վարչապետի 11.06.2018թ. ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին N 743-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ	

			վարչապետի որոշման, գնահատման համակարգի ներդրման ճանապարհային քարտեզի նախագծերը:	
		2.6 Մոնիթորինգի համակարգի ներդրում	Բյուջետային ծրագրերի գնահատման և մոնիթորինգի ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրության և հետագա քննարկումների արդյունքում (այդ թվում նաև միջազգային փորձագետների հետ) պարզ դարձավ, որ ծրագրային բյուջետավորման պայմաններում բյուջետային ծրագրերի կատարողականի (արդյունքային ցուցանիշների) մոնիթորինգի գործառույթներն ուղղակիորեն առնչվում են բյուջետային ստորաբաժանումների գործառույթների հետ և ավելի քիչ առնչություն ունեն ծրագրերի գնահատման գործառույթների հիմնական նպատակի հետ: Վերջինս ենթադրում է բյուջետային ծրագրերի կատարողականի ընթացիկ մոնիթորինգի գործառույթների իրականացումը գործող բյուջետային ստորաբաժանումների անձնակազմի կողմից: Այդուհանդերձ, բյուջետային ծրագրերի գնահատման և ընթացիկ մոնիթորինգի գործառույթները սերտորեն փոխկապակցված են, և բյուջետային ծրագրերի մոնիթորինգի գործառույթների ձևավորման, ՀՀ ՖՆ-ում ներդրման և համապատասխան կարողությունների զարգացման աշխատանքներն առավել	

			արդյունավետ է իրականացնել ծրագրերի (արդյունքների) գնահատման համակարգի ձևավորմանը և կարողությունների զարգացմանը զուգընթաց: Աշխատանքներ են տարվում բյուջետային ծրագրերի գնահատման համակարգի հայեցակարգային մոտեցումների վերանայման, գնահատման մեթոդաբանությունների և բիզնես գործընթացների մշակման, համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորման և ՀՀ ՖՆ անձնակազմի կարողությունների զարգացման ուղղությամբ, որի շրջանակներում համապատասխան կարողություններ կձևավորվեն նաև ՀՀ ՖՆ բյուջետային ստորաբաժանումներում:	
		2.7 ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ուղղակի հսկողության (ստուգման) գործառույթի՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը փոխանցման վերաբերյալ օրենսդրական փաթեթի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	03.03.2023թ. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերը, որի առնչությամբ Նախարարությունը 20.03.2023թ. ներկայացրել է իր դիրքորոշումը: Ներկայացված փաթեթի առնչությամբ 16.05.2023թ. փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գրասենյակում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել	

			նախագծի առանձին հարցեր պարզաբանել և լրացուցիչ քննարկել: Այնուհետև, 19.05.2023թ. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից Նախարարություն է ներկայացվել «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի լրամշակված տարբերակը: 28.09.2023թ. կրկին ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել վերանայված Փաթեթը:	
3.	Մասնակցային բյուջետավորման գործընթացի ներդրում	3.1 ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձի ուսումնասիրություն և առաջարկությունների փաթեթի մշակում	Մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձը ուսումնասիրված է և առաջարկությունների փաթեթը մշակված է	
		3.2 ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում մշակված առաջարկությունների փաթեթի հիման վրա գործողությունների ժամանակացույցի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի հաստատմանը	ՀՀ բյուջետային գործընթացում մասնակցային բյուջետավորման ներդրման նպատակով տարբեր երկրների փորձի ուսումնասիրության արդյունքում մշակված առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակված գործողությունների ժամանակացույցը առկա է, և ՀՀ վարչապետի որոշումը հաստատված է(ՀՀ վարչապետի 22.05.2023թ. N546-Ա որոշում, ՀՀ կառավարության 02.11.2023թ. 1890-Ն որոշում)	
4.	ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի	4.1 ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական	ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների	

	ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակում, գործընթացների պարզեցում, դյուրացում	ցուցումների բացերի և թերությունների բացահայտման նպատակով հարցաթերթի մշակում և ՀՀ պետական կառավարման մարմիններին տրամադրում	բացերի և թերությունների բացահայտման նպատակով մշակվել է հարցաթերթ, որը ՀՀ ՖՆ նախարարի համապատասխան գրությամբ տրամադրվել է ՀՀ պետական կառավարման մարմիններին:	
		4.2 ՀՀ պետական կառավարման մարմիններից և գործընկեր միջազգային կազմակերպություններից ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների վերաբերյալ ստացված առաջարկությունների և դիտողությունների վերհանում, ամփոփում և դրանց հիման վրա առաջարկությունների փաթեթի մշակում	ՀՀ պետական կառավարման մարմիններից և գործընկեր միջազգային կազմակերպություն-ներից ստացված առաջարկությունները ամփոփվել են, և դրանց հիման վրա իրականացվել է մեթոդական ցուցումների լրամշակման աշխատանքներ:	
		4.3 Առաջարկությունների փաթեթի հիման վրա ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումների լրամշակում, գործընթացների պարզեցում, դյուրացում	ՄԺԾԾ և տարեկան բյուջետային հայտերի ներկայացման մեթոդական ցուցումները լրամշակված, գործընթացները պարզեցված և դյուրացված են	
5.	Օտարերկրյա պետություններ գործուղումների ընթացակարգերի պարզեցում, փաստաթղթաշրջանառության ծավալների օպտիմալացում, արտասահմանյան գործուղումների մասին	5.1 ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ վարչապետի որոշման նախագծի մշակում և ՀՀ վարչապետի հաստատմանը ներկայացում	Սահմանված կարգով շրջանառվել և 2023 թվականի մարտի 23-ին ընդունվել է ՀՀ վարչապետի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 326-Ն որոշումը	
		5.2 ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ	Սահմանված կարգով շրջանառվել և 2023 թվականի մարտի 23-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի	

	որոշումների ընդունման լիազորությունների հստակեցում	կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում	Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 386-Ն որոշումը: Փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ Վարչապետի որոշմամբ օտարերկրյա պետություններ գործուղվում են միայն մարմինների ղեկավարները, իսկ գործուղումների հետ կապված ծախսերի հատուցումն իրականացվում է համապատասխան մարմնի կողմից՝ պետական բյուջեով տվյալ մարմնին հատկացված միջոցների հաշվին:	
6.	ՀՀ բյուջետային օրենսդրության բարեփոխում	6.1. Բյուջետային համակարգերի մասին տարբեր երկրների օրենսդրության ուսումնասիրություն	Բյուջետային համակարգերի մասին տարբեր երկրների օրենսդրություններն ուսումնասիրված են	
		6.2 Բյուջետային համակարգերի մասին տարբեր երկրների օրենսդրության ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՀՀ բյուջետային օրենսդրության առկա լուծումներ պահանջող խնդիրների վերհանում, առաջարկությունների փաթեթի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	Կատարման ընթացքում է Տարբեր երկրների բյուջետային համակարգերի ուսումնասիրության հիման վրա վեր են հանվել ՀՀ բյուջետային օրենսդրության բացերը: Մշակվել է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որը սահմանված կարգով տրամադրվել է կարծիքի ՀՀ հանրային իշխանության մարմիններին: Կարծիքները ամփոփելուց հետո նախագծերի	

			փաթեթը կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
8.	Էլեկտրոնային գնումների նոր համակարգի ներդրում	8.1 Մշակել արդի պահանջներին համապատասխանող էլեկտրոնային գնումների նոր համակարգ՝ դրա տիրույթում ներառելով բոլոր պատվիրատուներին	2023թ. ավարտվել են էլեկտրոնային գնումների նոր համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագծի մշակման աշխատանքները: Տեխնիկական առաջադրանքը քննարկվել և հավանության է արժանացել Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից: Մրցույթի կազմակերպման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 25.01.2024թ. N 94-Ն որոշումը: Ներկայումս իրականացվում են մրցույթի կազմակերպման աշխատանքներ:	
10.	Գնումների գործընթացում ներգրավված և որոշումներ կայացնող անձանց կարողությունների շարունակական զարգացում	10.1 Գնումների պլանավորման, տեխնիկական առաջադրանքների մշակման, ընթացակարգերի կազմակերպման, պայմանագրերի կառավարման և բողոքների քննման գործընթացում ներգրավված անձանց կարողությունների շարունակական զարգացման նպատակով կարիքների գնահատում, վերապատրաստման ծրագրերի հաստատում և իրականացում	ՀՀ կառավարության 08.12.2022թ. N1885-Ն որոշմամբ գնումների գործընթացի կազմակերպման կարգում կատարված փոփոխություններով սահմանված կարգավորումների (շինարարական ծրագրերի գնման դեպքում կապալառուի և տեխնիկական հսկողության ծառայություններ մատուցողի կողմից կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան իրականացնելու մասին) կիրառման վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տարածքային	

			կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ 2023թ. փետրվար-ապրիլ ամիսներին թվով 127 պատվիրատուների 250 մասնակիցների համար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ: Գնումների կատարման պատասխանատու ստորաբաժանումների կարողությունների շարունակական զարգացման նպատակով իրականացվել է գնումների պլանավորման, տեխնիկական առաջադրանքների մշակման և պայմանագրերի կառավարման համար անհրաժեշտ կարիքների հավաքագրում և գնահատում, որի հիման վրա 2023թ. ապրիլ-մայիս ամիսներին կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ պետական կառավարման մարմինների և Երևանի քաղաքապետարանի թվով 614 աշխատակիցների համար: Բժշկական կազմակերպությունների հետ գնման պայմանագրեր կնքած մատակարարների կողմից բարձրացված խնդիրները քննարկելու համար «Գնումների մասին» օրենքի համաձայն պատվիրատու հանդիսացող բժշկական կազմակերպություն-ների համապատասխան մասնագետների համար 2023թ. դեկտեմբերի 5-ից-դեկտեմբերի 12-ը կազմակերպվել են	

			վերապատրաստման դասընթացներ թվով 185 մասնակիցների համար: 2023թ. սեպտեմբեր- նոյեմբեր ամիսներին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարտադիր վերապատրաստման ենթակա թվով 389 որակավորված գնումների մասնագետների համար կազմակերպվել է 12 ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման ծրագիրը կազմակերպվել է համակարգային նոր մոտեցումներ ցուցաբերելու միջոցով: Մասնավորապես՝ մշակվել են վերապատրաստումների անցկացման նոր մոդելներ և մոտեցումներ՝ հիմքում ունենալով ինչպես մեթոդական ապահովման, այնպես էլ էլեկտրոնային համակարգերի կիրառման ընթացքում հետադարձ կապի միջոցով պարտվիրատուներից ստացված հարցադրումները, կարգավորումների սահմանման տրամաբանությունը, «հարց-պատասխան» ֆորմատի միջոցով ընթացակարգերի կազմակերպմանը վերաբերող գործնական խնդիրների և այլ «դեպքային ուսումնասիրությունների» (case studies) ու առաջարկությունների քննարկումը: Վերապատրաստման ենթակա գնումների համակարգողների վերապատրաստման դասընթացների խմբերը և ժամանակացույցը հաստատվել են ՀՀ ֆինանսների նախարարի	

			հրամաններով, որոնք հրապարակված են www.procurement.am (gnumner.am) պաշտոնական տեղեկագրում «Որակավորում» դաշտի «Վերապատրաստում» բաժնի «Վերապատրաստման դացընթացների անցկացման ժամանակացույցը և խմբերը» ենթաբաժնում: ԵՄ ՍԻԳՄԱ ծրագրի փորձագետների հետ կազմակերպված հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության շրջանակում վերջիններիս կողմից 2023թ. նոյեմբերի 27-ին և 28-ին կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ թվով 20 դատավորների համար:	
11.	Գնման գործընթացների վերաբերյալ մեթոդական աջակցության տրամադրման գործիքակազմի բարելավում	11.1 Գնման գործընթացների վերաբերյալ պատվիրատուներից և մասնակիցներից հաճախակի ստացվող հարցադրումների և դրանց վերաբերյալ լիազորված մարմնի կողմից տրամադրվող պարզաբանումների հրապարակում	www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվում են գնման գործընթացների վերաբերյալ պատվիրատուներից և մասնակիցներից հաճախակի ստացվող հարցադրումներ և դրանց վերաբերյալ տրամադրվող պարզաբանումներ:	
12.	Պետական կառավարման մարմիններին գնման գործընթացների մեթոդական աջակցության շրջանակում խորհրդատվության	12.1 Պետական կառավարման համակարգի մարմիններին խորհրդատ-վության տրամադրում՝ ռազմավարական նշանակություն ունեցող գնման ընթացակարգերի կազմակերպման դեպքում	Պետական կառավարման մարմիններից հավաքագրվել են կարիքները և ըստ այդմ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, Արդարադատության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և Շրջակա միջավայրի նախարարություններին տրամադրվել է անհրաժեշտ մեթոդական	

	տրամադրում		աջակցություն: Գործընթացը կրում է պարբերական բնույթ և կարիք առաջանալու դեպքում իրականացվում են համապատասխան գործողություններ:	
13.	Գնման պայմանագրերի ոչ պատշաճ կատարման ռիսկերի նվազեցում	13.1 Գնման պայմանագրերի ոչ պատշաճ կատարման ռիսկերը նվազեցնելու նպատակով կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում	Մշակվել և շրջանառվել է «Պետական բյուջեի միջոցների հաշվին շինարարական աշխատանքների գնման հնարավոր մասնակիցների նախաորակավորման ընթացակարգը սահմանելու և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվել է սահմանել, որ փորձաքննված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա իրականացված շինարարական աշխատանքներ կատարած բարեխիղճ մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր պայմանագրի պատշաճ կատարման արդյունքում պատվիրատուները կներկայացնեն լիազոր մարմին, իսկ լիազոր մարմինը ստացված տեղեկատվության հիման վրա կապալառուներին կներառի նախաորակավորված հնարավոր մասնակիցների ցուցակում՝ նախատեսելով, որ ցուցակում ներառված մասնակիցներին վարկանիշների շնորհման և այդ մասնակիցների՝ գնման ընթացակարգերին մասնակցության առանձնահատկությունները	ՀՀ ֆինանսների նախարարությունը փորձաքննված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա իրականացվող շինարարական աշխատանքներ կատարող բարեխիղճ մասնակիցների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը սկսել է իրականացնել 03.01.2024թ., քանզի պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետները հիմնականում ավարտվում են դեկտեմբեր ամսին: Նախատեսվում է ավարտել 2024 թվականի ավարտին:

			կսահմանվեն ՀՀ կառավարության առանձին որոշմամբ: Ծավալված քննարկումների արդյունքում նպատակահարմար է համարվել քննարկվող նախագիծը հանել շրջանառությունից՝ դրանով նախատեսվող տեղեկատվությունը 01.01.2024թ.-ից սկսած հավաքագրելով գնումների պաշտոնական տեղեկագրի և ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքներով, անհրաժեշտության դեպքում՝ քննարկել վարկանիշների շնորհման և ըստ կիրառվող գործակիցների գնման գործընթացներում մասնակիցներին արտոնություններ շնորհելու նպատակով ՀՀ կառավարություն առաջարկություններ ներկայացնելու հարցը:	
14.	Ներքին աուդիտի համակարգի ինստիտուցիոնալ վերափոխման տեսլականի և ճանապարհային քարտեզի սահմանում	14.1 Ներքին աուդիտի համակարգի վերափոխման հայեցակարգի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության հաստատմանը	Նախարարության կողմից նախաձեռնվել է ներքին աուդիտի համակարգի վերափոխման հայեցակարգի մշակման գործընթաց, խնդրի վերաբերյալ նախատեսվող հայեցակարգային քննարկումների արդյունքում պետք է մշակվի փոփոխությունների փաթեթը և փորձարկվի Նախարարությունում:	
20.	Ակցիզային հարկի Դրույքաչափերի վերանայում	20.1 Ակցիզային հարկի դրույքաչափերի վերանայման ուղղությամբ հարկային օրենսդրության մեջ կատարվելիք Փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակում	ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2023 թվականի հունիսի 26-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-200-Ն օրենքը, որի համաձայն՝ 2024-2026 թվականներին յուրաքանչյուր տարի	
		20.2 Ներկայացված առաջարկությունների		

		քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ	բարձրացվելու են ակցիզային հարկի դրույքաչափերը:	
		20.3 Քննարկումների արդյունքների հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:		
21.	Շրջանառության հարկի և միկրոձեռնարկատիրության համակարգերի շարունակական կատարելագործում	21.1 Շրջանառության հարկի գծով հարկային բեռի վերանայման, ինչպես նաև Միկրոձեռնարկատիրության համակարգից գործունեության որոշ տեսակների դուրս բերման ուղղությամբ: Ուսումնասիրությունների իրականացում, իրականացված ուսումնասիրության արդյունքների քննարկում շահագրգիռ պետական կառավարման մարմինների և մասնագիտական-հասարակական կազմակերպությունների հետ, քննարկումների արդյունքների վերաբերյալ զեկույցի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Շրջանառության հարկի գծով հարկային բեռի վերանայման, ինչպես նաև շրջանառության հարկի ու միկրոձեռնարկատիրության համակարգերից գործունեության որոշ տեսակների դուրս բերման նպատակով կատարված աշխատանքների շրջանակում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել են «Շրջանառության հարկի դրույքաչափերի վերանայում» սահիկաշարը և միկրոսիմուլյացիոն մոդելների ուսումնասիրությամբ ստացված արդյունքները: Այնուհետև, կատարված աշխատանքների հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և	

		21.2 քննարկումների արդյունքների հիման վրա, ըստ անհրաժեշտության, ՀՀ հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում	շահագրգիռ մարմինների քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով առաջարկվում է շրջանառության հարկի համակարգի հարկային բեռը մոտարկել հարկման ընդհանուր համակարգում առկա հարկային բեռին, ինչպես նաև գործունեության որոշ տեսակներ դուրս բերել շրջանառության հարկի և միկ-րոձեռնարկատիրության հարկման համա-կարգերից:	
22.	Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնում:	22.1 Կրկնակի հարկումը բացառող ՀՀ մոդելային համաձայնագրի նոր տարբերակի մշակում և քննարկում շահագրգիռ գերատեսչությունների հետ	2023թ. ավարտվել են կրկնակի հարկումը բացառող՝ ՀՀ մոդելային համաձայնագրի նոր տարբերակի մշակման աշխատանքները: Այդ մոդելային տարբերակի հիման վրա կրկնակի հարկումը բացառելու համաձայնագրի կնքման նպատակով 2023 թվականին սկսվել են բանակցություններ ՉԺՀ Հոնկոնգի վարչական շրջանի հետ: 2023 թվականի սեպտեմբերի 4-8-ը պաշտոնական	

		22.2 կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունը ընդլայնելու նպատակով գործընկեր պետությունների հետ բանակցությունների վարում	պատվիրակության այցի շրջանակներում տեղի է ունեցել բանակցությունների ավարտական փուլը և համաձայնագրի նախագիծը նախաստորագրվել է: Աշխատանքներ են տարվել նաև Ճապոնիայի, Մոնտենեգրոյի, Իսլանդիայի և մի շարք այլ երկրների հետ կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ համաձայնագրի կնքման բանակցություններ սկսելու ուղղությամբ:	
24.	Հարկային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում:	24.1 Հարկային ծախսերի արդյունավետությունության բարձրացման ուղղությամբ ուսումնասիրությունների իրականացում	Միջոցառման կատարումն ապահովելու նպատակով 2023 թվականի մարտի 27-ից ապրիլի 7-ը տեղի է ունեցել Արժույթի միջազգային հիմնադրամի հարկա-բյուջետային վարչության փորձագետների այցը ՀՀ, որի արդյունքում կազմվել և ՀՀ ֆինանսների նախարարությանն է տրամադրվել Հայաստանում հարկային ծախսերի վերանայման վերաբերյալ զեկույց: Նշված զեկույցում ներկայացված են ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով հարկային ծախսերի նվազեցման, ինչպես նաև հարկային ծախսերի գնահատման արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները, որոնց հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել է «Հարկային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ զեկույց»: Զեկույցի նախագիծը	
		24.2 Հարկային ծախսերի արդյունավետությունության բարձրացման ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ զեկույցի ներկայացում Վարչապետի աշխատակազմ		
		24.3 Զեկույցի քննարկում Վարչապետի աշխատակազմում և, ըստ անհրաժեշտության, համապատասխան իրավական ակտի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը		

			քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ, ինչպես նաև ստացված կարծիքների ամփոփմամբ ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ներկա փուլում ՀՀ ֆինանսների նախարարությունում ձևավորվում է ստացված առաջարկությունների վերաբերյալ վերջնական դիրքորոշում՝ Վարչապետի աշխատակազմում քննարկման նպատակով:	
25.	ՀՀ՝ որպես մեկ միասնական միավորի, համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստում	25.1 Համախմբման իրականացման նպատակով միասնական համակարգչային ծրագրի մշակում կամ ձեռքբերում	«Ֆինանսների նախարարություն» բաժնի 26.1 և 26.2 կետով սահմանված միջոցառումների շրջանակներում նախատեսվում է ներդնել Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ (այսուհետ՝ ԿՖԿՏՀ): Ընդ որում, ԿՖԿՏՀ ներդրման տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ նախատեսվում է ֆինանսական հաշվետվությունների համախմբումն իրականացնել ԿՖԿՏՀ առանցքային մոդուլ հանդիսացող հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բաղադրիչի միջոցով: Միջոցառումը որպես ԿՖԿՏՀ առանձին մոդուլ իրականացվում է ԿՖԿՏՀ ներդրման աշխատանքների շրջանակներում: 2023 թվականի ընթացքում մշակվել է ԿՖԿՏՀ ներդրման ծրագրային ապահովման ձեռքբերման տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որը հրապարակված է ՀՀ ֆինանսների նախարարության պաշտո-նական կայքի «Թվային օրակարգ» բաժնի	

			«ԿՖԿՏՀ նախագիծ» ենթաբաժնում հետևյալ հղումով՝ https://minfin.am/hy/page/kfkth_nakhagits/:	
26.	Կառավարման տարբեր մակարդակներում պետական ֆինանսների կառավարման հետ կապված գործընթացների ավտոմատացում և գործարքների արդյունավետության ու թափանցիկության ապահովում (Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական	26.2 ԿՖԿՏՀ-ի գնում	2023թ. ապրիլին ԿՖԿՏՀ ներդրման գործընթացում ՖՆ–ին խորհրդատվություն տրամադրող կազմակերպության կողմից մշակվել և ներկայացվել է ԿՖԿՏՀ ծրագրային ապահովման ձեռքբերման տեխնիկական առաջադրանքի նախագիծը (այսուհետ՝ ՏԱ): ՏԱ-ն ՖՆ 13.05.2023թ. ներկայացվել է ՀՀ փոխվարչապետների գրասենյակներ՝ այդ թվում՝ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ, ԲՏԱՆ և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ դիտարկումներ և առաջարկություններ տրամադրելու համար: Տեղական և միջազգային SS ոլորտի շուկայի ուսումնասիրման, պոտենցիալ վենդորների	2022-2023թթ. զգալի աշխա-տանքներ են տարվել ԿՖԿՏՀ ծրագրի մշակման ուղղու-թյամբ՝ ԿՖԿՏՀ հիմնական մոդուլների, ՖՆ հիմնական ոլորտների (Բյուջետավորում, Գանձապետական Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում, Պետական գնումներ, Պետական պարտք, Ներքին աուդիտ) բիզնես գործընթացների նկարագրություն,

	համակարգի (GFMIS/ԿՖԿՏՀ-) ներդրում)		կողմից ԿՖԿՏՀ նման ծավալուն ծրագրին նախապես ծանոթանալու նպատակով՝ ՏԱ նախագծի անգլերեն և ռուսերեն տարբերակները տեղադրվել են նաև ՖՆ կայքէջում՝ «Թվային օրակարգ» վերնագրի ներքո (https://www.minfin.am/en/page/gfmis/): Բացի այդ, ՏԱ նախագիծը քննարկվել է զարգացման գործընկեր կազմակերպությունների փորձագետների հետ: 2023թ. հոկտեմբերին ԿՖԿՏՀ ծրագրի շահակիցների հետ քննարկումների արդյունքում ՏԱ վերախմբագրված տարբերակը հաստատվել է ՖՆ կողմից՝ միաժամանակ պահպանելով վերջինիս՝ Պատվիրատուի պահանջով լրամշակման հնարավորություն:	վերլուծություն և վերջիններիս օպտիմալացում: 2023թ. սեպտեմբերին ՖՆ սկզբունքորեն պատրաստ է եղել մեկնարկել ԿՖԿՏՀ ծրագրի (SOFT) ձեռքբերման երկփուլ մրցույթը: Վերջինիս հետաձգումը պայմանավորված է եղել ԱՄՀ փորձագետ Ս. Լանգոֆֆի մի շարք առաջարկներով՝ վերանայել և լրամշակել առաջիկա մրցույթի և ՏԱ մի շարք դրույթները: Կարևորելով ԱՄՀ-ի փորձագետի կարծիքը՝ ՖՆ ձեռնարկել է մի շարք քայլեր՝ լրացուցիչ քննարկումներ մասնա-գիտական համայնքի և շահակիցների հետ՝ նպատակ ունենալով հնարավորինս լավարկել ՏԱ և ապագա մրցույթի պայմանները: Առաջիկայուն նախատեսվում է ավարտել ՏԱ-ի լրամշակումը և վերջնականացնել այն, որից հետո կմեկնարկի երկփուլ մրցույթի 1-ին փուլը:
27.	Պետական մասնակցությամբ	27.1 Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ պետական	ԱՄՀ-ի հետ համատեղ մշակվել է «Պետական մասնակցությամբ ընկերությունների	

	ընկերությունների գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման արդյունավետության բարելավում	մասնակցությամբ ընկերություններից բխող ֆիսկալ ռիսկերի կառավարման փաստաթղթի մշակում	հաշվետվողականության շրջանակի ամրապնդում» զեկույցը՝ պետական մասնակցությամբ ընկերությունների հաշվետվողականության նկատմամբ պահանջների հստակեցման նպատակով:	
		27.2 Պետական մասնակցությամբ ընկերությունների կենսունակության (դրանից բխող հաշվետվողականության) վերաբերյալ պահանջները ամփոփող կառավարության որոշման նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում	ՊՄԸ կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ֆիսկալ ռիսկերի գնահատման համար ԱԶԲ-ի աջակցությամբ կիրառվել է ԱՄՀ-ի կողմից հրապարակված՝ «Կորպորատիվ հատվածից առաջացող ֆիսկալ ռիսկերի կառավարման ուղեցույց»-ում ներկայացված մեթոդաբանությունը, որի կիրառման ադյունքում հնարավոր է եղել լավարկել ֆիսկալ ռիսկերի վերլուծությունը: Այս համատեքստում Կառավարության որոշման նախագծի անհրաժեշտություն դեռևս չի առաջացել, շարունակվում են մեթոդաբանության և մոդելի լավարկման աշխատանքները:	
28.	Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) պայմանագրերից բխող ֆիսկալ ռիսկերի գնահատման արդյունավետության բարելավում	28.1 ՊՄԳ ձևաչափով իրականացվող համագործակցությունների թափանցիկության և ռիսկերի կառավարման բարելավման համատեքստում գործող և նոր դիտարկվող ՊՄԳ պայմանագրերի ուսումնասիրություն, պայմանական պարտավորությունների գնահատման ճշգրտում	Վերլուծության են ենթարկվել ՊՄԳ ձևաչափով գործող թվով երեք ընկերությունների պայմանագրերը («Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ, «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ), ինչպես նաև էլեկտրաէներգիայի գնման երեք խոշոր պայմանագրերը («Քոնթուր Գլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ (Որոտան ՀԷԿ), «Էֆարվի	

			Մասրիկ» ՓԲԸ, Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային էլեկտրակայան):	
29.	Ֆինանսական համակարգից առաջացող ֆիսկալ ռիսկերի գնահատման արդյունավետության բարելավում	29.1 Ֆինանսական համակարգի գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերը բացահայտող զեկույցի (whitepaper) հրապարակում	Իրականացվել են ֆինանսական համակարգի գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերը բացահայտող զեկույցի (whitepaper) մշակման ուսումնասիրություններ, քննարկվել է զեկույցի նախագծային կառուցվածքը, ներկայացվել են առաջարկներ:	Զեկույցը չի մշակվել, քանի որ 2023թ. ընթացքում որոշում է կայացվել վերափոխել ֆիսկալ ռիսկերի գործառույթը և ՖՆ այլ ստորաբաժանման կազմում ձևավորել առանձին թիմ, որը կզբաղվի մակրոտնտեսական բնույթի ֆիսկալ ռիսկերով (այդ թվում՝ ֆինանսական համակարգից բխող): Այս ուղղությամբ հետագա վերանայված միջոցառումները կառաջարկվեն այդ գործընթացը ավարտելուց և համապատասխան թիմ ձևավորելուց հետո:
		29.2 Կենսաթոշակային ֆոնդերի գործունեությունից բխող պայմանական պարտավորությունների գնահատման մոդելների մշակում	Իրականացվել է կուտակային կենսաթոշակային համակարգի, դրա առանձին բաղադրիչների ազդեցության և համակարգին ուղղված պետական ծախսերի համապարփակ ուսումնասիրություն, մասնավորապես՝ ակտիվների կառուցվածքի, բյուջեի ծախսերի պատմական և ներկա կառուցվածքի, ֆոնդերի կատարողականի, այլ երկրներում առկա կուտակային համակարգերի և մեխանիզմների, ինչպես	

			նաև բյուջեի ծախսերի կանխատեսվող ազդեցությունների և հնարավոր կրճատման սցենարների ուղղություններով: Ուսումնասիրության արդյունքները տարբեր փուլերում քննարկվել են շահագրգիռ մարիմինների հետ և վերջնական, ամփոփ վերլուծությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: ԿԲ-ի հետ նախաձեռնվել են նաև կուտակային կենսաթոշակային համակարգի PROST մոդելի թարմացման նպատակով աշխատանքների իրականացում:	
		29.3 Բանկային երաշխավորված ավանդներից բխող պայմանական պարտավորությունների գնահատման մոդելների մշակում, ՀՀ ԿԲ և Ավանդենրի հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ համագործակցում	Բանկային երաշխավորված ավանդներից բխող պայմանական պարտավորությունները կառավարելի դարձնելու նպատակով Ավանդենրի հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ իրականցվել են մեխանիզմների մշակման ուղղված քննարկումներ, միջազգային փորձ ուսումնասիրություններ և ներկայացվել են մեխանիզմների սահմանմանն ուղղված, ինչպես նաև ՌԴ ՖՆ Ֆինանսական հետազոտությունների ինստիտուտ մեկնաբանություններով մշակված առաջարկները:	

30.	Երկարաժամկետ ֆիսկալ կայունությանն առնչվող ռիսկերի գնահատման բարելավում	30.1 երկարաժամկետ ֆիսկալ կայունությանն առնչվող ռիսկերը բացահայտող զեկույցի (whitepaper) հրապարակում	Իրականացվել են ֆինանսական համակարգի գործունեությունից բխող ֆիսկալ ռիսկերը բացահայտող զեկույցի (whitepaper) մշակման ուսումնասիրություններ, քննարկվել է զեկույցի նախագծային կառուցվածքը, ներկայացվել են առաջարկներ:	Զեկույցը, ինչպես նաև մոդելն ու մեթոդաբանությունը չեն մշակվել, քանի որ 2023թ. ընթացքում որոշում է կայացվել վերափոխել ֆիսկալ ռիսկերի գործառույթը և ՖՆ այլ ստորաբաժանման կազմում ձևավորել առանձին թիմ, որը կզբաղվի մակրոտնտեսական բնույթի ֆիսկալ ռիսկերով (այդ թվում՝ երկարաժամկետ ֆիսկալ կայունության): Այս ուղղությամբ հետագա վերանայված միջոցառումները կառաջարկվեն այդ գործընթացը ավարտելուց և համապատասխան թիմ ձևավորելուց հետո:
31.	ՀՀ հարկային ներուժի գնահատում և հարկման միջնաժամկետ հնարավորությունների բացահայտում Կառավարության պարտքի օպտիմալ շեմերի, այդ թվում՝	31.1 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատման միասնական մեթոդաբանության հաստատում ՀՀ ֆինանսների նախարարի կողմից	Մշակվել է խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատման միասնական մեթոդաբանություն, որը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի 2023 թվականի ապրիլի 27-ի 193-Լ հրամանով:	

	ներքին պարտքի օպտիմալ մասնաբաժնի բացահայտում	31.2 Խոշոր հարկատեսակների (ԱԱՀ, եկամտային հարկ, շահութահարկ) գծով հարկային ներուժի և ճեղքի (ներուժային մակարդակից հեռացվածության) գնահատումների իրականացում	Գնահատվել են հարկման միջնաժամկետ հնարավորությունները՝ ապահովելով վերլուծական հիմքեր հարկային վարչարարության բարելավման և ստվերի կրճատման աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Գնահատումները ցույց են տվել, որ վարչարարության ջանքերի շնորհիվ վերջին տարիներին վարչարարության ճեղք/ՀՆԱ հարաբերակցությունը դրսևորել է շարունակական նվազման միտում՝ 2020թ.-ի 6.5%-ի համեմատ 2021թ.-ին կազմել է 5.7%, 2022թ.-ին՝ 5.3%: Նշված գնահատականները հիմնավորում են միջնաժամկետ հարկեր/ՀՆԱ բարելավման թիրախների իրատեսականու-թյունը: Միջոցառման արդյունքները կիրարկվում է պետական բյուջեի նախագծերի և պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի մշակման շրջանաներում:	
32.	Կառավարության պարտքի օպտիմալ շեմերի, այդ թվում՝ ներքին պարտքի օպտիմալ մասնաբաժնի բացահայտում	32.1 Կառավարության պարտքի կայունության գնահատում	Տրվել են հնարավոր շոկերի նկատմամբ կառավարության պարտքի զգայունության և պարտքի պորտֆելի խոցելիության գնահատականներ: Ստեղծվել են բավարար վերլուծական հիմքեր և դրանց համահունչ շարունակվել է կառավարության պարտքի կայունության ամրապնդման քաղաքականությունը: ՀՀ կառավարության ծրագրի՝ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ-ի 60%-ից ցածր թիրախի վաղաժամ ապահովումից հետո երկրորդ տարին	

			անընդմեջ ՀՀ կառավարության պարտքը ապահովվել է հարկաբյուջետային կանոններով սահմանված միջին՝ 50% շեմից ցածր մակարդակում: Պարտքի համեմատաբար ցածր բեռը ապահովում է պետական բյուջեի վրա պարտքի տոկոսավճարների բեռի կառավարելի մակարդակը, ինչպես նաև՝ որպես փոխառուի՝ երկրի սուվերեն վարկանշի բարելավման դինամիկան, և դրական ազդեցություն ունենում երկրի ներդրումային գրավչության վրա: Պարտքի կայունության գնահատականները տեղ են գտնում պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում:	
		32.2 Կառավարության պարտքի շեմերի գնահատում և թիրախների սահմանում	Տրվել են կառավարության պարտքի ապահով շեմերի գնահատականներ և սահմանվել են միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախներ: Միջազգային լավագույն փորձին համահունչ մեթոդաբանությամբ (վաղաժամ ազդանշման գնահատումներով և ստոխատիկ սիմուլյացիաներով) կառավարության պարտքի շեմերի վերագնահատման արդյունքում հիմնավորվել է պարտք/ՀՆԱ-ի գործող՝ 40, 50 և 60% բազմամակարդակ շեմերի համակարգի արդիականությունը և ըստ այդմ՝ առաջարկվել է պահպանել գործող համակարգը: Հարկաբյուջետային կանոնների պարամետրերի արդիականու-թյան պարբերական ուսումնասիրությունը	

			կարևոր է հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության հիմնարարներին համարժեք՝ առանց լրացուցիչ ռիսկեր ստեղծելու և տնտեսության զարգացման հնարավորությունները լիարժեքորեն իրացնելով մշակելու տեսակետից: Նշված գնահատումները կիրարկվում են «Պետական պարտքի մասին» և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված հարկաբյուջետային կանոնների վերանայման անհրաժեշտությունը կամ դրա բացակայությունը հիմնավորելու նպատակով, ինչպես նաև պետական բյուջեի ուղերձներում և պետական միջնաժամկետ ծախսերի պարտքի բեռի թիրախների սահմանման համար:	
		32.3 Ներքին պարտքի օպտիմալ կշռի գնահատում	Տրվել են կառավարության պարտքում ներքին պարտքի մասնաբաժնի ընդլայնման օպտիմալ տեմպի գնահատականներ: Մասնավորապես, կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքի դերի հաշվեկշռված՝ հարկաբյուջետային կայունության և ֆինանսական միջնորդության համար ռիսկեր չստեղծող ընդլայնում ապահովելու համար գնահատատվել է ներքին պարտքի կշռի մեծացման օպտիմալ արագությունը, հանգելով դրա՝ միջնաժամկետ և երկարաժամկետ	

			հատվածներում տարեկան 1%-ային կետի չափին: Միջոցառման արդյունքները կիրառվում են կառավարության պարտքի կառավարման ռազմավարության և փոխառությունների տարեկան ծրագրերի մշակման շրջանակներում:	
33.	Ներքին պետական պարտքի գործիքակազմի ընդլայնում	33.1 Պետական գանձապետական գնաճին կցված արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կանոնները սահմանող ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը	Նախագիծը մշակվել է ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ: Ստացվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, որի հիման վրա լրամշակվում է նախագիծը: Նախատեսվում է, որ Նախագծով սահմանվող կարգը լինելու է պետական գանձապետական պարտատոմսերի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության 13.04.2017 թվականի N 381-Ն որոշման առանձին հավելված: Միաժամանակ, գնաճին կցված պարտատոմսերի կարգավորումներին զուգահեռ, նախագծվել են ՀՀ կառավարության 13.04.2017 թվականի N 381-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ, որոնցով կսահմանվեն պետական գանձապետական պարտատոմսերի փոխանակման աճուրդների իրականացման կարգավորումները: Նախագծերը միաժամանակ, մեկ փաթեթով, կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը:	Քանի որ գնաճով ինդեքսավորվող պարտատոմսը ներքին շուկայում առաջարկվող նոր գործիք է, առաջացել են դրանց հաշվարկի, հաշվառման, գրանցման, պահառության և վերջնահաշվարկի համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման, ամսական և օրական կտրվածքով սպառողական գների ինդեքսի ցուցանիշի հրապարակման նոր պահանջներ: Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի ծրագրային թարմացումներն ու փոփոխությունները ևս լրացուցիչ ծավալուն աշխատանք են պահանջում:

34.	Խաղային ոլորտի օրենսդրությամբ սահմանված գործող կարգավորումների վերանայում՝ բարեփոխման, այդ թվում՝ հաշվետվողականության արդյունավետության բարձրացում	34.1 «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքով նախատեսված՝ այլ վայրերում խաղատան գործունեության կազմակերպման լիցենզավորման պայման հանդիսացող՝ կատարված ներդրումների գնահատման համար նախատեսված կարգավորումներ նախատեսող իրավական ակտի նախագծի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:	«ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N 1164-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	ՀՀ Ֆինանսների նախա-րարությունը 20.07.2023թ. առաջարկել է ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկումը հետաձգել: Պայմանավորված է լրացուցիչ հանձնարականով, որի շրջանակներում մշակվել և գտնվում է քննարկման փուլում ՀՀ կառավրության որոշման նախագիծը՝ որով սահմանվում են ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած 40 միլիարդ դրամից ավելի ներդրումային ծրագրին և գործունեության իրականացմանը ներկայացվող պահանջներն ու չափանիշները: Նախագծով առաջարկվող կարգավորում-ների լավարկման նապատակով աշխատանք-ները և քննարկումները շարունակվում են:
		34.2. Խաղային ոլորտի կազմակերպությունների հաշվետվողականության և թափանցիկության մակարդակի բարձրացման նպատակով	«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին»	

		«Վիճակախաղերի մասին» և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացում:	օրենքների նախագծերը սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ կառավարության 21.12.2023թ. N 2240-Ա որոշմամբ արժանացել են հավանության և ներկայացվել են ՀՀ Ազգային ժողով: ՀՀ Ազգային ժողովի 2024թ. փետրվարի 6-ից գումարված հերթական նիստերի ընթացքում ընդունվել են առաջին ընթերցմամբ:	

ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ				
NN	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
4.	Արժանիքահենք և պրոֆեսիոնալ հանրային ծառայության համակարգի կայացում	4.4 Մարդկային ռեսուրսների կառավարման թվային ենթակառուցվածքի արդիականացում	Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական գործող համակարգը անընդհատ զարգացող և փոփոխվող համակարգ է, որի ծրագրատեխնիկական լուծումները համապատասխանեցվում են հանրային ծառայության օրենսդրական կարգավորումներին: Հարկ է նկատի ունենալ, որ այս միջոցառման իրականացման շրջանակներում Վարչապետի աշխատակազմի քաղա-քացիական ծառայության գրասենյակը	

			նախաձեռնել և դիմել է պետական հատվածի արդիականացման ծրագիր 4-ին ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ ներգրավելու նպատակով, սակայն արձագանք չի ստացել: ***Գործողություն՝ 1. Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական գործող համակարգի ապահովում հարուստ տվյալների շտեմարաններով և վերլուծական գործիքակազմերով.*** Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական գործող համակարգում առկա շտեմարանների և վերլուծական գործիքների զարգացման և արդիականացման ուղղությամբ ուսումնասիրվել են հաջողված HRMIS-ները: Ուսումնասիրվել և գնահատվել են ՄՌԿՏՀ-ում առկա շտեմարանները, տվյալների բազաները, ՄՌԿՏՀ-ի վերլուծական գործիքներ փաստացի հնարավորությունները, վեր են հանվել դրանց վերաբերյալ խնդիրները, իրականացվել են դրանց լուծմանն ուղղված աշխատանքներ: Մասնավորապես՝ ֆունկցիոնալ գործիքների կատարելագործումը, որը բուն գործընթացի կարգավորումից զատ նաև գործիք է տարբեր պարամետրերով և կոմբինացիաներով տեղեկատվության ֆիլտրացիաներիի համար: Ի թիվս այլնի՝	

			1. կատարելագործվել կամ ներդրվել են ֆունկցիոնալ գործիքակազմեր՝ ըստ ժամանակագրական պարամետրերի ՄՌԿՏՀ տարբեր տիրույթներից թվային տեղեկատվության ստացման համար (շարունակվում է). 2. իրականացվել են համալրման գործընթացների ֆունկցիոնալ գործիքակազմերի կատարելագործման (փորձագետների ներգրավման տիրույթ, մրցույթներ, վարկանիշային թեստավորում) և մշակման ու ներդրման (ժամկետային աշխատանքային պայմանագրերով համալրման տիրույթ) աշխատանքներ (շարունակվում է). 3. մշակվել և ներդրվել է պետական մարմինների վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխությունների իրականացման ֆունկցիոնալ գործիքներ (շարունակվում է). 4. մշակվել և ներդրվել է Կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի N 1420-Ն որոշման հավելվածներով հաստատված հաշվետվությունների ձևերի, պետական ծառայողների շարժի և հոսունության ցուցանիշների հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների ավտոմատ գեներացման և այդ հաշվետվություններում բոլոր հնարավոր եղանակներով ֆիլտրացիա կատարելու անհրաժեշտ գործիքակազմ.	

			5. մշակվել և շրջանառվում են քաղաքացիական աշխատանք և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անձնական գործերը ՄՌԿՏՀ-ում վարելու իրավական հիմքերը: ***Գործողություն՝ 2. Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական գործող համակարգի փոխգործակցում այլ անհրաժեշտ վարչական տվյալների ռեգիստրների հետ.*** Ուսումնասիրվել և գնահատվել են մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի փոխգործակցումը վարչական տվյալների ռեգիստրների հետ, վերհանվել են առկա խնդիրները, ինչպես նաև մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ այլ վարչական տվյալների ռեգիստրների հետ փոխգործակցության անհրաժեշտությունը և հնարավորությունը: Վերոնշյալ ուսումնասիրության և գնահատման արդյունքում պարզվել է, որ առկա է հնարավորություն նաև որոշ վարչական տվյալների ռեգիստրների՝ Առողջապահական համակարգի՝ www.armed.am (այս պահին ֆունկցիոնալ հնարավորությունների գնահատման փուլում է), Հարկային ծառայության համակարգի՝	

			www.taxservice.am (փոխգործակցում է իրավական հնարավորությունների շրջանակներում), Պաշտոնական փաստաթղթաշրջանառության համակարգ՝ «Mulberry» (այս պահին ֆունկցիոնալ հնարավորությունների գնահատման և փոխգործակցության փուլում է), Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի (փոխգործակցում է) հետ փոխգործակցում: Հարկ է նկատի ունենալ, որ «Մարդկային ռեսուրսների կառավարման թվային ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման աշխատանքները իրականաց-վել են բացառապես Քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակի ծրագրատեխնիկական սպասարկման շրջանակներում:	
6.	6.1 Տեսչական համակարգի կառավարման և գործունեության արդյունավետության բարձրացում	3.1 «Տեսչական մարմինների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը		Նախագծերի փաթեթը մշակված է, որը Վարչապետի աշխատակազմ կներկայացվի տեսչական համակարգի զարգացմանն ու բարեփոխմանն հիմնական ուղղություններին առնչվող քննարկումների արդյունքում վերջնական որոշում կայացնելուց հետո:

13.	13.1 Կրթության որակի բարձրացման նպատակով՝ օրենսդրության պահանջներին համապատասխան կրթության կազմակերպման վերահսկողություն և վերլուծություն	13.1 «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում կառավարության հաստատմանը		Նախագծերի փաթեթը լրամշակման փուլում է, որից հետո սահմանված կարգով կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:
14.	11. Ոչ պարենային արտադրանքի թիրախային վերահսկողության և անվտանգության ապահովում	14.1 «Շուկայի վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում կառավարության հաստատմանը	Ընդունվել և «Շուկայի վերահսկողության մասին» 25.10.2023թ. ՀՕ-323-Ն օրենքը:	

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ				
NN	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.	ՀՀ անվտանգության ապահովման արդյունավետության բարձրացման	1.2 Արտաքին հետախուզության ծառայության կանոնադրության, կառուցվածքի, հաստիքացուցակի մշակում և ընդունում:		ՀՀ վարչապետի 2023թ. մարտի 7-ի N 248-Ա որոշմամբ վերապահվել է ՀՀ արտաքին հետախուզության ծառայությանը:

	նպատակով ստեղծել ՀՀ վարչապետին ենթակա ասարտաքին հետախուզության ծառայություն:	1.3 «Արտաքին հետախուզական գործունեության և արտաքին հետախուզության ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բխող կարգերի մշակում և ընդունում:		ՀՀ վարչապետի 2023թ. մարտի 7-ի N 248-Ա որոշմամբ վերապահվել է ՀՀ արտաքին հետախուզության ծառայությանը:
2.	Կարևորելով զինծառայողներով համալրված և «այլ զորքերի» կարգավիճակով օժտված մարմնի գործառույթների օպերատիվ կառավարման անհրաժեշտությունը, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ պետական պահպանության ծառայության պարագայում ծառայությունը պայմանավորված է ամենօրյա ռեժիմով իրավիճակին արագ արձագանքելու և համարժեք գործողություններ իրականացնելու հրամայականով՝	2.2 Պետական պահպանության ծառայության կանոնադրության, կառուցվածքի, հաստիքացուցակի մշակում և ընդունում:	Կատարված է ՀՀ վարչապետի 2023թ. մարտի 29-ի N 354-Լ որոշմամբ:	

	պետական պահպանության ծառայությունը նախատեսել որպես Վարչապետին ենթակա մարմին			
3.	ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության լրամշակում (վերանայում)՝ Հայաստանի Հանրապետության առջև ծառացած նոր մարտահրավերների հաշվառմամբ:	3.1 ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության լրամշակման միջգերատեսչական հանձնախմբի ստեղծում: 3.2 Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության լրամշակման աշխատանքների իրականացում:		Հաշվի առնելով աշխարհա-քաղաքական և տարածա-շրջանային առկա անվտան-գային մարտահրավերների ու սպառնալիքների բնույթն ու զարգացումները՝ նպատակա-հարմար է գտնվել Ազգային անվտանգության ռազմավարու-թյան լրամշակման աշխատան-քների իրականացումը տարաժամկետել:

ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ				
NN	Նպատակ	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.	Հայրենադարձության խթանումը և հայրենադարձների ինտեգրումը	1.1 «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում	Մշակվել է «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն երկու անգամ կարծիքի է ուղարկվել ՀՀ պետական կառավարման համակարգի մարմիններին:	ՀՀ օրենքի նախագծի ներկայա-ցումը ՀՀ վարչապետի աշխատակազմ հետաձգվել է պայմանավորված նախագծի

			Ստացված առաջարկություններն ու դիտողություններն ամփոփվել են և ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	առանձին դրույթների շուրջ ՀՀ ԱԺ համապատասխան հանձնաժողովի, ինչպես նաև այլ պետական մարմինների կողմից հայրենադարձի կարգավիճակի, հայրենադարձներին հնարավոր արտոնությունների տրամադր-ման հետ կապված հարցերի շուրջ վերջնական դիրքորոշման չհասնելու հանգամանքով
		1.2 Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնի ստեղծում և գործունեության ապահովում	2023 թվականի հունիսի 1-ից Հայաստանի Հանրապետությունում Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը բացել է Հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնը:	
		1.3 Հակամարտության գոտիներից և արտակարգ իրավիճակներում հայտնված համայնքներից վերադարձած/-հայրենադարձված հայրենակիցների առողջապահական աջակցության տրամադրում	Միջոցառման շրջանակներում 81 սիրիահայեր պետպատվերի շրջանակներում օգտվել են առողջապահական ծառայություններից:	
		1.4 Հայրենադարձ ուսանողների աջակցության ծրագրի իրականացում		Քննարկումների արդյունքում որոշվել է ժամանակավորապես կասեցնել միջոցառման իրականացումը:

2.	Հայաստան-սփյուռք գործակցության զարգացումը	2.1 «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում	Նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	
		2.2 Սփյուռքահայերին առնչվող ՀՀ օրենսդրության կատարելագործում	Ուսումնասիրվել են բոլոր այն ոլորտները, որտեղ առկա օրենսդրական խնդիրները բարձրացվել են սփյուռքահայերի կողմից: Մշակվել է համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ փաթեթ:	
		2.3 «Քայլ դեպի տուն» միջոցառման իրականացում	Միջոցառման շրջանակներում հունիս-օգոստոս ամիսներին կազմակերպվել է 13-18 տարեկան սփյուռքահայ պատանիների համար նախատեսված ուսումնա-ճանաչողական ծրագիրը, որը ներառել է 13-օրյա ճամբարային ծրագիր, հայոց լեզվի դասընթացներ, հայրենագիտության դասեր, մշակութային միջոցառումներ, այցեր և այլն: Ճամբարային ծրագիրն իրականացվել է Բյուրականում, որին 6 փուլերով մասնակցել են 600 երեխա՝ 25 երկրներից: Մասնակիցների կողմից Սփյուռքի համայնք-ներում ծրագրից ստացված տպավորություն-ների մասին կազմակերպվել է 50 հանդիպում: Միջոցառման հայոց լեզվի դասընթացների ավարտին մասնակիցների 100 տոկոսը բարելավել է հայերենի իմացությունը:	

		2.4 «Սփյուռքի երիտասարդ առաջնորդ-ների վերապատրաստում» միջոցառման իրականացում	Իրագործվել է «Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագիրը: Հայաստանում երկշա-բաթյա վերապատրաստման միջոցառմանը մասնակցելուց հետո երիտասարդները վերադարձել են համայնքներ և մեկ տարվա ընթացքում իրականացնում են համայնքային աշխատանքներ ու իրազեկման հանդիպումներ: Ի դեմս ծրագրի ծրագրի մասնակիցների գրասենյակը ձեռք է բերել կարևոր ռեսուրս, որոնք ապահովում են կապը գրասենյակի հետ, լայնորեն ներգրավված են համայնքային կյանքին տեղերում և իրականացնում են կազմակերպչական աշխատանքներ 2022-2023թթ. ընթացքում ծրագրի նախորդ տարվա 20 մասնակիցները իրականացրել են համայնքային և հայրենադարձությանը վերաբերող 60-ից ավելի հանդիպում, 40-ից ավելի մեդիա հրապարակում, հայկական շահերի պաշտպանությանն ուղղված 10 ձեռնարկ և այլն: 2023թ. ծրագրին մասնակցել են 18 սփյուռքահայ երիտասարդ աշխարհի 8 երկրներից, որի արդյունքներն ամփոփվելու են 2024 թ.:	
		2.5 «ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում»	«ԻԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում ՀՀ պետական կառավարման համակարգում» միջոցառման շրջանակներում 2022-2023 թվականներին	

			50 սփյուռքահայ մասնագետներ ներգրավվել են ՀՀ պետական կառավարման համակարգի 23 կառույցներում: Միջոցառման մասնակիցների մոտ 70 տոկոսը հայրենադարձվել է՝ մշտական աշխատանքի անցնելով պետական կառույցներում և մասնավոր հատվածում: Միջոցառման մասնակիցների կողմից մշակվել են 10 նոր ծրագիր՝ միտված Հայաստանի Հանրապետության առանձին ոլորտների զարգացմանը: Մասնակիցները շրջանավարտներ են աշխարհի հեղինակավոր բուհերի ինչպիսիք են Պրինստոն, Բերկլի, Կոլումբիա, Ջորջթաուն (ԱՄՆ), Քեմբրիջ (Մեծ Բրիտանիա) և այլն: Հովնանյան ընտանեկան հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում 2022-2023թթ. թվականների ծրագրի մասնակից 10 սփյուռքահայ մասնագետներ հնարավորություն են ունեցել շարունակել իրենց աշխատանքը ևս մեկ տարով: 2023-2024 թվականներին ծրագրի շրջանակներում ՀՀ պետական կառավարման համակարգի 19 կառույցներում ներգրավվել են 50 սփյուռքահայ բարձրակարգ մասնագետներ:	
		2.6 Հայաստան-սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ապահովում	Միջոցառման շրջանակներում 2023 թվականին ապահովվել է 140 որպե արբանյակային հեռարձակում:	

			Պատրաստվել են տեսահոլովակներ, ֆիլմեր, անիմացիոն հոլովակներ, կազմակերպվել են ուղիղ միացումներ՝ ընդհանուր առմամբ 84 հատ: Գրասենյակի լրատվությունը մատուցվել է 6 լեզուներով՝ արևելահայերեն, արևմտահայերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և ռուսերեն:	
		2.7 «Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» միջոցառման իրականացում	2023թ. ֆինանսական աջակցություն է տրամադրվել Վրաստանի հայալեզու 3 լրատվամիջոցների:	
		2.8 Սփյուռքի գործերի հանձնակատարների ինստիտուտի ձևավորում	2021թ. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, ըստ որի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը օտարերկրյա պետություններում կարող է ունենալ Սփյուռքի գործերի հանձնակատարներ՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականի կարգավիճակով: 2023 թվականի ընթացքում Սփյուռքում լայնորեն ներկայացվել է Սփյուռքի գործերի հանձնակատարների ինստիտուտի էությունը՝ ապահովելու համար ըմբռնում ու հստակ նախանշելու պարտականու-թյունների շրջանակը: Պատրաստվել է պոտենցիալ թեկնածուների ցանկ՝ ըստ աշխարհագրական սփռվածության, որի հիման վրա 2024 թվականին նախատեսվում են մի քանի տասնյակ նշանակումներ: 2023 թվականին ՀՀ վարչապետի որոշմամբ Դիանա Հովակիմյանը Լեհաստանում	

			նշանակվել է որպես սփյուռքի գործերի հանձնակատար: Սփյուռքի գործերի հանձնակատարների ինստիտուտի ներդրմամբ՝ ընդլայնվում են Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ցանցային կարողությունները:	
		2.9 Սփյուռքահայ խորհրդի ձևավորում	Սփյուռքահայ խորհրդի ձևավորման հետ կապված քննարկումներ են անցկացվել և ամփոփվել են հնչած տեսակետները:	
3.	Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունը, ներուժի վերահանումը և համայնքներին աջակցությունը	3.1 Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում և դրա քարտեզագրում	Միջոցառման շրջանակներում 2023թ. հավաքագրվել է 25,000 սփյուռքահայ անհատի վերաբերյալ տեղեկատվություն և լրամշակվել է նախորդ տարիներին հավաքագրված տեղեկատվությունը:	
		3.2 Սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների իրականացում	2023թ. կազմվել են սփյուռքի համայնքային կառույցների ցանկերը՝ կոնտակտային տվյալներով և ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ տեղադրվում է համայնքների վերաբերյալ տեղեկատվությունը:	
		3.3 Աշխատանք սփյուռքի համայնքներում	2023թ. կայացել է ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի և նրա գրասենյակի աշխատակիցների այցելությունները 13 երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Սիրիայի, Լիբանանի, Ռուսաստանի, Կիպրոսի, Լեհաստանի, Իսպանիայի, Գերմանիայի, Բելգիայի, Նիդերլանդների, Մեծ Բրիտանիայի և Ուկրաինայի, 39 տարբեր քաղաքների հայ համայնքներ:	

		3.4 Աջակցություն սփյուռքի հայ համայնքներին	Միջոցառման շրջանակներում կազմակերպվել են Արամ Խաչատրյանի անվան Եռյակի համերգային ծրագրեր Իրանի և Ղազախստանի հայ համայնքներում:	
4.	Հայաստան-սփյուռք միասնական օրակարգի ձևավորումը և սփյուռքի ներուժի ներգրավումը ի նպաստ Հայաստանի Հանրապետության զարգացմանը	4.1 Հայաստանում համահայկական համաժողովների անցկացում	2023 թվականի օգոստոսի 1-3-ը Երևանում անցկացվել է Ազգային երիտասարդական համաժողով, որին մասնակցել են 600-ից ավելի երիտասարդներ աշխարհի 50 երկրներից և 100-ից ավելի բանախոսներ 15 երկրներից:	
		4.2 Մասնագիտական համաժողովների և քննարկումների կազմակերպում	Հոկտեմբերի 27-29-ը Երևանում անցկացվել է Հայ իրավաբանների համագումար, որին մասնակցել են 250 հայ իրավաբաններ 30-ից ավելի երկրներից: Մասնակցել են ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Նիդերլանդների, Գերմանիայի, Լեհաստանի հայ իրավաբանական ասոցիացիաները:	
		4.3 Սփյուռքի ներուժի ներգրավումը Հայաստանի Հանրապետության զարգացման գործընթացներում	Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը 2023 թվականին մշակել է և առաջին անգամ իրականացնում է «ԴիասՊրո» մասնագիտական կամավորական ծրագիրը, որը հնարավորություն կտա սփյուռքահայ մասնագետներին առցանց կամ անցանց եղանակով իրենց խորհրդատվական և փորձագիտական ներուժը ներդնել Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի զարգացման	

			գործում: Ծրագիրը նախաձեռնվել և մշակվել է հաշվի առնելով պետական կառավարման համակարգում կամավորական հիմունք-ներով աշխատանքի պատրաստակամու-թյուն հայտնած սփյուռքյան տարբեր մասնագիտական շրջանակների և Հայաստանի պետական համակարգի գերատեսչությունների պահանջարկը: Ծրագրի առաջին փուլին մասնակցելու են հրավիրվում հետևյալ 5 ոլորտների մասնագետները՝ առողջապահություն, սոցիալական, մարդու իրավունքների պաշտպանություն, էկոնոմիկա և զբոսաշրջություն: Ստացվել է 142 հայտ՝ աշխարհի 24 երկրներից: Առաջին մասնակիցները պետական կառավարաման համակարգում նրանց ներգրավվածությունը կմերկնարկի 2024 թվականի հունվարից: Ծրագիրը վարձատրություն չի նախատեսում:	
		4.4 Սփյուռքից ներդրումների իրականաց-մանն աջակցություն	Գրասենյակ դիմած սփյուռքահայ հնարավոր ներդրողներին տրամադրվում է ՀՀ-ում ներդրումային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկվում է նրանց դիմել ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ներդրումների աջակցման կենտրոնին: Ներ-դրումների հետ կապված հարցերով 2023թ. սփյուռքից դիմել են 50-ից ավելի անձինք,	

			որոնց ցուցաբերվել է տեղեկատվական աջակցություն:	
		4.5 Սփյուռքից բարեգործական ծրագրերի իրականացմանն աջակցություն	Մշակվել է «Սփյուռքից բարեգործական ծրագրերի իրականացմանն աջակցություն» ծրագիր, որի նպատակն է Սփյուռքի կողմից բարեգործական գործունեության ուղղությունները թիրախավորել Հայաստանի համար ավելի առաջնային հիմնախնդիրների լուծման համար: Ծրագրի շրջանակներում հավաքագրվել են Հայաստանի 10 մարզերի համայնքների ենթակառուցվածքներում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը (ընդհանուր 347 նախագիծ) և Գրասենյակի կողմից աշխատանքներ են տարվելու սփյուռքի համապատասխան ներդրողներին, բարերարներին ներկայացնել և նրանց ներգրավել այդ խնդիրների լուծման գործին: Ծրագրի նախագիծը ներկայացվել է Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակ:	

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ				
NN	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5

1.	Ինտեգրված կադաստրի ստեղծում	1.4 Պիլոտային ոլորտային կադաստրի ստեղծում և ներդրում	Միջոցառման շրջանակներում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» N ՀՕ-295 ՀՀ օրենքում 2023 թվականի ապրիլի 13-ի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքում» լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 145-Ն օրենքով կատարվել է փոփոխություն և նշված օրենքի 47.1-ին հոդվածում լրացվել են 5-12-րդ մասերը, որին համապատասխան իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի միջպետական, հանրապետական և տեղական նշանակության ճանապարհների թվայնացման և աշխարհատեղեկատվական համակարգերի ստեղծման աշխատանքներ՝ օրթոֆոտոհատակագծի հիման վրա: Ճանապարհների գրանցման նպատակով կազմված նախագծերը ներկայացվել են համապատասխան լիազոր մարմիններին: Թվայնացման աշխատանքների արդյունքում ստեղծված վերոնշյալ ճանապարհային ցանցի քարտեզագրական շերտերը արտացոլվել են ազգային գեոպորտալում:	
2.	Ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի (ստանդարտի) մշակում	2.1 ՀՀ տարածական տվյալների, մետատվյալների բանկերի վերաբերյալ նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերի մշակում և արդիականացում	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ «LX Korea» ընկերության կողմից, մշակվել է տարածական 12 ազգային ստանդարտներ, որոնք ներկայացվել են համապատասխան գերատեսչությանը՝ խմբագրման, մշակման և հաստատման նպատակով:	

		2.2 ԵՄ տարածական տվյալներին վերաբերող INSPIRE դիրեկտիվների տեղայնացում և ներդաշնակեցում ՀՀ գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտներում գործող նորմատիվ-տեխնիկական և իրավական փաստաթղթերին	ՀՀ Ազգային ժողովի կողմից 2023 թվականի հունվարի 17-ին ընդունվել են «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» ՀՕ-20-Ն, «Տարածական տվյալների մասին» ՀՕ-21-Ն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-22-Ն, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-23-Ն օրենքների փաթեթը: ՀՀ վարչապետի 2023 թվականի ապրիլի 21-ի N 440-Ա որոշման պահանջները ապահովելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N 791-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1891-Ն, 2023 դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի N 434-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2119-Ն և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 20-ի N 1134 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 2113-Ն որոշումները: 2023 թվականի	

			սեպտեմբերի 18-ին ընդունվել է Կադաստրի կոմիտեի ղեկավարի «Գեոդեզիական և քարտեզագրական գործիքների և սարքավորումների հաշվառման կարգը սահմանելու մասին» N 416-Ն հրամանը:	
3.	ՀՀ տարածքի երկրա-տեղեկատվական համակարգերի բազային շերտերի թարմացում	3.2 Երկրատեղեկատվական համակարգում ՀՀ բնակավայրերի քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ	Ազգային գեոպորտալ մուտքագրելու նպատակով գրասենյակային պայմաններում իրականացվել են ՀՀ Արարատի (1,075 քառ. կմ) և Շիրակի (2,015 քառ. կմ) մարզերի բազային քարտեզագրական շերտերի (շենք-շինություններ, ջրագրություն, ճանապարհային ցանց) թվայնացման աշխատանքներ՝ հիմք ընդունելով 2014 և 2021թթ. օրթոֆոտոհատակագծերը: Իրականացվել են նաև ՀՀ Արմավիրի մարզի արդեն իսկ թվայնացված շերտերը ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխանեցնելու աշխատանքները:	

4.	Կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքների իրականացում	4.2 ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ճշգրտման աշխատանքներ	ՀՀ օրթոֆոտոհատակագծերով ծածկված համայնքների կադաստրային քարտեզների ճշգրտման աշխատանքների շրջանակներում իրականացվում են կադաստրային քարտեզներում համայնքների վարչական սահմանների, ինչպես նաև կադաստրային թաղամասերի տեղադիրքի և սահմանների սխալների ուղղումներ: Ներկայումս ՀՀ բնակավայրերի կադաստրային քարտեզները վարվում են առցանց միջավայրում, որոնցից 344 բնակավայրերի կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքները ավարտված են: Կադաստրային քարտեզում չտեղադրված գույքերի նույնականացման աշխատանքների շրջանակներում 2023 թվականի ընթացքում ուսումնասիրվել է շուրջ 19,000 անշարժ գույքի կադաստրային գործ, որի արդյունքում նույնականացվել են շուրջ 9,500-ը և ըստ անհրաժեշտության արտացոլվել են կադաստրային քարտեզում:	
		4.3 ՀՀ համայնքների կադաստրային թաղամասերի ուղղման նպատակով անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կետերի դիտարկում	Կադաստրի կոմիտեի նախաձեռնությամբ 2023 թվականին իրականացվել է բնակավայրերի կադաստրային քարտեզների ուղղում, որի կատարման ընթացքում լրացուցիչ կետերի դիտարկման անհրաժեշտություն չի առաջացել:	
6.	Աշխարհագրական անվանումների վարման առցանց քարտադարանի	6.1 ՀՀ աշխարհագրական անվանումների պետական քարտադարանի վարում, թարմացում և տեղեկագրերի ստեղծում	Նախատեսված աշխատանքների իրականացման շրջանակներում կատարվել են ՀՀ աշխարհագրական օբյեկտների աշխարհագրական անվանումների	

	թարմացում և տպագիր նյութերի ստեղծում		աշխարհատեղեկատվական համակարգի (ԱՏՀ) ստեղծման աշխատանքներ: Գրասենյակային պայմաններում իրականաց-վել են շուրջ 35650 ՀՀ աշխարհագրական օբյեկտների ուսումնասիրություն, տեղադիր-քի ճշգրտում, տվյալների բազայի ստեղծում և ստանդարտացում՝ համաձայն ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 6-ի «ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման: Նշված բազաները մուտքագրվել են ազգային գեոպորտալ, 114 աշխարհագրական օբյեկտների տեսակների համար մշակվել են պայմանական նշաններ: ՀՀ աշխարհագրական անվանումների քարտադարանի վարման աշխատանքների շրջանակում իրականացվել են նաև ընթացիկ թարմացման աշխատանքներ:	
		6.2 ՀՀ և աշխարհի աշխարհագրական անվանումների փոփոխված և վերականգնված հայերեն տպագիր բառարանների և տեղեկատուների ստեղծում	Նախատեսված աշխատանքների իրակա-նացման շրջանակներում հրատարակվել են «Ասիայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը», «Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը», «Հյուսիսային Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը», «Հարավային	

			Ամերիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը», «Աշխարհի ստորջրյա ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը»: Ավարտվել են «Ավստրալիայի և Օվկիանիայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանի», «Անտարկտիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանի», «Կապան քաղաքի հասցեավորման օբյեկտների տեղեկատու-բառարան» էլեկտրոնային տարբերակների ստեղծման, ինչպես նաև «Աշխարհի աշխարհագրական անվանումների շտեմարանի» թարմացման և աշխարհագրական կապակցման (87249 անուն) աշխատանքները: Ընթացքի մեջ են «ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատուի (10 մարզ և Երևան քաղաք)» նախապատրաստման աշխատանքները, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի և Հարավային Կովկասի աշխարհագրական օբյեկտների աշխարհագրական անվանումների հավաքագրման աշխատանքները:	
7.	Թեմատիկ ատլասների ստեղծում	7.1 Նոր ձևաչափով՝ տպագիր, բազմալեզու, ինչպես նաև համացանցում տեղադրված հնարավորությամբ ատլաս	Կադաստրի կոմիտեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի հետ համատեղ իրականացնում է ՀՀ մարզերի զբոսաշրջային քարտեզ-բուկլետների և թեմատիկ քարտեզների ստեղծման աշխատանքներ՝ հայերեն,	

			ռուսերեն, անգլերեն տարբերակներով: Ներկայումս ՀՀ Տավուշի մարզի տուրիստական բուկլետի ստեղծման աշխատանքներն ավարտված են: Ընթացքի մեջ են ՀՀ Լոռու, Արագածոտնի և Շիրակի մարզերի տուրիստական բուկլետների ստեղծման աշխատանքները:	
10.	Առցանց, ինքնաշխատ, անշարժ գույքի կադաստրի ներդրում	10.1 «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում, ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացում	2023թ. ապրիլի 13-ին ընդունվել է ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-145-Ն օրենքը (ուժի մեջ է մտել 2023 թվականի մայիսի 21-ից):	
		10.5 Յուրաքանչյուր պետական մարմնի պահանջմունքներին համապատասխանող առցանց մատուցվող ծառայության ներդրում (տեխնիկական առաջադրանքը ներկայացնում է համապատասխան մարմինը: Այն մինչև ներկայացնելը համաձյանեցվում է Կադաստրի կոմիտեի հետ)	Ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգի «Տեղագրական քարտեզ» բաժնում ավելացվել է «Աշխարհագրական անվանումներ» շերտը, որտեղ մուտքագրվել են բոլոր աշխարհագրական անվանումները: Աշխարհագրական անվանումները արտացոլվում են պայմանական նշաններով. Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգին հասանելիություն է ապահովված հետյալ պետական մարմիններին՝ • Գլխավոր դատախազություն, • Քննչական կոմիտե, • Ներքին գործերի նախարարություն, • Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, • Պաշտպանության նախարարություն,	

			• Արդարադատության նախարարություն, • Աշխատանքի և սոցիալակա հարցերի նախարարություն, • Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, • Պետական գույքի կառավարման կոմիտե, • Կենտրոնական բանկ, • Քաղաքաշինության կոմիտե, • Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, • Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, • Ազգային անվտանգության ծառայություն, • Հակակոռուպցիոն կոմիտե, • Պետական վերահսկողական ծառայություն, • Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին, • Պետական եկամուտների կոմիտե, • Պետական պահպանության ծառայություն: Իրականացվում է տրամադրված ծառայությունների մշտադիտարկում և կատարելագործում: Պետական մարմիններին տրամադրվում է տեխնիկական աջակցություն անշարժ գույքի միավորների որոնման և տվյալներից օգտվելու համար:	

11.	ՀՀ բնակավայրերի հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում և համակցում կադաստրային քարտեզներին	11.2 Մարզկենտրոններում, համայնքներում համայնքի ղեկավարների հետ հանդիպումների կազմակերպում, հասցեների ռեեստրի տեղեկատվական համակարգից օգտվելու կարգի ներկայացում, մասնագետների վերապատրաստում, ինչպես նաև բոլոր համայնքներից հասցեավորված օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, մուտքագրում և համակցում կադաստրային քարտեզներին	ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի «ՀՀ հասցեների միասնական ռեգիստրի և հասցեների ռեեստրի ինքնաշխատ տեղեկատվական համակարգի ստեղծման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 553-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2-րդ կետի (2. Ճշգրտել հասցեների ռեեստրը՝ այն համեմատելով համայնքներում փաստացի հասցեավորման հետ) պահանջների համաձայն՝ հասցեների ճշգրտման և ստանդարտացման աշխատանքներն ավարտված են: Արդյունքում՝ շուրջ 1,073,000 միավոր ստանդարտացված հասցեներ մուտքագրվել են հասցեների ռեեստրի տեղեկատվական բազա: Համայնքներից ստացված փաստացի հասցեավորման տվյալներում առկա են թերություններ, որոնք ևս ուսումնասիրվել և կապակցվել են կադաստրային քարտեզներին, սակայն ներկայացված տվյալների իրավական կարգավիճակը հնարավոր կլինի որոշել և համապատասխան ուղղումներ իրականացնել համայնքների կողմից հասցեավորման վերաբերյալ որոշումներ կայացվելուց հետո: Ներկայումս ստեղծված է հասցեների ռեեստրի տեղեկատվական բազան, որը ընթացիկ վարվում է Կադաստրի կոմիտեի կողմից, և բազայում ներառված տվյալները	

			կարող են համալրվել և ուղղվել համապատասխան իրավական հիմքերի առկայության պարագայում: Կադաստրի կոմիտեի աշխատակիցները համայնքապետարանների ներկայացուցիչներին հեռավար եղանակով պարբերաբար ներկայացնում են հասցեների ռեեստրի էլեկտրոնային հարթակից օգտվելու կարգը:	
15.	ՀՀ անշարժ գույքի 2024-2026 և 2027-2029 թվականների հարկման բազաների ձևավորում	15.1 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրում համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի 2024-2026 թվականների հարկման բազաների ձևավորում, ինչը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտա հաշվառելու և իրականացնելու 2024-2026 թվականների անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը:	
16.	ՀՀ հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում	16.1 «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի փաթեթի կազմում և սահմանված կարգով ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2023 թվականի հաշվետվությունը (հողային հաշվեկշիռը) հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը Կադաստրի կոմիտեն 26.09.2023թ. ներկայացրել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:	

17.	Կադրային բանկի համալրում	17.1 Համագործակցություն ոլորտային կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հետ, կրթական ծրագրերի վերանայում, լաբորատորիաների ստեղծում	Կադաստրի կոմիտեի գլխավոր քարտուղարի համապատասխան հրամանների հիման վրա, Հայաստանի Հանրապետության մի շարք բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներ Կոմիտեի մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում անց են կացրել ուսումնական պրակտիկա, որի ընթացքում ծանոթացել են Կոմիտեի գործառույթներին առընչվող իրավական ակտերին, դրանց կիրառման ընթացակարգերին, ինչպես նաև մասնակցել են կադաստրային քարտեզագրական նյութերի վերլուծական աշխատանքներին:	

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ				
NN	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.	Էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների արդիականացում	1.1 Վերլուծական գործիքների կատարելագործում և ավտոմատացում	2023թ.-ի արդյունքներով վերլուծական գործիքների կատարելագործման և ավտոմատացման շրջանակներում ներդրված են թվով 49 ստանդարտ վերլուծական հաշվետվական ձև և 66 ռիսկային չափանիշներ:	

			Հարկային մարմնում առկա և ստացվող տեղեկատվության հիման վրա վերլուծական կարողությունների ընդլայնման մասով՝ ինքնաշխատ ծանուցման համակարգում ռիսկայնության գնահատման չափանիշների ավելացման միջոցով ծանուցվող հարկ վճարողների շրջանակը 2023 թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին՝ 2019թ.-ի համեմատ աճել է 78,0 %-ով:	
		1.2 Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի գործարկում	Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակը ներդրված է:	
		1.4 Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգերի բջջային հավելվածների ներդրում	Բջջային հավելվածը նախատեսվում է մշակել Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգերի նոր տարբերակների համար Համաշխարհային Բանկի կողմից ՀՀ Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի (ՊՀԱԾ 4) շրջանակներում: Միաժամանակ իրականացվել է բջջային հավելվածների տեխնիկական նկարագրի մշակում՝ ՊՀԱԾ 4 ղեկավար հանձնաժողով և Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ ներկայացնելու նպատակով:	
		1.5 Երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների մշակման էլեկտրոնային համակարգերի կատարելագործում	«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի միջոցով ՀՀ ՊԵԿ-ը ունի հասանելիություն շարժական գույքի տեղեկատվական շտեմարանին:	

		1.6 Մեծ Ծավալի Տվյալների (Big Data) ժամանակակից կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման գործիքների ստեղծում, գործիքակազմի ընդլայնում և զարգացում	Իրականացվել է Տվյալների Մեծ Շտեմարանների (Big Data) մշակման համակարգի ընդլայնման և զարգացման աշխատանքներ՝ արդյունքում համակարգը լրացվել է 4 հաշվետվական ձևերով: 2023 թվականի արդունքներով առկա են 49 հաշվետվական ձևեր, այդ թվում՝ 6 արտաքին տնտեսական:	
		1.7 Ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգերի մշակում	2023թ. ընթացքում կատարվել են համակարգի տեխնիկական բնութագրի մշակման, մրցույթային փաստաթղթերի մշակման, մրցույթի անցակցման, հաղթողի գնահատման աշխատանքներ: Պայմանագիրը կնքվել է 2024 թվականի հունվարի 16-ին:	
		1.8 Էլեկտրոնային կառավարման համակարգերի հնարավորությունների հզորացում և կատարելագործում	ՀՀ ՊԵԿ էլեկտրոնային համակարգերի հնարավորությունների հզորցման նպատակով իրականացվող աշխատանքները կրել են շարունակակն բնույթ: 2023 թվականի ընթացքում ձեռք են բերվել McAfee հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթներ, տվյալների պահոցների կրիչներ, ամբողջը մեկում համակարգիչներ, բազմաֆունկցիոնալ տպիչ սարքեր: Տեղակատվական անվտանգության ապահովման ուղղությամբ ՀՀ ՊԵԿ-ը ստացել է միջազգային ISO/IEC-27001:2013 հավաստագիրը:	
2.	Հարկ վճարողների սպասարկման որակի	2.1 Համապատասխան ծրագրային ապահովման միջոցով՝ հարկային մարմնի	Ստուգումներին և ուսումնասիրություններին վերաբերող փաստաթղթերը, հարկային և	

	բարձրացում և մատուցվող ծառայությունների ընդլայնում	և հարկ վճարողների ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորության ապահովում	մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի որոշումները, ինչպես նաև կամերալ ուսումնասիրության արձանագրությունները հարկ վճարողներին ուղարկվում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի՝ անձնական գրասենյակի միջոցով, իսկ մինչ այդ վերը նշված փաստաթղթերը հարկ վճարողներին տրամադրվում էին և վերջիններիցս ստացվում էին առձեռն և փոստային ծառայության միջոցով: Ներդրված համակարգը հարկ վճարողին հնարավորություն է տալիս ոչ միայն դիտել փաստաթղթերը, այլև ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը, իրենց առարկությունները և այլ փաստաթղթեր:	
		2.2 Մաքսային հայտարարագրերի և ծանուցումների կառավարման նոր ենթահամակարգի մշակում և ներդրում	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ համագործակցության շրջանակներում նախագծի կատարող հանդիսացող Synergy International Systems, Inc. ընկերության կողմից մշակված «Ծանուցումների և թիմերի ծրագրային գործընթացի կառավարման համակարգը» ներկայումս գտնվում է հանձնման փուլում:	
		2.3 Օրինապահ հարկ վճարողների համակարգի կատարելագործում	ՀՀ կառավարության 12.08.2021թ. N 1324-Ն որոշմամբ հաստատված օրինապահ հարկ վճարող համարվելու չափանիշների և օրինապահ հարկ վճարողի հավաստագրի	

			տրամադրման կարգի համաձայն 2023թ.-ին օրինապահ հարկ վճարողի կարգավիճակ ստանալու համար դիմում է ներկայացրել 178 հարկ վճարող, որից հավաստագիր է տրամադրվել թվով 81 տնտեսավարող սուբյեկտի: ՀՀ հարկային օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն 2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին օրինապահ հարկ վճարողներին՝ էլեկտրոնային փոստին ծանուցման միջոցով, ուղարկվել է թվով 2581 իրազեկում հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ: Պարբերաբար հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի «Հարկային տեղեկատվություն» բաժնի «Տեղեկատվություն հարկ վճարողների վերաբերյալ» ենթաբաժնի «Օրինապահ հարկ վճարողներ» մասում հրապարակվել են օրինապահ հարկ վճարողների ցանկերը: Օրինապահ հարկ վճարողների հավաստագիր ունեցող հարկ վճարողների նկատմամբ մաքսային մարմնի կողմից մեղմ վարչարարություն իրականացնելու վերաբերյալ ընդունվել են ՀՀ կառավարության 20 հուլիսի 2023 թվականի N 1216-Ն և 14 սեպտեմբերի 2023 թվականի N 1534-Ն որոշումները: Միաժամանակ օրինապահ հարկ վճարող համարվելու գործող չափանիշների	

			հստակեցման, վերջիններիս կիրառման իմաստով տարընթերցումների և երկիմաստությունների բացառման, ինչպես նաև ներկայումս գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով, մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1324-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ընդունվել է ՀՀ կառավարության 01.02.2024թ. N 161-Ն որոշմամբ և ուժի մեջ է մտնելու 2024թ. ապրիլի 1-ից:	
		2.4 ՊԵԿ մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրում	1. Հարկային և մաքսային ծառայողների մրցույթների ընդունելության կազմակերպման և վերապատրաստման գործընթացներում կատարված օրենսդրական փոփոխություններով պայմանավորված (2021 թվականի դեկտեմբերի 16-ի ««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-423-Ն օրենք, 2022 թվականի նոյեմբերի 16-ի ««Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-413-Ն օրենք և 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ««Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-424-Ն օրենք, 2022 թվականի նոյեմբերի 16-ի ««Մաքսային ծառայության մասին» օրենքում	

			փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-414-Ն օրենք)՝ մշակվել և ընդունվել են օրենսդրական փոփոխությունների կիրարկումն ապահովող իրավական ակտեր, ինչպես նաև են կատարվել են լրացումներ և փոփոխություններ մի շարք իրավական ակտերում: 2. Օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ նոր չափանիշներով հարկային և մաքսային ծառայողների ընդունելության մրցույթի կազմակերպման գործընթացի շրջանակներում՝ 2023 թվականի մայիսի 5-ից կրկին մեկնարկել է մաքսային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության գործընթացը՝ ստացվել է 1301 դիմում-հայտ (որից 674 դիմորդները նախկինում մաքսային ծառայող չեն հանդիսացել): Դիմում հայտերի ուսումնասիրության և ընդունելության քննությունների արդյունքում դասընթացին մասնակության իրավունք են ստացել շուրջ 800 դիմորդներ (որից 96 դիմորդները նախկինում մաքսային ծառայող չեն հանդիսացել): 2023 թվականի դեկտեմբեր ամսին ավարտվել է մաքսային ծառայության ղեկավար պաշտոններ զբաղեցնելու համար պատրաստման դասընթացը՝ 38 մասնակից ստացել է հավաստագիր և ընդգրկվել թեկնածուների ցուցակում: Շարունակվում է պատրաստման դասընթացի (բացառությամբ	

			ղեկավար պաշտոնների) գործնական փուլը: 2023 թվականի դեկտեմբեր ամսին մեկնարկել է հարկային ծառայողի պատրաստման դասընթացի ընդունելության գործընթացը: Դիմում-հայտերի ընդունման գործընթացը կավարտվի 2024 թվականի հունվարի 8-ին: 3. Միաժամանակ հարկային և մաքսային ծառայողների պարտադիր (այդ թվում առաջխաղացման նպատակով) վերապատրաստման գործընթացի շրջանակներում՝ 2023 թվականի նոյեմբերի 6-ից մեկնարկել է Կոմիտեի հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման գործընթացը: Հարկային և մաքսային ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական ու շարունակական կատարելագործման, գործնական հմտությունների և ունակությունների ձեռքբերման նպատակով մինչև տարեվերջ վերապատրաստվել է 144 ծառայող:	
		2.5 Հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործում	Հարկ վճարողների իրազեկվածության բարձրացման նպատակով՝ հարկ վճարողների տարբեր խմբերի համար 2023թ. համաձայն հաստատված ծրագրի, հարկ վճարողների համար անցկացվել է 82 ուսումնական միջոցառում, 1030 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ, որոնց մասնակցել	

			են 1665 հարկ վճարողներ և (կամ) նրանց ներկայացուցիչներ: e-draft.am կայքէջում պարբերաբար տեղադրվել են ՀՀ ՊԵԿ կողմից մշակված համապատասխան իրավական ակտերի նախագծերը: Միաժամանակ, զանգվածային լրատվության ներկայացուցիչների համար 2023թ. ընթացքում պարբերաբար կազմակերպվել են մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, հրապարակվել են մամլո հաղորդագրություններ, ներկայացվել հարկային և մաքսային ոլորտներում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվություն, կազմակերպվել են հեռուստատեսային տարբեր հաղորդումներ կոմիտեի աշխատակիցների մասնակցությամբ՝ ապահովելով հանրության իրազեկվածությունը գործարարության ոլորտում պետական եկամուտների վարչարարության բարեփոխումների վերաբերյալ: Իրազեկումներն իրականացվել են տարբեր ձևաչափերով (տեսահոլովակ, ասուլիս, հարցազրույց, ռեպորտաժ ԶԼՄ-ներով, պարզաբանում, հրապարակում սոցցանցերում, ամփոփիչ ֆիլմ, մամուլի հաղորդագրություն, տեսանյութ, իրազեկման թերթիկ և այլն), տարածվել ԶԼՄ-ներով, նաև հրապարակվել Կոմիտեի պաշտոնական կայքում, Youtube, Facebook, Twitter, Telegram	

			սոցիալական հարթակների՝ Կոմիտեի պաշտոնական էջերում: 2023թ. ընթացքում ԶԼՄ-ներով, ՊԵԿ պաշտոնական կայքով, սոցիալական հարթակներով կամ այլ եղանակներով իրականացվել է հանրային իրազեկման 60 միջոցառում: Միաժամանակ տնտեսավարող սուբյեկտների մոտ ծագող հարցերի ու խնդիրների օպերատիվ լուծման նպատակով ակտիվորեն գործել է հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազանգերի կենտրոնը: Մասնավորապես, հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրության և վարչարարության վերաբերյալ 2023 թվականի ընթացքում ստացվել է 242729 հարցադիմում (հարկային մասով 80%, մաքսային՝ 20%): Հարցադիմումներից 241921-ը ստացվել են հեռախոսակապի, իսկ մնացած 808-ը էլեկտրոնային փոստի միջոցով: Նույն ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից ստացվել են նաև 1178 դիմում-բողոք և 15 առաջարկություն:	
		2.6 Հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումների կազմակերպում	2023 թվականի ապրիլի 1-ից մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՊԵԿ կողմից իրականացվել է ՊԵԿ գործունեության վերաբերյալ գոհունակության գնահատման հարցում: Հարցումն իրականացվել է հարցաթերթիկի միջոցով, որը տեղադրվել է ՊԵԿ պաշտոնական կայքում և	

			«Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային (file-online)» համակարգում՝ դեպի ՊԵԿ պաշտոնական կայք ուղղորդող հղումով: Հարցումն իրականացվում է 2-րդ տարին անընդմեջ և նպատակ է հետապնդում գնահատել հարկ վճարողների գոհունակությունը մատուցվող ծառայությունների և իրականացվող վարչարարության նկատմամբ: Հարցմանը մասնակցել են 886 կազմակերպություն (ԱՁ) և ինքնուրույն հարկ վճարող (ֆիզիկական անձ): Հարցման արդյունքները փաստում են, որ ՊԵԿ գործունեությունը դրական են գնահատել հարկային մարմնի մասով հարցման մասնակիցների 87.2%-ը, մաքսային մարմնի մասով՝ 78.0%-ը, իսկ ընդհանուր հարցման մասնակիցների՝ 84.4%-ը: Բացի վերը նշված հարցումը, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամի կողմից Համաշխարհային բանկի «Հարկային և մաքսային վարչարարության արդիականացման» ծրագրի շրջանակում, ՀՀ ՊԵԿ-ին աջակցելու համար հարկային վարչարարության նկատմամբ հարկ վճարողների վերաբերմունքի, ընկալումների և սպասումների բացահայտման նպատակով 2023 թվականի հունիսից օգոստոս ամիսներին իրականացվել է հետազոտություն Երևանում և Հայաստանի մարզերում գործող	

			532 հարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի շրջանում: Համաձայն հարցման արդյունքների՝ վերջին երեք տարիների ընթացքում հարկային մարմնի կողմից ձեռնարկված հարկային վարչարարության բարելավման միջոցառումները դրական և խիստ դրական են գնահատել հարցվածների 72.2%-ը:	
		2.7 Օրենսդրությամբ սահմանված կարգով միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման ժամկետների կրճատում	2023թ. օրենսդրությամբ սահմանված կարգով միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման դիմումների ստացման ամսաթվից մինչև դրանց միասնական հաշվին մուտքագրումն ընկած միջին տևողությունը կազմել է 18.9 օրացուցային օր:	
		2.8 Հարկային և մաքսային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի և երևույթների բացահայտում և կանխարգելում	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից 2023թ. դրությամբ քննարկվել են թվով 56 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որի արդյունքում թվով 55 ծառայողներ ենթարկվել են տարբեր կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ ՀՀ ՊԵԿ առանձին կառուցվածքային ստորաբաժանումներ ՀՀ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության աշխատակիցների պարբերաբար իրականացրած շրջայցերի ընթացքում, անձնակազմի հետ տարվող	

			աշխատանքներում, ծառայողներին հանձնարարվել է պահպանել «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքների և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջները և անշեղորեն առաջնորդվել ՀՀ ՊԵԿ նախագահի համապատասխան հրամաններով, հանձնարարականներով և շրջաբերականներով, ինչպես նաև խստագույնս պահպանել հարկային ծառայողի վարքագծի և մաքսային ծառայողի էթիկայի կանոնները՝ համակարգում բացառելով հարկ վճարողների և հայտարարատուների շահերի ոտնահարման, նրանց գործունեության խոչընդոտման, անհարկի միջամտության, ճնշումների գործադրման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը:	
		2.9 Մաքսային ձևակերպումների ժամանակակից կենտրոնի ստեղծում	ԱՏԳ կենտրոնների ստեղծման աշխատանքներն արդեն մեկնարկել են, որպես ԱՏԳ կենտրոնի բաղադրիչ մաս արդեն կառուցվել և գործում է քաղաք Գյումրիում գտնվող ավտոմեքենաների մաքսային ձևակերպումների մասնագիտացված ստորաբաժանումը: Ներկայումս տարվում են աշխատանքներ Երևանի ԱՏԳ կենտրոնի նախագծման ուղղությամբ: Տարածքն արդեն տրամադրված է, մրցույթ է հայտարարվել	

			տարածքում առկա շինությունների քանդման աշխատանքների իրականացման համար, որի արդյունքները գտնվում են ամփոփման փուլում: Գործընթացի նպատակը ժամանակակից, տեխնիկապես հագեցված սպասարկման կենտրոնի ստեղծումն է, որի շնորհիվ կբարձրանա ԱՏԳ մասնակիցներին մատուցվող ծառայությունների որակը: Այդ նպատակով 2023 թվականին մեկնարկել են նաև Մեղրիի մաքսային կետի վերակառուցման աշխատանքները, մասնավորապես՝ 2023 թվականի հունիսի 2-ին տեղի է ունեցել Մեղրիի անցակետի հիմնարկեքի արարողությունը: Անցակետի շինարարական աշխատանքներն իրականացնում է միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Թանա Էներջի Մենեջմենթ» ընկերությունը (Tana Energy Management Company), իսկ շինարարական աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողությունն իրականացնում է «Ռաֆթեն ինթերնեյշնլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Roughton International Limited Company): Ներկայումս շինարարական աշխատանքները ընթացքի մեջ են: Վերակառուցվել է Մարգարայի մաքսային կետը: Շինարարական աշխատանքներին զուգահեռ ընթանում են նոր սարքավորումների ձեռք բերման գործընթացներ:	

3.	Հարկային հսկողության ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ ստվերի կրճատում	3.1 Տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության օրինականության կամ գործարքների լիարժեք փաստաթղթավորման կարգապահության բարելավում, հսկողական գործիքակազմի կատարելագործում	2023թ. ընթացքում շարունակվել են ՀՀ ՊԵԿ նախագահի 01.07.2022թ. թիվ 690-Լ, 29.07.2022թ. թիվ 789-Լ, 19.09.2022թ. թիվ 975-Լ հրամաններով հաստատված, համապատասխանաբար, հատուկ հսկողություն պահանջող խոշոր հարկ վճարողների, շինարարության ոլորտի հարկային կարգապահության բարելավման ու որոշ ռիսկային երկրներից ներմուծումներ իրականացնող ԱՏԳ իրականացնողների մաքսային կարգապահության բարելավման ծրագրերից բխող միջոցառումները: ՀՀ ՊԵԿ նախագահի 23.06.2023թ. թիվ 631-Լ և 632-Լ հրամաններով հաստատվել են, համապատասխանաբար, C10.13 մսամթերքի արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող հարկ վճարողների ու ուղիղ կտրվածքի տուֆի արդյունահանման գործունեություն իրականացնող հարկ վճարողների, տարբեր տեսակի քարերի մեծաբեկորների արդյունահանման գործունեություն իրականացնող հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավման ծրագրերը, որոնք կավարտվեն 2024թ. 1-ին կիսամյակի ավարտին: ՀՀ ՊԵԿ նախագահի 26.09.2023թ. թիվ 982-Լ հրամանով հաստատվել է տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծում իրականացնողների խմբի մաքսային կարգապահության բարելավման	

			ծրագիրը, որն ուղղված էր ժամանակավոր ներմուծման համար օրենսդրությամբ նախատեսված հնարավորությունների չարաշահման (ժամկետների, փաստացի տիրապետման պահանջների խախտումներ) դեպքերի կանխարգելմանը: Ծրագրի շրջանակներում ընդունվել են ՀՀ կառավարության 30.11.2023թ. «Ժամանակավորապես Հայաստանի Հանրապետություն ներմուծվող անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների համար մաքսատուրքերի և հարկերի վճարման պարտավորությունների ապահովման որոշակի միջոց սահմանելու մասին» թիվ 2060-Ն և 30.11.2023թ. «Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ժամանակավոր ներմուծված՝ ԱՏԳ ԱԱ 8703 ապրանքային դիրքին դասվող թեթև մարդատար տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության համար ներմուծման դեպքում պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 2076-Ն որոշումները: Իրականացված ՕՀՄ-ների արդյունքում 2023 թվականին արձանագրվել է՝ 1) ապրանքների մատակարարման կամ տեղափոխման փաստաթղթավորման	

			օրենսգրքով սահմանված պահանջների խախտման 466 դեպք, որի արդյունքում արձանագրված խախտման գումարը կազմել է 200,852,280 ՀՀ դրամ, 2) ապօրինի ձեռնարկատիրության բացահատված 183 դեպք, որի արդյունքում արձանագրված խախտման գումարը կազմել 974,103,478 ՀՀ դրամ, 3) առանց լիցենզավորման կամ ծանուցման կամ թույլտվության գործունեության 143 դեպք, որի արդյունքում առաջադրված տուգանքի գումարը կկազմի 1,469,990,444 ՀՀ դրամ, 4) ստվերային շրջանառության բացահայտման 565 դեպք, որի արդյունքում ներկայացված ԱԱՀ-ի, շրջ. հարկի, եկամտային հարկի, ակցիզային հարկի ճշտված հաշվարկներով իրացման շրջանառությունը ավելացել է 25,932,038,271 ՀՀ դրամով, իսկ լրացուցիչ բյուջե վճարման ենթակա գումարը կազմել 4,583,390,409 ՀՀ դրամ, 5) շահութահարկի թաքցված հարկվող օբյեկտների բացահատման 90 դեպք, որի արդյունքում 45 դեպքով հարկվող շահույթն ավելացվել է 1,763,482,515 ՀՀ դրամով, իսկ շահութահարկի գումարը կազմել է՝ 296,145,075 ՀՀ դրամ: 45 դեպքով կատարվել է (ծախսի կամ վնասի) մասով նվազեցումներ՝ 2,215,778,353 ՀՀ	

			դրամի չափով, շահութահարկը կազմել է 130,963,527 ՀՀ դրամ: Կատարված վերոնշյալ և այլ հսկողական միջոցառումների արդյունքում 2023թ.-ին հարկ վճարողների կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի քանակը (առանց ՀԴՄ կտրոնների քանակի) նախորդ նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 5,095,918 -ով կամ 15.8 %-ով, իսկ իրացման շրջանառությունը 1,952,076,874,065 դրամով կամ 25.6 %-ով: ՀԴՄ կտրոնների քանակն ավելացել է 39,975,788-ով կամ 7.0 %-ով, իսկ իրացման շրջանառությունը 169,144,487,387 դրամով կամ 6.7 %-ով: 2023թ. դեկտեմբեր ամսին եկամուտ ստացող աշխատատեղերի թվաքանակը կազմել է 741,726, ինչը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ 37,306-ով կամ 5.3%-ով:	
		3.2 Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ՀՀ ներմուծում իրականացնող հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավում և հսկողական գործիքի կատարելագործում	2023թ.-ին ինվոյսային արժեքների ճշտման ուղղությամբ ձեռնարկվել է թվով 2791 միջոցառում, բոլոր դեպքերով ներկայացվել են ճշտված հայտարարագրեր: Արդյունքում նախկինում ներկայացված 4,481,935,134 ՀՀ դրամ ինվոյսային արժեքի փոխարեն արտացոլվել է 8,358,594,690 ՀՀ դրամ իրվոյսային արժեք և ներկայացված ճշտված հայտարարագրերով հաշվարկվել է լրացուցիչ բյուջե վճարման ենթակա 775,332,058 ՀՀ դրամ: 2023թ.-ին վերականգնվել է 705,968,414 դրամ:	

		3.3 Հարկային պարտավորությունների հաշվարկման մեխանիզմների կատարելագործում	Մշակման փուլում է գտնվում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը ներկայումս ներկայացված է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական-իրավական փորձաքննություն իրականացնելու նպատակով: Միաժամանակ, ընդունվել է տրանսֆերային գնագոյացման ստուգման ենթակա հարկ վճարողների ռիսկայնությունը որոշող չափանիշների հաշվարկման և գնահատման կարգը, ինչպես նաև տրանսֆերային գնագոյացման ստուգման գործընթացը սահմանող ՀՀ ՊԵԿ նախագահի հրամանը, որը իրականացվելու է գաղտնի ընթացակարգով: Բացի այդ, ՀՀ ՊԵԿ նախագահի ս.թ. մայիսի 15-ի թիվ 477-Ն հրամանով փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի «Տրանսֆերային գնագոյացման հաշվարկի ձևը (այդ թվում ճշտված), լրացման և ներկայացման կարգը սահմանելու մասին» թիվ 1032-Ն հրամանում:	
		3.4 Ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի ոլորտային հարկային պոտենցիալի գնահատման համակարգի կատարելագործում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համագործակցությամբ՝	2023թ.-ին Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հարկաբյուջետային հարցերի վարչության հեղինակած RA-GAP (Revenue administration – Gap Analysis Program) մեթոդաբանության հիման վրա, ամբողջապես ՀՀ ՊԵԿ ուժերով,	

		վերջինիս կողմից տրամադրվելիք հնարավոր տեխնիկական աջակցության շրջանակներում	իրականացվել են 2022թ. ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտային հարկի հարկային ճեղքերի գնահատման աշխատանքներ, որոնց արդյունքները 22.12.2023թ.-ին ներկայացվել են ՀՀ ՖՆ-ի կարծիքին այնուհետև ՀՀ վարչապետի աշխատակազմ: Գնահատման արդյունքների համաձայն՝ ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտային հարկի գծով ընդհանուր հարկային ճեղքը կազմել է ՀՆԱ-ի 3.06 %-ը, ինչը նախորդ տարվա նկատմամբ բարելավվել է 0.5 տոկոսային կետով:	
		3.5 Ռիսկերի կառավարման համակարգերի վերանայում և կատարելագործում	Վերանայվել և նորացվել են ռիսկային հարկ վճարողների որոշման համար կիրառվող չափանիշները և կազմվել է 01.07.2023թ.-ից մինչև 01.07.2024թ.-ը իրականացվող համալիր հարկային ստուգումների ծրագիրը, ինչ հարպարակվել է ՀՀ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքում: Մասնավորապես ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների գնահատման ավտոմատացված համակարգի կատարելագործման արդյունքում փոփոխություններ և լրացումներ են կատարվել 16 ռիսկային չափանիշներում: Այսուհետ ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկում ներառվելու են նաև արհեստական բանականության և մեքենայացված ուսուցման գործիքների	

			կիրառմամբ տվյալների բազայի վերլուծության արդյունքում արտասովոր անոմալ գնահատումների արդյունքներով ռիսկային դասակարգված հարկ վճարողները: Ստուգման ենթակա հարկ վճարողների ցանկում ընդգրկվելու են ծրագրավորված ստուգումների քանակից էականորեն ավելի շատ հարկ վճարողներ, ինչը կանխարգելիչ նշանակությունից բացի, հնարավորություն է ընձեռում ընթացիկ հսկողական և վերլուծական, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներում հրատապ ռիսկեր ծագելու դեպքում օրենքով սահմանված կարգով անցկացնել ստուգումներ: Ռիսկերի կառավարման և ստուգման ենթակա հարկ վճարողների գնահատման ավտոմատացված համակարգի կատարելագործման նպատակով կատարվել են փոփոխություններ, որի արդյունքում ձևավորված տեխնիկական առաջադրանքը ԷԿՀ խորհրդի կողմից 27.12.2023թ.-ին հաստատվել է:	
4.	Մաքսային ռիսկերի կառավարման գործիքակազմի կատարելագործմամբ մաքսային հսկողության	4.1 Մաքսային հսկողության գործիքակազմի կատարելագործում և պարզեցում	«Ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողումից հետո թիրախային ստուգումների համակարգը» ներդրված է, այժմ գտնվում է թեստային միջավայրում և իրականացվում են դրա փորձարկմանն ու կիրարկմանը միտված աշխատանքներ:	

	արդյունավետության բարձրացում		Կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ կապալառու ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ՝ սպասարկման փուլում կատարվող աշխատանքների օպտիմալ կազմակերպման նպատակով:	
		4.2 Մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերի ներդաշնակեցում	Հարկային ռիսկերի չափանիշների հիման վրա ձևավորվել են հարկ վճարողների ցանկեր՝ ըստ ռիսկայնության աստիճանի, որոնք կիրառվելու են մաքսային ոլորտում համապատասխան ռիսկի պրոֆիլների ներդրման նպատակով՝ իրավասու ստորաբաժանումների առաջարկների հիման վրա:	
		4.3 «Մաքսային իրավախախտումների միասնական շտեմարան» համակարգի ներդրում	Պետության կարիքների համար «Մաքսային իրավախախտումների միասնական շտեմարան» ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրման խորհրդատվական ծառայությունների մատուցման թիվ ՊԵԿ-ԳՀԽԾՁԲ-21/5 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում կատարող հանդիսացող «Դանիամ» ՍՊԸ (այսուհետ՝ Կատարող) կողմից ՀՀ պետական եկամուտների կոմիտեին տրամադրվել է մշակված համակարգը: Կատարողի կողմից պայմանագրի համաձայն ներկայացվել են նաև «Մաքսային իրավախախտումների միասնական շտեմարան» համակարգի օգտվողի	

			ձեռնարկը, տեխնիկական առաջադրանքի վերջնական տարբերակը և համապատասխան հաշվետվությունը, ինչպես նաև անց է կացվել դասընթաց ՀՀ ՊԵԿ իրավասու ստորաբաժանումների պաշտոնատար անձանց համար:	
		4.4 Փոստային (սուրհանդակային) առաքանիների հետ կապված մաքսային գործառնությունների կանոնակարգման նպատակով ռիսկի ցուցիչների մշակում՝ անձնագրային և ՀԾՀ տվյալների միջոցով սահմանահատումների հաճախականության ռիսկի ցուցիչի ձևավորում, ապրանքների քաշի և սահմանահատումների հաճախականության տվյալների հիման վրա ռիսկի ցուցիչի մշակում	Փոստային (սուրհանդակային) առաքանի-ների հետ կապված մաքսային գործառնությունների կանոնակարգման նպատակով ռիսկի ցուցիչները մշակված են և կիրառվում են «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի «Սահմանահատման ինտեգրված վերա-հսկողության համակարգում»: «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի «էքսպրես-բեռների համար ապրանքային և ուղևորային հայտա-րարագիր» համակարգի՝ արտադրական միջավայրում գործարկումից հետո կկիրառվեն նաև այդ համակարգում:	
5.	Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործում	5.3 ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող այլ համակարգերի ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին	Ներդրվել և գործում է «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան և ՍԷԿՏ համակարգերի ինտեգրումն ապահովող միջանկյալ ավտոմատացված տեղեկատվական համակարգը» («ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի «Սահմանա-հատման ինտեգրված վերահսկողության համակարգ»):	

		5.4 ՀՀ ՊԵԿ և ՀՀ ԱԱԾ կողմից առկա հսկողական գործիքների համատեղ օգտագործում՝ ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհանի և ՍԷԿՏ համակարգերի ինտեգրում:	«ՀՀ Արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան և ՍԷԿՏ համակարգերի ինտեգրումն ապահովող միջանկյալ ավտոմատացված տեղեկատվական» համակարգը մշակվել է, ներդրվել և գործում է:	
		5.5 «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի վերջնական ներդրման համար անհրաժեշտ հիմնական կառավարման էլեկտրոնային համակարգերի արդիականացում, նոր համակարգերի մշակում և ներդրում	Մասնավորապես, ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» միասնական հարթակում (trade.gov.am) ներդրված «Թույլատվական փաստաթղթեր» համակարգում արդեն իսկ գործարկված են. - ՀՀ առողջապահության նախարարության, - ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, - ՀՀ էկոնոմիկայի նախարարության, - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, - ՀՀ ներքին գործերի նախարարության, - ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, - ՀՀ պաշտպանության նախարարության, - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, - ՀՀ ազգային անվտանգության ծառայության, - ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, - ՀՀ միջուկային անվտանգության պետական կարգավորման կոմիտեի, - ՀՀ ՇՄՆ անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի,	

			- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, - «էն փի սի» ՍՊԸ և «Արմէքսպերտիզա» ՍՊԸ փորձագիտական կենտրոնների ենթահամակարգերը: Թվայնացվել են նաև վերոնշյալ պետական մարմինների կողմից տրամադրվող մի շարք նոր և Համակարգի ներդրման ծավալներով չնախատեսված թույլատվական փաստաթղթեր՝ այդպիսով ամբողջականացնելով ԱՏԳ ոչ սակագնային հսկողության շրջանակներում կիրառվող պարտադիր ներկայացման ենթակա թույլատվական փաստաթղթերի ցանկը: Միևնույն ժամանակ ծրագրի կարողությունների զարգացման և գերատեսչությունների կողմից իրականացվող այլ բիզնես գործընթացների համակարգում հնարավոր ներգրավման նպատակով 2024-2025թթ. համար նախատեսված է շարունակական աշխատանքների իրականացում, որի տեխնիկական բնութագիրը ներկայումս մշակման փուլում է:	
6.	Միջազգային համագործակցության ամրապնդում	6.1 Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցության շրջանակներում տեղեկությունների	ՏՀԶԿ ստանդարտի ներդրման աշխատանքները նախատեսված է ավարտել միջազգային փորձագիական գնահատմամբ (peer review): Հետպատերազմյան շրջանով և համավարակային իրավիճակով պայմանավորված՝ ՏՀԶԿ Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների	

		փոխանակման միջազգային ստանդարտների ներդրում	փոխանակման Գլոբալ ֆորումի քարտուղարության կողմից փորձագիտական գնահատումը մեկնարկել էր 2021թ.սեպտեմբերին: Գնահատման առաջին փուլի աշխատանքների շրջանակներում, 2021թ. նոյեմբերի 9-ին ՀՀ ՊԵԿ համակարգմամբ ապահովվել է գնահատման հարցաշարի պաշտոնական լրացումը ՀՀ շահագրգիր մարմինների կողմից և փոխանցումը միջազգային փորձագետներին: ՏՀԶԿ և օտարերկրյա փորձագետների նկատառումները ներկայացվել են 2022 թվականի սեպտեմբերի 26-ին: Մինչև 2022 թվականի վերջ նախատեսվում էր Գլոբալ ֆորումի փորձագետների այցը Հայաստան, տեղում գնահատելու ՀՀ գործնական կարողությունները՝ ըստ հարցման տեղեկությունների փոխանակման գործընթացի: Սակայն Գլոբալ ֆորումի քարտուղարության կողմից այցը չի իրականացել՝ ֆորումի ներքին ընթացակարգերի հետ կապված: Հայկական կողմից իրականացման ենթակա աշխատանքները կատարված են: ՀՀ ՊԵԿ-ը դիմել է Գլոբալ ֆորումին փորձագիտական գնահատման հետաձգման և հնարավոր ժամկետների վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Աշխատանքային քննարկումների արդյունքում, ՀՀ-ի համար	

			առավել նպատակահարմար տարբերակ է համարվել փորձագիտական գնահատման երկփուլ մոդելը: Առաջին փուլը ենթադրում է ամբողջ օրենսդրական փուլի գնահատում, որը ավարտվել է և առանցքային խնդիրներ չեն վերհանվել: Առաջին փուլի վերաբերյալ հաշվետվությունը պաշտոնապես հասանելի կլինի արդեն իսկ 2024 թվականի փետրվարին: Ինչ վերաբերում է երկրորդ փուլին, ապա այն ամբողջությամբ վերաբերում է տեղեկությունների փոխանակ-ման գործնական կարողությունների ստուգմանը, որը տեղի կունենա 2024թ. 1-ին կիսամյակում:	
		6.3 «Հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղաշարժ» ծրագրի՝ հարկային մարմնի գործառույթներին առնչվող ստանդարտների կիրառումն ապահովող աշխատանքների իրականացում	«Հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղաշարժ» ծրագրի 5-րդ Գործողության («Վնասակար հարկային պրակտիկա») ՀՀ ՊԵԿ-ին առնչվող աշխատանքների իրականացման ուղղությամբ մշակվել է «Օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հետ ինքնաբերական եղանակով հարկային իրազեկումների փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՊԵԿ նախագահի հրամանի նախագիծը, որը ներկայումս ներկայացված է ՀՀ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանումների քննարկմանը: Ծրագրի 13-րդ («Երկրների միջև փոխանակվող հաշվետվություն») գործողու-թյան շրջանակներում ընդունվել է	

			«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 939-Լ հրամանում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ՊԵԿ նախագահի 2023թ.-ի հուլիսի 12-ի թիվ 720-Լ հրամանը: Ծրագրի 14-րդ գործողության («Փոխհամաձայնեցման ընթացակարգ») ստանդարտի ներդրման կապակցությամբ մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1727-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը ներկայումս ներկայացված է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական-իրավական փորձաքննություն իրականացնելու նպատակով: Միաժամանակ, ՀՀ ՊԵԿ նախագահի 2023թ. սեպտեմբերի 19-ի թիվ 966-Լ հրամանով փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի «Նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 943-Լ հրամանում:	

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ				
NN	Նպատակ	Միջոցառումների անվանումը	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները
1	2	3	4	5
1.	Տարածքային մակարդակում պետական քաղաքաշինական քաղաքականության իրագործման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում	1.1 «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում	«Քաղաքաշինության մասին» օրենքով սահմանված է, որ համայնքի քաղաքաշինական ծրագրային հաստատված փաստաթղթեր (գլխավոր հատակագծեր և գոտևորման նախագծեր) չունենալու դեպքում 2024թ. հուլիսի 1-ից արգելվելու է կառուցապատման նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջա-դրանքների տրամադրումը: Ծրագրի կատարման շրջանակներում թվով 5 նախագծային ընկերության հետ կնքվել է թվով 16 պետական գնման պայմանագիր՝ թվով 971 բնակավայրի ընդգրկմամբ թվով 88 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ մշակելու համար, որոնց ընդհանուր	-

			պայամագրային արժեքը կազմում է՝ 1. 873.236,0 հազար դրամ: Կնքված պայմանագրերի շրջանակներում 2023թ. տարեվերջի դրությամբ մշակվել է 839 բնակավայրի ընդգրկմամբ թվով 74 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթ (որոնց ընդհանուր արժեքը կազմել է՝ 1.538,4 մլն. դրամ): 2023թ. մշակվել են 150 բնակավայրի ընդգրկմամբ թվով 14 փաստաթուղթ:	
		1.2. «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի մշակում	Մշակված առաջադրանքի հիման վրա կազմակերպվել է համապատասխան գնման գործընթաց և Կոմիտեի կողմից կնքվել պետական գնման պայմանագիր (2019թ.)՝ գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակման համար: Նախագծի նպատակն է՝ - «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածում հանգստի գոտու ստեղծում, - Ներդրումային ծրագրերի իրականացման համար նպատակահարմար գոտիների առանձնացում, - Ազգային պարկի տարածքում կառուցապատման կանոնակարգման չափորոշիչների սահմանում: Պայմանագրի կատարման շրջանակներում նախագծող ընկերության կողմից նախագիծը	Նախագիծն օրենքով սահմանված կարգով ավարտելու համար բացակայում են ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից լրամշակված և հստակեցված քարտեզներն իրենց ծածկագրերով և գործառնական ու նպատակային նշանակության շերտերով, ինչպես նաև Նախագծի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և դրա փորձաքննական գործընթացի վերաբերյալ տեղի բնակիչների բացասական տրամադրվածության պատճառով հանրային քննարկում-

			մշակվել և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտե՝ քննարկման: 16.03.2023թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանում տեղի ունեցած «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագծի» շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և դրա փորձաքննական գործընթացի վերաբերյալ հանրային քննարկման երկրորդ փուլի լսումների ընթացքում հանրային քննարկմանը մասնակցող վարձակալ-տնտեսվարողների հետ հնարավոր չի եղել ծավալել կառուցողական երկխոսություն, քանի որ ընդհանուր առմամբ արժևորելով հայեցակարգն, առավել հետաքրքված էին ծրագրի իրականացման գործընթացում իրենց վարձակալած հողամասերի հետագա ճակատագրով, փոխհատուցման կամ ընդհանուր ծրագրին ինտեգրման մեխանիզմներով, ինչը նախագծային առաջադրանքով սահմանված չէ և դուրս է նախագծային աշխատանքների շրջանակներում իրականացվող բաժինների կազմից: Շահագրգիռ մարմինների կողմից տրամադրված ելակետային նյութերում բացակայում էին Սևանա լճի ափում տեղակայված բոլոր գույքերի տեղադիրքերն՝	լսումների /երկրորդ փուլ/ չիրականացումը: Կոմիտեն 2023թ. դեկտեմբ-բերի 12-ին դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ խնդրելով «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի մշակման աշխատանքներն ավարտելու համար ժամկետը երկարաձգել մինչև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ճշգրտված տվյալների տրամադրումը և վերջիններիս հիման վրա Նախագծի լրամշակումն ու հանրային քննարկում-լսումների իրականացումը:

			արտահայտված քարտեզների վրա, ինչպես նաև դրանց սեփականության ձևերը և վարձակալության ժամկետները, որի պատճառով հնարավոր չէ ամբողջապես լրամշակել «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագիծը: Կոմիտեի պատվերով մշակվող «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի մշակման աշխատանքներն ավարտելու համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից նախատեսվող ճեմուղու տարածքում գտնվող շենք-շինությունների գույքագրման համար մրցույթի կազմակերպման նպատակով Կոմիտեն ՀՀ ՇՄ նախարարությանն է տրամադրել «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման և քաղաքաշինական կանոնադրության նախագծի մշակման աշխատանքներն իրականացնող «Արխիտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նշված տեղեկատվությունը՝ ճեմուղու տարածքում գտնվող շենք-շինությունների գույքագրման աշխատանքներն իրականացնելու համար:	

		1.3. Սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեությանն աջակցություն	Միջոցառման շրջանակներում նախատեսվում է հետամուտ լինել միկրոռեգիոնալ փաստաթղթերի մշակման արդյունքում սահմանամերձ բնակավայրերում ի հայտ եկած խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների իրագործմանն աջակցելու գործընթացին, ուսումնասիրել առկա այլ խնդիրները և միջոցառման համակատարող դիտարկված մարմինների հետ մշակել առաջարկությունների, մասնավորապես կառուցապատման ներդրումային ծրագրերի փաթեթներ: Միկրոռեգիոնալ փաստաթղթերի շրջանակներում հաստատված առաջարկությունների հիման վրա միջոցառման շրջանակներում Կոմիտեի կողմից առաջադրվել են Աճի բևեռների ձևավորմանը և համայնքների զարգացմանն ուղղված հայեցակարգեր: Միջոցառման շրջանակներում մշակվել են՝ 2021 թվականին՝ թվով 4 միկրոծրագիր, որից ըստ մարզերի՝ - ՀՀ Արարատի մարզ՝ 2 միկրոծրագիր, - ՀՀ Սյունիքի մարզ՝ 1 միկրոծրագիր, - ՀՀ Արմավիրի մարզ՝ 1 միկրոծրագիր: 2022թ.՝ թվով 2 միկրոծրագիր, որից ըստ մարզերի՝ - ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնք՝ 1 ծրագիր, - ՀՀ Արագածոտնի մարզ՝ 1 միկրոծրագիր:	-

			2023 թվականին՝ թվով 2 միկրոծրագիր, որից ըստ մարզերի՝ - ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 1, - ՀՀ Շիրակի մարզի՝ 1: Նշված փաթեթներով առաջարկվում են սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում, անվտանգ կենսամիջավայրի ապահովում և ժողովրդագրական ցուցանիշների բարելավում:	
		1.4. ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի և գլխավոր նախագծի մշակում	Մեկնարկվել է նախագծի մշակման նախապատրաստական աշխատանքները. - ելակետային նյութերի հավաքագրում (կատարված), - նախագծման առաջադրանքի կազմում, սահմանվված կարգով գերատեսչությունների կարծիքներին ներկայացում (ընթացիկ):	
		1.5. «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տարածքի հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Մշակվել են «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և «Տարածքի հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի նախնական տարբերակները: Նախագծերը սահմանված կարգով 2023թ. ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն:	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի գրությամբ Կոմիտեն դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ խնդրելով Նախագծերի ժամկետը երկարաձգել մինչև «Քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծերի

			««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ 13.04.2023թ. ՆՀՕ-139-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումներով պայմանավորված ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվում «Քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման լրամշակված նախագծի փաթեթը: Հաշվի առնելով, որ Տարածքի հատակագծման նախագծերը նույնպես հանդիսանում են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, «Քաղաքաշինական ծրագրային և ճարտարապետաշինարարական նախագծերի քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատումից հետո անհրաժեշտություն կառաջանա վերանայել Կոմիտեի կողմից մշակված Նախագծերը:	քաղաքաշինական պետական համալիր փորձաքննության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատումը:
		1.6.1 «ՀՀ վարչատարածքային միավոր-ների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային	Միջոցառման շրջանակներում 2023թ. իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:	-

		գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ		
		1.6.2 ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում	Միջոցառման շրջանակներում 2023թ. իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:	-
		1.7. «Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության վերականգնման, վերակառուցման և վերաօգտագործման քաղաքաշինական կանոնակարգերի մեթոդաբանությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակում	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2023թ. հունիսի 8-ի N936-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի կամ դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի գլխավոր նպատակը քաղաքաշինական ժառանգության պահպանումն է:	-
		1.8. Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում նոր բնակելի թաղամասի հիմնում	Ծրագրի շրջանակներում իրականացվում են թվով 13 բնակելի տների կառուցման աշխատանքները, որի պայմանագրային գինը կազմում է շուրջ 1,2մլրդ. դրամ: Շինարարական աշխատանքները մեկնարկվել է 26.04.2021թ.:	Ադրբեջանի սանձազերծած սահմանային միջադեպերի, ցեմենտի դեֆիցիտի պատճառով բետոնացման աշխատանքների ժամանակին իրականացման անհնարինությամբ, ինչպես

			Շինարարական աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 514,4մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային աշխատանքները կավարտվեն 2024թ. 1-ին կիսամյակում:	նաև Խոտ - Որոտան ճանապարհի փլուզման հետևանքով առաջացած լոգիստիկ խնդիրների պատճառով շինարարական աշխատանքների ընթացքը որոշակիորեն դանդաղել էր:
		1.9.1. «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի նախագծի ընդունում 1.9.2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N728-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունում	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից մշակվել է «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի և «ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի N728-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը: «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» օրենքի նախագիծը 2021թ. ներկայացվել է շահագրգիռ մարմիններ՝ կարծիքի: Նախագիծը գտնվում է լրամշակման փուլում:	-
2.	Քաղաքաշինական թույլտվությունների գործընթացի ամբողջական իրականացում առցանց համակարգի միջոցով	2.1.Պետական քաղաքաշինական տեղե-կատվական համակարգի (քաղաքա-շինական կադաստրի) ներդրման ծրագրի իրագործում	Պլանավորման փուլում է գտնվում նաև Քաղաքաշինական կադաստրը: Այն իրենից ներկայացնելու է աշխարհագրական տեղեկատվական GIS համակարգ, որի միջոցով Քաղաքաշինության կոմիտեն իրականացնելու է բոլոր մակարդակների տարածական պլանավորման փաստաթղթերի վարումը: Այս համակարգը հանդիսանում է գլոբալ ինտեգրված կադաստր համակարգի մաս և հնարավորություն է տալու, հիմք ընդունելով	-

			կադաստրային բազային շերտերը, վարել քաղաքաշինական օբյեկտների հաշվառումը GIS տիրույթում: Համակարգը նախատեսվում է մեկնարկել ՀՀ ամբողջ տարածքով 2026թ.: Մեկնարկին ընդառաջ Կոմիտեն համագործակցության հուշագիր է կնքել ոլորտի առաջատար Esri Arcgis կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ և ներկայումս պիլոտային հիմունքներով իրականացվում են երկու համայնքերի տարածական պլանավորման փաստաթղթերի ներբեռնումը GIS տիրույթ: Նախատեսվում է համակարգը մեկնարկել 2024թ. ընթացքում: Ծրագրի իրականացման համար անհաժեշտ է շուրջ 200 միլիոն ՀՀ դրամ:	
3.	Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման փուլերի կրճատում և թույլտվություններ պահանջող գործունեության շրջանակի բովանդակային իմաստով վերանայում	3.1. «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	ՀՀ կառավարության կողմից 2021թ. դեկտեմբերի 2-ին ընդունվել է «ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N1985-Ն ՀՀ կառավարության որոշումը, ըստ որի՝ 2022թ. հունվարի 1-ից Կոտայքի մարզի Նաիրի, Արմավիրի մարզի Էջմիածին, Արարատի մարզի Մասիս և Լոռու մարզի Վանաձոր համայնքներում նախագծման և շինարարության թույլտվությունների տրամադրումն իրականացվում է	-

			բացառապես էլեկտրոնային եղանակով՝ «e-permits» միասնական համակարգի միջոցով: Պիլոտային ծրագրում ընդգրկված են 41 բնակավայր շուրջ 300 000 բնակիչ: 2023թ. ընթացքում բոլոր 4 համայնքներում միասին ստացվել է 7965 դիմում և տրամադրվել է 6086 թույլտվություն (դիմումների 76% դրական ընթացք են ստացել): Նախորդող 2022թ. ընթացքում ամբողջ հանրապետությունում ստացվել է 5330-ը դիմում և տրամադրվել է 4160 թույլտվություն: Համակարգի ներդրումից ի վեր համակարգում գրանցվել է շուրջ 4129 օգտատեր, որից 1629 օգտատեր գրանցվել են 2023թ. ընթացքում: 2022թ. ստացվել է 5230 դիմում և տրամադրվել է 4030 թույլտվություն մինչդեռ 2023թ. այն կազմել է համապատասխանաբար 7965 դիմում և 6086 թույլտվություն, աճը՝ շուրջ 1.5 անգամ: 2025թ. հունվարի 1-ին Համակարգը գործարկվելու է ՀՀ ամբողջ տարածքով: Այդ նպատակին ընդառաջ արդեն իսկ վերլուծվել են Պիլոտային ծրագրի արդյունքները և ներկայումս մեկնարկել է համակարգի բարելավման գործընթացը, որին կհաջորդի չորս մարզերում արդեն իսկ նորացված Համակարգի ներդրումը: Համապատասխան ընթացակարգերը ապահովող	

			կառավարության որոշման նախագիծը շրջանառվել է շահագրգիռ մարմինների շրջանակում և ներկայացվել վարչապետի աշխատակազմ:	
		3.2. Քաղաքաշինական գործունեության գործընթացների բարելավում	Քաղաքաշինական գործընթացների պարզեցման, ընթացակարգերի ժամկետների կրճատման, կրկնվող գործառույթների վերացման նպատակով ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ նախատեսվում են կատարել մի շարք լրացումներ և փոփոխություններ: Հաշվի առնելով նշված որոշման մեծածավալ լինելը, նախագծի փոփոխությունների ձևաչափը նախատեսվել է առանձին հավելվածներով՝ • նախագծման թույլտվություն, • շինարարության/քանդման թույլտվություն, • ավարտական ակտ / շահագործման թույլտվություն, • էական և ոչ էական շեղումների ընդլայնված ցանկի սահմանում, • պարզեցված ընթացակարգով թույլտվություն, • օբյեկտների ցանկի վերանայում ըստ ռիսկայնության աստիճանի գնահատման նոր մեթոդաբանության: Կոմիտեի կողմից մշակվել է ՀՀ կառավարության 23.03.2023թ. N395-Ն որոշմամբ հաստատված է ՀՀ «ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն	Պարզեցված ընթացակարգով թույլտվությունների վերաբերյալ նախագիծը Կոմիտեն 2023թ. դեկտեմբերին ներկայացրել է վարչապետի աշխատակազմ: 2024թ. հունվարին վարչապետի աշխատակազմ է ներկայացվել լրամշակված նախագիծը: Օբյեկտների ըստ ռիսկայնության աստիճանների դասակարգման մեթոդաբանության վերաբերյալ նախագիծը շահագրգիռ մարմինների կողմից ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա գտնվում է լրամշակման փուլում: Ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) ընթացակարգի վերաբերյալ նախագիծը ՀՀ վարչապետի

			որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ էական և ոչ էական շեղումների հստակեցման վերաբերյալ: Կոմիտեի կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ պարզեցված ընթացակարգով թույլտվությունների վերաբերյալ, որը գտնվում է լրամշակման փուլում: Կոմիտեի կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (ռիսկայնություն), որը գտնվում է լրամշակման փուլում: Կոմիտեի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) ընթացակարգի վերաբերյալ, որը գտնվում է լրամշակման փուլում:	աշխատակազմից ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա գտնվում է լրամշակման փուլում:
4.	Խոշոր համայնքների համար առցանց հասանելի	4.1.Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական և հանրապետական	ՀՀ քաղաքաշինության ոլորտի ՀՀ 2023-2025թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի պետական բյուջեի հայտում՝ նոր	-

	քաղաքաշինական պահանջներ սահմանող գոտիների քարտեզների հաստատում	նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում	նախաձեռնությունների մասով ներկայացվել է ՀՀ Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների մուտքերին հարող միջպետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակման արժեքի խոշորացված ցուցանիշներով նախնական հաշվարկ: Հաշվարկով նախատեսվել է հանրապետության 3 խոշոր համայնքների թվով 12 մուտքերին հարող միջպետական նշանակության պետական ավտոմոբիլային ճանապարհներին կից հատուկ կարգավորման գոտիների տարածքների կառուցապատման միասնական սխեմաների մշակում:	
5.	Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի մշակման, արդիականացման և միջազգային նորմերին ներդաշնակեցման ապահովում՝ ըստ ձևավորվող խնդիրների լուծման առաջնահերթությունների	5.1. Քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (տեխնիկական կանոնակարգեր, շինարարական նորմեր, շինարարական նորմերի ու կանոնների հավաքածուներ, կարգեր) մշակման, տեղայնացման, արդիականացման աշխատանքների պատվիրակում կապալառու կազմակերպություններին	• 2023թ. ընթացքում մշակվել են թվով 20 նորմատիվատեխնիկական փաստաթուղթ, որից՝ 19-ը պետական բյուջետային միջոցների հաշվին: Հրապարակվել են թվով 12 փաստաթղթեր, հրապարակման փուլում է գտնվում թվով 6-ը և 2-ի հրապարակումը երկարաձգվել է: • ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22.05.2023թ. N04-Ն հրաման),	-

			• ՀՀՇՆ 31-04.02-2023 «Ջերմոցներ» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 11.09.2023թ. N07-Ն հրաման), • ՀՀՇՆ 31-03.05-2023 «Բարձրագույն ուսումնական հաստատությունների շենքեր ու շինություններ» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 27.09.2023թ. N08-Ն հրաման), • ՀՀՇՆ 22-02.01-2023 «Տարածքների, շենքերի և շինությունների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.09.2023թ. N09-Ն հրաման), • ՀՀՇՆ 31-04.03-2023 «Շենքեր և սենքեր անասնաբուծական, թռչնաբուծական, գազանաբուծական. Նախագծման նորմեր» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 13.10.2023թ. N10-Ն հրաման), • ՀՀՇՆ 33-02-2023 «Հենապատեր, նավարկելի ջրարգելակներ, ձկնաթողման և ձկնապաշտպան շինություններ» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.10.2023թ. N11-Ն հրաման), • ՀՀՇՆ 32-06-2023 «Մետրոպոլիտեններ» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 01.11.2023թ. N12-Ն հրաման), • ՀՀՇՆ 42-01-2023 «Գազաբաշխիչ համակարգեր» (ՀՀ քաղաքաշինության	

			կոմիտեի նախագահի 04.12.2023թ. N14-Ն հրաման), • ՀՀՇՆ 31-04.04-2023 «Սառնարանային շենքեր և շինություններ» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 06.12.2023թ.N17-Ն հրաման), • ՀՀՇՆ 34-02-2023 «Մայրուղային խողովակաշարեր» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.12.2023թ. N19-Ն հրաման), • ՀՀՇՆ 31-04.05-2024 «Հատակներ» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 15.01.2024թ. N02-Ն հրաման), • ՀՀՇՆ 32-04-2024 «Թունելներ երկաթուղային և ավտոճանապարհային» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 16.01.2024թ. N04-Ն հրաման), • ՀՀՇՆ 20-02-2024 «Բեռնվածքներ և ազդեցություններ»՝ առաջիկայում կներկայացվի հրապարակման, • ՀՀՇՆ 32-03.02-2024 «Կամուրջների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ»՝ առաջիկայում կներկայացվի հրապարակման, • ՀՀՇՆ 32-03.01-2024 «Կամուրջներ և խողովակներ»՝ առաջիկայում կներկայացվի հրապարակման, • ՀՀՇՆ 21-01.01-2024 «Շենքերի և շինությունների հակահրդեհային պաշտպանության համակարգեր. Ավտոմատ	

			հրդեհաշիջման և հրդեհային ազդանշանման կայանքներ. Նախագծման նորմեր» առաջիկայում կներկայացվի հրապարակման, • ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի և շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 01.02.2024թ. N06-Ն հրաման)՝ հրապարակման փուլում է, • ՀՀՇՆ 31-03.06-2024 «Մարզական կազմակերպությունների շենքեր և համալիրներ» լրացուցիչ լրամշակման փուլում է, • ՀՀՇՆ «Առողջապահական կազմակերպությունների շենքեր և շինություններ» լրացուցիչ լրամշակման փուլում է, • ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» (ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 15.01.2024թ. N 03-Ն հրաման), մշակվել է առանց բյուջետային հատկացման: • Թվով 2 նորմատիվատեխնիկական փաստաթղթեր մշակման համար կնքվել են պետական գնման պայմանագրեր, սակայն ավարտը նախատեսվել է 2024 թվականին: • Թվով 2 նախադեպային փաստաթղթեր՝ «Առողջապահական կազմակերպություններ. Հիվանդանոցային բուժօգնության	

			/ստացիոնար/ շենքեր և շինություններ», «Մարզական նշանակության օբյեկտներ. Ծածկված շենքեր և համալիրներ» վերջնամշակումից և փորձագիտական եզրակացությունից հետո լրացուցիչ քննարկվել են ոլորտային գերատեսչությունների օրենսդրական կարգավորումների շրջանակներում, ներկայումս գտնվում են լրամշակման փուլում:	
		5.2. Շինարարության գնագոյացման մեթոդաբանության արդիականացմանն ուղղված առաջարկությունների փաթեթի մշակում և ներկայացում Վարչապետի աշխատակազմ	2022-2023թթ. սահմանված կարգով մշակվել է «Շինարարության գնագոյացման մեթոդաբանության արդիականացման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: ՀՀ փոխվարչապետի 2023թ. նոյեմբերի հանձնարարությամբ առաջարկվել է Նախագիծն ընդունել Կոմիտեի նախագահի հրամանով:	«Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ «Կառավարությունը քաղաքաշինության բնագավառում մշակում է շինարարության ոլորտում գնագոյացման քաղաքականությունը, հաստատում է գնագոյացման նախահաշվային նորմերը և դրանց կիրառման կարգերը», իսկ նույն օրենքի 10.1-ին հոդվածով քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին նման լիազորություններ վերապահված չեն:

				Ուստի, խնդիրը ենթակա է լրացուցիչ քննարկման:
		5.3.«Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի ցանկը և ընդհանուր բնութագրերը հաստատելու մասին» Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում (Նախագծի մշակման և համակարգման աշխատանքներ, ծրագրային առաջարկների մշակում բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի տեղակապման, փորձաքննության և բյուջետային ծրագրերի շրջանակներում նմանատիպ նախագծերի ձեռքբերման համար ֆինանսական միջոցների նախատեսման վերաբերյալ)	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021թ. դեկտեմբերի 9-ի N71-Ն հրամանով հաստատվել են «Շենքերի և շինությունների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի ցանկը և ընդհանուր բնութագրերը»: ՀՀ կառավարության 2023թ. հունվարի 14-ի N54-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 7-ի N814-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնք վերաբերում են պատվիրատուների/կառուցապատողների կողմից բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի մշակման ու կիրառման կարգերին և լիազորված պետական մարմնի կողմից դրանց հաստատման կարգերին: «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2022թ. մարտի 12-ի ՀՕ-51-Ն օրենքով սահմանվել են Կառուցապատողների կողմից բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի կիրառման պայմանները:	-
		5.4.«Միասնական փաթեթով գնում» սկզբունքի կիրառման համար օրենսդրական կարգավորումների մշակում՝ «Քաղաքաշինության մասին օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի մշակում և ներկայացում	Ի կատարումն ՀՀ վարչապետի 2021թ. սեպտեմբերի 15-ի N02/16.4/31663-2021 հանձնարարականի Կոմիտեն (մասնագիտական ստորաբաժանումների մասնակցությամբ) ուսումնասիրել և քննարկել է «գլխավոր կապալառուի կամ միասնական	-

		Վարչապետի աշխատակազմ (Նախագծի մշակում և համակարգում, օրենսդրական այլ իրավակարգավորումների մասով առաջարկների ներկայացում՝ նախագծային աշխատանքների փուլայնության (տրոհման), կրկնակի և ուղեկցող փորձաքննության մեթոդաբանությունների հստակեցման մասով, հատուկ ընթացակարգերի մշակում)	պատվիրատուի» գործառույթների սահմանման և մի խումբ լիազորությունների վերապահման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը: Կոմիտեի 24.09.2021թ. ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի առաջարկ-պարզաբանումը: Միաժամանակ մշակվել է «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը: 03.12.2021թ. Կոմիտեում ՀՀ ֆինանսների, ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ ԿԳՄՍ, ՀՀ ԱԻ, ՀՀ ԱՍՀ, ՀՀ առողջապահության, ՀՀ ՇՄ, ՀՀ պաշտպանության, ՀՀ արդարադատության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի շինա-րարների միության, «Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության, «Հայնախագիծ» բաց բաժնետիրական ընկերության և Կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել խնդրի քննարկում: Քննարկման արդյունքներով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկվել է մշակել համապատասխան պայմանագրային դրույթների համախումբ գլխավոր	

			կապալառուի և պատվիրատուի պարտավորություններին ու լիազորություն-ներին վերաբերող իրավական հիմքերի և նախատեսվող ընթացակարգերի ներառմամբ՝ դիտարկելով մշակման ենթակա իրավակարգավորումների մասով առկա միջազգային փորձը: Հաշվի առնելով վերոգրյալը և գնահատելով մշակման ենթակա իրավական բնույթի կարգավորումների կարևորությունը, նախաձեռնվող գործընթացի պատասխանատվու-թյան աստիճանը, առաջարկվել է. 1. խնդրի հնարավոր կարգավորումը դիտարկել որակավորված փորձագետի ներգրավման գործընթացի շրջանակներում, կամ 2. տվյալ միջոցառումը բացառել: Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով համապատասխան փորձագետի բացակայությունը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 2022թ. ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացրել է առաջարկություն Միջոցառումը ՀՀ կառավարության 2021թ. նոյեմբերի 18-ի N1902-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների	

			գործունեության միջոցառումների ծրագրից» հանելու վերաբերյալ: Լոտերի ձևով միասնական փաթեթով գնման սկբունքը արդեն իսկ կիրառվում է գործող իրավակարգավորումների շրջանակներում, իսկ գործառույթների միասնական փաթեթով գնման համար Պայմանագրային իրավական կարգավորումները գտնվում են ՀՀ ֆինանսների նախարարության իրավազորությունների շրջանակներում:	
6.	Շինարարությունում նոր տեխնոլոգիաների ներդրման, տեղական հումքով շինանյութերի և շինարարության որակի հսկման մեթոդների մշակման ու իրագործման նպատակով գիտահետազոտական և փորձարարական բազայի ձևավորում, գիտական կադրերի պատրաստում (վերապատրաստում)	6.1.«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ արդիականացման (առողջացման) ծրագրի մշակման պատվիրակում, ծրագրի մշակման աշխատանքների ընթացիկ համակարգում, ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացում (օրենսդրության վերանայում, Կենտրոնի վերակազմակերպման աշխատանքների ապահովում, կանոնադրական նոր պահանջների ձևավորում, մասնագիտական կադրերի ընտրություն, ներգրավում)	2023թ. մշակվել և սահմանված կարգով շրջանառվել է «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ պետական և մասնավոր բաժնեմասերի առանձնացման և 2024-2027 թվականների զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ նախագիծ): 2023թ. նախագիծը ներկայացվել է նաև ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախապատրաստական փուլում՝ Կոմիտեն կազմակերպել է Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոնի պետական ≈80% և մասնավոր ≈20% բաժնեմասերի առանձնացման իրավական ծառայությունների ձեռք բերման մրցութային գործընթաց: 2023թ. նոյեմբերի 23-ին Կոմիտեի և «Սողոյան և գործընկերներ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ միջև կնքվել է ՈՀՀՔԿ-	-

			ԳՀԾՁԲ-23/6 պետական գնման պայմանագիր: Կոմիտեն առաջիկայում կնախաձեռնի ծառայության ֆինանսավորման ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքներ՝ 2024թ. առաջին եռամսյակում իրավաբանական խորհրդատվական ծառայության մեկնարկն ապահովելու համար:	
7.	Շենքերի ու շինությունների հուսալիության և սեյսմակայունության բարձրացման համար անհրաժեշտ իրավական հիմքերով ապահովում	7.1.«Տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	ՀՀ քաղաքաշինության Կոմիտեն 2022-2023թթ. մշակել և շրջանառել է «Տեխնիկական վիճակից ելնելով բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերը/շինությունները շահագործման համար ոչ պիտանի (կազմաքանդման ենթակա) ճանաչելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի վերաբերյալ 2023թ. ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական իրավական փորձագիտական եզրակացությունը: 2024թ. լրամշակված նախագիծը ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:	ՀՀ վարչապետի աշխատակազմի կարծիքի հիման վրա իրականացվում են նախագծի լրամշակման աշխատանքները:
		7.2.Առավել վտանգավոր սողանքային տեղամասերում հետազննությունների և կանխարգելիչ միջոցառումների մասով առաջարկությունների ներկայացում, «ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թ. ապրիլի 14-ի N09-Ն հրամանով ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թ. սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանում կատարվել են համապատասխան լրացումներ	-

		սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագծի մշակում (քաղաքաշինական օբյեկտների նախագծման նորմատիվ լրացուցիչ պահանջների մշակում՝ հրամանի համալրում հակասողանքային, կանխարգելիչ միջոցառումների դրույթներով, նորամշակ պահանջների մասով իրազեկման ապահովում)	կառուցապատման նախագծերում սողանքի կանխարգելման, սողանքային երևույթներից տարածքների ինժեներական պաշտպանությունն ապահովող միջոցառումներ նախատեսելու վերաբերյալ: Բացի այդ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2023թ. սեպտեմբերի 28-ի N09-Ն հրամանով հաստատվել են ՀՀՇՆ 22-02.01-2023 «Տարածքների, շենքերի և շինությունների ինժեներական պաշտպանությունը երկրաբանական վտանգավոր երևույթներից» շինարարական նորմերը: Կոմիտեն 2023թ մշակել և սահմանված կարգով շրջանառել է «ՀՀ սողանքային աղետի կառավարման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը ներկայացվել է ՀՀ ներքին գործերի նախարարություն՝ վերջինիս դրույթները «Աղետների ռիսկի կառավարման 2023-2030թթ. ռազմավարությունը և 2023-2026թթ գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ ռազմավարություն) հետ համադրելու և ռազմավարության ճանապարհային քարտեզում ներառելու համար: Նախագծի դրույթները ներառվել են ռազմավարությունում:	

8.	Կարևորագույն նշանակության մի շարք օբյեկտների համալրում նախագծային հատուկ լուծումներով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար դրանց շահագործման մատչելիությունն ապահովելու համար	8.1.«Նախագծային հատուկ լուծումներով համալրման ենթակա մի շարք կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկը և դրանց շահագործման մատչելիությունն ապահովող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ (Նախագծի մշակման և համակարգման աշխատանքներ)	2023թ. մեկնարկել է ՀՀ կառավարության 2022թ. մարտի 3-ի «Նախագծային հատուկ լուծումներով համալրման և անձնագրավորման ենթակա մի շարք հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկը և դրանց շահագործման մատչելիությունն ու անձնագրավորումն ապահովող միջոցառումների ծրագիրն ու ժամանակացույցը հաստատելու մասին» N250-Լ որոշմամբ հաստատված ծրագրի նախագծային աշխատանքների նախապատրաստման փուլը: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում հետազննվել և անձնագրավորվել են թվով 16 օբյեկտների 28 շենքեր և շինություններ: «Դիմոքրասի Ինթերնեյշնլ» հայաստանյան գրասենյակի օժանդակությամբ աշխատանքներում ներգրավված եվրոպական փորձագետների կողմից համապատասխան զեկույցների հիման վրա հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջոցառումների շուրջ 30 փաթեթներ են ներկայացվել Կոմիտե, որոնք որպես ելակետային տվյալներ կտրամադրվեն նախագծողներին:	-
9.	Շենքերի ու շինությունների անձնագրավորման համակարգի ներդրում	9.1.«Քաղաքաշինության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերի փաթեթին հավանություն	Որպես 2023թ. արդեն իսկ մեկնարկած կարևորագույն նշանակության 28 շենքերի ու շինությունների անձնագրավորման պիլոտային ծրագրի ընդլայնման և	-

		տալու, «Շենքերի և շինությունների անձնագրավորման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշումների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ (պիլոտային ծրագրի իրավական ակտերի, միջոցառումների ծրագրի նախագծերի մշակման աշխատանքներ, անձնագրավորման կարգի մշակման աշխատանքներ, ծրագրի իրագործման համակարգում, համագործակցություն պատասխանատու և այլ շահագրգիռ մարմինների հետ)	շարունակման գործընթաց, մշակվել և սահմանված կարգով շրջանառվել է «ՀՀ կառավարության 2022թ. մարտի 3-ի N250-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվել են ՀՀ մարզերի ևս 25 օբյեկտների հետազննման և անձնագրավորման ծառայություններ: 2023թ. անձնագրավորման պիլոտային ծրագրի շրջանակներում «Սեյսմակայուն շինարարություն», «Սեյսմշին», «Ստեպռոյեկտ» և «Հուսալի Կամար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից հետազննվել և անձնագրավորվել են թվով 16 օբյեկտների 28 շենքեր և շինություններ: Հետազննվել և անձնագրավորվել են՝ 1. ՀՀ կառավարության մասնաշենքը (Կառավարական տուն 1), 2. Հայաստանի ազգային պատկերասրահի շենքը, 3. ՀՀ սահմանադրական դատարանի շենքը, 4. ՀՀ Ազգային ժողովի շենքը, 5. ՀՀ ոստիկանության շենքը, 6. Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը, 7. Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մարզահամերգային համալիրի շենքը,	

			8. «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի շենքը, 9. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի շենքը, 10. Հայաստանի ազգային գրադարանի շենքը, 11. Հայաստանի նկարիչների միության շենքը, 12. Հայաստանի Հանրապետության ճարտարապետների պալատի շենքը, 13. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի շենքը, 14. Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի կայարանների շենքերը («Բարեկամություն», «Մարշալ Բաղրամյան», «Երիտասարդական», «Հանրապետության հրապարակ», «Սասունցի Դավիթ», «Գործարանային», «Շենգավիթ», «Գարեգին Նժդեհի հրապարակ», «Զորավար Անդրանիկ», «Զարբախ»), 15. Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի շենքը, 16. ՀՀ երկաթուղային կայարանների շենքերը:	

10.	Քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների վարկանիշավորման համակարգի ներդրում	10.1. «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ:	2022թ. դեկտեմբերի 16-ի «Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-431-Ն, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-432-Ն, «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-433-Ն և «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-434-Ն օրենքները (այսուհետ՝ Օրենք) ուժի մեջ են մտել 2023թ. դեկտեմբերի 17-ից: Արդյունքում ակնկալվում է բոլոր քաղաքաշինական գործունեության բնագավառի կազմակերպությունների վերալիցենզավորում՝ ըստ դասային աստիճանների, պատասխանատու մասնագետների հավաստագրում, կազմակերպությունների թվային ռեեստրների ստեղծում, դրանց վարում ինչը թույլ կտա իրականացնել քաղաքաշինության բնագավառի կազմակեր-պությունների վարկանիշավորում (ռեյտինգավորում):	-
		10.2.«Լիցենզիանզավորման, մասնա-գետների հավաստագրման, թեստավոր-ման, մասնագետների և կազմակերպությունների ռեգիստրի	Օրենքից բխող «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և	Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2023 թվականի օգոստոսի 8-ի ««Քաղաքաշինության

		ձևավորման և կառուցվածքի վարման կարգերը հաստատելու մասին», ինչպես նաև «Մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման հնգամյա ժամանակացույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի ընդունում	լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N330-Ա որոշմամբ հաստատված ցանկի (1-3 կետեր) և ՀՀ վարչապետի 2023թ. օգոստոսի 8-ի ««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023թ. ապրիլի 13-ի N ՀՕ-139-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու և ՀՀ վարչապետի 2023թ. մարտի 23-ի N330-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N804-Ա որոշմամբ հաստատված ցանկի (19-33 կետեր) միջոցառումների իրականացման համատեքստում 2023թ. ընթացքում նախատեսված էր մշակել 10 ենթաօրենսդրական ակտ, որից 6-ը հաստատվել են, իսկ մյուս 4-ը մշակման ավարտական փուլում են գտնվում: Միջոցառման շրջանակներում. ✓ ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 30-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2106-Ն որոշում (N 330-Ա որոշում, կետ 1):	մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի ապրիլի 13-ի NՀՕ-139-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու և Վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի N330-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N804-Ա որոշմամբ հաստատված ցանկի 19-ից 33-րդ կետերի պահանջները ՀՀ քաղաքաշինության կոմիտեն իրականացնում է լիցենզավորման գործընթացի ծավալուն և համապարփակ բարեփոխումներ՝ նպատակ ունենալով լավագույն հասանելի նորարական ու տեխնոլոգիական լուծումների կիրառությամբ ձևավորել տնտեսվարող սուբյեկտ և սպառող փոխկապակցված թվայնացված ծառայություններ:

			✓ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023թ. դեկտեմբերի 6-ի «Քաղաքաշինության գործունեության սուբյեկտների լիցենզիաների դասակարգման և պատասխանատու մասնագետների հավաստագրման անցումային կարգը հաստատելու մասին» N 15-Ն հրաման (N 330-Ա որոշում, կետ 2): ✓ ՀՀ կառավարության 2023թ. օգոստոսի 3-ի «ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի N 1292-Ն, 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1912-Ն և 1997թ. նոյեմբերի 29-ի N 547 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1331-Ն որոշում (N 330-Ա որոշում, կետ 19): ✓Վերաորակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, սահմանված կարգով շրջանառվել, ամփոփվել և 2024թ. հունվարին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ (N 804-Ա որոշում, կետ 19): ✓ «ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մասնագիտական գործունեության իրավունք ունեցող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման և հավաստագրման հնգամյա ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել, շրջանառվել, ինչպես	Օրենսդրական բարեփոխումների արդյունքում տարանջատվել են 3 հիմնական գործառույթներ. Լիցենզավորում, Հավաստագրում և Գրանցում (ռեգիստր): Հաշվի առնելով գործառույթների տարանջատումը՝ Կոմիտեի լիցենզավորման վարչությանը վերապահված գործառույթներն ամբողջական և պատշաճ իրականացնելու համար «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N330-Ա որոշմամբ հաստատված

			նաև անցել է հանրային քննարկման փուլ՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am): Նախագիծն ամփոփվել և 2024 թվականին ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության (N 804-Ա որոշում, կետ 24):	ցանկի 21-րդ կետով նախատեսված էր իրականացնել կառուցվածքային փոփոխություն՝ վերակազմավորման եղանակով, որը հնարավորություն էր ստեղծելու միջոցառումների սահմանված ժամանակին կատարելուն և հետագայում Լիցենզավորման, Հավաստագրման և Գրանցման (ռեգիստր) գործառույթների շարունակական իրականացմանը: Ներկայումս մեծածավալ գործառույթների անխափան կատարման համար իրականացվում են հաստիքների համալրումներ: N804-Ա որոշմամբ 2023 թվականին նախատեսված միջոցառումներից ավարտական փուլում է գտնվում միայն «ՇՄՋ հնգամյա ժամանակացույցի»

				հաստատումը, որը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձագիտական քննության: Նախատեսվում է նախագծի վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ մինչև 2024 թվականի փետրվարի 3-րդ տասնօրյակը:
		10.3. Քաղաքաշինության բնագավառում գործունեություն իրականացնող մասնագետների մասնագիտական չափորոշիչների և որակավորման պահանջների սահմանում՝ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով:	✓ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023թ. դեկտեմբերի 18-ի «Որակավորման հանձնաժողովի անհատական կազմը, աշխատակարգը, անդամների ընտրության և գործերի քննության կարգը, շահերի բախման առկայության կամ բացակայության վերաբերյալ հայտարարագրի ձևը հաստատելու մասին» N 82-Ա հրաման (N 330-Ա որոշում, կետ 3): ✓ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023թ. օգոստոսի 23-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը և մասնակցությանը ներկայացվող	

			պահանջների, յուրաքանչյուր մասնագիտության գծով շնորհվող կրեդիտների տեսակների, քանակի և դրանց շնորհման չափորոշիչները սահմանելու մասին» N 06-Ն հրաման (N 804-Ա որոշում, կետ 27 և 32): ✓ՀՀ կառավարության 2023թ. սեպտեմբերի 22-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատելու մասին» N 1615-Ն որոշում (N 804-Ա որոշում, կետ 23): ✓«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին համապատասխան իրականացվել է «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական գործունեության տեսակներին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտներում իրականացվող աշխատանքների և ծառայությունների մատուցման գործելակարգերը և պատասխանատու մասնագետների մասնագիտական բնութագրերը» (ՀՀ շինարարական նորմերի մշակում) աշխատանքների գնման գործընթաց: 2023թ. պետական գնման	

			պայմանագիր է կնքվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Կայուն Զարգացման Ներդրումային Հիմանդրամի» միջև, որի կատարման ժամկետ է սահմանվել 240 օրացուցային օր (N 804-Ա որոշում, կետ 28): ✓«Լիցենզավորված անձանց կողմից ներկայացվող հաշվետվության և մասնագետների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանի նախագիծը մշակվել, շրջանառվել, ինչպես նաև անցել է հանրային քննարկման փուլ՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am): Նախագիծն ամփոփվել և 2024 թվականին ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության (N 804-Ա որոշում, կետ 30):	
		10.4. Քաղաքաշինության բնագավառում տնտեսվարող սուբյեկտների և մասնագետների ռեեստրների ստեղծում	Համաշխարհային բանկի «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» շրջանակներում «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ի հետ համատեղ մշակվել են տնտեսվարող սուբյեկտների և մասնագետների ռեեստրներում տվյալների հավաքագրման և մշակման, ինչպես նաև ռեյտինգավորումն ինքնաշխատ կերպով իրականացման, տվյալների	-

			վավերականության ստուգման և մշտադիտարկման բիզնես գործընթացները: 2023թ. դեկտեմբերի 17-ից գործարկվում է urban.e-gov.am քաղաքաշինության բնագավառի պետական ծառայությունների միասնական հարթակը: ✓«Լիցենզավորված անձանց և հավաստագրված մասնագետների ռեգիստրի ձևավորման, տվյալների փոփոխության, լրացման և գրանցամատյանի վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, սահմանված կարգով շրջանառվել, ամփոփվել և 2023թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ (N 804-Ա որոշում, կետ 20):	
11.	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության որակի բարելավմանն ուղղված սկզբունքների և իրավական մեխանիզմների ներդրում	11.1. Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության հետ կապված հարաբերությունների կարգավորելու համար ««Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունում	Միջոցառման շրջանակներում 2023թ. իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:	-
		11.2. «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրավակարգավորումների, համաձայնեցման և փոփոխման, փորձագիտական եզրակացության ձևի ու դրա տրամադրման կարգը հաստատելու	Միջոցառման շրջանակներում 2023թ. իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:	-

		մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ:		
12.	Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման գործառույթների իրականացման կայուն մեխանիզմների արմատավորում	12.1. Բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ, քննարկվել է նախարարական կոմիտեում: Քննարկման արդյունքում նպատակահարմար տարբերակ է դիտարկվել հայեցակարգի փոխարեն նոր օրենքի մշակումը, որը տեղ է գտել միջոցառումների ծրագրի 12.2 կետում:	-
		12.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Կառավարության որոշման ընդունում	Միջոցառման շրջանակներում 2023թ. իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:	-
13.	Բազմաբնակարան շենքերի կառավարման բնագավառում առկա խնդիրների կանոնակարգում և հետագա զարգացումների ապահովում՝ օրենսդրության շարունակական բարելավման միջոցով	13.1.«Բազմաբնակարան շենքերի պահպանման և շահագործման, արդիականացման (այդ թվում՝ էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման) կանոնների հաստատում քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանով	Կանոնները հաստատվել են Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022թ. հունվարի 31-ի N02-Ն հրամանով: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=159909)	-

		13.2 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին համապատասխան օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 30-ի N2072-Ա որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=186285)	-
		13.3 «Բազմաբնակարան շենքի կառավարման և պահպանման բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման պայմանները, առանձնահատկությունները, կարգը, այդ ծրագրերի ֆինանսավորմանը պետության, ինչպես նաև շենքի շինությունների սեփականատերերի մասնակցության չափը և եղանակը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2022թ. հունիսի 30-ի N971-Ն որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=165099)	-
		13.4 «ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2022թ. հունիսի 17-ի N881-Ա որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164336) Նախագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2022թ. հոկտեմբերի 26-ին (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=170557)	-

		13.5 «ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 7-ի N 2078-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծն ընդունվել է Կառավարության 2022թ. ապրիլի 15-ի N502-Ն որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162039)	-
14.	Բազմաբնակարան շենքի կառավարման բնագավառում անցում՝ մասնագիտացված կառավարմանը	14.1 «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում փոփոխություններ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 13-ի N1596-Ն որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169431) Նախագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2023թ. հունվարի 17-ին: (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173816)	-
		14.2 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2023թ. հոկտեմբերի 12-ի N1737-Ն որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183960)	-
		14.3 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորման սահմանված պահանջների	Միջոցառումը մեկնարկվել է և իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ:	-

		հիման վրա վերապատրաստման դասընթացների հարցաշարերի կազմում		
		14.4 Բազմաբնակարան շենքերի կառավարման գործառույթներ իրականացնող անձանց մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների հիման վրա վերապատրաստման դասընթացների կազմակերպում	Միջոցառման շրջանակներում 2023թ. իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել: Դասընթացները կմեկնարկեն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ սկսած 2025թ. հուլիսի 1-ից:	-
15.	Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող (3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) բնակարանային ֆոնդի հիմնախնդրի կանոնակարգում	15.1.«Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծը Կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 4-ի N1206-Ա որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166986) Նախագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2022թ. նոյեմբերի 16-ին: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=171794)	-
		15.2 Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի վերաբերյալ տեղեկատվական համակարգ ստեղծելու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 21-ի N2288-Ն որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187691)	-

		15.3 Ուժեղացման-վերակառուցման ենթակա (3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ որպես մեկ միասնական նախագիծ, առանձին հավելվածներով. «Ուժեղացման և վերակառուցման և քանդման ենթակա՝ վթարային բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը, ինչպես նաև բնակարանային ֆոնդի ուժեղացման և վերակառուցման կամ քանդման դեպքում այդ ֆոնդից քաղաքացիների ժամանակավոր վերաբնակեցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը քննարկվել է ՏԶՇՄ նախարարական կոմիտեի 2023թ. դեկտեմբերի 26-ի նիստում և հանվել է օրակարգից՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների բնակարանային ապահովության ծրագրի մասով ՀՀ վարչապետի մոտ կայանալիք քննարկմանը ներկայացնելու նպատակով:	
		15.4 Քանդման ենթակա՝ վթարային (4-րդ աստիճանի վնասվածություն) բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական քաղաքականությունը սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ		

		15.5 «Բնակարանային ֆոնդի ուժեղացման և վերակառուցման կամ քանդման դեպքում այդ ֆոնդից քաղաքացիների ժամանակավոր վերաբնակեցման կարգը սահմանելու մասին Կառավարության որոշման նախագծի ընդունում		
		15.6 Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 274-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Կառավարության որոշման նախագծի ընդունում	Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակի հետազննությունների անցկացման և հետազննության արդյունքում տրված եզրակացությունների վարման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N274-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 23-ի N2024-Ն որոշմամբ: (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185867)	-
		15.7 Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի լուծմանն ուղղված ծրագրերի իրականացում	Հաշվետու ժամանակահատվածում նախատեսված աշխատանքներն իրականացված են. - ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Բաղրամյան 43 և Գ.Նժդեհ 7 հասցեների թվով 2 վթարային բազմաբնակարան շենքերի փոխարեն կառուցվել և շահագործման է հանձնվել մեկ բազմաբնակարան շենք, - ընթացքում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Խնկոյան փողոցի վթարային	-

			փայտյա հանրակացարանային թվով 2 շենքերի փոխարեն նոր բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքները, - իրականացվել են Ստեփանավան քաղաքի Աշոտաբերդ թաղամասի թվով 24 վթարային փայտյա բազմաբնակարան շենքերի փոխարեն նոր թաղամասի նախագծման աշխատանքները, որի հիման վրա կմեկնարկեն շինարարության գնման աշխատանքները, - մշակվել է Աշոցք համայնքի Կոճոռ թաղամասի թվով 20 վթարային փայտյա բազմաբնակարան շենքերի փոխարեն նոր թաղամասի նախագծման աշխատանքները, նախագծային փաստաթղթերը գտնվում են փորձաքննության փուլում, որի հիման վրա կմեկնարկեն շինարարության գնման աշխատանքները: - 2023թ. պետական մյուջեով հատկացված միջոցների հաշվին մեկնարկել է բազմաբնակարան շենքի 1 մեկ օրինակելի նախագծի մշակման և թվով 6 հողամասում (4-ը՝ Գյումրի, 2-ը՝ Վանաձոր) տեղակապման նախագծերի համար:	

16.	Բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականության ամրագրում	16.1 Սահմանադրությամբ Կառավարության՝ բնակարանային շինարարության հանձնառությունը խթանելու նպատակով բնակարանաշինության ֆինանսավորման և բնակարանային քաղաքականության ոլորտներում պետական միասնական քաղաքականությունը սահմանող Կառավարության որոշման նախագծի Ընդունում	Միջոցառման շրջանակներում 2023թ. իրականացման ենթակա աշխատանքներ չեն նախատեսվել:	-
17.	Երկրաշարժից հետո տեղադրված/ կառուցված ոչ հիմնական շինությունների հիմնախնդիրների կանոնակարգում	17.1 Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված մոտեցումները և առաջնահերթությունները սահմանող Կառավարության որոշման ընդունում	Նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2022թ. հոկտեմբերի 14-ի N1601-Ն որոշմամբ: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=169446	-
		17.2 Ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված Կառավարության կողմից սահմանված մոտեցումների և առաջնահերթությունների հիման վրա ծրագրերի մեկնարկ	Հաշվետու ժամանակահատվածում նախա-տեսված աշխատանքներն իրականացված են: Համայնքների կողմից 2023թ. փետրվարի 1-ի դրությամբ հաստատվել են պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողի վրա տեղադրված ոչ հիմնական շինությունների ցուցակները: Կատարվել է նաև խնդրի լուծման համար անհրաժեշտ ֆինանսական պլանավորում՝ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի 2024-2026թթ. ծրագրով հաստատվել են՝ 2024թ. 1.4 մլրդ դրամ, 2025թ. 2.5 մլրդ դրամ և 2026թ՝ 2.1	-

			մլրդ դրամ չափաքանակներ, 2024թ. մասով անհրաժեշտ միջոցները նախատեսվել են նաև ՀՀ 2024թ. պետական բյուջեում: 2023թ. ֆինանսավորում չպահանջող աշխատանքների մեկնարկով արդեն իսկ համայնքներում ընթանում է այն ոչ հիմնական շինությունների քանդման գործընթացը, որոնց մասով աջակցության տրամադրման գործընթաց նախատեսված չէ:	
18.	Վարչական, առողջապահական, մարզական, մշակութային և հանրակրթական նշանակության օբյեկտների շենքային պայմանների բարելավում	18.1 Համայնքներում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր մանկապարտեզների կառուցում	- 2023թ. պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում համակարգվել են թվով 17 մանկապարտեզների շինարարական աշխատանքները՝ ընդհանուր շուրջ 13,9մլրդ. դրամ պայմանագրային գնով, որոնցից՝ - Արմավիրի մարզի Արևիկ համայնքում շինարարական աշխատանքները մեկնարկել են 2021թ. և գտնվում են ավարտական փուլում: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել է 131,0 մլն. դրամի աշխատանքներ, 74.4 մլն. դրամի մնացորդային աշխատանքները նախատեսվում են ավարտել 2024թ.-ին: - Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում, Արմավիրի մարզի Այգեվան համայնքում, Լոռու մարզի Սպիտակ համայնքում և Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքում շինարարական աշխատանքները մեկնարկել են 2022թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, սակայն	-

			ձմռան եղանակային պայմաններից ելնելով փաստացի աշխատանքներն ամբողջ թափով սկսել են իրականացվել 2023թ. համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ 2-րդ եռամսյակից սկսած: Պայմանագրային գնի մնացորդային աշխատանքներն իրատեսական է ավարտել 2024թ.-ին: - Թվով 12 համայնքներում շինարարական աշխատանքները մեկնարկել են 2023 թվականին և պայմանագրային գնի մնացորդային աշխատանքներն իրատեսական է ավարտել 2024-2025թթ.: - 2023թ. Կոմիտեն համակարգել է նաև Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում «Մոդուլային» տիպի 250 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի, 50 (48) սան/տեղ (2 խումբ), 100 (96) սան/տեղ (4 խումբ) և 200 (192) սան/տեղ (8 խումբ) հզորությամբ տիպային մանկապարտեզների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները, որոնք արդեն իսկ անցել են պարզ փորձաքննություն:	
		18.2 Թվով 22 համայնքներում փոքրաքանակ երեխաներով համալրված մոդուլային տիպի դպրոցների կառուցում	2023թ. պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում իրականացվել են թվով 20 փոքրաքանակ երեխաներով համալրված մոդուլային տիպի դպրոցների կառուցման աշխատանքները: Արարատի մարզի Դեղձուտ և Արմավիրի մարզի Արգինա համայնքների դպրոցների	-

			շենքերի կառուցումն ավարտվել է 2022 թվականին: Մոդուլային դպրոցների շինարարական ծրագրերից թվով 13-ը մեկնարկել են 2020թ. նոյեմբերին, թվով 6-ը՝ 2021թ. հոկտեմբերին և Տավուշի մարզի Դովեղ համայնքի դպրոցը՝ 2022թ. տարեվերջին, որը պայմանավորված է եղել՝ հողահատկացման խնդիրներով: 2023թ. ավարտվել են Կոտայքի մարզի Ջրառատ և Կաթնաղբյուր գյուղերի դպրոցների շենքերի կառուցման աշխատանքները, որոնց համար հաստատվել են ավարտված շինարարական աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտերը: Ավարտական փուլում են գտնվում նաև Լոռու մարզի Հագվի և Մեդովկա համայնքների, Շիրակի մարզի Կապսի գյուղի և Վայոց ձորի մարզի Եղեգիս գյուղի դպրոցների շենքերի կառուցման աշխատանքները: Մնացած 15 օբյեկտների մասով պայմանագրային գնի մնացորդային աշխատանքներն իրատեսական է ավարտել 2024թ., իսկ Տավուշի մարզի Դովեղ համայնքի դպրոցի աշխատանքները՝ 2025թ.:	
		18.3 Ավագ դպրոցների նոր մասնաշենքերի կառուցում	Արարատի մարզի Մասիս համայնքում N5 ավագ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման ծրագրի պայմանագրային գինը կազմում է 795,8մլն. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 18.12.2021թ. , սակայն ձմռան	-

			եղանակային պայմաններից ելնելով փաստացի աշխատանքներն ամբողջ թափով սկսել են իրականացվել 2022թ. համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ 2-րդ եռամսյակից սկսած: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 370,3մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 74,7մլն. դրամի աշխատանքները կավարտվեն 2024թ.:	
		18.4 Միջնակարգ դպրոցների նոր մասնաշենքերի կառուցում	Գեղարքունիքի մարզի գ.Ն.Գետաշենում թիվ 1 միջնակարգ դպրոցի նոր մասնաշենքի կառուցման ծրագրի պայմանագրային գինը կազմում է 1,8 մլրդ. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 16.12.2021թ., սակայն ձմռան եղանակային պայմաններից ելնելով փաստացի աշխատանքներն ամբողջ ծավալով սկսել են իրականացվել 2022թ. համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ 2-րդ եռամսյակից սկսած: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 446,5մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 1,2մլրդ. դրամի աշխատանքները իրատեսական է ավարտել 2026թ.:	-
		18.5 Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին	• «Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջ ՊՈԱԿ.	-

		մասնագիտական ուսումնական հաստատությունների վերակառուցում	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար կնքված պայմանագիրը միակողմանի լուծվել է նախագծող ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները նախատեսված ժամկետում չկատարելու պատճառով: Գնման գործընթացը վերահայտարարվել է, ընտրված մասնակցի հետ կնքվել է պայմանագիր և աշխատանքները մեկնարկել են 10.04.2023թ. : Նախագծող ընկերության կողմից կատարվել են շենքի տեխնիկական վիճակի մանրամասն հետազննություն, իրականցվել է շենքի կրող կոնստրուկցիաների լաբորատոր ուսումնասիրություն հավատարմագրված լաբորատորիայում, կատարվել է տարածքի ինժեներաերկրաբանական հետազոտություն հորատման եղանակով և շերտերի լաբորատոր ուսումնասիրությամբ, տարածքի գեոդեզիական հանույթը իրականացվել է GPS RTK համակարգով, կատարվել է շենքի ամբողջական չափագրություն, ինժեներական ցանցերի և այլ ուսումնասիրություն, թերությունների արձանագրում: Ընկերությունը իրականացրած նախագծահետազոտական աշխատանքների	

			արդյունքներով շենքի ուժեղացման աշխատանքների կատարումը 28.11.2023թ. գրությամբ գնահատել է ոչ նպատակահարմար և առաջարկել լուծել պայմանագիրը՝ մինչ այդ կատարված 4,4 մլն. դրամի ծախսերը փոխհատուցելու պայմանով: • «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ. Կոտայքի մարզի Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շինարարական ծրագրի պայմանագրային գինը կազմում է 1,35 մլրդ. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 09.02.2021թ.: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 165,6մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 605,2մլն. դրամի աշխատանքները իրատեսական է ավարտել 2025թ.: • «Գորիսի պրոֆեսոր Խ.Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ. Հայտարարված շինարարության գնման ընթացակարգը մի քանի անգամ բողոքարկվել էր մասնակիցներից մեկի կողմից, որի պատճառով պայմանագրի կնքումը ձգձգվեց:	

			Քոլեջի շինարարական ծրագրի պայմանագրային գինը կազմում է 1,86 մլրդ. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 18.07.2022թ.: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 420,8մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 1,3մլրդ. դրամի աշխատանքները իրատեսական է ավարտել 2026թ.:	
		18.6 Ծանրամարտի մարզադահլիճի կառուցում	Ծրագրի պայմանագրային գինը կազմում է 554,3 մլն. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 21.12.2021թ., սակայն ձմռան եղանակային պայմաններից ելնելով փաստացի աշխատանքներն ամբողջ ծավալով սկսել են իրականացվել 2022թ. համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ 2-րդ եռամսյակից սկսած: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում և մնացորդային 30. 2 մլն. դրամի աշխատանքները կավարտվեն 2024թ.:	-
		18.7 «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցում	Ծրագրի պայմանագրային գինը կազմում է 6,7մլրդ. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 08.06.2021թ.: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 985,7մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 4,1մլրդ. դրամի աշխատանքները իրատեսական է ավարտել 2027 թվականին:	-

		18.8 Բազմաբնակարան շենքերի կառուցում	• Լոռու մարզի Սպիտակ քաղաքում նոր բնակելի շենքի կառուցում. Ծրագրի պայմանագրային գինը կազմում էր 580,0մլն. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 25.05.2021թ.: 2021-2022թթ. ընթացքում կապալառու ընկերությունը կատարել է պայմանագրային գնի շուրջ 35,5%-ը՝ 204,1մլն. դրամ, սակայն աշխատանքները շարունակելու համար 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերությանը առաջարկվել է կնքել համաձայնագիր: Ընկերությունը համապատասխան պայմանագրի և որակավորման ապահովումներ սահմանված ժամկետում չներկայացնելու և համաձայնագիրը չստորագրելու հիմքով 16.06.2023թ. պայմանագիրը միակողմանի լուծվել է: 2023թ. դեկտեմբերին նախահաշվային արժեքի մնացորդային ծավալի չափով մեկնարկվել է նոր գնման գործընթաց: • Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Բաղրամյան 43 հասցեում գտնվող վթարային շենքի փոխարեն նոր բնակելի շենքի կառուցում. 2022թ. ավարտվել են ծրագրի շինարարական աշխատանքները, որի համար հաստատվել է ավարտված շինարարական	-

			աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտը:	
		18.9 Առողջապահական հաստատությունների շենքերի վերակառուցում	• Կոտայքի մարզի Չարենցավան համայնք. Ծրագրի պայմանագրային գինը կազմում էր 218,9մլն. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 23.07.2021թ.: 2021թ. ընթացքում կապալառու ընկերությունը կատարել է 34,7մլն. դրամի աշխատանք, սակայն աշխատանքները շարունակելու համար 2022թ. բյուջետային հատկացումների շրջանակներում գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերությանը առաջարկվել է կնքել համաձայնագիր: Ընկերությունը համապատասխան պայմանագրի և որակավորման ապահովումներ սահմանված ժամկետում չներկայացնելու և համաձայնագիրը չստորագրելու հիմքով 13.05.2022թ. պայմանագիրը միակողմանի լուծվել է: Նախահաշվային արժեքի մնացորդային ծավալի չափով նոր գնման գործընթացի արդյունքում ընտրված մասնակցի հետ կնքվել է գնման պայմանագիր, որի կատարումը մեկնարկել է 20.11.2023թ. : 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 31,5մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 213,4մլն.	-

			դրամի աշխատանքները նախատեսվել է կատարել 2024թ.: • Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնք. Ծրագրի պայմանագրային գինը կազմում է 615,1մլն. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 01.07.2021թ.: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 125,1մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 342,7մլն. դրամի աշխատանքները իրատեսական է ավարտել 2024թ.: • Արագածոտնի մարզի Թալին համայնք. Ծրագրի պայմանագրային գինը կազմում է 1,2մլրդ. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 29.06.2021թ.: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 482,7մլն. դրամի աշխատանքներ, ծրագիրը գտնվում են ավարտական փուլում և մնացորդային 36,4մլն. դրամի աշխատանքները կավարտվեն 2024թ.: • Արարատի մարզի Մասիս համայնք. Ծրագրի պայմանագրային գինը կազմում է 2,1մլրդ. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 16.11.2021թ.: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 349,1մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային	

			958,6մլն. դրամի աշխատանքները իրատեսական է ավարտել 2025թ.:	
		18.10 Հակակոռուպցիոն կոմիտեի և դատարանի կարիքների համար շենքային պայմանների բարելավում	• Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի շենքի վերակառուցում. Ծրագրի պայմանագրային գինը կազմում է 579,2մլն. դրամ, որի աշխատանքները մեկնարկել են 06.11.2021թ.: 2022թ. ՀՀ ԲԴԽ-ի կողմից տրվել է լրացուցիչ առաջադրանք՝ որով ավելացել է դատավորների կազմը՝ ինչի հետևանքով անհրաժեշտ է եղել փոփոխել հատակագծային լուծումները: Նշված հանգամանքով պայմանավորված ձեռք է բերվել լրացուցիչ նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ որոնք նախատեսվում են ներառել կապալառուի պայմանագրում: Մասնավորապես փոփոխությունները վերաբերում են հատակագծային լուծումներին՝ աշխատասենյակների դասավորության հետ կապված, ինչպես տարածքում ծառայողական ավտոմեքենաների կայանատեղիի համար նոր շվաքարան ունենալուն, ինչ նախագծով նախատեսված չի եղել: 2023թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ	-

			քաղաքաշինության կողմիտեի նախագահի կողմից օբյեկտ կատարած համատեղ շրջայցի շրջանակներում քննարկվել են վերը նշված հարցերը: Աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: 2023թ. բյուջետային հատկացումների շրջանակներում կատարվել են 301,8մլն. դրամի աշխատանքներ, մնացորդային 30,7մլն. դրամի աշխատանքները կավարտվեն 2024թ.: • Աջափնյակ վարչական շրջանի «Սպանդարյանե կայարանի երկաթգծին հարակից 15 հեկտար մակերեսով հողատարածքում Հակակոռուպցիոն կոմիտեի վարչական շենքի կառուցում. Տարածքը հուշարձանային գոտուց արդեն իսկ դուրս է եկել (համալիր փորձաքննության ընթացքում բացահայտվել է որ տարածքում առկա է դամբարանադաշտ), որի կապակցությամբ արդեն իսկ իրականացվել են մանրամասն հետազոտություններ: Ուսումնասիրության արդյունքներով որևէ արտառոց շերտ չի հայտնաբերվել: Ծրագիրը հնարավոր կլինի մեկնարկել ՀՀ Արդարադատության նախարարության հետ համաձայնեցնելուց հետո՝ Արդարադատության թաղամաս ծրագրի	

			համար հնարավոր նոր հողամասի ընտրության տարբերակով պայմանավորված: • Երևանի Աջափնյակ Սիլիկյա Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցմանն թաղամաս 12-րդ փողոց, 86 հասցեում տեղակայված տարածքում Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի նոր շենքի կառուցման նախագծի ձեռքբերում. Ծրագիրը հնարավոր կլինի մեկնարկել ՀՀ Արդարադատության նախարարության հետ համաձայնեցնելուց հետո՝ Արդարադատության թաղամաս ծրագրի համար հնարավոր նոր հողամասի ընտրության տարբերակով պայմանավորված:	
		18.11 Դատարանների շենքային պայմանների բարելավում	Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գավառի նստավայրի նոր վարչական շենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն ավարտվել են: Առկա է նաև պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: Նախագիծը դրվել է կիրառության մեջ շինարարական աշխատանքների գնման և իրականացման գործում:	